

Violence,
intimidation
and
legal cases
against
journalists
and the media
in Armenia
2010-2011

cases and analysis

Լրագրողների եւ
Լրատվամիջոցների
սկստմամբ
բռնությունները,
ճնշումները եւ
դատական գործերը
Հայաստանում
2010-2011

դեպքեր եւ վերլուծություններ



Լրագրողների և
լրատվամիջոցների
սկստմամբ
բռնությունները,
ճնշումները և
դատական
գործերը
Հայաստանում

2010-2011

դեպքեր և
վերլուծություններ



Հետաքննող
լրագրողներ
ՀԿ

Երևան
2011



Գիրքը հրատարակվել է Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեւանյան գրասենյակի աջակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետները «Յետաքննող լրագրողներ» ՀԿ-ինն են եւ կարող են չհամընկնել ԵԱՀԿ տեսակետների հետ:

"This publication has been made possible by support from the Organization for Security and Co-operation in Europe, Office in Yerevan. The views expressed herein are those of the Investigative Journalists NGO and do not necessarily reflect the views of the OSCE."

Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները, ճնշումները եւ դատական գործերը Հայաստանում 2010-2011. դեպքեր եւ վերլուծություններ.-եր: «Յետաքննող լրագրողներ» հ/կ, 2011.- .Էջ:

«Յետաքննող լրագրողներ» ՀԿ-ի պատրաստած այս գիրքը ամփոփում է 2010-2011 թթ. Հայաստանում լրագրողների եւ զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ տեղի ունեցած բռնություններն ու ճնշումները, մասնավորապես՝ նրանց դեմ ներկայացված հայցերը՝ գրպարտության եւ վիրավորանքի մեղադրանքներով: Գրքում ներկայացվում են այդ դեպքերի եւ իրադարձությունների փաստական կողմը, դատաքննությունների ընթացքը եւ կայացված որոշումները, ապա դրանք վերլուծվում են միջազգային համաձայնագրերի եւ ՀՀ օրենսդրության տեսանկյունից, տրվում է իրավական գնահատական:

Նախատեսված է լրագրողների, իրավաբանների, խոսքի եւ մամուլի ազատության խնդիրներով զբաղվող փորձագետների, ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

This book, prepared by the Investigative Journalists NGO, summarizes incidents of violence and intimidation against the mass media and reporters in Armenia during 2010-2011. In particular, it focuses on slander and insult suits filed against the "fourth estate". The book presents the legal aspects of these court cases; the judicial deliberations and the verdicts handed down. These are then analyzed and evaluated from the perspective of RA law and international conventions signed by Armenia.

The book is intended for use by reporters, lawyers, media and free speech specialists, journalism students, and the public at large.

© Յետաքննող լրագրողներ» ՀԿ, 2011 թ.

© ԵԱՀԿ, 2011 թ.

ISBN 978-92-9235-890-7

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.....	7
ՄԱՍ I. ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՁԼՄ-Ը՝ ԴԱՏԱՐԱՎ-ՆՈՒՄ.....	17
«Բարի խոսքեր»-ը վիրավորո՞ւմ են հջեւակի քաղաքապետին.....	18
Լուսինե Հակոբյան. հջեւակի քաղաքապետարանն ընդդէմ «Յետաքննող լրագրողների». Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ կրկին «ձայն բարբառոյ յանապատի».....	27
Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտորը հրաժարվեց «Յետքի» դէմ ներկայացրած հայցից.....	36
Դատարանը պարտավորեցնում է հերքում տպագրել արդէն գոյություն չունեցող թերթում.....	40
3 պատգամավորներն ընդդէմ «ՅԺ»-ի. ներպետական դատարաններն արհամարհում են միջազգային կոնվենցիաները	44
«Եհովայի վկաները» լրագրող Գեւորգ Ալթունյանից հրապարակային ներողություն են ակնկալում	55
Քոչարյանների «բարեգործությունը».....	58
news.am-ի դէմ դատական նիստը կրկին հետաձգվեց.....	66
«Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն»-ն ու «Առավոտ» օրաթերթը հաշտություն կնքեցին.....	68
Փաստաբանի եւ թերթի միջեւ վեճը լուծվեց հաշտությամբ.....	71
ԱԺ նախագահի նախկին խորհրդականն ընդդէմ «Ժամանակի».....	73
Ռոբերտ Քոչարյանն ընդդէմ «Յրապարակի». գործը կհանգուցալուծվի Սահմանադրական դատարանի որոշումից հետո.....	77
«Յետքի» լրագրողը պահանջում է, որ Ռուբեն Հայրապետյանը ներողություն խնդրի.....	80
«Լակոտ» բառն արժե 200 հազար դրամ. Տ. Արզաքանցյանի հայցն ընդդէմ «Երկիր» օրաթերթի մասնակի բավարարվեց.....	87
Մարգարիտա Խաչատրյանն ընդդէմ «Յրապարակի», կամ՝ հակառակը.....	93
«Գլենդել Հիլզը» 2.5 մլն դրամ է պահանջում	

«Ժամանակ» օրաթերթից.....	98
Չրպարտության համար հայց՝ ընդդեմ «Կենտրոն TV» -ի.....	105
Դատարանը մերժեց պատգամավոր Արզաքանցյանի հայցն ընդդեմ «Իրավունքի».....	110
Լրատվամիջոցը լրատվամիջոցից 7 մլն դրամ է պահանջում.....	115
«168 ժամ» թերթը՝ որպես երրորդ կողմ.....	120
3 մլն 264 հազար դրամի պահանջ՝ Իջեանի հեռուստաընկերությունից եւ լրագրողից.....	122
Չրպարտության մեղադրանքով նոր հայց. երկու լրատվամիջոց ներգրավված է որպես երրորդ անձ.....	124
Եթե «Հրապարակը» չկատարեր ԴԱՀԿ-ի որոշումը, ապա քրեական գործ կհարուցվեր.....	129
Նախկին տնօրենն ու որդին ընդդեմ «168 ժամ» թերթի. Նրանք 4 մլն դրամ են պահանջում	134
«Հրապարակը»՝ դարձյալ պատասխանողի կարգավիճակում.....	137
Պատկերասրահի տնօրենն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանության».....	139
Նամակագիրը հրաժարվո՞ւմ է նամակից. Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի.....	142
Գեղարքունիքի մարզպետը դատի է տվել «Ժողովուրդ» օրաթերթին.....	144
Երրորդ հայցը՝ ընդդեմ «Ժողովուրդի».....	147
Գյուղապետը վիրավորվել է, որ գյուղապետարանի գույք մահճակալները «դվուխսպալնի» են անվանել.....	149
Լրատվամիջոցների հաշվին գումար աշխատելը գայթակղիչ է դարձել	153
Նախ՝ ռեկտորը, ապա դեկանը՝ ընդդեմ լրագրողի եւ լրատվամիջոցի.....	155
«Դուք էլ չգիտեիք, ես էլ չգիտեի, բա ես խեղճ ու կրակ «Ինքնիշխանությունը» որտեղի՞ց իմանա», - հարցնում է դատավոր Ափինյանը.....	156
«Հրապարակ» օրաթերթը պատասխան պիտի տա ընթերցողների կարծիքների համար.....	160
«Իրավագետ իրավախախտը». ԵՊՀ-ն ընդդեմ Հանրային հեռուստատեսության «Բանաձեւ» հաղորդաշարի.....	163

Լուսինե Զակոբյան

Թե ինչպես էին պաշտպանվելու պետության երեւելիները,
եթե չլինէր անվանարկման իրավունքը.....167

Լուսինե Զակոբյան

Երբ փաստերը ճշմարիտ են կամ ողջամտորեն հրապարակված....172

Լուսինե Զակոբյան

Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի որոշումը.
հասկացությունները չհասկացած հանդես գալու ժամանակը.....178

ՄԱՍ II. ԲՈՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ.....183

2010

Ընտրությունները կրկին ուղեկցվեցին
լրագրողների նկատմամբ բռնություններով.....184

Լրագրողի վրա հարձակվողների «ինքնությունը»
դարձյալ անհայտ մնաց.....186

Ֆոտոլրագրող Շամշյանին ծեծել են
դատախազության մուտքի մոտ.....188

Հարձակում «Ազգի» լրագրողի վրա. հնչել է նաեւ սպառնալիք.....190

Հայաստանում անգամ բացահայտված հանցագործությունը
չի բացահայտվում.....191

Բռնություն են կիրառել լրագրողների նկատմամբ
եւ խոչընդոտել նրանց աշխատանքին.....194

Հրդեհ ու խոչընդոտներ՝ «Արքայաձորում».....195

Անի Գեւորգյանի նկատմամբ քրեական գործը կարճվեց.....196

Թիրախում դարձյալ ֆոտոլրագրող Շամշյանն է.....197

200 հազար դրամ տուգանք՝
լրագրողի աշխատանքին խոչընդոտելու համար198

2011

Լրագրողը դատի չի տա իրեն հայիոյած պատգամավորին.....200

Լրագրողին վախեցնելու փո՞րձ, թե՞.....201

Բռնություն մարզական լրագրողի նկատմամբ.....203

Միջադեպ լրագրողի եւ ոստիկանի միջեւ.....204

«Շանթի» օպերատորները որոշել են հաշտվել.....206

Այս գիրքը «Յետաքննող լրագրողներ»-ի՝ 2008-2009 թթ. հրատարակած նույնա-

նուն գրքի շարունակությունն է և ներկայացնում է Յայաստանում մամուլի և խոսքի ազատության վիճակը 2010-2011 թթ.: Երկամյա մոնիտորինգի արդյունքում արձանագրվել են մամուլի զարգացման հիմնական խոչընդոտները, այն է՝ ֆիզիկական բռնություններ լրագրողների նկատմամբ և ֆինանսական ճնշումներ ԶԼՄ-ների նկատմամբ գրպարտության և վիրավորանքի համար ներկայացվող դատական հայցերի միջոցով:

Գրքի առաջին բաժինը, որն անվանել ենք «Լրագրողները և ԶԼՄ-ն՝ դատարանում», ընդգրկում է հոդվածներ 2010-2011 թթ. դատավարությունների մասին (ընդհանուր առմամբ՝ 37 դատական գործ), որոնցում լրագրողները հանդես են գալիս պատասխանողի կամ հայցվորի դերում: Նրանց նկատմամբ հիմնական մեղադրանքներն են՝ գրպարտություն, վիրավորանք, պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորում: «Յետքի» լրագրողները դատավարությունների ընթացքին հետեւել են դատական բոլոր ատյաններում և լուսաբանել՝ պատրաստելով ինչպես տեղեկատվական ժանրի, այնպես էլ վերլուծական հոդվածներ, որոնք նախապես հրապարակվել են «Յետք» օլայն թերթում և «Յետք» շաբաթաթերթում: Այս բաժնում զետեղված են նաև անկախ իրավաբանի վերլուծությունները 33 եռաստիճան դատական համակարգում քննված գործերով կայացված վճիռների վերաբերյալ: Այդ դատական ակտերը վերլուծվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի սկզբունքների համատեքստում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի լույսի ներքո:

Գրքի երկրորդ բաժինն ամփոփում է նույն ժամանակահատվածում լրագրողների դեմ բռնությունների դեպքերը և նախորդ տարիների ն տեղի ունեցած բռնության դեպքերի բացահայտման հետ կապված զարգացումները: Կարծես օրինաչափորեն բռնությունների դեպքերի թիվը նվազում է ոչ ընտրական տարում և աճում նախընտրական շրջանում: 2010-2011 թթ. դրանց թիվն իսկապես նապատել է՝ համապատասխանաբար 9 և 4 դեպք՝ նախորդ՝ 2008-2009-ի 18 և 11 դեպքի համեմատությամբ: Բայց զուտ քանակական ցուցանիշները չեն կարող գոհացնել, որովհետև դիտարկումները դարձյալ ցույց են տալիս, որ լրագրողների նկատմամբ կատարված գրեթե բոլոր լուրջ հանցագործությունները իրավապահները չեն կարողանում (կամ գուցե չեն ցանկանում) բացահայտել:

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈՒՆԱՐԵՆ

2 րդ պարտության համար նախատեսված քրեական նորմերի ապաքրեականացումը միջազգային կազմակերպությունների ավելի քան տասը տարվա պահանջն էր, քանի որ խոսքի ազատության դրսևորման կապակցությամբ քրեական պատասխանատվությունը ժողովրդավարական չափանիշներով անհամաչափ խիստ միջամտություն է համարվում: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ 2010թ. 33 Ազգային ժողովը ապաքրեականացրեց զրպարտության համար անձին քրեական պատասխանատվության դատապարտող նորմերը: Փոխարենը վիրավորանքի ու զրպարտության համար պատասխանատվություն սահմանվեց Զաղաքացիական օրենսգրքով:

Պատասխանատու մամուլ ունենալը նույնպես միջազգային կազմակերպությունների պահանջն էր, եւ եվրոպական ինստիտուտները հետեւողականորեն զարգացնում են այն՝ դրան հասնելու համար կարելու դեր վերապահելով բարոյական վնասի հատուցման ինստիտուտին: Ազգային ժողովի կատարած օրենսդրական փոփոխությունը հնարավորություն տվեց Հայաստանում նույնպես կիրառել բարոյական վնասի փոխհատուցումը, սակայն միայն հրապարակային վիրավորանքի ու զրպարտության դեպքում: Օրենքում առանձնացվեցին զրպարտության եւ վիրավորանքի դեպքերում նախատեսված պատասխանատվության տեսակները, սահմանվեցին փոխհատուցման գումարային չափերը:

Աժ-ին ներկայացված օրենսդրական նախագիծը հասցնեց էր եւ անկատար, նախագծի անկատարության վերաբերյալ ժամանակին իրենց մտահոգությունն են արտահայտել նաեւ պատգամավորները: Աժ պատգամավոր, մասնագիտությամբ իրավաբան Ռաֆիկ Պետրոսյանը օրենսդրական փոփոխության վերաբերյալ իր ելույթում նշեց, որ հիշյալ փոփոխությունները կատարելուց առաջ Զաղաքացիական օրենսգրքում նախ՝ պետք է ձեւակերպել «բարոյական վնաս» հասկացությունը, այն չափանիշները, որոնց հիման վրա դատարանը որոշում է մեղքի աստիճանը, անձի նյութական դրությունը, սահմանել այն գումարները, որ պետք է բըռնագանձվեն զրպարտողից եւ վիրավորողից եւ այլն, որից հետո անդրադառնալ առաջարկվող փոփոխություններին:

Վենետիկի հանձնաժողովը օրենսդրական փոփոխությունների նախագիծը փորձաքննության ենթարկելուց հետո, վիրավորանքի ու զրպարտության ապաքրեականացումը ողջունելով հանդերձ, ընդգծել էր, որ նախագիծը դեռեւս բարելավումների կարիք ունի: Հանձնաժողովի ներկայացրած 18 առաջարկներից թե քանի՞սը նկատի առնվեցին լրամշակման ժամանակ, դժվարանում ենք ասել: Նաեւ պատրաստվել է օրինագծի իրավական վերլուծությունը, որը ֆինանսավորել է ՀԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակը:

Վերլուծության մեջ մի շարք առաջարկներ էին տեղ գտել օրինագծի թերությունները վերացնելու վերաբերյալ (վերլուծության ամբողջական տարբերակը տես հետևյալ լինքում՝ <http://www.osce.org/hy/fom/67859>):

2010 թ. մայիսի 18-ին Ազգային ժողովն ուժը կորցրած ճանաչեց Զրեանկան օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները: Փոխարենը՝ լրացվեց Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը, որով գումարային փոխհատուցում նախատեսվեց անձի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը հրապարակային ձևով վիրավորելու և զրպարտության միջոցով արատավորելու համար: Վիրավորանքի համար նախատեսվեց մինչև 1 մլն դրամ, իսկ զրպարտության համար՝ մինչև 2 մլն դրամ: Ըստ էության, դրանով մեր երկրում առաջին անգամ կիրառության մեջ դրվեց բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը, սակայն այն նույնպես քննադատվեց այն պատճառով, որ ներդրվեց մասամբ: Բացի այդ, հոդվածում պարզորոշ չէ «գնահատող դատողություն» հասկացության սահմանումը և դրանից բխող ձանձնյալ հասկացությունը առ այն, որ «գնահատող դատողությունները» ենթակա չեն ապացուցման: Ընդհանրապես, անհրաժեշտ է, որպեսզի հստակորեն սահմանվի «փաստացի հայտարարություն» և «գնահատող դատողություն» հասկացությունների միջև ջրբաժանը:

Երկրորդ, հոդվածում բավարար մանրամասնությամբ սահմանված չէն այն հիմքերը, որոնց հիման վրա կարելի է հնարավոր ճշգրտությանը որոշել ոչ նյութական վնասի չափը:

Ինչպես նկատել էր փաստաբան Կարեն Մեժլումյանը, Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում չներառվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «անպարկեշտ»-ը՝ վիրավորանքի դեպքում, և «ակնհայտ սուտ»-ը՝ զրպարտության դեպքում: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ցանկացած փաստական անճշտություն կամ գնահատող կարծիք կարող է որակվել որպես զրպարտություն կամ վիրավորանք, այն դեպքում, երբ այդ հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Ձանվածալին լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով:

Այսպիսով, Զաղ. օր.-ի 1087.1 հոդվածը սահմանում է, որ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկի կամ մի քանիսի կիրառումը՝

- 1) **հրապարակայնորեն ներողություն խնդրել,**
- 2) **լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը,**
- 3) **սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:**

Չզպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

- 1) **լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և/կամ հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը,**
- 2) **սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:**

Մասնագետները նշեցին, որ բարոյական վնասի փոխհատուցման նորմի կիրառումը երկու ազդեցություն կարող է ունենալ. մի կողմից՝ լրատվամիջոցները կանցնեն ինքնազորաքննության, մյուս կողմից՝ ավելի

պատասխանատու կգործեն: Երկուսից թե որը կգերակայի առաջիկայում՝ կախված է նրանից, թե դատական պրակտիկան ինչ ուղղությամբ կգարգանա, և այն ինչ ազդեցություն կունենա լրատվամիջոցների վրա:

2010 թ., երբ Ազգային ժողովը քննարկում էր վիրավորանքի ու զըրպարտության ապաքրեականացման հարցը, լրագրողական կազմակերպությունները, միանգամայն կողմ լինելով ապաքրեականացմանը, այնուամենայնիվ, վերապահումներ ունեին այդ հարցում: Հայաստանի մամուլի լրատվություն մատուցելու ոճը և նյութական վիճակը լավ պատկերացնելով՝ կանխատեսում էին, որ այն դրականի հետ միասին նաեւ բացասական հետեւանքներ կարող է ունենալ: Դրականն այն էր, որ, ինչպես Եվրոպայի խորհուրդն էր հիմնավորել ապաքրեականացնելու իր պահանջը, խոսքի ազատության դրսեւորման համար քրեական պատասխանատվության ելքաբլեյը ժողովրդավարական չափանիշներով անհամաչափ խիստ պատասխանատվություն է և պետք է հրաժարվել դրանից: Բացասական կանխատեսումն այն էր, որ ապաքրեականացումից հետո կտրուկ կաճեն լրատվամիջոցների դեմ ներկայացվող դատական հայցերը (այդ էր ցույց տալիս այլ երկրների փորձը), և գումարային պահանջների բավարարումը իրական սպառնալիք կարող է դառնալ մամուլի անկախությանը, նաեւ՝ գոյությանը: Վերահաս վտանգը փորձեցին կանխել ինքնակարգավորման մեխանիզմ ստեղծելով, որպեսզի կանխվեն դատական գործընթացները: Ինքնակարգավորումը չգործեց, և հրապարակումներից դժգոհողներն ընտրեցին դատական ճանապարհը:

Փոխհատուցման պահանջներով առաջին հայցերը առըր ցնցուղ էին 4-րդ իշխանության համար, քանի որ միմյանց հաջորդած դատական ակտերով բավարարված գումարների չափերն իրական սպառնալիք են լրատվամիջոցների գոյությանը: Դատարաններն առաջին իսկ հայցերով դրամական փոխհատուցման պահանջները բավարարեցին օրենքով սահմանված գումարի առավելագույն չափով, ինչը խուճապ առաջացրեց լրատվամիջոցների մոտ, նրանք սկսեցին փնտրել մեղավորին: «Բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը գործում է բոլոր զարգացած երկրներում, և այն մեծ հակակշիռ է: ՉԼՄ-ներն էլ պետք է պատասխանատվության դաշտ բերվեն, չնայած նրան, որ գտնվում են Եվրոպական իրավունքի հատուկ պաշտպանվածության ներքո: Այլ բան է, թե հատուցման չափն ինչպես պետք է որոշել: Այս փաստաթղթում պետք է հավասարակշռությունը ճիշտ պահպանել, կոնցեպցիան ճիշտ ընտրել, փոխհատուցման այնպիսի չափեր սահմանել, որ լրատվամիջոցը չնսանկանա»,- լրագրողական դաշտում առկա խուճապային տրամադրությունները նկատի ունենալով՝ հայտնեց իրավաբան Արա Ղազարյանը:

Իրավաբանը նշեց նաեւ, որ հայկական իրականության համար խընդիրը դատական պրակտիկան է՝ դատարանը պիտի հավասարակշռություն սահմանի երկու կողմերի բախվող շահերի միջեւ, վեճերը լուծելիս առաջնորդվի այն սկզբունքներով, որոնք սահմանվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: «Դատարանները պետք է հավասարակշռեն երկու բախվող շահերը՝ մասնավոր շահը և հանրային շահը: Այսինքն, մի կողմից՝ վերականգնեն անձի խախտված իրավունքը, մյուս կողմից՝ վճիռը սառեցնող ազդեցություն չպետք է ունենա լրատվական դաշտի վրա: Դատական պրակտիկան, եթե զարգանա մասնավոր շահի պաշտպանության

ուղղությանը՝ վերականգնվի անձի խախտված իրավունքը եւ անտեսվի հանրային շահը՝ լրատվամիջոցներից ազատ տեղեկատվություն ստանալը, այսինքն՝ լրատվամիջոցների վրա սահմանափակումներ դրվեն (խոսքը նաեւ քողարկված մեխանիզմների մասին է), լուրջ խնդիրներ կառաջանան՝ ազատ արտահայտվելու իրավունքի հետ կապված»,- հայտնեց իրավաբան Արա Ղազարյանը:

Չրպարտություն հոդվածի հետ կապված հաստատված սկզբունքներ կան եվրոպական կոնվենցիայում, որը կիրառվում է ավելի քան 25 տարի: Նման սկզբունքներ է սահմանել նաեւ «Արտիկլ 19» կազմակերպությունը՝ զրպարտություն հոդվածի վերաբերյալ, նաեւ՝ ԵԱԶԿ-ն, որոնց ամփոփ միտքը հետեւյալն է. դատարանը հավասարակշռություն պիտի սահմանի երկու կողմերի բախվող շահերի միջեւ, փոխհատուցման գումարների չափը չպետք է վտանգի լրատվամիջոցի հետագա գործունեությունը:

Հայաստանում մեզ ծանոթ դատական գործերի օրինակները հիմք են տալիս ասելու, որ դատավորներն առաջնորդվում են մասնավոր շահի իրավունքով, որը հակասում է վերը նշված միջազգային կազմակերպությունների սահմանած սկզբունքներին: Բացի այն, որ հայցվորները եւ՝ վիրավորանքի եւ՝ զրպարտության համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջները միաժամանակ են ներկայացնում, դրան հավելում են նաեւ դատական ծախսերը փոխհատուցելու գումարային մեծ պահանջներ: Մեր ունեցած օրինակներով դատարանը պատասխանատվության միանգամից մի քանի նորմ է կիրառում, ինչպես, օրինակ, «Լեւոն Զոչարյանն ընդդեմ «Հայկական ժամանակի»» գործով, որը քննվում էր 2009 թ. -ից. դատարանը թերթին պարտավորեցրեց վճարել հայցվորի պահանջած 3 մլն դրամը եւ թերթում հերքում տպագրել:

Նույն թերթի դեմ Ազգային ժողովի երեք պատգամավորների՝ Սամվել Ալեքսանյանի, Լեւոն Սարգսյանի եւ Ռուբեն Հայրապետյանի հայցով դարձյալ դատարանը «Հայկական ժամանակին» պարտավորեցրեց հերքում տպագրել եւ նրանցից յուրաքանչյուրին վճարել 2-ական մլն 44 հազար դրամ:

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանի կնոջ եւ ավագ որդու՝ «Բելլա եւ Սեդրակ Զոչարյաններն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի» գործով դատարանը օրաթերթին պարտավորեցրեց հերքում տպագրել եւ հատուցել վիրավորանքի ու զրպարտության միջոցով հասցված վնասը՝ 3 մլն դրամ՝ որպես դրամական փոխհատուցում, որից 1.000.000 դրամ՝ վիրավորանքի եւ 2.000.000 դրամ՝ զրպարտության համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր կայացրած վճիռներում տարիներ շարունակ ընդգծել է, որ մամուլը յուրահատուկ տեղ է զբաղեցնում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության համակարգում, քանի որ ոչ միայն իրավունք, այլև պարտավորությունն ունի տեղեկություններ եւ գաղափարներ տարածելու հանրային շահին վերաբերող ցանկացած հարցի շուրջ, իսկ հանրությունը դրանք ստանալու իրավունք ունի: Բացի այդ, «լրագրողական ազատությունը ներառում է նաեւ չափազանցության եւ նույնիսկ սադրանքի որոշակի աստիճան»: Եվ վերջապես, սանկցիայի կիրառման հանդեպ ունեցած վախը, ըստ ՄԻԵԴ-ի, «սառեցնող ազդեցություն» ունի արտահայտվելու ազատությունն իրականացնելու վրա:

«Պատասխանողը չի կարող պատասխանատվություն կրել այն դեպքում, երբ վիճահարույց հայտարարությունը ճիշտ է կամ վերաբերում է հասարակական մեծ հետաքրքրություն ներկայացնող դեպքի, որը հրատարակվել է բարեխղճությամբ՝ պահպանելով մասնագիտական վարքագծի կանոնները»,- այս մոտեցումը Եվրոպական դատարանն ամրագրել է «Կոլումբանիս ընդդեմ Ֆրանսիայի» 2002 թ. կայացված վճռով:

«Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության լրջագույն հիմքերից է, նրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման նախապայմանը: Այն տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների կամ գաղափարների» վրա, որոնք դրականորեն են ընդունվում կամ վիրավորական չեն, այլև այնպիսիների, որոնք վիրավորական են, ցնցող կամ անհանգստացնող պետության կամ հասարակության որեւէ հատվածի համար: Այդպիսին է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն», («Չանդիսայդն ընդդեմ Ավստրիայի»):

«Քաղաքական կամ հասարակական գործիչները պետք է առավել հանդուժող լինեն քննադատության հանդեպ, քան մասնավոր անձինք, քանի որ «ի տարբերություն վերջիններիս՝ հասարակական գործիչը գիտակցաբար ընդունում է, որ իր յուրաքանչյուր խոսք կամ արարք կարող է լուրջ քննության առիթ հանդիսանալ լրագրողների կամ լայն հանրության համար և պետք է, հետևաբար, դրսևորի տղերանտության ավելի մեծ աստիճան» («Լինգենսն ընդդեմ Ավստրիայի», 1986 թ):

Պատասխան պրակտիկայի այսօրինակ զարգացումը ոգեւորության նոր ալիք է առաջացրել մամուլից վիրավորվածների շրջանում՝ մեծանում է լրատվամիջոցներից փոխհատուցման պահանջ ներկայացնողների թիվը: Ավելին, բարոյական վնասի փոխհատուցման համար, օրենքով նախատեսված առավելագույն գումարային պահանջից բացի, դատարանին են ներկայացվում նաև դատական ծախսերի փոխհատուցման ոչ ողջամիտ պահանջներ: Նշենք, որ մինչ այդ էլ գործող օրենսդրությունը չէր բացառում կյուրակական պատասխանատվության ինստիտուտը: Այսպես, 33 քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, «Քաղաքացին, ում մասին տարածվել են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասները»: Սակայն, մինչև բարոյական վնասի փոխհատուցումը 33 օրենսդրություն ներմուծելը, հերքման կամ պատասխան հոդվածի պահանջով դատական հայցերը առանձնապես մեծ թիվ չեն կազմել: Առաջին իսկ գործերով ձեւավորված դատական պրակտիկան, երբ ներկայացված գումարային պահանջները բավարարվեցին առավելագույն չափով, շատերի ախորժակն է բացել: Գումարային պահանջով դատական հայցերը հաջորդում են միմյանց, վերջին երկու տարիներին 33 դատարաններում ավելի քան երեք տասնյակ հայցեր են քննվել, և հիմնականում դրանք ներկայացրել են հանրային անձինք:

Մեկ տարի էլ չէր անցել այն օրից, երբ օրենքը կիրառության մեջ դրվեց, և ահա լրագրողական կազմակերպություններն ըմբոստության մեծ ալիք բարձրացրին և նոր փորձություններին դիմակայելու համար սկսե-

ցին հակազդեցության միջոցներ փնտրել: Ստեղծեցին Տեղեկատվական վեճերի խորհուրդ, որը դատական վեճերի դեպքում իր գնահատականը պետք է տար կայացված վճիռներին: ՀՀ փաստաբանների պալատը լրատվամիջոցների պահանջով հստակեցրեց եւ փաստաբանական ծառայության ողջամիտ գներ սահմանեց, քանի որ դատական ծախսը նույնպես բավականին լուրջ եւ լուծում պահանջող հարց է: ՀՀ փաստաբանների պալատի առաջարկած գնացուցակը կարող էր կողմնորոշիչ լինել դատարանի համար՝ դատական ծախսերի փոխհատուցման պահանջը բավարարելիս: Լրատվամիջոցները մեծ հույսեր էին կապում նաեւ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու՝ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնության հետ, որը հնարավոր է՝ վերջ տար դատական պրակտիկայի այդօրինակ զարգացումներին: Մարդու իրավունքների պաշտպանը, որի նախաձեռնությամբ էր ընդունվել օրենքը, լրագրողական հանրության ճնշման տակ դիմեց Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրականության հարցը:

Սահմանադրական դատարանի կայացրած որոշումը ի դերեւ հանեց նրանց հույսերը: ՄԴ-ն օրենքը սահմանադրական ճանաչեց եւ իր ծավալուն մեկնաբանությունների մեջ մանրակրկիտ անդրադարձավ դատական պրակտիկայում հիշյալ օրենքի ճիշտ կիրառմանը՝ «խորհուրդ տալով» այս հարցում հաշվի առնել միջազգային սկզբունքները, որոնք ձեւավորվել են Եվրոպական դատարանի նախադեպերով եւ Մարդու իրավունքների միջազգային կոնվենցիայի 10-րդ հոդվածով: «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությունը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառ պրակտիկայում հաշվի առնել միջազգային սկզբունքները», - ասվում է ՄԴ-ի որոշման մեջ:

Ըստ էության, այդ պարտավորությունը ՀՀ Վճռաբեկ դատարանին էր, որն իր մանդատով կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունը եւ նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը նախադեպ պետք է լիներ ու պարտադիր կիրառման ենթակա ստորադաս դատարանների համար: Սակայն Վճռաբեկ դատարանը ողջ տարին լռություն պահպանեց եւ, չնայած փոթորկվող կրքերին, ցասումին ու անելանելի վիճակին, միմյանց հետեւից վերադարձնում է հիշյալ գործերով ներկայացված վճռաբեկ բողոքները՝ այդպիսով բաց թողնելով հասարակական հարաբերություններում տեղի ունեցող զարգացումներն ուղղորդելու եւ առաջնորդելու հնարավորությունը:

ՄԴ-ն մեկնաբանության մեջ անդրադարձավ մի քանի կարեւոր հարցի, մասնավորապես. «Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ մի կողմից՝ մարդու պատիվը, արժապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառ պրակտիկայում չպետք է շփոթել զույլային վնասի հետ, մյուս կողմից՝ այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձեւով սահմանվող պատիժ: Հակառակ պարագայում, կիմաստագրկվի զրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը»:

ՄԴ-ն իր կայացրած որոշման մեջ նաեւ նպատակահարմար համարեց

Ազգային ժողովին երկու առաջարկ ներկայացնել, այն է՝ վերանայել գումարային փոխհատուցման առավելագույն սահմանը՝ նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը, ինչպես նաև՝ կարգավորել ոչ իրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը: «Օրենսգրքի՝ վեճի առարկա հողվածի հետագա բարելավումները պետք է կարելուրեն նաև դատական հայեցողության շրջանակներում փոխհատուցման չափը, նորմատիվ պահանջ առաջադրեն ոչ գույքային վնասի համար փոխհատուցման պահանջի չափը հիմնավորող փաստարկներ ներկայացնելուն, հաշվի առնեն այս հիմնահարցի իրավակարգավորման վերաբերյալ միջազգային զարգացումների արդի միտումները»,- ասվում է ՄԴ որոշման մեջ:

ՄԴ-ն իր որոշումով վերահաստատեց այն սկզբունքները, որոնք պաշտպանվում են միջազգային պրակտիկայում.

- **անհնարին է իրականացնել գնահատողական դատողությունն ապացուցելու պահանջը, այն ինքնին խախտում է արտահայտվելու ազատությունը: Փաստերի քննադատական գնահատականը չի կարող բարոյական վնասի փոխհատուցման պահանջի բավարարման հիմք հանդիսանալ: Դատարանը նման դեպքում կարող է սահմանել ոչ նյութական հատուցում:**
- **Անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցված վնասը մեղմելու համար արդյոք հայցվել է օգտագործվել են արտադատական հատուցման ձեւերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները:**

Տեղեկատվական վեճերի խորհուրդը, լրատվամիջոցների դեմ կայացված դատական վճիռներից 5-ը վերլուծելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Եվրոպական դատարանի վճիռների, ԵԱԶԿ-ի եւ «Արտիկլ 19» կազմակերպության սկզբունքների տեսանկյունից, ընդօժեւ է, որ կայացված վճիռների ճնշող մեծամասնությունում չեն պահպանվել հետեւյալ չափանիշները.

- Կայացված վճիռներով տեղի է ունեցել լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն. դատարանը միջամտել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու ազատությանը, որը որեւէ իրավաչափ նպատակ չի հետապնդել:
- Դրամական փոխհատուցման չափը իրավաչափ նպատակ չի հետապնդել **միջամտության համաչափության** հարցում. ՄԻԵԴ-ի մոտեցման համաձայն պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս՝ ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Փոխհատուցված գումարների չափը չի բխում միջամտության, համաչափության եւ անհրաժեշտության սկզբունքներից, քանի որ լրատվամիջոցը հայտնվում է խիստ անհամաչափ ծանր ֆինանսական բեռի տակ, որի արդյունքում վտանգվում է լրատ-

վամիջոցի բնականոն գործունեությունը, որը, որպես այդպիսին, որքան առնչություն չունի հայցվորների արդարացի փոխհատուցման պահանջի հետ:

- Անտեսվել է գերակա հանրային շահը. Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն անձն ազատվում է զրպարտող բնույթի փաստացի հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:
- Ղեկավարողական դատողություններն ապացուցելի չեն, սակայն կայացված վճռով դրանք համարվել են զրպարտություն: Արտահայտվելու ազատության իրավունքի խախտումների վերաբերյալ գործերով եվրոպական դատարանը տարանջատում է կատարում փաստերի եւ ղեկավարողական դատողությունների միջեւ՝ համարելով, որ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա ղեկավարողական դատողություններն ապացուցելի չեն. ղեկավարողական դատողությունների ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են համոզմունքների, նախապատվությունների ոլորտին:
- Պաշտոնավարող քաղաքական գործիչները պետք է ակնկալեն անձնական կյանքի առավել նվազ պաշտպանվածություն, քանի որ նրանց յուրաքանչյուր գործ եւ խոսք հանրության ուշադրության կենտրոնում է: Ղեկավարան դիմողների ճշտող մեծամասնությունը քաղաքական ներկայացուցիչներ են եւ, ի տարբերություն վերջիններիս, քաղաքական գործիչներն անխուսափելիորեն եւ գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի եւ արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից եւ, հետեւաբար, պետք է դրսեւորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան:

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք» թերթի» գործով կայացված վճիռը միակն է, երբ դատարանի վճիռն ամբողջությամբ կառուցված է բախվող շահերի միջեւ անհրաժեշտ հավասարակշռություն սահմանելու սկզբունքով՝ առանձնահատուկ կարեւորություն տալով մամուլի հատուկ դերին ժողովրդավարական հասարակարգում: Ղեկավարանը հիշյալ վճռով փորձել է հավասարակշռել անձի հեղինակության պաշտպանության իրավունքը լրատվամիջոցի ազատ արտահայտվելու եւ հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքների հետ եւ արդյունքում հանգել է այն եզրակացության, որ տվյալ գործի հանգամանքների ներքո գերակայում են վերջին երկուսը:

Ամփոփելով վերջին երկու տարիներին լրագրողների ու լրատվամիջոցների դեմ ներկայացված դատական հայցերի քննության ընթացքը, կարող ենք ասել, որ դատարանները մտրակի քաղաքականություն որդեգրեցին լրատվամիջոցների նկատմամբ՝ իրենց կայացրած վճիռներով սահմանափակելով ազատ խոսքը Հայաստանի Հանրապետությունում: Լրատվամիջոցներին հարկադրեցին ընտրել ինքնագրաքննության ուղին, քանի որ փոխհատուցման գումարների բավարարվող չափերը իրական սպառնալիք դարձան լրատվամիջոցների գոյության համար: Որ սա հատուկ որդեգրված մոտեցում է, փաստվում է մի շարք վճիռների համեմատական վերլուծությունով, քանի որ նույն դատարանները, վիրավորանքի ու զրպարտության համար քննվող գործերով փոխհատուցման չափերը որոշելիս, տարբերակված մոտեցում են ցուցաբերել օրենքը կիրառելիս: Լրատվամիջոցների դեպքում այն որպես պատժամիջոց է դիտվել, իսկ այն դեպքերում, երբ հայցերը ներկայացվել են քաղաքացիների դեմ՝ դարձյալ զրպարտության համար 2 մլն դրամի փոխհատուցման պահանջ ներկայացնելով, իսկ վիրավորանքի համար՝ 1 մլն դրամի, դատարանները պահանջը բավարարել են նվազագույն չափով: Դրանցից մեկով, օրինակ, «Արթուր Գրիգորյանն ընդդեմ Մարգարիտա Սիմոնյանի եւ Որմիզդուխտ Վարդանյանի» դատական գործով, Կենտրոնն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր մոտեցումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «... քաղաքացիների զրպարտող նամակը տպագրվել է ինտերնետային լրատվական կայքերում, որոնց հաճախելիության վերաբերյալ որեւէ տեղեկատվություն դատարանին չի ներկայացվել, բացի այդ, պատասխանողները կենսաթոշակառու են, եւ որ կենսաթոշակառու պատասխանողների նկատմամբ փոխհատուցման մեծ գումար սահմանելու դեպքում չի պահպանվի նրանց կենսաապահովման մակարդակը, կարող է նրանց համար առաջացնել լուրջ հետեւանքներ՝ ընդհուպ մինչեւ նրանց սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը, եւ այդ դեպքում կխախտվի դատարանի կողմից միջամտության համաչափության սկզբունքը»:

Սառա Պետրոսյան

ՄԱՍ |

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ

լրագրողները

ԵՎ ՁԼՄ-Ն

ԵՆ ՁԼՄ-Ն

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

դատարանում



«Բարի խոսքեր»-ը վերաճորոնում են Իջեանի ֆադաֆադեսի

Իջեանի ֆադաֆադեսն՝ ընդդեմ
«Նեսաֆննոյ լրագրողների»



« Իջեանցի տասնյակ տաքսիստներ, ամեն օր անցնելով մարզկենտրոնի քարուքանդ ճանապարհներով, «բարի խոսքերով» են հիշում քաղաքապետին»: Փաստաբան Գեորգ Դավթյանի մեկնաբանությամբ, «բարի խոսքերով» բառակապակցությունը վիրավորանք է՝ ուղղված Իջեանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանին: Փաստաբանը դատարանում ներկայացնում է Իջեանի քաղաքապետարանի եւ քաղաքապետի շահերը՝ ըկողմ «Յետաքննող լրագրողների»:

2010 թ. հունիսի 25-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում Գագիկ Խանդանյանի նախագահությամբ քննվեց Իջեանի քաղաքապետարանի գործարար համբավը եւ Իջեանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող տեղեկությունը հերքել պարտավորեցնելու եւ վնասի փոխհատուցման պա-

հանջների մասին հայցադիմումը:

Յիշեցնեք, որ «Յետաքննող լրագրողների» «Յեք» ինտերնետային թերթում 2008 թ. մայիսի 5-ին տպագրվել էր թերթի Տավուշի մարզի թղթակցի Ռսկան Սարգսյանի հոդվածը՝ «Ու՛մ գրպանն են մտնում ավագահանքի փողերը» վերնագրով: Նույն հոդվածը արտատպել էր Նաեւ «Ազգ» օրաթերթը՝ 2008 թ. մայիսի 20-ի համարի ներդիրում: Այնուհետեւ՝ հունիսի 23-ին, «Յետքում» լույս է տեսել «Երեք հանձնաժողովները «կտեսնեն» ջրամբարի ավագի անօրինական շահագործումը» հոդվածը: Լրագրողը ներկայացրել էր Իջեւանի հարավային մուտքի մոտ՝ Աղստեւ գետի վրա գտնվող «Սպիտակ ջուր» ջրամբարից ավագի ապօրինի արդյունահանման վերաբերյալ փաստեր: Դրովաձում շոշափվում էր քաղաքապետի անունը:

2008 թ. հունիսի 19-ին քաղաքապետը հայց էր ներկայացրել Երեւանի քաղաքացիական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Յետաքննող լրագրողներ» հ/կ-ին նույն զանգվածային լրատվամիջոցներով, որոնցով տարածվել էր հոդվածը, հերքել «Իջեւանի քաղաքապետարանի դեմ հրապարակված անհիմն տեղեկությունները եւ քաղաքապետ Վ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող լուրերը, ինչպէս նաեւ՝ «Յետաքննող լրագրողներից», որպէս վնասի փոխհատուցում, բռնագանձել փաստաբանական ծախսերը՝ 930. 000 դրամ: Այս գումարը 2008 թ. մայիսի 23-ին Իջեւան համայնքի ավագանու որոշմամբ նախատեսվել է համայնքի բյուջեից՝ «գրպարտչական հոդվածի հեղինակին պատասխանատվության ենթարկելու համար փաստաբանական ծառայություն մատուցողին»:

2009 թ. հուլիսի 10-ին դատարանը, նախագահությամբ դատավոր Ռուբեն Ափիկյանի, մերժել էր Իջեւանի քաղաքապետարանի՝ ի դեմս քաղաքապետի, հայցն ընդդէմ «Յետաքննող լրագրողների»՝ փաստելով, որ հոդվածում Իջեւանի քաղաքապետարանի գործարար համբավը արատավորող որեւէ տեղեկություն չի տարածվել, ուստի բացակայում է տարածված տեղեկության հերքում պահանջելու հիմքը: Յայցվորները բողոքարկել էին առաջին ատյանի վճիռը: Վերաքննիչ դատարանը բեկանել էր Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը եւ գործն ուղարկել ետ՝ նոր քննության: «Յետաքննող լրագրողներ» հ/կ-ն վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը բողոքարկել էր Վճռաբեկ դատարան, սակայն գերագույն ատյանը բողոքը վարույթ չէր ընդունել: Գործում, որպէս երրորդ կողմ, ներգրավված է նաեւ «Ազգ» օրաթերթը:

2010 թ. հունիսի 25-ի նիստում հայցվորի ներկայացուցիչը պնդեց, որ պատասխանողը հերքի ողջ հոդվածը, քանի որ հոդվածում այնպէս է ներկայացվում, որ ավագահանությունն իրականացվում է քաղաքապետի անմիջական վերահսկողությամբ, եւ ողջ գումարը մտնում է քաղաքապետի գրպանը:

«Ո՛ւց կարող է դա քաղաքապետի գործարար համբավի վրա ազդեցություն չունենալ, - հարցրեց փաստաբան Գեւորգ Դավթյանը, - այդ հրապարակումից հետո բավականին դիմումներ, բողոքներ, միջոցառումներ են կատարվել համապատասխան մարմինների կողմից, թեւէ այս ընթացքում ներքին գործերի մարմինների կողմից պարզվել է, որ այդ ամենը հավաստի չէ»: Փաստաբանը պնդեց, որ նույնիսկ հոդվածի՝ հարցադրման տեսքով վերնագիրը՝ «Ու՛մ գրպանն են մտնում ավագահանքի փողերը»,

հուշում է պատասխանը, որը տրված է հողվածում, այն է՝ քաղաքապետի: «Յետաքննող լրագրողների» շահերի պաշտպան Կարեն Մեծլումյանը, սակայն, նշեց, որ դա կարող է նաև ուղղակի հարցադրում լինել, որի պատասխանը փորձել է պարզել լրագրողը՝ համապատասխան հարցում ուղարկելով դատախազություն, որը նշված է նաև հողվածում:

«Չակերտների մեջ «բարի խոսքը» ի՞նչ է նշանակում: Այսինքն՝ դա փոխաբերական իմաստով շատ վատ իմաստ ունի: Նշանակում է՝ վիրավորական խոսքեր, այսինքն՝ նաև ուշուց անձի հասցեին», - երկրորդ հողվածի «վիրավորական» մասը պարզաբանեց փաստաբան Գեորգ Դավթյանը:

Կարեն Մեծլումյանի հարցադրմանը, թե արդյոք հայցվորը, նախքան դատարան դիմելը, «Յետաքննող լրագրողներ» հ/վ-ին հերքման պահանջ ներկայացրել է, Գեորգ Դավթյանը մեջբերեց «Յետքի» խմբագիր Էդիկ Բաղդասարյանի եւ Իջեանի քաղաքապետի հեռախոսագրույցի մասին թերթի 2008 թ. մայիսի 26-ի համարում տպագրված կյուլթը: Զաղաքապետի հարցին, թե արդյո՞ք Ձեր խիղճը հանգիստ է, որ այդպիսի կյուլթ եք հրապարակել, խմբագիրը պատասխանել է. «Իհարկե, բոլոր փաստերը ստուգված են, փաստաթղթերը եւ լուսանկարները խմբագրությունում են եւ, եթե համաձայն չեք, կարող եք դիմել դատարան»:

«Իրենք էլ դիմել են դատարան», - ասաց Գեորգ Դավթյանը: Կարեն Մեծլումյանը նշեց, որ դա չի կարող հերքման պահանջ համարվել, նախ՝ որովհետեւ հերքման պահանջը գրավոր չէ, երկրորդ՝ տեքստում տեղեկությունները հերքելու պահանջ չկա: Իսկ Գեորգ Դավթյանը հակադարձեց՝ ասելով, որ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածում հերքման գրավոր կամ բանավոր պահանջի հատուկ տարբերակում չկա: Կարեն Մեծլումյանը հավելեց, որ նշված հողվածով նախատեսված է «Լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, իսկ հայցվորի պահանջը վերաբերում է Զաղ. օր.-ի 19-րդ հոդվածին՝ «բարի համբավը արատավորող տեղեկություններին»: Բայց հողվածում լրագրողի նշած որեւէ փաստ չէր կարող «պատվի եւ արժանապատվության» հարց առաջացնել: «Այս հողվածներից որեւէ մեկում վիրավորանք չկա, եւ պատվի ու արժանապատվության խնդիր չի կարող առաջանալ», - նշեց փաստաբանը:

Ավելին, լրագրողը նշել է. «Մեր ունեցած տեղեկությամբ՝ այս բիզնեսը գտնվում է Իջեանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո»: Եվ այդ տեղեկությունները պաշտոնապես ճշտելու համար «ավելից արդյունահանման կապակցությամբ նամակով դիմել է Տավուշի մարզի դատախազություն»: «Ո՞րն է այստեղ վիրավորանք, այստեղ ընդամենը շարադրված են այն գործողությունները, որոնք կատարել է լրագրողը», - հավելեց Կարեն Մեծլումյանը: Փաստաբանի մեկնաբանմամբ, այս գործը նույնիսկ քննության առարկա չպետք է դառնար դատարանում եւ պետք է կարճվեր, քանի որ հայցապահանջը վերաբերում է Զաղ. օր.-ի 19-րդ հոդվածի նախատեսած իրավունքին, որը կիրառում են իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության դեպքում, իսկ Իջեանի քաղաքապետարանը իրավաբանական անձ չէ, ըստ այդմ՝ չի կարող գործարար համբավ ունենալ:

Դատարանը հետագոտեց նաև ապացույցները, որոնք ներկայաց-



վել էին դատական վեճի նախորդ փուլերում: Կարեն Մեծլումյանը երկու միջնորդություն ներկայացրեց՝ խնդրելով հետազոտել նաեւ հողվածի հեղինակ Ռսկան Սարգսյանի ցուցմունքը, ինչպէս նաեւ այն տեսաեղբիզը, որտեղ հստակ երեւում է, որ Նշված տարածքում իսկապէս ավագահամաման աշխատանքներ են իրականացվում: Դատավոր Գ. Խանդանյանը մերժեց միջնորդությունը՝ նշելով, որ դրանք արդէն իսկ գործում ամկա են, եւ անհրաժեշտ չէ նիստում ուսումնասիրել դրանք:

Հիշեցնենք, որ հողվածի հեղինակ Ռսկան Սարգսյանը ցուցմունք տալիս նշել էր, որ հողվածում ներկայացված բոլոր մտքերն ու փաստերը շարադրել է իրավասու մարմիններին ուղղված գրությունների պատասխանների եւ իր ուսումնասիրության արդյունքների հիման վրա: Հավաքած փաստերն իրեն հնարավորություն են տալիս համապատասխան մեկնաբանություններ ու կարծիքներ արտահայտել իրապարակման մեջ, եւ դրա իրավունքն ինքն ունի իբրեւ լրագրող:

ԵՔԵ ՂԱՏԱՎՈՐԸ ԱՅՆ ԱՊԱՏԱԿ ՇԽԵՏԱՊԱՆԵՐ...

Դատական մեկ շրջապտույտից հետո կրկին գործը քննող Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հուլիսի 9-ին կայացրած վճռով վեճը լուծեց հոգուտ քաղաքացետի: Դատավոր Գագիկ Խանդանյանը բավարարեց Իջեւանի քաղաքացետի հայցն ընդդէմ «Հետաքննող լրագրողներին»: Դատարանը վճռեց՝ պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներին»՝ «Ազգ» օրաթերթի եւ www.hetq.am կայքի միջոցով հերքել Ռսկան Սարգսյանի երկու հողվածներում «հրապարակված անհիմն տեղեկությունները»՝ Իջեւանի քաղաքացետարանի գործարար համբավը եւ քաղաքացետ Կ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող փաստերը եւ հաստատել, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում», նաեւ՝ հոգուտ Իջեւանի քաղաքացետարանի բռնագանձել 930 հազար դրամ՝ որպէս փաստաբանական ծախս, ինչպէս նաեւ 22 600 դրամ՝ որպէս պետական տուրքի գումար:

Համաձայն վճռի՝ դատարանի խնդիրն էր պատասխանել երկու հարցի՝

ա/ հրապարակման հիմքում ընկած տեղեկությունները արատավորող են, թե՞ ոչ,

բ/ Նշված տեղեկությունները իրականությանը համապատասխանում են, թե՞ ոչ:

Անհետթէթությունն էլ սկսվել է հենց նրանից, որ դատարանը խախտել է հարցադրումների առաջնահերթությունը՝ առանց փաստերը ստուգելու պետք է որոշեր դրանց արատավորող լինելը կամ չլինելը:

Այդպէս էլ վարվել է, քանի որ դատավորի խնդիրը Իջեւանի քաղաքացետի արժանապատվությունը վիրավորված տեսնելն էր, իսկ հրապարակված տեղեկությունների ճշմարտացիության մեջ համոզվելու կամ չհամոզվելու ցանկություն դատավորը չի էլ ունեցել:

«Հետքի» հրապարակումներում հարցը վերաբերել է Իջեւան քաղաքի



վարչական տարածքում գտնվող «Սպիտակ լիճ» կոչվող ջրամբարից ապօրինի ավազահանմանը: Որ ավազի ապօրինի արդյունահանում է կատարվում նշված վայրում, եւ այն բավականաչափ գրավիչ թիվներ է որոշ անձանց համար՝ նկատի ունենալով տարածքում աշխատող տեխնիկայի քանակությունն ու արդյունահանվող ավազի ծավալները, «Յետաքննող լրագրողներ» կազմակերպությունը այդ փաստը հավաստող լիարժեք ապացույցներ ներկայացրել է դատարանին՝ լուսանկարներ, ավազ արդյունահանելու վերաբերյալ տեսանյութի կրիչը, որում երեւում են նաեւ վարորդներն ու ավազը տեղափոխող մեքենայի համարանիշները եւ այլն:

Նշենք, որ հիշյալ երկու հողվածների հեղինակը հրապարակումները կատարել է լրագրողական մանրակրկիտ աշխատանքի արդյունքում՝ հանդիպել է մարդկանց, հետազոտել է տարածքը, օգտվել է փաստաթղթերից, պատկան մարմիններին հղած գրությունների պատասխաններից, լրատվության սեփական աղբյուրներից:

Լրագրող Ոսկան Սարգսյանը բացատրություն ստանալու համար նաեւ քաղաքապետին է դիմել, սակայն վեջինս հարկ չի համարել բացատրություն տալ նրան կամ ծանոթացնել դատարան ներկայացված գրություններին, որով ցանկանում է հավաստել, որ ինքը նույնպես պայքարել է, որպեսզի դադարեցվի ավազի ապօրինի արդյունահանումը: Հավաքած փաստերը լրագրողին հնարավորություն են տվել որոշակի եզրահանգում անելու, եւ նա օգտվել է իր իրավունքից՝ միաժամանակ գաղտնի պահելով լրատվության աղբյուրները:

Կարելորն այն է, որ լրագրողն իր աշխատանքը կատարել է բարեխղճությամբ՝ պահպանելով մասնագիտական վարքագծի կանոնները, եւ այսպեսով նա պաշտպանված է:

«Մեղադրյալը չի կարող պատասխանատվություն կրել այն դեպքում, երբ վիճահարույց հայտարարությունը ճիշտ է կամ վերաբերում է հասարակական մեծ հետաքրքրություն ներկայացնող դեպքի, որը հրատարակվել է բարեխղճությամբ՝ պահպանելով մասնագիտական վարքագծի կանոնները», - այս մտտեցումը Եվրոպական դատարանն ամրագրել է «Կոլումբանին ընդդեմ Ֆրանսիայի» 2002 թ. կայացված վճռով: «Պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված բոլոր առարկությունները եւ հիմնավորումները դատարանը ճանաչեց անհիմն, քանի որ դրանք հերքվեցին դատաքննությամբ ձեռք բերված ապացույցներով», - ասվում է վճռում:

Դատավորի «ձեռք բերած ապացույցները» իջեւանի քաղաքապետի գրություններն են՝ ուղղված ոստիկանության մարզային բաժանմունքին, որոնք հայցվորը ներկայացրեց դատաքննության ընթացքում՝ ցանկանալով հիմնավորել, որ քաղաքապետն ինքը շահագրգիռ է եղել հարցի լուծումով, սակայն դա նրան չի հաջողվել: Հավաստի չհամարելով «Յետաքննող լրագրողներ» կազմակերպության՝ դատարանին ներկայացված փաստարկները՝ դատավոր Գ. Խանդանյանը անցնում է իր առաջ քաշած հաջորդ հարցի պատասխանի որոնմանը:

Վճռի երկու էջում դատավորը թվարկում է ՀՀ օրենսդրությունը, ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների միջազգային հռչակագիրը եւ միջազգային այլ նորմերն ու դրույթները, որոնցով անձի արժանապատվության իրավունքը բարձրագույն արժեք է հռչակված: Այնուհետեւ «Յետքի» երկու հրապարակումներից առանձնացնում է մեկական

նախադասություն («Մեր ունեցած տեղեկությամբ՝ այս բիզնեսը գտնվում է Իջեանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո...», եւ «Իջեանցի տասնյակ տաքսու վարորդներ, ամեն օր անցնելով մարզկենտրոնի քարուքանդ ճանապարհներով, «բարի խոսքերով» են հիշում քաղաքապետին...»)՝ հիմնավորելու համար, որ դրանով վիրավորել ենք քաղաքապետի արժանապատվությունը:

Նշենք, որ Իջեանի քաղաքապետի ներկայացուցիչը դատարանում երկար ժամանակ ջանում էր ապացուցել, որ ջրամբարը քաղաքապետարանի հաշվեկշռում չի գտնվում, սակայն դատարանին ներկայացված գրություններով նրանք ոչ միայն հիմնավորում են, որ ջրամբարի տերն իրենք են, հետեւաբար՝ նաեւ պատասխանատու այնտեղ կատարվող ցանկացած գործողության համար, այլեւ ցանկացել են հավաստել, որ քաղաքապետն ինքը ի պաշտոնե միջոցներ է ձեռնարկել ապօրինությունը կանխելու համար:

Այսինքն՝ փաստը, որ «Սպիտակ լիճ» կոչվող ջրամբարից կատարվում է ապօրինի ավազահանում, ընդունում է նաեւ Իջեանի քաղաքապետարանը:

Սակայն որտեղի՞ց իմանար լրագրողը, որ քաղաքապետը պայքարում է դրա դեմ, եթե վերջինս զլացել է նրան ներկայացնել այդ գրությունները կամ մեկնաբանել հաջողության չհասնելու պատճառները: Եթե նույնիսկ քաղաքապետը նշված գրությունները ներկայացնէր լրագրողին, միեւնույնն է, լրագրողը պատճառ չունէր անտեսելու ինֆորմացիայի իր աղբյուրները եւ, չբացահայտելով դրանք, ասելու, որ բիզնեսը վերահսկողը քաղաքապետն է:

Ի վերջո, այդ միտքը շարադրելով՝ Ռ. Սարգսյանն այն չի արձանագրել որպէս հաստատված փաստ, այլ նշել է, որ կան տեղեկություններ եւ իր ունեցած տեղեկության հավաստիությունը փորձել է ստուգել նաեւ քաղաքապետից:

Սակայն վերջինս լրագրողի՝ մեկնաբանությունն ստանալու ոչ գրավոր, ոչ բանավոր խնդրանքին չի ընդառաջել: Լրագրողն էլ տարածել է այն, ինչ իր փնտրուածի արդյունքում կարողացել է գտնել:

Տաքսու վարորդը իրավունք չունի՞ «բարի խոսքերով հիշելու» քարուքանդ ճանապարհների համար պատասխանատու քաղաքապետին, թե՞ լրագրողը իրավունք չունէր գրի առնելու քաղաքացու արտահայտած միտքը:

Համաձայն այս վճռի՝ իրավունք չունէր ոչ գրի առնելու, ոչ էլ դատողություններ անելու իր հավաքած փաստերի շուրջ: Դատավորը սահմանափակվում է այդ իրավունքը, որը լրագրողն ունի մասնագիտության բերումով, այլապէս անհնարին կդառնար նրա աշխատանքը:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորէն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից:

Այսօրինակ դատական վեճեր հաճախ են քննվել եւ՝ ոչ միայն մեր երկրում: Դատավորն այս վեճը լուծելու համար նոր հայտնագործու-

թյուն անելու կարիք չունեն, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) այս հարցի պատասխանը բազմիցս տվել է իր կայացրած վճիռներով և Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (խոսքի ազատության իրավունք) կիրառելու իր հանձնարարականով (1994 թ. հունվարի 18):

«Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության լրջագույն հիմքերից է, նրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման նախապայմանը: Այն տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների կամ գաղափարների» վրա, որոնք դրականորեն են ընդունվում կամ վիրավորական չեն, այլև այնպիսիների, որոնք վիրավորական են, ցնցող կամ անհանգստացնող պետության կամ հասարակության որեւէ հատվածի համար: Այդպիսին է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն», («Յանտիսայնը ընդդեմ Ավստրիայի»):

«Քաղաքական կամ հասարակական գործիչները, որոնց թվին ՄԻԵԴ-ը դասում է նաև համայնքների ղեկավարներին, պետք է առավել հանդուժող լինեն քննադատության հանդեպ, քան մասնավոր անձինք, քանի որ «ի տարբերություն վերջիններիս՝ հասարակական գործիչը գիտակցաբար ընդունում է, որ իր յուրաքանչյուր խոսք կամ արարք կարող է լուրջ քննության առիթ հանդիսանալ լրագրողների կամ լայն հանրության համար և պետք է, հետեւաբար, դրսևորի տղերանտության ավելի մեծ աստիճան» («Լինգտենս ընդդեմ Ավստրիայի», 1986 թ):

Այս երկու միտքը, որոնք ՄԻԵԴ-ը արտահայտել է նույնաբնույթ դատական վեճերի առիթով, ուղեցույց են անդամ բոլոր երկրների դատարանների համար:

Այլ նպատակներ չհետապնդող դատարանն ընդամենը պետք է կիրառեր այն մոտեցումները, որով պաշտպանության տակ է առնվում լրագրողական արդյունքները չբացահայտելու կարելիությունը, «հակառակ դեպքում կխաթարվի մամուլի՝ որպես հասարակության շահերի պաշտպանի կենսականորեն կարելու դերը», միաժամանակ լրագրողին չէր զրկի հավաքած փաստերի շուրջ դատողություններ ու մեկնաբանություններ անելու իրավունքից, որը դատավորը սահմանափակել է կայացրած վճռով:

Պրն Խանդանյանը գուցե ծանոթ չէ՞ Եվրադատարանի այս մոտեցումներին, այդ պատճառով է այլ եզրահանգման եկել: Ավելին, կայացված վճռի բովանդակությունը կասկած է հարուցում, թե դատավորը կարողացել է հրապարակված հոդվածները:

Տպավորություն է ստեղծվում, որ Գ. Խանդանյանին մտահոգողը եղել է միայն 930 հազար դրամը քաղաքապետին վերադարձնելը, որը ետ չստանալու դեպքում քաղաքապետն, իրոք, կարող էր պատվի ու արժանապատվության լուրջ խնդիր ունենալ, հատկապես իր ավագանու հետ լարված փոխհարաբերությունների այս շրջանում:

Պրն Ներսիսյանն իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը պաշտպանելու համար քաղաքապետարանի բյուջեից դատական ծախսերի համար գումար հատկացնելուն դեմ արտահայտված ավագանուն խոստացել էր, որ այն կվերադարձնի բյուջե:

Այս վճռով, թերեւս, շահեկան վիճակում հայտնվեց քաղաքապետը,



իսկ ի՞նչ շահեց արդարադատությունը, որին կոչված է ծառայելու դատավոր Գագիկ Խանդանյանը: Միայն այն, որ ես մեկ վճռով խորացրեց դատական համակարգի նկատմամբ անվստահությունը:

Պրն Խանդանյանը, պարզվում է, իր գործունեության ընթացքում հաճախ է հանգում այսպիսի անվերապահ համոզմունքների: Արդարադատության խորհուրդը ամիսներ առաջ կրան նկատողություն հայտարարեց՝ գուցորդված վեց ամիս ժամկետով աշխատավարձի 25%-ից զրկելով այն պատճառով, որ ԱԽ անդամ դատավորը անվերապահ համոզմունք էր ունեցել, որ մեկ անգամ արդեն Իստերպոլում հաշվառված անձը, երկրորդ անգամ ձեռքակալվելով «հերոին» տեսակի թմրամիջոց պահելու համար, չի թաքնվի քննությունից և մերժել էր կալանքի թույլտվություն ստանալու քննիչի որոշումը: Այս դեպքով, սակայն, նրան չի հաջողվել շրջապատին փոխանցել իր անկեղծ համոզմունքը:

Արտահայտվելու ազատությանը միջամենը որեւէ իրավաչափ նպասակ չի հնարանդել

Սա «Յետաքննող լրագրողների» վերաքննիչ բողոքի հիմնավորումներից մեկն է, որը 2010 թ. նոյեմբերի 10-ին քննության առավ վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Նախշուն Տավարացյանի: «Յետաքննող լրագրողները» պնդում են, որ առաջին ատյանի դատարանում խախտվել են Սահմանադրության 27-րդ և Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածների պահանջները եւ չի կիրառվել 33 դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Ըստ այդմ՝ դատարանը, բավարարելով Իջեանի քաղաքապետարանի հայցը, միջամտել է «Յետաքննող լրագրողներ» հ/կ-ի խոսքի ազատության իրավունքի իրականացմանը, որը իրավաչափ նպատակ չի հետապնդել: Ավելին, լրագրողի արտահայտվելու ազատությանը միջամտելը չի եղել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: դատարանը հաշվի չի առել իրապարակման թեման, մամուլին եւ հասարակական կազմակերպություններին առավել մեծ պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությունը, քննադատության թիրախ դարձած հայցվորի զբաղեցրած պաշտոնը, հոդվածներում օգտագործված ձեւակերպումները եւ պատասխանողից որպես փոխհատուցում պահանջվող գումարի չափը:

Յեղիակ Ոսկան Սարգսյանն իր հոդվածներում անորադարձել է Իջեան քաղաքի վարչական տարածքում գտնվող «Սպիտակ լիճ» արհեստական ջրամբարից ավազի ապօրինի արդյունահանման հարցին, որն անփշականորեն առնչվում է Իջեան քաղաքային համայնքի քնակիչների շահերին: Հոդվածի վերնագիրը եւ բուն հոդվածը, ըստ այդմ, հարցադրումներ են պարունակում. «Ո՞ւմ գրպանն են մտնում ավազահանքի փողերը» եւ «Ովքե՞ր են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք լիճը տիղմից մաքրելու պատճառաբանությամբ, անօրինական չհարկվող մեծ եկամուտներ են ստանում»:

«ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային

շահին վերաբերող քննարկումների պարագայում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանափակումները չեն կարող լայն լինել»,- հիմնավորում է «Յետաքննող լրագրողների» ներկայացուցիչ, փաստաբան Վահե Գրիգորյանը՝ Նշելով, որ Վարուժան Ներսիսյանի կողմից ավագահանման գործունեության վերահսկողության մասին դատողությունը կատարվել է այն բանից հետո, երբ, կատարելով մանրամասն բարխիղճ ուսումնասիրություններ, լրագրողը հանգել է նման դատողության:

Ինչ վերաբերում է գումարային պահանջին, ապա, ըստ փաստաբանի, այստեղ եւս խախտվել է համաչափության սկզբունքը, քանզի 930 հազար դրամը ակնհայտորեն գերազանցում է «Յետաքննող լրագրողների» ամսական եկամուտը, իսկ դատարանի տվյալ վճիռը կարող է վտանգել նաեւ «Յետաքննող լրագրողների» գործունեության հետագա շարունակությանը:

«Յետաքննող լրագրողները» դատարանի ուշադրությունն են հրավիրել նաեւ այն հանգամանքի վրա, որ այս գործի քննությունը սկսվել է 2008 թ.-ի հունիսից, անհարկի ձգձգումներով քննությունը տեւել է արդեն 25 ամսից ավելի եւ առ այսօր չի լուծվել, ինչի կապակցությամբ խնդրել են ապահովել գործի քննության համար ողջամտորեն հնարավոր արագություն՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 6(1) հոդվածով նախատեսված ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից՝ «Յետաքննող լրագրողները» պահանջել են ամբողջությամբ բեկանել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը եւ փոփոխել այն՝ մերժելով հայցը: Սակայն վերաքննիչ դատարանը «Յետաքննող լրագրողների» վերաքննիչ բողոքը բավարարեց մասնակի, մասնակիորեն բեկանեց եւ փոփոխեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը, համաձայն որի՝ փոփոխեց «Յետաքննող լրագրողներ» ՅԿ-ից հօգուտ հայցվոր Իջեւանի քաղաքապետարանի՝ 930 հազար դրպես փաստաբանական ծախս բռնազանձելու պահանջը՝ դարձնելով 450 հազար դրամ:

Դատարանը հայցը մնացած մասով մերժեց, իսկ վճիռը մնացած մասով թողեց անփոփոխ:

«Յետաքննող լրագրողների» վճռաբեկ բողոքը վերադարձվեց:

Կազմակերպությունը 2011 թ. Նոյեմբերին դիմում է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:



Իջեանի քաղաքապետարանն
ընդդեմ «Հետաքննող լրագրողների».

Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի նախադեպյաին
իրավունքը՝
Կրկին «Ճայն ար առոյ յանադասի»



Վարուժան Ներսիսյան

2001 թ. հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ, որով այդ կառույցի առջեւ ստանձնեց մի շարք պարտավորություններ այդ թվում՝ նաեւ անդամակցություն ստանալու պահին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) ստորագրման եւ անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ՄԻԵԿ-ի վավերացման պարտավորություններ: Մեր պետությունը վավերացրել է ՄԻԵԿ-ը 2002 թ. ապրիլի 26-ին: ՄԻԵԿ-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վերջնական վճիռներն իրենց մասնակցությամբ վեճերով:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2004) 5 հանձնարարական-առաջարկության 3-րդ կետով առաջարկվում է, որ անդամ պետություններն իրենց իրավական համակարգում Կոնվենցի-



ան կյանքի կոչեն ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Հետեւելով այս առաջարկությանը՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասն ամրապրում են. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Պետք է փաստել, սակայն, որ Հայաստանի Հանրապետության դատարանների գերակշիռ մեծամասնությունը շարունակում է անուշադրության մատնել ՄԻԵԿ-ի դրույթները եւ ՄԻԵԴ-ի՝ այդ դրույթները մեկնաբանող բազում կարեւորագույն սկզբունքներ¹: Ասվածի վառ ապացույցն են «Իջեւանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող լրագրողների» քաղաքացիական գործի մոտ 2 տարի տեւած դատաքննության ընթացքում բոլոր 3 ատյանների դատարանների կայացրած դատական ակտերը:

Հիշեցնենք, որ 2008 թ. մայիսին «Ազգ» օրաթերթում եւ «www.hetq.am» ինտերնետային կայքում տեղադրված հրապարակման կապակցությամբ Իջեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանն իր եւ քաղաքապետարանի անուկից հայց էր ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներին» հերքելու իր պատիվը եւ արժանապատվությունը, ինչպես նաեւ իր եւ Իջեւանի քաղաքապետարանի գործարար համբավն արատավորող տեղեկությունները եւ փոխհատուցել կրած փաստաբանական ծախսերը: Դատարանն իր վճռով մերժել էր հայցը, որից հետո Վարուժան Ներսիսյանը բողոքարկել էր վճիռը ՀՀ վերաքննիչ դատարան: Վերջինս բավարարել էր վերաքննիչ բողոքը: «Հետաքննող լրագրողներն» այնուհետեւ վճռաբեկ բողոք էին ներկայացրել ՀՀ Վճռաբեկ դատարան, որը, սակայն, վերադարձվել էր: Այսպիսով, գործն ուղարկվել էր ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Իր 2010թ. հունիսի 9-ի վճռով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն այս անգամ բավարարել էր հայցը:

«Հետաքննող լրագրողների» վերաքննիչ բողոքը մերժվել էր, իսկ դրան հետեւած վճռաբեկ բողոքը՝ վերադարձվել:

Այս քաղաքացիական գործով բոլոր 3 ատյանների դատարանների կողմից կայացված դատական ակտերի ամենահպանցիկ քննությունն իսկ ցույց է տալիս, որ առնվազն խոսքի ազատության ոլորտում մեր դատարանները հետեւողականորեն անտեսում են ՄԻԵԿ-ը եւ վերջինիս դրույթները մեկնաբանող ՄԻԵԴ-ի սկզբունքները: Այսպես, գործի առաջին քննության ժամանակ թեեւ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների

1. American Bar Association, Rule of Law Initiative, Judicial Reform Index for Armenia, Volume III, January 2008.

ընդհանուր իրավասության դատարանն իր վճռում վկայակոչել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուրի արտահայտվելու ազատության իրավունքը, հետագայում այն ընդհանրապես չէր անդրադարձել նույն հոդվածի 2-րդ մասին: Մինչդեռ, 10-րդ հոդվածի 2-րդ մասն է, որ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայությամբ միայն անհատի արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումն ընդհանրապես որեւէ հղում չէր պարունակում ՄԻԵԿ-ին և ոչ էլ արտահայտվելու ազատության բնագավառում ՄԻԵԿ-ի կողմից սահմանված ընդհանուր սկզբունքներին: Նույնպիսին էր նաև ԷՀ Կճռաբեկ դատարանի մոտեցումը:

Գործի նոր քննության ժամանակ պատկերը նույնն է: Թեև ընդհանուր իրավասության դատարանն իր վճռում վկայակոչում է մի շարք միջազգային փաստաթղթեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Կոնվենցիան և նույնիսկ «Հիմնարար իրավունքների մասին» եվրոպական Միության խարտիան, այն, այդուհանդերձ, ընդհանրապես որեւէ անդրադարձ չի կատարում 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին և ոչ էլ ՄԻԵԿ-ի համապատասխան նախադեպերին: Հարց է, թե որքանով է դատարանն ընդհանրապես տեղյակ, որ «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական Միության խարտիան Հայաստանի Հանրապետության համար ունի զուտ ուղենիշային արժեք՝ պարտադիր լինելով միայն Եվրոպական Միության անդամ հանդիսացող պետությունների համար: Դատարանի այն պնդումը, որ Խարտիան «ապահովվում է» Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի դրույթներով, հարցականի տակ է դնում Եվրամիության իրավական ակտերի մասին մեր դատարանի պատկերացումները: Վերաքննիչ դատարանը, իր հերթին, «լրջագույն» փիլիսոփայական խորհրդածություններով փորձում է բացահայտել «պատիվ», «արժանապատվություն» և «գործարար համբավ» հասկացությունների էությունը: Այսպես, «պատիվը անհատի հասարակական գնահատականն է, քաղաքացու որոշ հոգեբուր և սոցիալական հատկանիշները: Այն մարդու համար հանդիսանում է այնպիսի բարիք, ինչպիսին է իր կյանքը, առողջությունը և ազատությունը: Մարդն, ով գնահատում է իր պատիվը, հավասարեցնում է այն իր բարի համբավին և խղճին»: Կամ՝ «քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գործարար համբավն անխզելիորեն կապված են իրավունքի հետ...»: Թե ինչ ասել է «գործարար համբավի անխզելի կապվածություն իրավունքի հետ», չեմ էլ համարձակվում վերլուծել: Կբավարարվեմ այն փաստի արձանագրմամբ, որ իրավափիլիսոփայական մտքի այս անհաս սլացքի կողքին չենք գտնում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի դրույթների անգամ մակերեսային վերլուծություն: ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի մասին ընդհանրապես խոսելն ավելորդ է: ՀՀ Կճռաբեկ դատարանն իր հերթին հիմնավոր է համարում վերաքննիչի որոշումը: Մինչդեռ ՄԻԵԿ-ի դրույթների և ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի լուսի ներքո տվյալ գործը չվերլուծելն այն առաջին լուրջ սխալն է, որի վրա կենտրոնանալու է ՄԻԵԿ-ը, եթե «Հետաքննող լրագրողները» որոշեն դիմել ՄԻԵԿ:



Վերադառնանք, սակայն, գործի փաստերին: Եվ այսպես, 2008 թ. մայիսի 20-ին «Ազգ» օրաթերթի ներդիրում տպագրվել է Ռսկան Սարգսյանի «Ում գրպանն են մտնում ավագահանքի փողերը» հոդվածը, որտեղ մասնավորապես նշվել է. «Դիլիջան քաղաքում ընթացող շինարարության համար այստեղ ավագ տեղափոխող վարորդը վկայեց, որ լճից մի մեքենա ավագ վերցնելու համար 8.000 դրամ են վճարում, ավելի մեծ տարողությամբ մեքենա բեռնելու համար մինչև 20.000 դրամ է պահանջվում: Ովքե՞ր են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք, լիճը տիղմից մաքրելու պատճառաբանությամբ, անօրինական չհարկվող մեծ եկամուտներ են ստանում:

Մեր ունեցած տեղեկությամբ՝ այս բիզնեսը գտնվում է Իջեանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո: Այն պաշտոնապես ճշտելու համար 2007 թ. հոկտեմբերին, լճից ավագի արդյունահանման կապակցությամբ, նամակով դիմեցիք Տավուշի մարզի դատախազություն...»: Հոդվածը հիշատակում էր, որ հոդվածի թեմային վերաբերող հարցադրումներով խմբագրությունը նամակ էր ուղարկել Տավուշի մարզպետին, քաղաքապետ Վարուժան Ներսիսյանին և Քնապահպանական պետական տեսչության Տավուշի մարզային բաժին: 20 օր անց դեռևս որեւէ պատասխան չէր ստացվել մարզպետից կամ քաղաքապետից, և հոդվածը լույս էր տեսել: 2008 թ. մայիսի 26-ին Նույն թեմայով տեղեկություններ էին տեղադրվել նաև www.hetq.am ինտերնետային կայքում:

Հիշյալ հոդվածները կարդացած անձանց համար դժվար չէ տեսնել, որ դրանք ընդհանրապես որեւէ ուղղակի կամ անուղղակի անդրադարձ չեն պարունակում Իջեանի քաղաքապետարանին: Բացի այդ, չի կարելի չհամաձայնել «Յետաքննող լրագրողների» վերաքննիչ բողոքի այն պնդման հետ, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունի համայնքը՝ գյուղական կամ քաղաքային, այլ ոչ թե՝ քաղաքապետարանը կամ գյուղապետարանը: Վերջինս ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմ, որին, ըստ կազմակերպության ներկայացուցիչ փաստաբան Վահե Գրիգորյանի, իրավաբանական անձի կարգավիճակ վերագրելն ակնհայտորեն շփոթ կարող է ստեղծել «համայնքի ղեկավար», «համայնք», «իրավաբանական անձ», «տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմ» հասկացությունների միջև: Յետևաբար, հայցը չի կարող վերաբերել Իջեանի քաղաքապետարանի գործարար համբավի արատավորմանը:

Ջարկ է նշել գտնել, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լրատվամիջոցների դեմ այսօրինակ քաղաքացիական գործերով հայցվոր չճանաչելը համահունչ է նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի դիրքորոշմանը, որով ԵԽԿՎ-ն հորդորել էր Ռուսաստանի Դաշնությանը վերացնել լրատվամիջոցների և լրագրողների դեմ այդ մարմինների, օրինակ՝ տարբեր նախարարությունների, վարչությունների և այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայցեր հարուցելու հնարավորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ **վերջիններս չեն կարող ունենալ արժանապատվություն, պատիվ կամ հեղինակություն**: Ըստ այդմ՝ ԵԽԿՎ-ն հորդորել էր Ռուսաստանի Դաշնության իշխանություններ

րին փոփոխությունների ենթարկել իր օրենդրությունը եւ արգելել այդ մարմիններին պաշտպանել իրենց «հեղինակությունը» քաղաքացիական հայցվորի կարգավիճակով՝ միեւնույն ժամանակ չարգելելով նրանց այդ անելու որպէս այդ մարմինների պաշտոնատար անձինք²:

Անտեսելով վերաքննիչ բողոքի այս բոլոր պնդումները՝ ՀՀ վերաքննիչ դատարանը, գործը երկրորդ անգամ քննելիս, եկել է այն ցնցող եզրահանգման, որ հրապարակումը վերաբերում է «եւ քաղաքապետ Վ. Ներսիսյանին՝ որպէս պաշտոնատար անձ (համայնքի ղեկավար) եւ հետեւաբար անմիջականորեն Իջեւան քաղաքային համայնքին»: Դատարանը հրապարակումը վերաբերելի է համարել նաեւ Իջեւանի քաղաքապետարանին այն պատճառաբանությամբ, որ «վերջինս՝ ի դէմս Իջեւանի համայնքի ղեկավար Վ. Ներսիսյանի, իրականացնելով տեղական ինքնակառավարում հանդէս է գալիս համայնքի անունից եւ գործում է ի շահ նրան»: Նույն տրամաբանությամբ՝ իր գործարար համբավն արատավորված համարելու դեպքում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը կարող է հայց ներկայացնել ոչ միայն իր, այլեւ իր ընտրագանգվածի, ՀՀ վարչապետը՝ գործադիր իշխանության, իսկ ՀՀ Նախագահը՝ պետության անունից:

Ինչ վերաբերում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին, ապա այդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:
2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպէս եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից պարզ է դառնում, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթէ միջամտու-

2. *Surek v Turkey, No 26682/95, մաս 61*, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=S%FCrek%20%7C%20v%20%7C%20Turkey&sessionid=38438978&skin=hudoc-en>

թյունը «սահմանված է օրենքով», ծառայում է հողվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» մեկին, տվյալ դեպքում՝ անձի «հեղինակությունը պաշտպանելուն» և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԴ-ը որոշի, թե արդյո՞ք գանգատի առարկա միջամտությունը բխում է «ճշող հասարակական կարիքից», արդյո՞ք այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին», և արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի և բավարար են»³: Սույն քաղաքացիական գործով կայացված դատական ակտերը ակնհայտորեն չեն բավարարում ինչպես երկրորդ (վերելում արդեն խոսվեց այս մասին՝ կապված Իջեանի քաղաքացիատարա-նի հայցվորի կարգավիճակի հետ), այնպես էլ՝ երրորդ պայմանները:

Այսպես, ՄԻԵԴ-ը բազմիցս շեշտել է, որ.

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուններից է և նրա առաջընթացի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: ...Այն կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Բացի այդ, քաղաքական խոսքի կամ հանրային շահին առնչվող հարցերի քննարկումների սահմանափակումները պետք է լինեն խիստ նեղ⁴: Ավելին, քաղաքական կամ հասարակական գործիչները, որոնց թվին ՄԻԵԴ-ը դասում է նաև համայնքների ղեկավարներին ու ավագանու անդամներին⁵, պետք է առավել հանդուրժող լինեն քննադատության հանդեպ, քան մասնավոր անձինք, քանի որ «ի տարբերություն վերջիններիս՝ հասարակական գործիչը գիտակցաբար ընդունում է, որ իր յուրաքանչյուր խոսք կամ արարք կարող է լուրջ քննության առիթ հանդիսանալ լրագրողների կամ լայն հանրության համար և պետք է, հետեւաբար, դրսեւորի հանդուրժողականության ավելի մեծ աստիճան»⁶: ՄԻԵԴ-ի կարեւորագույն սկզբունքներից մեկն էլ այն է, որ լրագրողական ազատությունը ներառում է նաև չափազանցության, նույնիսկ սադրանքի որոշակի աստիճան⁷:

3. *Sunday Times v. the United Kingdom (no. 1)*, մաս 62

<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=Sunday%20%7C%20Times&sessionId=38628289&skin=hudoc-en>

4. *Sörek v Turkey*, No 26682/95, մաս 61,

<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=S%FCrek%20%7C%20v%20%7C%20Turkey&sessionId=38438978&skin=hudoc-en>

5. *Lombardo and Others v Malta*, Application no. 7333/06, *Dabrowski v Poland*, Application no 18235/02:

6. *Lingens v Austria*, No 9815/82, մաս 42, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=38438978&skin=hudoc-en&action=request>

7. *Prager and Oberschlick v Austria*, մաս 38, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=38438978&skin=hudoc-en&action=request>



իր երկարատե գործունեության ընթացքում ՄԻԵԴ-ը քննել է նույնանման փաստական հանգամանքներով մի քանի գործեր, որոնց սկզբունքները վստահաբար կիրառելի են նաև այս գործի *Դաբրովսկին ընդդեմ Լեհաստանի, Դյուլդինս ու Կիսլովս ընդդեմ Ռուսաստանի, Կարմանս ընդդեմ Ռուսաստանի, Գրինբերգս ընդդեմ Ռուսաստանի* շրջանակներում: Դրանցից են *Ֆիլիպովիչս ընդդեմ Սերբիայի, Սոկոլովսկին ընդդեմ Լեհաստանի, Լոմբարդոն եւ այլք ընդդեմ Մայթայի* եւ այլն: Արժանահիշատակ է, մասնավորապես, *Ֆիլիպովիչս ընդդեմ Սերբիայի*⁸ գործը, որի շրջանակներում ՄԻԵԴ-ը քննության էր առել մի հարկային տեսչի դիմում, որը հասարակական հավաքի ժամանակ Սերբիայի փոխվարչապետի ներկայությամբ հրապարակավ հայտարարել էր, որ Բաբուչինայի քաղաքապետը «ճիշտ մարդ չէ իր պաշտոնի համար», քանի որ նա «արդեն իսկ յուրացրել է 500 000 գերմանական մարկ», չնայած այն հանգամանքին, որ ներպետական դատարանները որեւէ մեղադրական դատավճիռ չէին կայացրել քաղաքապետի նկատմամբ: Այս գործում հարկային տեսուչի արտահայտվելու ազատության իրավունքի խախտում հայտնաբերելիս ՄԻԵԴ-ը հիմնվել էր իր իսկ կողմից սահմանված մի շարք սկզբունքների վրա այդ թվում այն՝ որ դիմումատուի քննադատության թիրախը քաղաքապետն է, որը հասարակական գործիչ է, որ ներպետական դատարանի կողմից սահմանված փոխհատուցման չափը հավասար էր դիմումատուի վեց ամսվա վարձատրությանը, եւ որ հստակորեն դիմումատուն ուներ միանգամայն օրինավոր պատճառ՝ հավատալու, որ քաղաքապետը, թերեւս, խուսափել է հարկեր վճարելուց, եւ որ այս մեղադրանքն անհիմն անձնական հարձակում չէ քաղաքապետի վրա:

Ուշադրության արժանի է նաև *Սոկոլովսկին ընդդեմ Լեհաստանի* գործը, որը վերաբերում էր մի լեհ քաղաքացու արտահայտվելու ազատության սահմանափակմանը: Քաղաքացին մեղադրվել էր քաղաքական բնույթի բուկլետ բաժանելու մեջ, որի մեջ սուր քննադատության էին արժանացել Վոդզիսլաու համայնքի ավագանու անդամները, որոնք գաղտնի քվեարկությամբ իրենք իրենց ընտրել էին տեղական ընտրությունների ընտրական հանձնաժողովներում: Քննադատության հեղինակը դարձյալ որեւէ աղբյուր կամ ապացույց չէր վկայակոչել: Ավագանու անդամներից մեկը մեղադրել էր նյութի հեղինակին զրպարտության մեջ, եւ ներպետական դատարանները մեղադրական դատավճիռ էին կայացրել: ՄԻԵԴ-ը, սակայն, ճանաչել էր դիմումատուի արտահայտվելու ազատության ուսահարումը՝ համարելով, որ բուկլետը վերաբերում է հանրությանը հետաքրքրող եւ մտահոգող հարցերի, այն է՝ համայնքի ավագանու անդամների կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում կատարված որոշ անթույլատրելի արարքների:

Համաձայն ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի՝ խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները քննության առնելիս ներպետական դա-

8. *Filipovi? v Serbia, No 27935/05*,

<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=8&portal=hbkm&action=html&highlight=10%20%7C%20mayor%20%7C%20defamation&sessionId=38553586&skin=htmludoc-en>



տարանները պարտավոր են գնահատել վիճարկվող հոդվածների ձեւակերպումները՝ պարզելու, թե արդյոք դրանցում խոսքը գնում է փաստերի, թե գնահատողական դատողությունների մասին: Ռուսաստանի Դաշնության դեմ ՄԻԵԴ-ի կողմից կայացված մի շարք վճիռների, այդ թվում՝ *Դյուդինն ու Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի*, *Կարմանն ընդդեմ Ռուսաստանի*, *Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի* գործերում ՄԻԵԴ-ը մանրագնին վերլուծության էր ենթարկել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածը, որի համաձայն. «Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը»: Առաջին հայացքից դժվար չէ նկատել, որ 33 քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասը (Նախքան 2010)թ. մայիսի փոփոխությունները) տառացիորեն կրկնում է վերոհիշյալ հոդվածը: Իր վերլուծության արդյունքում ՄԻԵԴ-ը գտել էր, որ Ռուսաստանի Դաշնության դատական մարմինները դիմումատուների հրապարակումներում օգտագործած բոլոր ձեւակերպումները դիտել են որպես փաստեր՝ առանց նույնիսկ քննության անելու: Դրանց՝ գնահատողական դատողություններ, այն է՝ կարծիք լինելու հնարավորությունը: Ռուսաստանի դատարանների կողմից այդ վերլուծությունը չկատարելու պատճառը Եվրոպական դատարանը համարել էր ՌԴ քաղաքացիական օրենսգրքում կիրառվող «տեղեկություններ» («*факты*») եզրը, որը հնարավորություն էր տվել տարբերակում կատարել փաստերի եւ գնահատողական դատողությունների միջեւ: Ըստ այդմ՝ Ռուսաստանի Դաշնության դատարանները հանգել են այն եզրակացության, որ քաղաքացիական գործերում բոլոր այդօրինակ «տեղեկությունների» համապատասխանությունն իրականությանը ենթակա է ապացուցման⁹: Մինչդեռ ՄԻԵԴ-ը բոլոր հիշյալ գործերը քննելու արդյունքում հրապարակումներում օգտագործված ձեւակերպումները համարել է գնահատողական դատողություններ՝ պնդելով, որ «Դատարանը մշտապես այն կարծիքին է եղել, որ մինչ փաստերի անկայությունը կարելի է ցույց տալ, որ գնահատողական դատողությունների՝ իրականությանը համապատասխանելու հարցը ապացուցման ենթակա չէ: Գնահատողական դատողությունն ապացուցելու պահանջն անհնար է իրականացնել, եւ այն խախտում է կարծիքի ազատությունը, որը 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է»¹⁰: «Չետաքննող լրագրողների» վերաբերյալ բողոքում վկայակոչված այս եւ այլ գործերը նույնպես վերաքննիչ դատարանը մատնել է կատարյալ անուշադրության եւ ընդհանրապես չի անդրադարձել այն հարցին, թե որքանով կարող են հրապարակման՝ խնդրո առարկա ձեւակերպումները դիտվել որպես փաստեր կամ գնահատողական դատողություններ:

9. *Goodwin v UK, No 544, մաս 39*, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Goodwin&sessionid=38628963&skin=hudoc-en>
 10 *Jersild v Denmark, No 15890/89, մաս 35*, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Jersild%20%7C%2010&sessionid=38629172&skin=hudoc-en>

Մինչդեռ «Ազգ» օրաթերթի եւ www.hetq.am ինտերնետային կայքի հիշյալ հրապարակումն իրականում գնահատողական դատողություն է եւ ունի միանգամայն արդարացված փաստական հիմք: Առաջին կողմերը չեն վիճարկում այն հարցը, որ լճից կատարվող ավազահանությունն ապօրինի է: Դատարանում հայցվորը նշում է, որ իր կողմից Իջեանի ներքին գործերի բաժին դիմումներ են ներկայացվել, որով պատկան մարմինները տեղեկացվել են «Սպիտակ լճից» ապօրինի ավազահանության մասին: Զոդվածի հիմնական ուղերձը, այսպիսով, ոչ թե կոնկրետ անձի հասցեին զուտ մեղադրանք ինչեցնելն է, այլ, առավելապես, հանրությանը մտահոգող հիմնախնդիրը՝ ապօրինի ավազահանության հարցը քննարկելը: Եթե ավազահանությունն ապօրինի է, ապա հստակորեն դրանից շահույթ են ստանում մեկ կամ մի քանի անհատներ կամ կազմակերպություններ, սակայն ոչ՝ համայնքը կամ պետությունը: Զոդվածի վերնագիրը եւ բուն հոդվածը, ըստ այդմ, հարցադրումներ են պարունակում. «Ու՞մ գրպանն են մտնում ավազահանքի փողերը» եւ «Ովքե՞ր են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք լիճը տիղմից մաքրելու պատճառաբանությամբ անօրինական, չհարկվող մեծ եկամուտներ են ստանում»: Այն պնդումը, որ «բիզնեսը գտնվում է Իջեանի քաղաքացւոյ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո», ավելի շատ սուբյեկտիվ կարծիք է, քան փաստական մեղադրանք: Ամեն դեպքում այն զուրկ չէ բավարար փաստական հիմքից՝ վարորդի կողմից տրամադրված տեղեկությունները, Տավուշի մարզի դատախազությանն ուղարկված հարցումը, «Սպիտակ լճի» աշխարհագրական դիրքը Իջեան քաղաքի վարչական սահմաններում, ինչպես նաեւ քաղաքացւոյ Վարուժան Ներսիսյանի պաշտոնավարման տարիների ընթացքում ապօրինի ավազահանության շարունակական բնույթը: Եվ, վերջապես, այս գործում որոշիչ է նաեւ այն, որ տեղեկատվությունը տարածվել է 2 լրատվամիջոցի կողմից: ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ իր սահմանած սկզբունքները վերաբերում են ցանկացած արտահայտության, սակայն դրանք ավելի քան խստորեն պետք է պահպանվեն լրատվամիջոցների եւ նրանց ներկայացուցիչների նկատմամբ, որոնք կատարում են «հանրային հսկիչի» գործառնույթ»¹¹ տեղեկություններ հաղորդելով հանրությանը, վերջինիս շահերին վերաբերող ցանկացած հարցի շուրջ¹²:

Վերոգրյալի լույսի ներքո հայցը ենթակա էր մերժման: Կարծում եմ, որ Մարդու իրավունքների դատարան դիմելու դեպքում վերջինս անպայմանորեն կճանաչի «Յետաքննող լրագրողների» խոսքի ազատության խախտման փաստը:

Լուսինե Դակոբյան **Իրավաբան**

11. *Goodwin v UK, No 544, մաս 39*, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Goodwin&sessionid=38628963&skin=hudoc-en>

12. *Jersild v Denmark, No 15890/89, մաս 35*, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Jersild%20%7C%2010&sessionid=38629172&skin=hudoc-en>

**Երեւանի հումանիտար
 քննչական ծախսերի
 հրաժարվեց «Նեֆի»
 դեմ ներկայացրած
 հայցից**

**ԵՐԵՎԱՆԻ
 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
 ԻՆՍՏԻՏՈՒՏ
 ՌԵԿՏՐԱՍ**

102

ԵՐԵՎԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ
 հայրադարձում է բնօրոննություն՝
 ճապոններն, ցինարն, հունարեն, հնդկերեն,
 իրալերեն, իտալաներեն և անգլերեն
 լեզուների գծով:



ՊԱՏՈՍԿԱՆՈՒՄ
 21.5-ն
 Եւ կրագործները
 37

Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտոր Միքայել Ամիրխանյանը 2010 թ. հուլիսին դիմել էր դատարան՝ պահանջելով հերքել «Յետք» շաբաթաթերթի լրագրող Անի Հովհաննիսյանի «Այո, ես բիզնես եմ անում», -ասում է ռեկտորը» հոդվածը (N 21, 03.06.2010), որը, ըստ հայցի, արատավորել է ռեկտորի պատիվն ու արժանապատվությունը և գործարար համբավը: Միքայել Ամիրխանյանը պահանջել էր նաև հոգուտ իրեն բռնագանձել պատճառված նյութական վնասը՝ 200 հազար դրամ, ինչպես նաև 4.000 դրամ նախապես վճարված պետական տուրքը:

Հայցվորը նշել է, որ հոդվածագիրը, յուրաքանչյուր անգամ, իբր վերարտադրելով ինստիտուտի ցինարների բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Մալիշենկոյի բերած փաստերը, ջանքեր չի խնայել Միքայել

Ամիրխանյանի անձը ներկայացնել բացասական կողմերով, արատավորել կրա պատիվն ու արժանապատվությունը եւ գործարար համբավը:

«Յողվածագիրը նստմացրել եւ բացասական կողմերով է հանրությանը ներկայացրել նաեւ Երեւանի հումանիտար ինստիտուտին որպէս բուհի՝ իրավաբանական անձի: Արատավորել է նրա գործարար համբավը, հետեւաբար նաեւ իմը, որքանով ես եմ հանդիսանում այդ բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադիրն ու ռեկտորը»,- նշել է Միքայել Ամիրխանյանը:

Յողվածի հեղինակը ներկայացրել է Երեւանի հումանիտար ինստիտուտի վիճակը, նշել, որ ինստիտուտը բաղկացած է 4 լսարաններից եւ գտնվում է Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի առաջին հարկում: Այնուհետեւ նկարագրել է Յումանիտար ինստիտուտի ուսանողներից մեկին՝ Գայանէ Մալիշենկոյին որպէս թարգմանիչ մի ծրագրում ներգրավելու եւ պայմանագրից ավելի քիչ վճարելու մասին պատմությունը: Լրագրողն այդ ամենը ներկայացրել է Գայանէի պատմածներով եւ պատասխանի հնարավորություն տվել հակառակ կողմին:

Կրթության որակի մասին բուհի ռեկտորը նույն հոդվածում նշել է, որ իրենց ինստիտուտում դասավանդում են որակավորված եւ հատուն կրավորված դասախոսներ, ինչը, սակայն, հերքել էին չինարենի եւ ճապոներենի բաժնի ուսանողները: Դասախոսների որակի մասին ուսանողների բողոքները Մ. Ամիրխանյանը զրպարտություն էր համարել եւ լրագրողին ասել. «Զո թերթում գրածը ոչինչ չի փոխում ոչ մեզ, ոչ ձեզ եւ ոչ էլ ազգի համար. այն միայն կարող է լավ պրոպագանդա լինել մեր ինստիտուտի համար»:

2010 թ. օգոստոսի 12-ին կայացած ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի նիստում քննարկվել են նաեւ «Երեւանի հումանիտար ինստիտուտ» ՍՊԸ-ի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով տրված լիզենզիայի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության հարցերը: ՀՀ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչության պետ Արթուր Բաղդասարյանը մեր գրավոր հարցմանը պատասխանելիս նշել է, որ Երեւանի հումանիտար ինստիտուտն ունեցել է թերություններ պրոֆեսորադասախոսական կազմի մասով, մասնավորապէս, ճապոներեն, հնդկերեն, իտալերեն լեզուներ դասավանդող դասախոսական կազմից 3-ը չեն ունեցել գիտական աստիճան եւ /կամ/ կոչում: Վերոնշյալ ուսումնական հաստատությունը պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունն ներկայացնի խախտումները վերացնելու մասին հիմնավորող փաստաթղթեր:

Օգոստոսի 14-ին տված ասուլիսում ԿԳ փոխնախարար Արա Ավետիսյանը նշել էր, որ Երեւանի հումանիտար ինստիտուտն իրականացնում է մեկ լիցենզավորված մասնագիտությամբ ծրագրի՝ թարգմանչական գործ՝ ճապոներեն, չինարեն, հնդկերեն, իտալերեն, լատիներեն եւ այլն: Ունի պայմանագրեր արտասահմանյան 5 համալսարանների հետ: Այս հաստատությանը լիցենզիայից դեռեւս չգրվելու համար հաշվի են առել այն հանգամանքը, որ 1-2 մասնագիտությունների գծով փոքրածավալ, բայց երկրի համար էական նշանակություն ունեցող

գործունեություն են ծավալում, եւ այստեղ սովորող ուսանողների տեղափոխության դեպքում դժվարություններ կծագեն: «Թերությունն այն էր, որ չէր ապահովում ենթակառուցվածքը որպէս համալսարան կամ որպէս ինստիտուտ», - հավելել էր Արա Ավետիսյանը:

Ռեկտորը համադասախան փաստաթղթերը չէր ներկայացրել դասարան

Սեպտեմբերի 16-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ «Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտորն ընդդէմ «Յետքի» գործով առաջին՝ նախնական դատական նիստը՝ նախագահությամբ դատավոր Ա. Մելքումյանի:

Երկու կողմերի ներկայացուցիչները հանդես եկան միջնորդություններով եւ լրացուցիչ նյութերով: Հայցը հետաձգվեց պատասխանող կողմի պահանջով: Պատասխանող կողմը միջնորդեց, որպէսզի ռեկտոր Միքայել Ամիրխանյանը դատարան ներկայացնի ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ստուգումների արդյունքների ակտն այն մասին, թե ինչու է Երեւանի հումանիտար ինստիտուտը նկատողություն ստացել նախարարության կողմից, քանի որ, ըստ պատասխանող կողմի, այնտեղ հայտնաբերվել են մի շարք թերացումներ:

Պատասխանող կողմը միջնորդեց, որ ռեկտորը ներակայցնի «Սազամար» ընկերության եւ բուհի միջեւ կնքված պայմանագիրը եւ Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի հետ կնքված վարձակալության պայմանագիրը, ինչպէս նաեւ՝ անշարժ գույքի օգտագործման վկայականը:

Դատարանն իր հերթին հայցվոր կողմից պահանջեց Ամիրխանյանի եւ նրա ուսանողուհի Գայանե Մալիշենկոյի միջեւ կնքված աշխատանքային պայմանագիրը, քանի որ դատարան ներկայացրած պայմանագիրն անստորագիր էր:

Հաջորդ՝ հոկտեմբերի 10-ի նիստում Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտոր Միքայել Ամիրխանյանը հայտարարեց, որ հրաժարվում է «Յետքի» եւ լրագրող Անի Հովհաննիսյանի դէմ ներկայացրած հայցից:

Պարզվում է՝ ռեկտորը եւ փաստաբանը տեղյակ չեն եղել Զողաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի փոփոխությունների մասին, այն է՝ լրագրողը կամ խմբագրությունն ազատվում է պատասխանատվությունից, եթե վերաբարդրել է ուրիշի խոսքերը: «Այսինքն, թուփակի դեր է կատարում», - լրագրողի աշխատանքը որակեց բուհի ռեկտորը: Այսինքն, ռեկտորի բարի համբավը ոչ ՀԼՄ-ն, ոչ էլ լրագրողը չեն արատավորել, քանի որ նրա նկատմամբ զրպարտություն եւ վիրավորանք չեն հրապարակել: Չրպարտողը, ըստ հայցվորների, եղել է բուհի ուսանող Գայանե Մալիշենկոն, որի դէմ էլ նրանք նոր դատական հայց կներկայացնեն:



Միքայել Ամիրխանյանը եզրակացրեց, որ Չայանե Մալիշենկոն է իրեն գրպարտել եւ կազմակերպել «գրպարտչական» հողվածը:

«Սազամարի» հետ պայմանագիրը, տարածքի վարձակալության պայմանագիրը, կադաստրի գրանցման վկայականը, որոնք պահանջել էր պատասխանող կողմը անցյալ նիստին, եւ որի միջնորդությունը դատարանը բավարարել էր, այդպես էլ դատարանին չներկայացվեց: Անի Յովհաննիսյանի փաստաբան Օլյա Սաֆարյանը դատարանից խնդրեց ապահովել միջնորդության բավարարումը եւ դատարանին ներկայացնել նշված փաստաթղթերը: Դատարանը մեկ անգամ եւս ռեկտորից պահանջեց ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, սակայն ռեկտորը հրաժարվեց եւ ասաց, որ ինքը բնօրինակներ չունի, դրանք գործերից չէր կարող հանել, իր մոտ միայն պատճեններն են, որոնք խուսափեց ներկայացնել դատարան:

Օլգա Սաֆարյանն ասաց, որ ինքը տարածքի վարձակալության պայմանագիրը պահանջել է նաեւ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտից եւ հենց Երեւանի հումանիտար ինստիտուտից մինչեւ դատական նիստերի սկսվելը, սակայն մինչ օրս այնտեղից էլ պատասխան չկա:

«Նախորդ դատական նիստին դատարանը բավարարել էր մեր միջնորդությունը, եւ այսօրվա նիստում ռեկտորի պահվածքից երեւում էր, որ դա իրենց «ամենաթույլ» տեղն է, այսինքն՝ կան բաներ, որոնք իրականում կարող էին ավելի մեծ բացահայտումներ դառնալ բուհի մասին: Միաժամանակ ռեկտորն այսօրվա ելույթում մի քանի տվյալներ ներկայացրեց, որոնք կարող են հիմք հանդիսանալ տարբեր պետական մարմինների համար՝ բուհի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, մասնավորապես՝ ուսանողի աշխատավարձից ինչ-որ չափով գումար է պահել բուհի համար: Սա արդյո՞ք չի նշանակում, որ նա աշխատանքային շահագործման է ենթարկում ուսանողներին եւ առանց նրանց համաձայնության աշխատավարձից գումար պահում: Դատական այս կարճ գործընթացը ցույց տվեց, որ հողվածը «խորացնելու» տեղ ունեն, դատարանի միջոցով կարողացանք պարզել, որ այդ բուհում այլ կարգի խախտումներ էլ կան», - ասաց «Յետքի» գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը:

Յուլի 15-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կարճեց «Երեւանի հումանիտար ինստիտուտի ռեկտոր Միքայել Ամիրխանյանն ընդդեմ «Յետք» շաբաթաթերթի եւ լրագրող Անի Յովհաննիսյանի» գործի քննությունը:

Դատարանը պարտավորեցնում է հերքում տպագրել արդեն գոյություն չունեցող թերթում

2010թ. հունիսի 9-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ

համայնքների առաջին ատյանի դատարանում, Կարինե Պետրոսյանի նախագահությամբ, լսվեց Արենի գյուղի բնակիչ Սուսաննա Բաղդասարյանի հայցը ընդդեմ «Յայք» թերթի խմբագրության եւ լրագրող Արման Գալոյանի:

Արենի գյուղի բնակչուհին լրագրողից պահանջում է հերքել թերթի 2008 թ. փետրվարի 8-ի համարում տեղ գտած «Սպանության հետքերով» հոդվածի՝ «հանգուցյալի հիշատակը պղծող, անուն ու համբավը արատավորող» տեղեկությունները: Չնայած նրան, որ դիմումը դատարան է ներկայացվել մոտ 3 տարի անց, հայցադիմումը լրագրողի մասով անցյալ տարվա դեկտեմբերին ընդունվել է վարույթ:

Արման Գալոյանը նիստերին չի ներկայացել: Նա կարծում է, որ հայցը վարույթ չպետք է ընդունվեր առնվազն վաղեմության պատճառով: Սա որակելով իբրեւ դատարանի կոպիտ սխալ՝ Գալոյանն ընդգծում է՝ վիճարկվում են հոդվածում աղբյուրին հղում արված խոսքերը:

Ինչո՞ւ է հայցը հոդվածի հրապարակումից միայն 3 տարի անց ներկայացվել: Ըստ հայցվոր կողմի՝ կան ծանրակշիռ պատճառներ: Նախ, այս ընթացքում իրենք գյուղից բացակայել են, հետո, Նշյալ հոդվածի հետեւանքով գյուղացիներն անբարեհաճ են տրամադրված իրենց ընտանիքի նկատմամբ: Բաղդասարյանները գտնում են, որ հոդվածը միտված էր վարկաբեկելու հանրային անձին, այն քաղաքականացված էր, փաստերը՝ խեղաթյուրված: Նրանք պատասխանողից դրամական փոխհատուցում չեն պահանջում:

«Յայքի» հոդվածում նշվում է. «Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի ղեկավար, փոխվարչապետ Յովիկ Աբրահամյանի բարեկամները ոչ միայն հանրահավաքներ խանգարող հասարակ խուլիգաններ են, այլև նրանցից ոմանք այսօր մեղադրվում են դաժան մարդասպանություն կատարելու մեջ»:

Բաղդասարյանների 17-ամյա որդին՝ Յայկը, կասկածելի հանգամանքներում մահացել է: Ծնողները նշում են, որ գործը պատշաճ կերպով չի ուսումնասիրվել: Նրանք պնդում են, որ Յայաստանում արդարություն չկա, սակայն, միեւնույն է, իրենց արյունակից Աժ նախագահին չեն դիմել ու չեն էլ դիմելու, որովհետեւ «ճշմարտությունն իրենց կողմն է, եւ այն պետք է հաղթանակի»:

Յայկը մահացել է 2007 թ. փետրվարին: Հարուցված քրեական գործը կարճվել է, քանի որ իրավապահները եզրակացրել են, որ տղան ինքնասպան է եղել: Մինչդեռ Յայկի ծնողներն ասում են, որ իրենց որ-



21.5-ն
եւ լրագրողները
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
41

դուն սպանել են, իսկ հանցագործները՝ մնացել անպատիժ: Ավելին, ըստ Բաղդասարյանների՝ Նույն գյուղի բնակիչ Կարեն Մանուկյանը Հայկի հորը՝ Համլետ Բաղդասարյանի հետ զրույցում ասել է, որ մասնակցել է վերջինիս որդու սպանությանը, բայց, միեւնույն է, իրեն ոչինչ չեն անելու: Համլետը տեղում Կարենին սպանել է, ինչի պատճառով 2008 թ. մայիսին 10 տարով ազատազրկվել է:

«Հայքի» հողվածագիրը զրուցել է Կարեն Մանուկյանի այրու՝ Սվետլանա Առաքելյանի հետ, ով ասել է, թե սպանված տղան՝ Հայկը, թմրամոլ էր: «...Բոլորը դա գիտեին: Նույնիսկ նրա հայրը, որ եկավ թաղմանը, ասում էր՝ ինքը գիտի, որ իր տղան վաղ թե ուշ մեռնելու է», - այրու խոսքերը մեջբերել է «Հայքը»:

Սպանվածի այրին՝ Սվետլանա Առաքելյանը, եւ վերջինիս քույրը 2008 թ. սեպտեմբերին դատապարտվել են 1-ական տարվա պայմանական ազատազրկման՝ Բաղդասարյանների գույքին դիտավորությանը վնաս պատճառելու համար: Իսկ սպանված Կարեն Մանուկյանի մայրը՝ Մարիամ Մկրտչյանը, 2009 թ. փետրվարին հանցավոր է ճանաչվել Հայկ Բաղդասարյանի գերեզմանը մի քանի անգամ անարգելու մեջ: Դատարանը Մարիամ Մկրտչյանին տուգանել է 44 հազար դրամով:

Արման Գալոյանն ասում է, որ Բաղդասարյանները թերթի հասցեին անեծքներով նամակներ են ուղարկել, բայց դրանց թերթը երբեւիցե չի անդրադարձել: Իսկ ինքը հողվածը գրելիս Բաղդասարյանների հետ չի զրուցել, քանի որ գյուղ կատարած իր այցելության ժամանակ վերջիններս Արենիում չեն եղել:

Սեպտեմբերի 27-ին երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մասնակի բավարարեց Սուսաննա Բաղդասարյանի հայցն ընդդեմ ներկայումս լույս չտեսնող «Հայք» թերթի խմբագրության եւ նախկինում այդ թերթի թղթակից Արման Գալոյանի եւ Սվետլանա Առաքելյանի:

Համաձայն վճռի՝ Սվետլանա Առաքելյանը պարտավոր է հերքել «Հայք» թերթի 2008 թվականի փետրվարի 8-ի համարում հրապարակված «Սպանության հետքերով» խորագրով հողվածում Հայկ Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները եւ հերքումը տպագրել Նույն «Հայք» թերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, «Յերբում» խորագրի ներքո: Սակայն նշենք, որ «Հայք» թերթն այլեւս լույս չի տեսնում:

Դատարանը ապացուցված է համարել, որ հողվածում Սվետլանա Առաքելյանի տրամադրած տեղեկատվության բառացի շարադրանքն է զետեղվել հողվածում: Ընդ որում՝ տեղեկատվությունը մեջբերվել է որպես ուրիշի ուղղակի (Սվետլանա Առաքելյանի) խոսք՝ չակերտների մեջ: Այսինքն, հողվածում առկա է հղում սկզբնաղբյուրին, եւ այդ պայմաններում պատասխանատվությունը կրում է ոչ թե լրագրող Արման Գալոյանը, այլ Սվետլանա Առաքելյանը՝ որպես թերթի միջոցով արտավորող տեղեկությունների տարածող:

Լրագրողն արձագանքում է դատարանի վճռին

Սեպտեմբերի 28-ին, արձագանքելով դատարանի վճռին, լրագրող Արման Գալոյանը տարածեց հետևյալ հաղորդագրությունը.

«Սեպտեմբերի 27-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Պետրոսյանն աննախադեպ խայտառակ վճիռ է կայացրել՝ ընդդեմ ավելի քան 1 տարի լույս չտեսնող «Յայք» օրաթերթի:

Դատարանը բավարարել է Արեւի գյուղի բնակիչ Սուսանա Բաղդասարյանի հայցն՝ ընդդեմ «Յայք» օրաթերթի խմբագրության եւ Նախկինում այդ թերթի, (այժմ՝ «Iragir.am» կայքի եւ «Ժողովուրդ» օրաթերթի) թղթակից Արման Գալոյանի: Որպես երկրորդ պատասխանող ճանաչվել էր լրագրողի տեղեկատվության աղբյուրը՝ Սվետլանա Առաքելյանը, որն էլ հարցազրույց էր տվել իր ամուսնու սպանության վերաբերյալ: Դատարանը ապացուցված է համարել, որ հողվածում Սվետլանա Առաքելյանի տրամադրած տեղեկատվության բառացի շարադրանքն է գետեղվել հողվածում, մեջբերվել որպես ուրիշի ուղղակի խոսք՝ չակերտների մեջ: Ու քանի որ հողվածում առկա է հղում սկզբնաղբյուրին՝ պատասխանատվությունը կրում է ոչ թե լրագրող Արման Գալոյանը, այլ սկզբնաղբյուրը: Եվ դատարանը պարտավորեցրել է Սվետլանա Առաքելյանին հերքել «Յայք» օրաթերթի 2008 թվականի փետրվարի 8-ի համարում հրապարակված «Սպանության հետքերով» հողվածում հայտնած տեղեկությունները Նույն «Յայք» թերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո՝ հերքում խորագրի ներքո:

Դատավոր Կարինե Պետրոսյանի կայացրած վճիռ վերաբերյալ հարկ եմ համարում հայտարարել հետևյալը. **խեղկատակություն է ոչ միայն կայացված դատական ակտը, այլ նաեւ՝ դատական ողջ գործընթացը:**

Եթե դատավորն իրեն նեղություն տար ու կարդար «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, ապա ի սկզբանե հայցը չէր ընդունի վարույթ: «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի համաձայն՝ «Յերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը»: ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հայցի պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ»: Տվյալ դեպքում «ՉԼ մասին» օրենքով սահմանվել է հերքման պահանջը ներկայացնելու 1-ամսյա ժամկետ՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը: «Յայք» օրաթերթում իմ հողվածը լույս է տեսել 2008 թ. փետրվարի 8-ին, իսկ դատարան հայցադիմումը ներկայացվել է 2010 թ. օգոստոսին: Սա արդեն բավարար հիմք էր՝ հայցադիմումն ընդհանրապես վարույթ չընդունելու համար: Սակայն դատավորը անտեսել է օրենքի այս դրույթը: Օգտվելով Զաղ.դատ.օր.-ի համապատասխան հոդվածից՝ ես չեմ մասնակցել դատաքննությանը: Ողջ



գործընթացը համարել եմ ապօրինի ու չեմ ցանկացել լեգիտիմացնել կամ իմ գործողություններով օրինականացնել ապօրինությունները:

Ուշադրություն եմ հրավիրում այն փաստի վրա, որ 2010 հուլիսից դադարեցվել է «Հայք» օրաթերթի տպագրությունը, մինչդեռ դատարանը վճռել է, որ Սվետլանա Առաքելյանը հերքումը պետք է տպագրի «Հայք» օրաթերթում՝ «Հերքում» խորագրի ներքո: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ գործ ունենք կամ քաղաքական հետապնդման, կամ միտումնավոր անգրագիտության հետ: Առավել էւս, որ հայցվորի ընտանիքն ազգակցական կապ ունի ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամյանի հետ: Այս առումով հրավիրում եմ իրավապաշտպան լրագրողական կազմակերպությունների եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրությունը»:

Դատարանը ո՛ր թերթին կոպարտավորեցնի տպագրել հերքումը

Նոյեմբերի 18-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կայացավ Սուսաննա Բաղդասարյանի՝ լրացուցիչ վճիռ կայացնելու հայցն ընդդեմ ներկայումս լույս չտեսնող «Հայք» թերթի խմբագրության եւ նախկինում այդ թերթի, այժմ՝ «Ժամանակ» օրաթերթի եւ «Iragir.am» կայքի թղթակից Արման Գալոյանի եւ Սվետլանա Առաքելյանի:

Քանի որ «Հայք» թերթն այլեւս լույս չի տեսնում, հայցվորը դիմել է դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով: Հայցվորը խնդրում է դատարանին՝ պարտավորեցնել հերքումը տպագրել «Հայք» թերթի նույնանման տպաքանակ եւ ընթերցող ունեցող թերթում՝ որպես օրինակ բերելով հետեւյալ թերթերը՝ «Ժամանակ», «Չորրորդ ինքնիշխանություն», «Հայկական ժամանակ»:

Դատարանը դատական ակտի հրապարակման օր նշանակեց դեկտեմբերի 2-ը:

3 զստանալորներն ընդդեմ «ՆԺ»-ի.

Գերդատարան զստարաններն
արհամարհում են միջազգային
կոնվենցիաները



Ձախից՝ Սամվել Ալեքսանյան, Ռուբեն Հայրապետյան, Լեւոն Սարգսյան



«Հայկական ժամանակ» օրաթերթը, դիմելով Վճռաբեկ դատարան, փորձում էր Հայաստանի դատական ատյաններում վերջին անգամ արդարադատություն գտնել, հակառակ դեպքում ստիպված էր լինելու թակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դուռը: Օրաթերթի հիմնադիրները քաջ գիտակցում էին, որ Հայաստանի դատական համակարգում ընդդիմադիր թերթի կողմից արդարադատություն որոնելը երազանքի պես մի բան է, ուստի այլ բան չէր մնում, քան սպառել ներպետական ատյաններն ու հայց ներկայացնել ՄԻԵԴ: Հռոտեսական տրամադրության համար պարարտ հող էին ստեղծում նաեւ ներպետական դատական ատյանները, որոնք խտրական մոտեցում են ցուցաբերել ոչ միայն ներպետական օրենքները կիրառելու ժամանակ, այլեւ միջազգային պայմանագրերի դրույթները մեջբերելիս: ՄԻԵԴ դիմելու կանխատեսումներն ավելի շուտ իրականացան, քան սպասում էին շատերը: Վճռաբեկ դատարանը վերադարձրել է «Դարեսկիզբ» ՄԴԸ-ի վճռաբեկ բողոքը՝ ընդդեմ վերաքննիչ դատարանի որոշման:

Օրաթերթի հիմնադիր «Դարեսկիզբ» ՄԴԸ-ն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատ բողոք էր ներկայացրել՝ ընդդեմ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման: Մինչ այդ վերաքննիչ բողոք



եր ներկայացվել նաեւ վերաքննիչ քաղաքացիական դատարան, եւ վերջինը սույն թվականի հունիսի 6-ին ուժի մեջ էր թողել առաջին ատյանի վճիռը, ըստ որի՝ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից հօգուտ Սամվել Ալեքսանյանի, Ռուբեն Հայրապետյանի եւ Լեւոն Սարգսյանի բռնագանձել 2.044.000-ական դրամ, որից 2 մլն-ը որպէս փոխհատուցման գումար, 44.000 դրամը՝ վճարված պետական տուրքի գումար: Ինչպէս նաեւ դատարանը պարտավորեցրել է ՍՊԸ-ին՝ հերքել «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի կողմից «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010 թվականի հոկտեմբեր 14-ի թիվ 188 համարի առաջին էջի կենտրոնում հրապարակված «Ութից յոթը ցուցակում են» խորագրով հոդվածում հայցվորներ Ռուբեն Հայրապետյանի, Լեւոն Սարգսյանի, Սամվել Ալեքսանյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները:

Ազատ խոսքի թե՛ ինքնագրաբանություն

Աժ պատգամավորներ Լեւոն Սարգսյանը, Սամվել Ալեքսանյանն ու Ռուբեն Հայրապետյանը 2010թ. նոյեմբերի 8-ին ընդդէմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի հայց էին ներկայացրել դատարան՝ պատվին եւ արժանապատվությանը պատճառած վնասի հատուցման պահանջի մասին:

Պատգամավորների «պատիվն ու արժանապատվությունը» վիրավորվել էր 2010թ. հոկտեմբերի 14-ին օրաթերթում տպագրված «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ լուրից հետո: «Հայկական ժամանակ» թերթը գրել էր, որ իր տեղեկություններով Ռ-ի ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը եւ մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում՝ հիմնականում նարկոթրաֆիքի, թրաֆիքինգի եւ փողերի լվացման գործերով, պարզել են, որ հանցագործությունների հետ անչլություն ունեն նաեւ ՀՀ պաշտոնյաներ:

«Ռ-ի իրավապահները պարզել են, որ ռուսական կրիմինալ խմբավորումները ՀՀ տարբեր պաշտոնյաների հետ սերտ կապերի մեջ են, եւ կազմել են տարբեր քրեական գործերի հետ անչլություն կամ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունեցող ՀՀ պաշտոնյաների ցուցակ, որում ընդգրկել են 32 անուն: Մեր տեղեկություններով, այս ցուցակի վերաբերյալ Ռ-ի դատախազության ներկայացուցիչները գրուցել են «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ: Տուցակը Ռ-ի դատախազության ղեկավարությունը ոչ պաշտոնական ֆորմատով ցուցադրել է ՀՀ զխսավոր դատախազ Աղվան Հովսեփյանին եւ ԱԱԾ տնօրէն Գորիկ Հակոբյանին: Ռուսական կողմը ցուցակում նշված անձանց պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացրել: Սակայն, ՀՀ վերը նշված պաշտոնյաներն իրենց ռուս գործընկերներին պատասխանել են, որ այդ խնդիրը լուծելու համար իրենք շատ փոքր մարդիկ են»,- գրել է թերթը:

Չղում անելով իր աղբյուրներին՝ «Հայկական ժամանակը» գրել էր մի շարք պաշտոնյաների անուններ, այդ թվում՝ վերը նշված երեք պատգամավորներինը, որոնց անունները այս կամ այն կերպ շոշափ-

վում են տարբեր քրեական գործերում:

Հրապարակումից օրեր անց՝ հոկտեմբերի 26-ին, գրությանը հայցվորները պահանջել են հերքել իրենց պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները՝ կից ներկայացնելով հերքման տեքստ, թե հողվածում ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը եւ ներկայացված են առանց հավաստիությունը ստուգելու: «ՀՃ»-ի գլխավոր խմբագիրը գրությանը պատասխանել է պատգամավորներին՝ հայտնելով, որ վերջիններս հերքման պահանջում չեն կշռել, թե որոնք են օրաթերթի առաջին էջում զետեղված «Ութից յոթը ցուցակում են» հրապարակման մեջ իրենց անձերի հետ կապված փաստացի անճշտությունները: Այնուհետև տեղեկացրել է, որ խնդրո առարկա հրապարակման մեջ հիշատակված փաստերը հաստատել է Մոսկվայում գործող «Միաբանություն» ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանը, ում ՌԴ իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրենք են տեղեկացրել վիճարկվող հրապարակման մեջ առկա փաստերի գոյության մասին եւ Կարախանյանի հետ զրուցել են՝ հայաստանցի մի շարք անձանց գործունեության մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար: Բացի դրանից՝ Կարախանյանն անձամբ է ծանոթացել այն անձանց ցուցակին, որում առկա են նաեւ հողվածը վիճարկող երեք պատգամավորի անունները:

Այնուհետև թերթն իր 2010 թ. նոյեմբերի 2-ի համարում հրապարակել է «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ հարցազրույցը, որով նա էս մեկ անգամ հաստատել է տարբեր քրեական գործերին Լեւոն Սարգսյանի, Սամվել Ալեքսանյանի եւ Ռուբեն Չայրապետյանի առնչության վերաբերյալ տեղեկությունը:

Դրանից հետո պատգամավորները որեւէ ձեւով չեն պատասխանել թերթի խմբագրությանը եւ նոյեմբերի 8-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան են ներկայացրել հայցադիմում, որն ընդունվել է վարույթ: Թերթի տնօրենը դեկտեմբերի 12-ին հայտնել է դատարանին, որ սույն քաղաքացիական գործով պատասխանողի ներկայացուցիչ է «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը, որն այդ ընթացքում անսպասելիորեն տեղափոխվել էր «Արթիկ» ԶԿՀ, ու նրա հետ կապ հաստատել հնարավոր չէր, եւ խնդրել էր նրա հետ պահպանել պատասխանողին ուղղվելիք նամակագրության համար կապը: Սակայն դատարանը գործով պատասխանող Նիկոլ Փաշինյանին երբեւէ նամակագրություն չի ուղղել:

Դատական գործընթացը մեկնարկել է 2011 թ. հունվարի 17-ին: Պատասխանողի ներկայացուցիչ, փաստաբան Վահե Գրիգորյանն այդ օրը խնդրել է դատարանին՝ իրեն տրամադրել երկշաբաթյա ժամկետ՝ նյութերին ծանոթանալու համար, քանի որ գործին ներգրավվել է հենց դատաքննության օրը: Բացի դրանից՝ միջնորդել էր տրամադրել հայցադիմումի հետ չուղարկված քաղաքացիական գործի նյութերի պատճենները: Միջնորդությունը բավարարվել էր, ինչպես նաեւ գործի նյութերին ծանոթանալու համար տրվել էր ընդամենը 7 օր ժամանակ՝ կի-



սով չափ պակաս փաստաբանի պահանջածից, ինչը բավարար լինել չէր կարող նյութերին լիարժեք ծանոթանալու եւ դատական հաջորդ նիստին պատրաստվելու համար:

Վահե Գրիգորյանը հայցադիմումին կից չուղարկված նյութերի պատճեններն անձամբ ստանալու խնդրանքով դիմել էր դատավորի օգնականին: Վերջինս տեղեկացրել էր, որ դրանց համար պետք է պետական տուրք վճարվի:

ՌԴ դատախազության պատասխանի պատճենը չի եղել հայցադիմումին կից փաստաթուղթ, եւ դրա համար չէր կարող գանձվել պետական տուրք, ուստի դատարանի այդ պահանջն ապօրինի է եղել: Բացի դրանից՝ պահանջվող փաստաթղթերի ծավալը չի գերազանցել 10 էջը. հետեւաբար, քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն դրանք պետք է տրամադրվեին կողմին, այլ ոչ ղեպուհացվեին դատարանում, հետագայում էլ պետական տուրքի պահանջ ներկայացվեր պատասխանողին՝ դրանք ստանալու համար:

Եթե նույնիսկ անտեսենք քաղաքացիական դատավարության վերը նշված պահանջը, ապա «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մինչեւ 10 էջից բաղկացած տեղեկատվությունը տրվում է անվճար, իսկ կողմին օրենքի պահանջով տրվելիք փաստաթուղթը չէր գերազանցում 10 էջը: Փաստորեն, դատարանը, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները եւ օրինական շահերը, հենց ինքն է խախտել դրանք:

Այնուհանդերձ, պետտուրքը վճարվել է, եւ անդորրագիրը դատարան ներկայացնելուց հետո էլ ողջ դատաքննության ընթացքում նյութերը կողմին չեն տրամադրվել: Պարզ է, որ դատարանը հակված չի եղել ղեկավարվել օրենքով վերապահված լիազորություններով եւ ապահովել կողմերի հավասարությունը, հետեւաբար, արհեստական խոչընդոտներ է ստեղծել, որպեսզի պատասխանող կողմը զրկված լինի դրանց ծանոթանալու եւ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Ավելին, դատարանը քաղաքացիական գործում դրել է մի գրություն, համաձայն որի՝ փաստաբանի պահանջած փաստաթղթերն ուղարկվել են նրան: Ըստ փաստաբանի՝ այդ գրությունն ակնհայտորեն կազմված է եղել դատարանի արած խախտումները քողարկելու նպատակով եւ, ամենայն հավանականությամբ, կազմվել է հետին թվով: Ոչ փաստաբանին, ոչ էլ պատասխանողին երբեւէ նրանց պահանջած տեղեկությունները չեն տրամադրվել:

Դատարանը բավարարել էր պատգամավորների հայցը, իսկ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն վճիռը բողոքարկել է վերաքննիչ դատարան:

Միայն վերաքննիչ դատարանում է պատասխանողը հնարավորություն ունեցել ծանոթանալ գործի նյութերին՝ պարտադրված լինելով երկրորդ անգամ վճարել ապօրինաբար պահանջված պետական տուրքը: Գործի նյութերին ծանոթանալուց հետո ավելի հասկանալի է եղել դատարանի կողմնակալ վերաբերմունքը հօգուտ հայցվոր պատգամավորների:

Պատասխանողի ներկայացուցիչը նկատել էր գործում՝ թիվ 96 համարի էջում գտնվող, դատարանի նամակը պատասխանողին, որով իբր ուղարկվում են պատասխանողի ներկայացուցչի պահանջած նյու-

թերը: Հայտնաբերված գրությունը եւ դրան կից նյութերն առհասարակ չեն ուղարկվել պատասխանողին, քանի որ քաղաքացիական գործից բացակայում է ոչ միայն պատասխանողի կողմից նման գրություն եւ կից նյութեր ստացած լինելու, այլեւ առհասարակ դրանք պատասխանողին ուղարկված լինելու մասին որեւէ ապացույց: Այն եղել է ակնհայտորեն կեղծ փաստաթուղթ, որով դատարանը նպատակ է ունեցել «հրեղեն» ապացույցով քողարկել կողմերի հավասարության սկզբունքի խախտումը՝ ի վնաս պատասխանողի:

Արդեն վերաքննիչ դատարանը պատասխանողի նշած փաստարկների առնչությամբ տվել է անհասկանալի ու խուսափողական պատճառաբանություն՝ կոնկրետ չանդադրառնալով, թե ինչու է կողմը ապօրինաբար զրկված եղել նյութերին ծանոթանալու հնարավորությունից. «Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացել է դատաքննության եւ միջնորդել հետաձգել դատական նիստը...» թույլատրելով ծանոթանալ քաղաքացիական գործի նյութերին: Միջնորդությունը բավարարվել է դատարանի կողմից, ինչն ապացուցում է, որ դատարանը սույն դատավարության ընթացքում ապահովել է կողմերի համար հավասար մրցակցային պայմաններ...՝ հնարավորություն ընձեռելով պատասխանողին ծանոթանալ քաղաքացիական գործի նյութերին»:

Բացի դրանից՝ կողմերի հավասարության մասին խոսք լինել չի կարող, քանի որ պատասխանողի ներկայացուցիչը մի քանի անգամ միջնորդել է դատարան հրավիրել «ՀԺ» գլխավոր խմբագիր, գործով պատասխանող Նիկոլ Փաշինյանին, քանի որ ի պաշտոնե հեց նա է տիրապետել թերթում տպագրված եւ դատարանում վիճարկվող հոդվածի նրբություններին եւ մանրամասներին: Պատասխանողի ներկայացուցիչ նմանատիպ բոլոր միջնորդությունները դատարանը մերժել է:

Ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ վերաքննիչ դատարանը չի առաջնորդվել անկախության եւ անաչառության սկզբունքով: Ավելին, վերաքննիչ դատարանն իր պատճառաբանություններով սրբագրել է առաջին ատյանի բաց թողածները եւ չպատճառաբանված եզրահանգումներ արել: Օրինակ՝ այդ պատճառաբանություններից մեկով դատարանն արձանագրել է. «Հիշյալ հոդվածների վերլուծությունից հետեւում է, որ պատասխանողը կարող էր ազատվել պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե հոդվածում հստակ հղում կատարված լիներ այլ անձի հրապարակային ելույթին, որը տեղի է ունեցել մինչեւ հրապարակումը, եւ որ այդ հրապարակումը լինել այլ անձի հրապարակային ելույթի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը: Պատասխանողի կողմից չի ներկայացվել որեւէ ապացույց, որ մինչեւ իր կողմից հոդվածի հրապարակումը Սմբատ Կարախանյանը հրապարակային ելույթ է ունեցել նման բովանդակությամբ»:

Անհիմն է դատարանի պնդումը այն դեպքում, երբ մինչեւ դատաքննության սկսվելը «Հայկական ժամանակ» օրաթերթում վիճարկվող հոդվածին վերաբերող մի քանի հրապարակում է եղել, որով ամբողջությամբ հիմնավորվել է վիճարկվող լրատվական նյութը Սմբատ Կարախանյանի կողմից հրապարակայնորեն հայտարարված լինելու փաստը: Բացի դրանից, հոդվածում հստակ չի նշվել, որ նշված պետական



այրերն անմիջականորեն մասնակցել են քրեական գործերին:

Հայաստանյան դատարաններն անտեսում են Եվրոդատարանի նախադեպային վճիռները, որոնք կարող են լուրջ դերակատարում ունենալ օրենքների միատեսակ կիրառության համար: Օրինակ՝ «Ջեր-շիլդն ընդդեմ Դանիայի» գործը շրջադարձային կարող էր լինել նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթի գործում:

Դանիացի լրագրողը հեռուստածրագրի ժամանակ հարցազրույց է վերցրել «Կանաչ բաճկոնավորներ» (Greenjackets) ռասիստական կազմակերպության 3 երիտասարդից՝ նպատակ ունենալով ցույց տալ ռասիզմի նկատմամբ կանաչ բաճկոնավորների վերաբերմունքը եւ հասարակության մեջ նրանց գործունեության նախապատմությունը: Դանիայի քաղաքային դատարանը, մեղադրելով լրագրողին ռասայականատելությանը սատարելու եւ խրախուսելու մեջ, որոշել է, որ նա նախօրոք քաջատեղյակ էր, որ հարցազրույցի ընթացքում, ամենայն հավանականությամբ, կհնչեն ռասայական խտրականության բնույթի հայտարարություններ:

Հայտարարությունները հեռարձակվել են առանց որեւէ հակակշռող փաստերի, որոնք ձայնագրությունից հետո լրագրողը կրճատել է...՝ թողնելով միայն առավել ծայրահեղական հայտարարությունները:

Եվրոդատարանն ամրագրել է, որ մամուլը ոչ միայն նման տեղեկություններ եւ գաղափարներ հաղորդելու խնդիր ունի, այլեւ, մյուս կողմից էլ, հասարակությունն իրավուք ունի ստանալու դրանք, այլապես մամուլը կկորցնի «հանրային հսկիչի» իր կենսական դերը: Նաեւ ամրագրել է, որ ոչ Եվրոդատարանի, ոչ էլ ազգային դատարանների խնդիրը չէ պարտադրել իրենց սեփական կարծիքը, թե լրագրողները հաղորդման ինչպիսի մեթոդներ պետք է որդեգրեն:

Այս համատեքստում դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն արտահայտած գաղափարի եւ տեղեկատվության իսկությունը, այլեւ այն հաղորդելու ձեւը: «Հարցազրույցների վրա հիմնված լրատվական ծրագրերը, անկախ նրանից...՝ խմբագրված են, թե ոչ՝ հանդիսանում են ամենակարեւոր միջոցները, որոնցով մամուլը կարող է իրականացնել հասարակության «հսկիչի» իր կենսական դերը: **Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչընդոտի հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին, եւ նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ»,-եզրակացրել է դատարանը:**

Այս նախադեպային վճիռը լիովին կարող էր կիրառվել նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթի գործով, մինչդեռ թե առաջին ատյանի, թե վերաքննիչ դատարաններն անտեսել են այն: Բողոքը վերադարձնելով՝ միջազգային կոնվենցիաներն արհամարհելու դիրք գրավեց նաեւ Վճռաբեկ դատարանը: Այսպիսով, ՀՀ դատական իշխանությունը, ի լուր միջազգային հանրության, ապացուցում է, որ իր համար գերակա են ոչ թե միջազգային պարտավորությունների կատարումը եւ օրենքների միատեսակ կիրառումով արդարադատության իրականացումը, այլ կամայական մոտեցում դրսեւորելով՝ բարձրաստիճան պաշտոնյա-

Ների համար անպատժելիության «իմունիտետ» ապահովելը:

Նշենք, որ պատասխանողը վճռաբեկ բողոքով պահանջում էր ամբողջությամբ բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.06.2011թ. որոշումը եւ քաղաքացիական գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ Նոր քննության:

Ո՛րն համար են վավերացվում միջազգային կոնվենցիաները, եթե դրանք չափեսք է կիրառվեն

Հայաստանի Հանրապետությունը, հռչակվելով ինքնիշխան, ժողովրդավարական պետություն, մաս է կազմում միջազգային հանրությանը եւ վավերացնելով միջազգային պաստաթղթեր՝ պարտավոր է դրանք լիարժեք կիրառել:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ Նրա Նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին: Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո: Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: ***Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:*** Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ Նորմեր, քան Նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ Նորմերը...»:

Զգիտես ինչու հատկապես դատարաններում դատավորները խորշում են կիրառել միջազգային հանրության ընդունած եւ Հայաստանի վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթները: Հայ դատավորներն իրենց համար գծել են Նեղ շրջանակ, որում տեղավորվում է միայն Ներպետական օրենսդրությունը, այն էլ՝ ոչ հավասարության սկզբունքով: Եթե արդարադատության համար կոչված դատավորները կիրառեն ՄԻԵԴ-ի Նախադեպային վճիռների եւ վավերացված պայմանագրերի դրույթները, ապա շատ գործեր կլուծվեն հենց հանրապետության սահմաններում՝ ներպետական օրենքների շրջանակում:

Այսպես, 2002թ. ապրիլի 26-ին ՀՀ-ն վավերացրել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը... առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտ



տում պետություններին... սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում... ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Մինչդեռ, ակնհայտ է, որ վերջին մեկ տարվա ընթացքում իրար հետեւից պաշտոնյաների կողմից լրատվամիջոցներին դատի տալն ու դատարանների կողմից հայցերն անվերապահորեն բավարարելը ամենեւին անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությանը: Այն հետապնդում է մեկ նպատակ. ֆինանսական ծանր կացության մեջ գցելով՝ լռեցնել լրատվամիջոցներին, այդ թվում՝ նաեւ «Հայկական ժամանակին»:

Դա է վկայում, որ այս գործով հայցվորներից որեւէ մեկն առ այսօր որեւէ իրավական գործընթաց չի սկսել Սմբատ Կարախանյանի դեմ, ինչը ապացույցն է այն բանի, որ հայցվոր պատգամավորների կողմից պատասխանողի վրա սեւեռվելը ուղղված է եղել հենց լրատվամիջոցին ծանր վիճակի մեջ դնելուն:

Հայաստանի դատավորները հաշվի չեն առնում նաեւ, թե պատվի ու արժանապատվության հայցերով ովքեր են հայցվորները: Այս առնչությամբ ՄԻԵԴ-ը «Լինգվեստ ընդդեմ Ավստրիայի» գործում հետեւողականորեն պնդել է, որ ընդունելի քննադատության սահմանները շատ ավելի լայն են քաղաքական գործչի դեպքում, քան մասնավոր անձի: Նույն համատեքստում քաղաքական գործիչն անխուսափելիորեն եւ գիտակցաբար բաց է իր յուրաքանչյուր խոսքի եւ արարքի մանրակրկիտ քննարկման առջեւ ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից. հետեւաբար, պետք է դրսևորի հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Ի տարբերություն մասնավոր անձանց, քաղաքական գործիչն ունի հրապարակային ելույթների եւ լրատվամիջոցների հետ այլ կերպ հաղորդակցվելու հնարավորություն եւ այս պարագայում պետք է հնարավորինս քիչ ապավինի լրատվամիջոցներին լռեցնելու այնպիսի խիստ միջոցի, ինչպիսին դատական ատյաններին դիմելն է:

Մինչդեռ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, ՄԻԵԴ-ի նախադեպային վճիռները հիմք ընդունելու եւ հայցվոր քաղաքական գործիչներին վերը նշված համատեքստում դիտարկելու փոխարեն, ապշեցուցիչ եզրահանգում է արել՝ շեշտելով, որ հայցվորները ՀՀ Ազգային

ժողովի պատգամավորներ են: «Դատարանը հայցապահանջը բավարարելիս հաշվի է առել սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես՝ հայցվորների անձը և զրպարտության հնարավոր ազդեցությունը հայցվորների պատվի, պսիխըն... հասարակության կողմից նրանց անձին, գործունեությանը տրվող գնահատականի վրա», - գրված է վերաքննիչ դատարանի վճռում:

Ստացվում է, որ դատարանը կաշկանդված է հենց այն հանգամանքով, որ հայցվորները պատգամավորներ են, և նրանց հայցն անվերապահորեն պետք է բավարարվի: Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել իրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»:

ՄԱԿ-ի անդամ դառնալիս՝ Հայաստանը միացել է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և վավերացրել «Քաղաքացական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որի 19-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուր անձի խոսքի ազատության իրավունքը:

«Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով էլ ՄԻԵԴ-ը կարելուում է, որ խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության լրջագույն հիմքերից է, նրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման նախապայմանը: ...Այն տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների կամ գաղափարների» վրա, որոնք դրականորեն են ընդունվում կամ վիրավորական չեն, այլև այնպիսիների, որոնք վիրավորական են, ցնցող կամ անհանգստացնող պետության կամ հասարակության որեւէ հատվածի համար: Այդպիսին է բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության թելադրանքը՝ առանց որի չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Ներպետական դատարանները, այս գործով հայցի փոխհատուցման պահանջը բավարարելով, խախտել են նաև Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված ազատության կամ իրավունքի սահմանափակմանն առաջադրվող համաչափության պահանջը: Համաչափության սկզբունքը հողվածում արտացոլված չէ, սակայն ՄԻԵԴ-ն այն լայնորեն կիրառել է իր՝ արտահայտվելու ազատությանը վերաբերող վճիռներում:

ՄԻԵԴ նախատեսային իրավունքը կասկած չի հարուցում, որ հայցվորների պահանջած և դատարանի բավարարած գումարը, որը ընդհանուր առմամբ կազմում է 6.000.000 մլն դրամ, որեւէ կերպ չի տեղավորվում համաչափության սկզբունքի շրջանակներում, քանի որ այն ակնհայտորեն և մի քանի անգամ գերազանցում է պատասխանող կազմակերպության կողմից ստացվող ամսական եկամուտների չափը և չափազանց ծանր բեռ է պատասխանողի համար, ինչը կարող է վտանգել ոչ միայն դրա հետագա գործունեությունը, այլև «սառեցնող ազդեցություն» ունենալ ողջ մամուլի վրա:

ՄԻԵԴ-ը նման դեպքերում պահանջում է, որ պահանջվող փոխհա-



տուգման չափը որոշելիս ներպետական դատարանները հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են գրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը («Ռոմանենկոն ընդդեմ Ռուսաստանի»):

Այս համատեքստում «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն պնդում է, որ 6.000.000 դրամը գերազանցում է իր 3.5 ամսվա շահույթը, որն ամսական կազմում է մոտ 1.800.000 դրամ: Յետեւբար, հոգուտ հայցվորների բավարարելով պատասխանողի նկատմամբ մեծ գումարով փոխհատուցման պահանջը՝ դատարանը պատասխանողի վրա կոնի անհամաչափ ծանր բեռ, որը փաստորեն կվտանգի պատասխանողի գործունեության շարունակվելն առհասարակ:

Օրինակ՝ նմանատիպ մի գործով՝ «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v. Austria 1986թ.), ՄԻԵԴ-ը համարել էր, որ տուգանքի նշանակումը անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակության մեջ եւ հանգեցրել է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը:

ՄԻԵԴ դիմումատուն լրագրող եւ խմբագիր է եղել, որը հրապարակել է երկու հոդված, որով քննարկել է ավստրիացիների մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված չարագործություններին: Այս հոդվածները տպագրվել են խորհրդարանական ընտրություններից հետո, եւ ենթադրվում էր, որ պաշտոնից հեռացող Ավստրիայի կանցլերը պետք է կռալիցիա կազմեր պարոն Պ.-ի կուսակցության հետ, որպեսզի մնար իշխանության մեջ: Այնուամենայնիվ, ընտրություններից հետո, կապված պարոն Պ.-ի նացիստական անցյալի հետ, նրա ղեկավարած կուսակցության վերաբերյալ կատարվեցին որոշ բացահայտումներ: Կանցլերը պաշտպանել է պարոն Պ.-ին եւ նախահարձակ եղել նրան պարսավողի նկատմամբ, որի գործողությունները նա քննադատել էր որպես «մաֆիայի մեթոդներ»:

Դիմումատուն իր հոդվածներով խստորեն քննադատել է պաշտոնից հեռացող կանցլերին՝ նախկին նացիստներին պաշտպանելու համար՝ հողվածում օգտագործելով «ցածր մակարդակի անսկզբունքայնություն», «անբարոյական» եւ «անարժան» արտահայտությունները: Կանցլերի բողոքի հիման վրա գործ էր հարուցվել լրագրողի դեմ գրպարտության համար, եւ Վիեննայի շրջանային դատարանը տուգանք էր նշանակել լրագրողին: Վերաքննիչ բողոքի հիման վրա տուգանքի չափը նվազեցվել էր:

Եվրոպական դատարանը համարել էր, որ տուգանքի նշանակմամբ միջամտություն է դրսեւորվել դիմումատու լրագրողի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ: ՄԻԵԴ-ը չի ընդունել Վիեննայի վերաքննիչ դատարանի որոշման մեջ արտահայտված այն կարծիքը, ըստ որի՝ մամուլի խնդիրը տեղեկատվություն տալն է, իսկ դրա մեկնաբանությունը պետք է թողնվի առաջին հերթին ընթերցողին:

Դատարանը նշել է, որ լրագրողն օգտագործել է վիճարկվող արտահայտությունները, որպեսզի քննադատի Կանցլերի՝ որպես քաղաքական գործչի մոտեցումը ավստրիական հասարակությունում նախկին նացիստների դիրքորոշման վերաբերյալ: Դատարանը նաեւ համարել է, որ այն փաստերը, որոնց վրա լրագրողը հիմնել էր իր հոդվածները, իր գնահատողական դատողությունները, անվիճարկելի էին, անվիճարկելի էր նաեւ նրա բարեխղճությունը: Նա տուգանվել է Կանցլերի մոտեցումը նկարագրող սուր

բառերի օգտագործելու համար:

Դատարանը շեշտել է, որ տարանջատում պետք է արվի փաստերի եւ գնահատողական դատողությունների միջև: Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: **Յտեւաբար, տուգանքի նշանակումը անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում եւ հանգեցրել է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը:**

Այս եւ բազմաթիվ այլ նախադեպային վճիռներ վկայում են այն մասին, որ առաջնայինը ոչ թե անձի պաշտոնի մեծությունն է, ինչպես դիտարկում են Յայաստանի դատավորները, այլ ժողովրդավարական հասարակությունն ու դրա բաղադրիչ խոսքի ազատությունը: Յտեւաբար, կասկած չի հարուցում, որ եթե այս տեսքով «Յայկական ժամանակի» գործը հասնի ՄԻԵԴ, ապա դատարանը միանշանակ արձանագրելու է ազատ արտահայտվելու իրավունքի խախտումը:

Ավաղ, նման դեպքերում ֆինանսական փոխհատուցման բեռն ընկնում է ոչ դատավորների, ոչ էլ վերջիններիս օգնությամբ թերթերին ֆինանսական ծանր կացության մեջ գցող պաշտոնյաների վրա: Փոխհատուցումը վճարվելու է պետությունից՝ հասարակ քաղաքացիների վճարած հարկերից:

Յ. Գ. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը 2011 թ. հոկտեմբերի 31-ին հանել է խմբագրության գույքի եւ հաշիվների վրա դրված կալանքը: ԴԱՅԿ-ը հօգուտ պատգամավորներ Ռուբեն Յայրապետյանի, Լեւոն Սարգսյանի ու Սամվել Ալեքսանյանի թերթից բռնագանձել է յուրաքանչյուրի համար 2 մլն 44 հազար դրամ: Թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը հրաժարվել էր գումարը կամավոր փոխանցել, ուստի հարկադիր ծառայությունը ամբողջ գումարի 5 տոկոսի չափով՝ 311 հազար 700 դրամ, տույժ է սահմանել՝ ընդհանուր առմամբ գանձելով 6 մլն 545 հազար 700 դրամ: Կատարելով դատարանի վճռի մյուս պահանջը՝ թերթը հոկտեմբերի 26-ի համարի առաջին էջին տպագրել էր «Յայկական ժամանակի» անցած տարվա հոկտեմբերի 14-ի համարում «Ութից յոթը ցուցակում են» վերնագրով հրապարակման հերքումը:

Դատարանի սահմանած գումարը վճարելու համար հօգուտ «Յայկական ժամանակի» անցկացվեց հանգանակություն եւ խմբագրությանը հաջողվեց հավաքել ողջ գումարը:



«Եհովայի վկաները» լրագրող Գեորգ Ալթունյանից հրապարակային ներողություն են ակնկալում



Յանրային հեռուստաընկերության «Տեսանկյուն» հաղորդաշարի հեղինակ Գեորգ Ալթունյանը 2011 թ. հունվարի 11-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանից ստացել է մի հայցադիմում, որի համահայցվորներն են ՀՀ-ում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունն ու մի շարք քաղաքացիներ: Հայցադիմումը վերաբերում է «Տեսանկյուն» հաղորդաշարի նույն 11-ի թողարկմանը, որի ընթացքում Գեորգ Ալթունյանն անդրադարձել էր նույն 8-ին Սեւանում տեղի ունեցածին, երբ սեփական ծնողներին Արման Խաչիկի Թորոսյանը խոշտանգելով սպանեց: Վերջինիս մասին նրա հարեւանները պնդել էին, որ նա Եհովայի վկա է, ու իրենք լսել են, թե ինչպես էր սպանությունը կատարելուց հետո՝ բնակարանից փախուստի պահին, ասում. «Ես կատարում եմ Եհովա Աստծու հրամանները: Իմ հայրը Եհովա Աստվածն է: Ես նրա հրամանով սպանում եմ սատանաներին եւ առաջին սատանաներին արդեն սպանել եմ»: Այս պնդումները նրանք արել էին

«Անավուտ» թերթի թղթակցի հետ զրույցի ընթացքում, Հայաստանի բազմաթիվ այլ ՀԼՄ-ներ հրապարակել էին նույն տեղեկությունը:

Նույն պնդումներին հաղորդման մեջ անդրադարձել էր նաեւ Գեորգ Ալթունյանը՝ հավելելով. «Սպանել էր ծնողներին, քանի որ իր Եհովան էր այդպես հրամայել: Համենայնդեպս, երիտասարդ մարմնում թաքսված այդ սատանայի ծնունդը հենց այդպես էր հիմնավորել իր արարքը: Ընդ որում՝ հիմնավորել էր շատ հանգիստ, անխռով, կարծես թե հենց այդպես էլ պետք է լիներ»: Հեղինակային այս հաղորդման մեջ քննադատություն կար նաեւ ընդհանրապես աղանդների հասցեին, մասնավորապես օգտագործված էին «աղանդավորների ումակներ», «եհովականներ կամ այլ զահրումարներ» արտահայտությունները: «Թող ես տոլերանտ չլիտվեմ: Թող մարդիկ ինձ անհանդուրժողականության մեջ մեղադրեն: Թող ասեն, թե ծայրահեղ եմ եւ այլն», - ասել էր Գեորգ Ալթունյանը: Սեւանի դեպքն ապացուցում է, որ տոլերանտության ժամանակներին արդեն անցել են՝ հիմա ուշքի գալու ժամանակն է»:

«Եհովայի վկաներ» կազմակերպությունը նոյեմբերի 11-ի միայն ուշ երեկոյան՝ ժամը 22.21-ին տարածեց հաղորդագրություն, թե Արման Թորոսյանը «Եհովայի վկա չէ, ոչ էլ երբեւէ առնչության է ունեցել Եհովայի վկաների հետ»: Հաղորդագրության մեջ նաեւ նշված էր, որ «ամբողջ աշխարհում Եհովայի վկաները հայտնի են որպես ծնողների եւ մերձավորի նկատմամբ խոր հարգանք տածող մարդիկ, ովքեր կյանքը թանկ են գնահատում եւ անընդունելի են համարում կյանքի հանդեպ ոտնձգությունը կամ այն խլելը»:

Հայցադիմումով համահայցվորները դատարանից խնդրել են. «Պատասխանող հեռուստաընկերությանը պարտավորեցնել՝ անհապաղ հերքել հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորող «Տեսանկյուն» հաղորդաշարի ընթացքում տարածված այն հաղորդագրությունը, թե իր ծնողների սպանության մեջ մեղադրվող Արման Թորոսյանը Եհովայի վկա է: Նաեւ խնդրել են պարտավորեցնել «անհապաղ հրապարակայնորեն ներողություն խնդրել վերոհիշյալ սուտ տեղեկությունը տարածելու համար»:

«ՆԻ»-ը եւ «Եհովայի վկաները» հաշտության անակցությունների սեղանի շուրջ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպության պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների հերքումը տարածելուն, պատասխանը հրապարակելուն եւ փոխհատուցում վճարելուն պարտավորեցնելու գործով նախնական դատական նիստն ընդդեմ Հանրային հեռուստատեսության տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին:

Նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Ելենա Մարգարյանը դատարանին խնդրեց ընդունել դատական նիստը հետաձգելու մասին իր միջնորդությունը, քանի որ Հանրային հեռուստաընկերությունը հայցվո-



րին հերքման տեքստ է առաջարկել: Ըստ հայցվորի՝ հեռուստաընկերությունը պատրաստ է հերքել այն ինֆորմացիան, որ հնչեցրել է իր հաղորդաշարերի ընթացքում եւ ներողություն խնդրել: Ե. Մարգարյանը հայտնեց դատարանին, որ նրանք գտնվում են այդ տեքստի քննարկման փուլում եւ ցանկանում են հաշտություն կնքել:

Դատարանը բավարարեց հայցվորի միջնորդությունը եւ բավականին երկար ժամանակ տրամադրեց կողմերին, որպեսզի հաշտության գան եւ հերթական դատական նիստի օր նշանակեց Նոյեմբերի 9-ը:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ, փաստաբան Արա Չոհրաբյանը պարզաբանեց, որ կողմերի միջեւ ընթանում են հաշտության համաձայնություն կնքելու բանակցություններ: Հաշտության բանակցությունները սկսվել են «Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացուցիչի նախաձեռնությամբ:

«Այս պահի դրությամբ քննարկումներն իրականացվում են երկու կողմերի ներկայացուցիչների միջեւ եւ հաշտության համաձայնության մոտավոր եզրեր գտնելու դեպքում այդ հարցը ներկայացվելու է կողմերի համաձայնեցմանը: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը դրական է դիտում ցանկացած տեսակի վեճ հաշտությամբ լուծելու հնարավորությունը: Եվ եթե «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հետ բանակցությունների արդյունքում ձեռք կերպվեն իր համար ընդունելի համաձայնություններ, ապա այդ վեճը կարող է ավարտվել նաեւ հաշտությամբ: Այն տեղեկատվությունը, որ Հանրային հեռուստաընկերությունը պատրաստ է հերքման տեքստը հրապարակելու եւ կրոնական կազմակերպությունից ներողություն խնդրելու, իրականությանը չի համապատասխանում»:

«Եհովայի վկաներն» ընդդեմ ՂԻ-Ի. նիստը հեռաձգվեց

Նոյեմբերի 9-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում պետք է տեղի ունենար «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպության պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների հերքումը տարածելուն, պատասխանը հրապարակելուն եւ փոխհատուցում վճարելուն պարտավորեցնելու գործով նախնական դատական նիստը՝ ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի: Սակայն պատասխանող կողմի ներկայացուցիչ կողմից ստացվել էր միջնորդություն այն մասին, որ նիստը կասեցվի կամ հետաձգվի մինչեւ ՀՀ Սահմանադրական դատարանը Նոյեմբերի 15-ին որոշում կայացնի Զաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ի սահմանադրականության վերաբերյալ:

Հայցվորը դեմ էր գործի կասեցմանը, սակայն համաձայնեց դատավորի հետ, եւ նիստը հետաձգվեց մինչեւ դեկտեմբերի 21-ը:

Քոչարյանների «բարեգործությունը»

**Ես խելի եմ ցախազահի ընճանհիք՝
ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի**

Քայաստանի երկրորդ ևախազահ Ռոբերտ Քոչարյանի ընտանիքը շարունակում է դատի տալ եւ իբրեւ փոխ-հատուցում հսկայական գումարներ պահանջել հայաստանյան թերթերից: Հիմա էլ ևախիկին ևախազահի կինը եւ ավագ որդին՝ Բելլա եւ Սեդրակ Քոչարյաններն են դատարան հայց ներկայացրել, այս անգամ՝ «Ժամանակ» օրաթերթի դեմ:

Օրաթերթը 2010 թ. սեպտեմբերին եւ հոկտեմբերի սկզբին տպագրած 3 հրապարակումներով հայտնել էր, որ Բելլա Քոչարյանը ներգրավված է դեղորայքի բիզնեսում, Քոչարյանների ընտանիքին է պատկանում «911» դեղատների ցանցը, ու հենց կրանք են հովանավորում դեղերի շուկայում գործող «Քոմսթար», «Լիկվոր» եւ «Ֆարմատեքս» ընկերություններին: Բացի դրանից, Քոչարյաններն ադամանդի հանքեր ունեն Նամիբիայում, իսկ վերջերս Սեդրակ Քոչարյանը նմանատիպ հանք է ձեռք բերել Հնդկաստանում: Թերթը նաեւ գրել էր, թե իրականում բեռնափոխադրումներով զբաղվող «Սպայկա» ընկերության «մեջքին կանգնած է» Սեդրակ Քոչարյանը:

Բելլա եւ Սեդրակ Քոչարյանների ներկայացուցիչը սկզբում նամակ է գրել «Ժամանակի» խմբագրությանը՝ նշելով, թե հիշյալ հրապարակումներում տեղ են գտել «ոչ ստույգ տեղեկություններ» եւ խնդրել է հերքել «փաստացի անճշտությունները»: Սակայն, չբավարարվելով տպագրված հերքումով, Քոչարյանները դիմել են Կենտրոնի դատարան:

«Թերթը հավաստում է, թե հրապարակել է համապատասխան հերքում: Սակայն որպես այդպիսին ներկայացվող հողվածն իրավական տեսակետից պաշտոնական հերքում, առավել եւս՝ տարածած կեղծիքի դիմաց ներողություն համարել չի կարելի», - մեկնաբանել է Ռ. Քոչարյանի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը:

«Ինչոր պահանջել են, ես արել եմ. հերքման տեքստ են ուղարկել, տպագրել ենք: Բայց իրենք (Քոչարյանները) կրկնակի են վիրավորվել, որ ես հիշեցրել եմ, թե ինչն եմ հերքում: Իսկ ես պարտավոր եմ հիշեցնել, որովհետեւ, եթե լուրը տպագրվել է սեպտեմբերի սկզբին, իսկ հերքումը՝ հոկտեմբերին, ես ընթերցողին պետք է ասեմ, թե որ լուրն եմ հերքում», - մանրամասնում է «Ժամանակի» գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանը:

Վերջինս 2006թ. դատապարտվել էր 3,5 տարվա ազատազրկման՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար փաստաթղթեր կեղծելու մեղադրանքով: Ու չնայած առողջական խնդիրներին, տարբեր անձանց ու կառույցների բազմաթիվ միջնորդություններին՝ Բաբաջանյանը պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեց ընդամենը պատժաչափը լրանալուց 44 օր շուտ:



«Ինձ ազատագրկեցին խորհրդարանական ընտրություններից առաջ: Այդ ժամանակ, երբ ես քոչարյանական ռեժիմի կողմից ենթարկվում էի քաղաքական հալածանքների եւ ինձ հետ տարատեսակ պայմանավորվածություններ էին փորձում ձեռք բերել, եւ չընկրկեցի», - ասում է Ա. Բաբաջանյանը եւ պարզաբանում, որ գլխավոր դատախազությունում իրեն կանգնեցրել են երկընտրանքի առաջ՝ կամ ազատագրկվում է, կամ էլ՝ թերթը փակվում եւ Հայաստանը լքում: Նրա խոսքերով՝ «ազատ խոսքի բռնաճնշման Նույն գործելաճոճը» շարունակվում է նաեւ այսօր, միայն այն տարբերությամբ, որ դարձյալ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ այս անգամ որոշվել է թերթը փակել՝ ֆինանսապես ծնկի բերելով:

Բելլա եւ Սեդրակ Զոչարյանները հայցադիմումում նշել են, թե «Ժամանակի» վերոնշյալ «ստահող, ասեկոսեների վրա հիմնված» հրապարակումներն ընթերցողների մոտ սենսացիա ստեղծելու եւ շահույթ ստանալու նպատակ են հետապնդել, եւ դրանք արատավորում են իրենց պատիվը, արժանապատվությունն ու բարի համբավը: Ուստի, հայցվորները պահանջել են օրաթերթին պարտավորեցնել հերքում տպագրել եւ հատուցել վիրավորանքի ու զրպարտության միջոցով հասցված վնասը 6 միլիոն դրամի չափով:

«Ես ուզում եմ հասկանալ՝ ի՞նչ պատճառահետեւանքային կապ կա մեր տպագրածի եւ վիրավորանքի, զրպարտության միջեւ: Այդ հրապարակումներում վիրավորանքի տարր անգամ չկա, - տարակուսում է Արման Բաբաջանյանն ու հավելում, - փաստորեն, մոտավորապես, ստացվում է այսպես՝ եթե Զոչարյանների անունն այս կամ այն ընկերության հետ կապվում է, միանգամից այդ ընկերության համբավն ընկնում է, շահույթը՝ պակասում: Իրենց իսկ հիմնավորումներն են դրա մասին վկայում»:

Ռոբերտ Զոչարյանի եւ նրա ընտանիքի կարողություններին ժամանակ առ ժամանակ անդրադարձել է նաեւ արտասահմանյան մամուլը: Օրինակ՝ տարվա սկզբին ռուսական լրատվամիջոցները գրեցին, որ ՀՀ երկրորդ նախագահի հարստությունը կազմում է 4 միլիարդ ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ զուգահեռ ներկայացվեց նաեւ Զոչարյանների ունեցվածքի կոնկրետ ցուցակը: Իսկ այդ տվյալներն արտատպողները Նույնիսկ կիրառում էին «ավազակ», «թալանչի» բառերը՝ պարզաբանելով, թե այլ կերպ հնարավոր չէ՝ 10 տարի նախագահի պաշտոնում աշխատելով՝ դիզել նման կարողություն:

Պատիվը, արժանապատվությունն ու բարի համբավը վիրավորելու համար Զոչարյաններն այս դեպքում արտասահմանյան ՉԼՄ-ներին դատի չտվեցին: Նրանք Նույնիսկ հերքում տպագրելու պահանջ չներկայացրին, փոխարենը, ըստ էության, թիրախ են դարձրել սեփական երկրի լրատվամիջոցներին: Անցյալ տարեվերջին Ռ. Զոչարյանի կրտսեր որդու՝ Լեւոն Զոչարյանի հայցադիմումով «Հայկական ժամանակ» օրաթերթից բռնագանձվեց 3 միլիոն դրամ: Թերթը գրել էր, որ կրտսեր Զոչարյանն «Ամանորից օրեր առաջ Դուբայում՝ տեղի ոստիկանության կողմից՝ հարբած վիճակում ձերբակալվել է՝ հասարակական վայրում անկարգություններ անելու համար»:

«Հայկական ժամանակ» օրաթերթի կողմից տարածած անհիմն եւ չստուգված տեղեկությունները հիմք են դարձել օգտագործել ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Զոչարյանի որդու՝ Լեւոն Զոչարյանի անունը ՀՀ վարկանիշ-



ը գեցելու, վարկաբեկելու և միջազգային հանրության առաջ հայերին որպես «խուլիգան» ու «հանցագործ» ներկայացնելու և համանման որակներով պիտակավորելու համար, ինչը, անխոս, դիպչում է ՀՀ հանրային շահերին են», - հայցադիմումում նշել էր հայցվոր կողմը և դատարանին խնդրել «ՀԺ»-ին պարտավորեցնել փոխհատուցել ավելի քան 16 մլն դրամ՝ իբրև պատճառված նյութական և բարոյական վնաս: Վերաքննիչ դատարանի որոշմամբ, սակայն, կրտսեր Զոչարյանը «ՀԺ»-ից հատուցում ստացավ միայն իրավունքների պաշտպանությանն ուղղված ծախսի համար:

«Ժամանակ» օրաթերթի դեմ հայցադիմումում փաստաբանական ծառայության համար ճիշտ նույն չափի գումար՝ 3 միլիոն դրամ են հաշվարկել նաև Բելլա և Սեդրակ Զոչարյանները: 6 միլիոնի մյուս կեսը նրանք պահանջում են վիրավորանքի ու գրպարտության դիմաց:

«Ժամանակի» խմբագիր Բաբաջանյանը, ինչպես ինքն է ասում, թե «ՀԺ»-ի դառն փորձին, այնուամենայնիվ, վստահ է, որ իրենք հաղթելու են: Գործը քննում է Ա. Մելքոնյանը՝ նույն դատավորը, որ լսել է «ՀԺ»-ի դեմ ներկայացված հայցը:

«Իմ ուղերձն են հղում բոլոր բռնապետերին՝ ազատ խոսքն այլընտրանք չունի, և դրանով է պայմանավորված լինելու Հայաստանում որեւէ դրական փոփոխություն», - ասում է Արման Բաբաջանյանը և հավելում, որ իրեն առաջին հերթին ցավ է պատճառում հարցի «բարոյաբաղաբանական և քաղաքացիաժողովրդական» կողմը. «Որ Հայաստանի նախագահի պաշտոնը զբաղեցրած անձը պաշտոնաթողությունից 2 տարի անց էլ ազատ խոսքի սակավ միջոցները ճնշելու խնդիր է հետապնդում՝ գործի ղեկով իր ընտանիքի անդամներին»:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի այս տարվա հեռուստամարաթոնի կապակցությամբ մամուլում հարց բարձրացվեց՝ ինչո՞ւ Արցախի նախկին նախագահ Ռոբերտ Զոչարյանը չի մասնակցում հիմնադրամի՝ նույնիսկ Արցախում իրականացվելիք ծրագրերի համար կազմակերպվող դրամահավաքին: Զոչարյանների արձագանքը կարծես թե չի ուշացել. նախկին նախագահ Զոչարյանի գրասենյակի տնօրեն Վիկտոր Սողոմոնյանն արդեն հայտարարել է, որ «Ժամանակ» օրաթերթի դեմ ներկայացված հայցապահանջի ողջ գումարը «դատարանի որոշակի որոշման պարագայում» կփոխանցվի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվին կամ հանրապետության մանկատներից որեւէ մեկին:

«ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ԸՄ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՀԱՉՏՎԵԼ

2011 թ. փետրվարի 25-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կայացավ «Բելլա և Սեդրակ Զոչարյանները՝ ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի» նախնական դատական նիստը: Դատարանում օրաթերթի փաստաբան Սիկոլայ Բաղդասարյանը հայցվոր կողմի ներկայացուցիչ Արփինե Մելիքբեկյանին խնդրեց հստակեցնել հայցի հիմքերը և հայցապահանջը, հատկապես, թե որ փաստերն են ուզում, որ օրաթերթը հերքի: Ավելին, փաստաբանն առաջարկեց հերքման տեքստ պատրաստել և տրամադրել օրաթերթի

խմբագրությանը՝ հստակ նշելով այդ փաստերը: Բաղդասարյանն ասաց, որ հերքումը տպագրելուց հետո գուցե գումարային փոխհատուցման պահանջ այլևես չլինի: Նա նաեւ նշեց, որ դժվար է հասկանալ, թե ինչպես է հաշվարկվել վիրավորանքի ու զրպարտության միջոցով հասցված վնասը, որը ներկայացվել է հայցվորների կողմից՝ 6 մլն դրամ: «Եթե դրանից հետո էլ հայցը պնդեն, ուրեմն կհասկանանք, որ պահանջն ավելի շատ գումարային է», - ասաց Ն. Բաղդասարյանը:

Հայցվոր կողմի ներկայացուցիչը դատարանից մեկ ամիս ժամանակ խնդրեց տեքստը պատրաստելու եւ խմբագրությանն ուղարկելու, ինչպես նաեւ լրատվամիջոցի հետագա գործողություններին հետեւելու համար (արդյո՞ք տեքստը բարեխղճորեն եւ ամբողջությամբ է հրապարակվել), ինչից հետո՝ հաջորդ դատական նիստում, պարզ կլինի՝ հաշտվում են, թե վեճը դատական կարգով են լուծում:

Դատարանը, մասնակի բավարարելով հայցվոր կողմի միջնորդությունը, երկշաբաթյա ժամկետ տրամադրեց:

**I մլն վիրավորանքի, 2 մլն՝
զրպարտության համար.
Բեյլա եւ Սեդրակ Բոչարյանները
դճողում են իրենց դահանգները**

«Ժամանակ» օրաթերթը մարտի 10-ին հրապարակել է Բեյլա եւ Սեդրակ Բոչարյանների հերքումը, սակայն մարտի 14-ին Կենտրոն եւ Նորըմարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում շարունակվեց «Բեյլա եւ Սեդրակ Բոչարյանները՝ ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի» գործով նախնական դատական նիստը: Հաշտություն չկարգվեց, եւ Բոչարյանների ներկայացուցիչները պնդեցին իրենց հայցի պահանջները: Բոչարյանների ներկայացուցիչ Արփիկ Մելիքբեկյանը նշեց, որ հերքումը տառաչափով եւ ձեւով չի համապատասխանում հերքման պահանջին, ավելին՝ հերքմանը կցված է խմբագրության մեկնաբանություններով մեկ այլ տեքստ. «Ըստ եւության, հերքում որպես այդպիսին չի տրվել, որովհետեւ մի շարք խախտումներով է հրապարակվել: Եվ հիմա հանգում ենք մի իրավիճակի, երբ պատասխանողը շարունակում է նույն ոճով շարունակել իր գործունեությունը, եւ որեւէ փոփոխություն, այսինքն՝ հերքմանն ուղղված որեւէ քայլ այստեղ արձանագրել հնարավոր չէ, եւ գտնում եմ, որ դատաքննությունը ենթակա է շարունակման», - հիմնավորեց Արփիկ Մելիքբեկյանը:

Դատարանը նշեց, որ հայցապահանջի մեջ նշված հերքումը, ըստ եւության, արդեն կատարվել է, այդ ապացույցն արդեն ներկայացվել է դատարան:

«Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչ Արկուրյա Բաղդասարյանը նշեց, որ իրենք, ինչպես խոստացել էին, հրապարակել են հերքման այն տեքստը, որն ուղարկվել է խմբագրություն, սակայն թե ինչը պիտի հերքեն, այդպես էլ պատասխանող կողմի համար պարզ չէ, քանի որ հերքման տեքստում նույնպես չեն նշվել այն փաստերը, որոնք չեն համապատասխանում իրականությանը, զրպարտություն են եւ վերավորանք:



21.11-ի
 Եւ կրագործները

ՊԱՏԱՐԱՆՈՒՄ

Քոչարյանների մյուս ներկայացուցիչը՝ Սարգիս Գրիգորյանը, նշեց, որ պատասխանող կողմը կարող էր արձագանքել, որ հերքման այդ տեքստը իրենց կողմից ընդունելի չէ: Ավելին, օրաթերթը մարտի 1-ին Նոր հողված է հրապարակել, որտեղ շարունակում է Նույն վիրավորանքն ու գրպարտությունը՝ կապված Քոչարյանների ներգրավվածությամբ տարբեր բիզնեսներում: «Այսինքն՝ շարունակական գործողություն է գնում տվյալ դաշտում, որը, կարծում եմ, անընդունելի է մեզ համար», - նշեց Ս. Գրիգորյանը:

Արփինե Մելիքբեկյանն ընթերցեց երեք հոդվածների վիճահարուց պարբերությունները, որոնք, ըստ հայցվորների, գրպարտություն են եւ արատավորել են Բելլա եւ Սեդրակ Քոչարյանների բարի համբավը: Հատվածները վերաբերում են Բելլա Քոչարյանի՝ դեղորայքի բիզնեսում ներգրավված լինելուն, ինչպես նաեւ այն փաստին, որ Քոչարյանների ընտանիքին է պատկանում «911» դեղատների ցանցը, ու հենց նրանք են հովանավորում դեղերի շուկայում գործող «Քոմսթար», «Լիկվոր» եւ «Ֆարմատեքս» ընկերություններին:

Բացի վերոնշյալից, ըստ Ա. Մերիքբեկյանի, գրպարտություն է այն տեղեկությունը, որ Քոչարյաններն ադամանդի հանքեր ունեն Նամիբիայում, իսկ վերջերս Սեդրակ Քոչարյանը նմանատիպ հանք է ձեռք բերել Հնդկաստանում եւ բեռնափոխադրումներով զբաղվող «Սպայկա» ընկերության «մեջքին կանգնած է» Սեդրակ Քոչարյանը:

«Քոչարյանների սիրտը հերքում է ուզում» հոդվածը, ըստ Քոչարյանների ներկայացուցչի, կրկնում է նախկին հոդվածներում հնչած մտքերը, ընդ որում՝ վերջին հոդվածը թերթը հրապարակել է Քոչարյանների՝ հերքում տպագրելու խնդրանքից հետո: Հայցվորների ներկայացուցիչները 6 մլն դրամի պահանջը հիմնավորեցին հետեւյալ կերպ. օրաթերթը 1 մլն դրամ պետք է հատուցի հասցրած վիրավորանքների համար, 2 մլն դրամը՝ գրպարտության, իսկ մնացած 3 մլն դրամը իրավունքի վերականգնմանն ուղղված ծախսերն են:

Դատավորի հարցին, թե ինչու են առավելագույն շեմը վերցրել փոխհատուցման համար, Արփինե Մելիքբեկյանը նշեց, որ առաջնորդվել են Զաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածով, որը վիրավորանքի համար Նախատեսում է նվազագույն աշխատավարձի մինչեւ հազարապատիկը փոխհատուցման չափ, իսկ գրպարտության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ երկուհազարապատիկը:

«Մեր վստահորդները պահանջում են առավելագույն չափ՝ հաշվի առնելով, որ ըստ երկայնակի նրանք այնպիսի տեղեկատվություն են այնպիսի հասարակական հնչեղություն են ստացել, որ այլ կերպ գնահատել հնարավոր չէ: Այսինքն՝ բովանդակային եւ խստություն, ձեւակերպումների առումով այլ կերպ գնահատել հնարավոր չէ, եւ հիմք է ընդունվել հենց վերելի շեմը», - պարզաբանեց Արփինե Մելիքբեկյանը: Թեեւ գումարի պահանջում վիրավորանքն ու գրպարտությունը առանձնացված են, սակայն տեքստում որն է վիրավորանքը, որը՝ գրպարտություն, հայցվոր կողմն այդպես էլ չտարանջատեց՝ չնայած օրաթերթի ներկայացուցիչ Լիկոլայ Բաղդասարյանի համառ ջանքերին: «Վիրավորանքն ու գրպարտությունը կոմպլեքս երեւույթ է», - ասաց Սարգիս Գրիգորյանը եւ պարզաբանեց, որ եթե գրպարտել է, ուրեմն դրանով նաեւ վիրավորել է, եւ իրենք դա միասին են դիտարկում:

«911» դեղատեսակների ցանցի սեփականացմանը Բոշարյանները չեն

Մարտի 23-ին Բելլա եւ Սեդրակ Զոչարյանների ներկայացուցիչները Կենտրոն եւ Նորը-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացրին ապացույցներ առ այն, որ «911» դեղատեսակի ցանցի սեփականատերերի ցանկում Բելլա եւ Սեդրակ Զոչարյանները չկան: Զոչարյանները մասնաբաժին չունեն նաեւ «Զոմաթար», «Սպայկա», «Լիկվոր» եւ «Ֆարմատեքս» ընկերություններում: Այդ մասին վկայող տեղեկանքները տրամադրել են ՀՀ ԱՆ պետադատության գործակալությունը եւ կենտրոնական դեպոզիտարիատը: Զոչարյանների ներկայացուցիչ Արփիկե Մելիքբեկյանը նաեւ ներկայացրեց Կոնվերտ բանկից ստացած տեղեկանքը, որը վկայում է այն մասին, որ Սեդրակ Զոչարյանը որեւէ ներդրում չի կատարել Հնդկաստանում եւ այդ նպատակով իր հաշվից գումար չի փոխանցել:

«Ժամանակ» օրաթերթի շահերը ներկայացնող փաստաբան Սիկոլայ Բաղդասարյանը նշեց, որ Զոչարյանները հատուկ վերաբերմունք ունեն «Ժամանակ» թերթի նկատմամբ եւ խտրականություն են դրսևորում: Նա դատարանին ներկայացրեց այլ թերթերի տպագրած նույնաբովանդակ հոդվածներ, որտեղ գրվել է թե՛ Զոչարյանների բիզնեսի, թե՛ «911» դեղատեսակի ցանցի, թե՛ հայցվորների՝ այլ բիզնեսներում ներգրավվածության մասին: Ընդ որում՝ այդ հոդվածները հրապարակվել են ավելի շուտ, քան «Ժամանակ» օրաթերթի հոդվածները, բայց Զոչարյանները դատի են տվել միայն «Ժամանակին»: Դատարանը նկատեց, որ դա հայցվորների իրավունքն է, եւ նրանք են որոշում՝ ում դեմ հայց ներկայացնել, ում դեմ՝ ոչ:

Արփիկե Մելիքբեկյանը դատարանին ներկայացրեց փաստաբանական ծառայությունների մասին վկայող փաստաթուղթը, որտեղ 3 մլն դրամի մանրամասն հաշվետվությունն է՝ ինչպես եւ ինչի վրա է ծախսվել այդ գումարը:

Իսկ մինչ այդ Զոչարյանների ներկայացուցիչ Արփիկե Մելիքբեկյանը հիմնավորում էր, որ իրենք հայցի վաղեմության ժամկետը պահպանել են, չնայած թերթի ներկայացուցիչ Սիկոլայ Բաղդասարյանի պնդումներին, թե հայցը մեկամսյա ժամկետից հետո է մուտք արվել դատարան: Արփիկե Մելիքբեկյանը նշեց, որ օրենսդրությունը ոչ թե մեկամսյա, այլ վեցամսյա ժամկետ է նախատեսել դատարան դիմելու համար, իսկ Սիկոլայ Բաղդասարյանը հակադարձեց, թե 6-ամսյա ժամկետը նախատեսված է այն դեպքերի համար, երբ հայցվորները տեղյակ չեն եղել հոդվածների մասին:

Զոչարյանների մյուս ներկայացուցիչը՝ Սարգիս Գրիգորյանը, հավելեց, որ իրենց ընկերությունը մոնիտորինգային ծառայություններ է մատուցում, այսինքն՝ որոշ ՉԼՄ-ների կամ փաստաթղթերի, իրավական զարգացումների մոնիտորինգ է անում: Ինքը, առաջնորդվելով մոնիտորինգի արդյունքներով, առանց տեղյակ պահելու իր վստահողիներին, էլեկտրոնային նամակ է գրել «Ժամանակ» թերթին՝ պահանջելով հեղքել իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները: Սարգիս Գրիգորյանի խոսքերով՝ ինքն ավելի ուշ է տեղեկացրել Բելլա եւ Սեդրակ Զոչարյաններին օրաթերթում տպագրված հոդվածների մասին: Այսինքն՝ նրանք ավելի ուշ են ծանոթացել հոդվածներին: Հետեւաբար, սահմանված ժամկետի մեջ են հայցը ներկայացրել դատարան:

Նիկոլայ Բաղդասարյանը անհիմն համարեց իր գործընկերոջ փաստարկները, քանի որ սա թերթին դիմել է որպես հայցվորների վստահորդ, այլ ոչ թե հանդես է եկել ինքնագլուխ: Հակառակ պարագայում, որտեղից պետք է իմանար, թե այդ հողվածները վիրավորել են հայցվորներին. «Գուցե իրենց վստահորդները չէին էլ վիրավորվել, եթե տեղյակ չէին տպագրված հողվածներին»: «Կողմը նամակ է գրել իրենց անունից, այսօր եւս կողմը հանդես է գալիս նրանց անունից: Ես էլ ինչ հնչեցնում եմ, հնչեցնում եմ իմ վստահորդի անունից,- ասաց Ն. Բաղդասարյանը,- ուղղակի մեր համոզմունքն է, որ փաստաբանները բաց են թողել ժամկետը, այսօր փորձում են ինչ-որ պատճառաբանությամբ, օգտագործել այդ փաստերը եւ ներկայացնել, որ իբր իրենք տեղյակ չեն եղել»:

Նիկոլայ Բաղդասարյանը դատարանից ժամանակ խնդրեց՝ փաստաբանների ծառայության դիմաց ստացած 3 մլն դրամի փաստաթուղթը ուսումնասիրելու եւ պատասխան պատրաստելու համար: «Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչը կշեց, որ դիմելու է Փաստաբանների պալատին, որպեսզի այնտեղից փաստաբանի վարքի եւ մատուցված ծառայությունների համաչափության վերաբերյալ պարզաբանում ստանա, իսկ Սարգիս Գրիգորյանն ասաց, որ դա կապ չունի Փաստաբանների պալատի կամ փաստաբանի վարքագծի հետ, այլ «բիզնես մոդել» է:

Դատավոր Ա.Մելքումյանը երկշաբաթյա ժամկետ տրամադրեց պատասխանողներին՝ ներկայացրած փաստաթղթերն ուսումնասիրելու եւ իրենց ապացույցները դատարանին ներկայացնելու համար:

Բելլա եւ Սեդրակ Զոչարյանների ներկայացուցիչ Սարգիս Գրիգորյանը ապրիլի 20-ի դատական նիստում եւս մեկ անգամ հաստատեց, որ չեն ուզում հաշտվել «Ժամանակ» օրաթերթի հետ՝ ի պատասխան դատաքննության ավարտին դատավոր Արայիկ Մելքումյանի հարցի:

Դատարանը հետազոտեց նաեւ ներկայացրած ապացույցները: Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը, անդրադառնալով փաստաբանական ծառայություններ մատուցելու դատարան ներկայացրած հայցվորների ներկայացուցիչների տեխնիկական առաջադրանքին, ասաց, որ տեխնիկական առաջադրանքում հստակ երեւում է, որ փաստաբանները տեղեկացրել, ավելին՝ եզրակացություն ու առաջարկներ են արել Բելլա եւ Սեդրակ Զոչարյաններին, միայն դրանից հետո հերքում պահանջել եւ դիմել դատարան, ինչը նշանակում է, որ հայցվորները բաց են թողել ժամկետները:

Դատավորը ժամանակ է «ձգձգում»

Մայիսի 5-ին դատավոր Արայիկ Մելքումյանը պետք է հրապարակեր վճիռը, սակայն սպասված վճռի փոխարեն հրապարակեց որոշում՝ դատաքննությունների վերսկսման մասին՝ առանց կշիռն հիմքերը:

Ըստ «Ժամանակ» օրաթերթի շահերի պաշտպան Նիկոլայ Բաղդասարյանի՝ դատավորի կայացրած որոշումը քաղաքական է: Փաստաբանը գտնում է, որ հնարավոր է՝ դատավորն ինքը չի կողմնորոշվել վճռի հարցում եւ ժամանակ է ձգում՝ տեսնելու, թե ինչ կողմնորոշում ունեն լրատվամիջոցների ներգրավմամբ մյուս գործերը քննող դատավորները կամ էլ սպասում է «վերելից եկող» հրահանգի:



Մայիսի 23-ին նշանակված դատական նիստը սկսվեց նշված 10:00-ից քիչ շուտ եւ տեւեց 2 ըրպէ: Այդ 2 ըրպէի ընթացքում դատարանը համարեց, որ պատասխանող կողմի ներկայացուցիչը պատշաճ կերպով տեղեկացվել է նիստի վերաբերյալ, սակայն չի ներկայացել, ինչը դատարանին թույլ է տալիս շարունակելու դատաքննությունը առանց կողմի ներկայության: Սակայն ներկաների համար անսպասելիորեն դատավոր Արայիկ Մելքումյանը դատաքննության շրջանը հայտարարեց ավարտված եւ նշեց դատավճռի հրապարակման օրը՝ հունիսի 6:

Այդ օրը դատավոր Արայիկ Մելքումյանը Քոչարյանների հայցը բավարարեց մասնակի՝ «Ժամանակին» պարտավորեցնելով 6-ի փոխարեն երկրորդ նախագահի ընտանիքին վճարել 3 մլն դրամ՝ որպէս դրամական փոխհատուցում (1.000.000 դրամ՝ վիրավորանքի եւ 2.000.000 դրամ՝ զրպարտության համար) եւ մերժեց հայցվորի ներկայացուցիչների համար պահանջվող 3 մլն-ի փոխհատուցումը:

Դատարանը պարտավորեցրեց նաեւ «Ժամանակ» օրաթերթին՝ հերքել «Արյունը՝ քոչարյաններից, կայֆը՝ Ծառուկյանից, իսկ հակացնումը՝ ԼՖիկից» խորագրով, «Ադամանդէ Ռոբ» խորագրով, «Volvo+Spayka=Սեդրակ Քոչարյան» խորագրով տպագրված հոդվածներում ընդգրկված՝ Բելլա եւ Սեդրակ Քոչարյանների պատիվը եւ արժանապատվությունն արատավորող տեղեկությունները եւ հերքումը տպագրել վճիռն օրինական ուժի մէջ մտնելուց անմիջապէս հետո՝ նույն օրաթերթում, «Յերքում» խորագրի ներքո այնպէս, որ հերքման տեղակայման, ձեւավորման, տառատեսակի չափը ու տեսակը չզիջի նշված հոդվածներում հրապարակված տեղեկատվությանը:

Ըստ Նիկոլայ Բաղդասարյանի՝ «Ժամանակի» դէմ հրապարակված գործով դատական վճիռն անտրամաբանական էր երկու կողմի համար էլ: Նախ, իրավաբանորեն սխալ է միեւնույն եզրույթը գնահատել որպէս վիրավորանք եւ զրպարտություն: Բացի դրանից, եթէ դատարանը գտել է, որ հայցվորի իրավունքները խախտվել են, եւ այդ մասով հայցը ենթակա է բավարարման, ապա որքանով է օրինաչափ դատական ծախսերի մասով այն մերժելը: Հայցի մասնակի բավարարումը հետապնդում է մեկ նպատակ՝ դարձնել այն ավելի «համոզիչ»:

Վերաբնգիչը մերժեց «Ժամանակին»

Սեպտեմբերի 15-ին ՀՀ վերաքննիչ դատարանում լսվեց «Ժամանակ» օրաթերթի (իրատարակիչ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ) վերաքննիչ բողոքն ընդդէմ Բելլա եւ Սեդրակ Քոչարյանների: Դատարանի որոշումը հրապարակվեց հոկտեմբերի 11-ին: Վերաքննիչ դատարանը «Ժամանակ» օրաթերթի վերաքննիչ բողոքն ընդդէմ Բելլա եւ Սեդրակ Քոչարյանների մերժեց՝ ուժի մէջ թողնելով Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

«Ժամանակ» օրաթերթի փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը նոյեմբերի 11-ին բողոք է ներկայացրել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել առաջին ատյանի դատարանի հունիսի 6-ին կայացրած վճիռը:

news.am-ի դեմ դասակարգում անցրելիս հետաձգվեց

2011 թ. հոկտեմբերի 7-ին Երևանի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Մարգարիտա Զարթեւյանի նախագահությամբ պետք է կայանար news.am լրատվական-վերլուծական գործակալության դեմ «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն»-ի՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության հայցով նախնական դատական նիստը (գործի քննությունը սկսվել է 2011 թ. փետրվարի 4-ին): Սակայն հայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանը միջնորդել էր, որպեսզի դատական նիստը հետաձգվի, քանի որ նա Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նիստի պետք է մասնակցեր:

Դատավորի հարցին, թե ինչ է կարծում հայցվորի միջնորդության վերաբերյալ պատասխանողը, Արամազդ Կիվիրյանը պատասխանեց, որ դեմ է միջնորդությունը բավարարելուն եւ կարծում է, որ ճիշտ կլինի դատական նիստը շարունակել հայցվորի բացակայությամբ, քանի որ, ըստ փաստաբանի, հայցվորը միտումնավոր է ձգձգում նիստերը: 2010 թ.-ի դեկտեմբերի 27-ից այս գործը դատարանում է, եւ հայցվորը շարունակաբար միջնորդություններ է անում եւ հետաձգում դատական նիստերը:

news.am-ի դեմ ներկայացված հայցի համար հիմք է հանդիսացել լրատվական գործակալության 2010 թ. նոյեմբերի 23-ին տպագրած «Սրտի արատով հիվանդին առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «ֆռաացրել» են ու այլ սարք տեղադրել» վերնագրով նյութը: Այն վերաբերում էր Հայաստանի քաղաքացի Հովհաննես Կաթրջյանին, ով news.am-ի թղթակցի հետ զրույցում մեղադրել էր վերոնշյալ բժշկական կենտրոնին՝ իրեն խաբելու եւ 10 տարի շահագործման ժամկետով էլեկտրոկարդիոլոգիանիչի փոխարեն վիրահատությամբ մեկ այլ՝ էժանագին սարք տեղադրելու մեջ: «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնը» լրատվամիջոցից 2 մլն դրամ է պահանջում իր պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հարված հասցնելու համար:

Դատարանը, այնուամենայնիվ, բավարարեց հայցվորի միջնորդությունը՝ մեկնաբանելով, որ դատարանը կողմերին հավասարության կարգով պետք է լսի, ինչպես նաեւ չսահմանափակի ապացույցներ



ներկայացնելու կողմերի իրավունքները:

Յերթական դատական նիստի օրը՝ նոյեմբերի 8-ին, հայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանը չէր հասցրել ավարտել իր միջնորդությունը, երբ էլեկտրաէներգիան անջատվեց: Ներկայացուցիչը միջնորդում էր, որ դատական նիստը հետաձգվի, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանը նոյեմբերի 15-ին պետք է քննի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Չնայած պատասխանողի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանի առարկությանը՝ նիստը դադարեցվեց, քանի որ էլեկտրականություն չկար, որպեսզի կատարվեր նիստի ձայնագրություն: news.am-ի ներկայացուցիչը պնդում էր, որ կատարվի նիստի ձեռագիր արձանագրություն, սակայն դատավոր Մ.Յարթեյանն առարկեց՝ մեկնաբանելով, որ երբեք իր նիստերը ձեռագիր չեն արձանագրվել:

Յերթական նիստի օրվա մասին գրավոր կծանուցվի կողմերին:

«Առիթմոլոգիական ursw անալիզ Կենցարդ»-ն ու «Առավոտ» օրաթերթը հաշտություն և կնքեցին



21 ԱՄՆ
են կրագրողները
ՊԱՏԱՐԱՆՈՒՄ
69

Կենտրոն եւ Նորք-Մարտշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 2011 թ. փետրվարի 10-ին սկսվեց «Առիթմոլոգիական արտաբանական կենտրոն»-ի հայրիք ընկերությունն ընդդեմ «Առավոտ» օրաթերթի՝ պատվով, արժանապատվության, գործարար հարմարի պաշտպանության մասին: Սույն գործով վիճարկվում էր 2010 թ.-ի նոյեմբերի 13-ին «Առավոտ» օրաթերթում հրապարակված «Վճարվել է 10 տարվա կյանքի համար, ստացել՝ 7 տարվա: Բժիշկները հիվանդին էլ, պետությանն էլ խաբե՛լ են» հոդվածը: Ըստ հայցվորի ներկայացուցիչ Սուրադ Արսյանի՝ հոդվածը պարունակում է վիրավորական արտահայտություններ եւ հոդվածի հրապարակման միջոցով արտավորվել է Հայաստանի «Առիթմոլոգիա-

կան սրտաբանական կենտրոնի» բժիշկների պատիվը եւ արժանապատվությունը: Այն նաեւ զրպարտություն է, քանի որ պարունակում է փաստացի տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են հայցվորի գործարար համբավը:

Ի պատասխան հայցվորի վերը նշված պնդմանը՝ պատասխանողի ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը նշում էր, որ հողվածում վիրավորական արտահայտություններ ընդհանրապես չկան, զրպարտությունը նույնպես բացառվում է, քանի որ կյուրը կառուցված է որոշակի անձի կողմից հայտնած տեղեկությունների վրա, ինչպես նաեւ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Չնայած դրան՝ 2011 թ.-ի հոկտեմբերի 4-ին «Առավոտ» օրաթերթը հրապարակեց հերքման տեքստ, եւ 2011 թ. հոկտեմբերի 21-ի դատական նիստի ժամանակ կողմերը եկան հաշտության:

Առիթմոլոգիական արտահայտում կենցարանի 2-րդ հայցն ընդդեմ «Առավոտի»

2011 թ. սեպտեմբերի 8-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ընդդեմ «Առավոտ» օրաթերթի՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության 2-րդ հայցով նախնական դատական նիստը:

«Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ն «Առավոտ» օրաթերթի դեմ 2-րդ հայցն է ներկայացրել «Իսկ ո՞ր մնաց Հիպոկրատի երդումը» (01.12.2010 թ., էլեկտրոնային տարբերակ) հողվածների համար:

Հողվածը պարունակում էր ինֆորմացիա այն մասին, որ հողվածի հեղինակ, Կապանի բնակիչ Կարո Ավանեսյանը, ընթերցելով «Առավոտ» թերթի 13.11.2010 թ. «Վճարել է 10 տարվա կյանքի համար, ստացել 7 տարվա: Բժիշկները հիվանդին էլ, պետությանն էլ խաբել են» հողվածը, գրել է, որ ինքը դիմել է Հայաստանի Առիթմոլոգիայի սրտաբանական կենտրոն: Վճարումներ կատարելով՝ հետագոտվել է, ինչի հետեանքով պարզվել է, որ նա ունի առիթմիա եւ պետք է անհապաղ վիրահատվի: Կնքելով պայմանագիր 5,1 մլն դրամ վիրահատության համար (որի 70 %-ը վճարվում է նախապես, եւ կատարվում է վիրահատությունը, հետո 3 ամսվա ընթացքում վճարվում է մնացած 30 %-ը)՝ նրան վիրահատել են՝ տեղադրելով «Biotronic» ֆիրմայի «Lexos DR» տիպի երկխոռոչանի սարքը սրտի ռիթմը վարելու համար, որը երաշխավորում է 4-5 տարի անխափան աշխատանք:

Սակայն Երեւանից Կապան վերադառնալու ճանապարհին նրա վիճակը վատացել է. ինչպես մինչ վիրահատությունը՝ շնչարգելություն է ունեցել, իսկ արդեն Կապանում շնչարգելությունը կրկնվել է երկու անգամ: Բոլոր սրացումների ժամանակ սարքը չի աշխատել, դա հաստատվել է նաեւ սարքի ստուգումներով: Վերադառնալով Երեւան՝ հիվանդը բժշկուհուն ներկայացրել է դիմում, ըստ որի՝ անտորոշումը եղել է թերի եւ խնդրել, առաջարկել, պահանջել է հրավիրել կոնսիլի-

ում՝ ճշտելու ախտորոշումը եւ կատարելու համապատասխան բուժում, առանց լրացուցիչ վճարումների:

Դիմումը քննարկելով՝ Առիթմոլոգիայի սրտաբանական կենտրոնի տնօրեն Ս. Ջամայանը եզրակացրել է, որ նա խաբում է, թե իր մոտ շնչարգելության սրացումներ են եղել, իրականում այլ բան է եղել, եւ նոր բուժման հետ կապված հետագա բոլոր քայլերի համար հիվանդը պետք է վճարի:

Նիստում «Առավոտ» օրաթերթի ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը հայտնեց, որ քանի որ կողմերը հաշտության համաձայնության չեն եկել, ինքը դատարանին միջնորդում է որպես վկա հրավիրել հոդվածի հեղինակ Կարո Ավանեսյանին:

Յայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանը պատասխանողին հարցրեց, թե որքանո՞վ է անհրաժեշտ Կարո Ավանեսյանի վկայությունը: Մեժլումյանն էլ պատասխանեց, որ քանի որ հայցվոր կողմը վիճարկում է այն հարցը, թե հոդվածում գրվածը ճիշտ չէ, դրա համար հրավիրում է վկային, որը հոդվածի հեղինակն է եւ տարել է այդ վիրահատությունը: Նա էլ պետք է փաստի հոդվածում գրածը:

Մ. Ասրյանի հերթական հարցին, թե՞ եթե վկան հաստատի, որ ինքն է ասել հոդվածում նշվածը, արդյոք պատասխանող կողմը ազատվո՞ւմ է պատասխանատվությունից, Կ.Մեժլումյանը պատասխանեց, որ իրենք առանց այդ էլ ազատված են պատասխանատվությունից, քանի որ գրվածը միայն ճշմարտություն է, էլ ինչ խոսք կարող է լինել պատասխանատվության մասին: Վկային հրավիրելով՝ իրենք ցանկանում են ապացուցել, որ հոդվածում գրվածը համապատասխանում է իրականությանը:

Այնուամենայնիվ, հայցվոր Մ.Ասրյանը առարկեց միջնորդությանը՝ հիմնավորելով, թե ինքը կարծում է, որ հոդվածում առկա խոսքերը ոչ թե Կարոյի խոսքերն են, այլ «Առավոտի» արտահայտած դիրքորոշումը: Նա նաեւ նշեց, որ կներկայացնի իր միջնորդությունը գրավոր կարգով:

Դատարանը հետաձգեց դատական նիստը՝ տրամադրելով հայցվորին ողջամիտ ժամկետ գրավոր միջնորդությունը ներկայացնելու համար:



Փաստաբանի եւ թերթի միջեւ վեճը լուծվեց հաշտությամբ

Մինչ դատարանները քննում էին «Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի հայցերն ընդդեմ «Առավոտ» թերթի եւ News.am կայքի, այդ գործերով ՍՊԸ-ի ներկայացուցիչ, փաստաբան Մուրադ Ասրյանը նոր հայց ներկայացրեց «Առավոտ» օրաթերթի դեմ:

Նա վիճարկում էր թերթի 2011 թ. փետրվարի 5-ի համարում տպագրված ««Առավոտին» եւ «News.am»-ին դատում են նույն բանի համար» հոդվածը, որով, ըստ նրա, վիրավորել են իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը: Հոդվածը վերաբերում էր «Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի՝ «News.am» լրատվական-վերլուծական գործակալության եւ «Առավոտ» օրաթերթի դեմ միեւնույն խնդրի առնչությամբ ներկայացված հայցերին, որոնցից մեկը եղել է իրավաբանական անձ չհանդիսացող «News.am» գործակալության եւ ոչ թե նրա հիմնադիր «Մեդիա-Կոնսալտ» ՍՊԸ-ի դեմ: «Առավոտը» մատնանշել էր դատավարական այդ սխալը: Այս առնչությամբ հետագայում՝ ապրիլի 28-ի համարում, «Առավոտը» ներկայացրեց Մուրադ Ասրյանի մեկնաբանությունը, մասնավորապես այն, որ վերջինս լրատվական կայքից փորձել է պարզել, թե որ իրավաբանական անձին է ինքը ներկայացնում, սակայն իրեն չեն պատասխանել: Եվ հայցադիմումը պահանջված մեկամսյա ժամկետի ընթացքում ներկայացրած լինելու համար էլ Մուրադ Ասրյանը, որպես պատասխանող կողմ, հայցադիմումում նշել է գործակալության անվանումը: Այնուհետեւ հայցվորը միջնորդել է ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու համար: Իսկ դատարանը, գտնելով, որ կա ընդդատության կանոնների խախտում, գործը հանձնել է Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

2011 թ. մայիսի 31-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կայանալու էր «Առավոտ» օրաթերթի դեմ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Մուրադ Ասրյանի հայցով նախնական դատական նիստը: Սակայն «Առավոտի» ներկայացուցիչ Կարեն Մեծլումյանի խնդրանքով հայցվոր Մուրադ Ասրյանը դատարանի առջեւ հանդես եկավ դատական նիստը հետաձգելու միջնորդությամբ, որը բավարարվեց:

«Առավոտը» նախապես բանավոր պայմանավորվածություն էր ձեռք բերել Մուրադ Ասրյանի հետ՝ վեճը հաշտությամբ լուծելու մասին: Եվ հունիսի 10-ին «Առավոտը» տպագրեց հեքքում հիշյալ հոդվածի առնչությամբ. «...Հոդվածը գրված էր միակողմանի, քանի որ չէր ներկայացվել դատական վեճում ներգրավված կողմերից մեկի՝ հայցվոր, փաստաբան Մուրադ Ասրյանի դիրքորոշումը, ավելին՝ հայցի վերա-

բերյալ արտահայտված լրագրողի կարծիքը արատավորել է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը, ինչի կապակցությամբ խմբագրությունը հայցում է փաստաբանի ներողամտությունը:

Խմբագրությունն ընդունում է, որ սույն հոդվածում հեղինակի կարծիքն ու անհիմն ենթադրություններն են: «Առավոտ» թերթի խմբագրությունը պարտավորվում է այսուհետեւ տեղեկատվությունը պարզել հնարավոր բոլոր աղբյուրներից՝ իրականությանը չհամապատասխանող եւ/կամ խեղաթյուրված փաստերի վրա հիմնված տեղեկատվություն տարածելուց խուսափելու համար»:

ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱԽԿԻՆ ԽՐԻՐՈՂԱԿԱՆ ԸՆԴՂԵՄ «ԺԱՄԱՆԱԿԻ»

2011 թ. փետրվարի 16-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում սկսվեց ԱԺ նախագահի նախկին խորհրդական Թաթուլ Մանասերյանի՝ ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոնի» ներկայացրած հայցով գործը:

Թաթուլ Մանասերյանը թերթի՝ 2010 թ. սեպտեմբերի 29-ի համարում հրապարակված «Քրգործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դեմ» վերնագրով տեղեկությունը համարում է զրպարտություն, որով արատավորվել են իր պատիվն ու արժանապատվությունը: Նախկին խորհրդականը թերթից պահանջում է հերքել տպագրված տեղեկությունները եւ փոխհատուցել 2,5 մլն դրամ՝ զրպարտության համար, որից 500 000 դրամը, ըստ հայցի, փաստաբանի վարձատրության գումարն է:

Յոդվածում ասվում է, որ ՀՀ ԱԺ նախագահ Հ.Աբրահամյանի (նախկին) խորհրդական Թաթուլ Մանասերյանի դեմ քրեական գործ է հարուցվել, եւ այն գտնվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում: Թ.Մանասերյանին կասկածում են վաշխառությամբ զբաղվելու մեջ նրանից հետո, երբ մեկ այլ քրեական գործի շրջանակներում որպես վկա հրավիրված անձանցից մեկը միամիտ բերանից թռցրել է, որ Թաթուլ Մանասերյանն իրեն տոկոսով փող է տվել:

Ի պատասխան Թաթուլ Մանասերյանի՝ խմբագրություն կատարած գանգին եւ հնչեցրած զայրույթին՝ «Ժամանակ» օրաթերթը տպագրել է «Պարոն Մանասերյան, \$ 40.000 տոկոսով չե՞ք տվել» վերնագրով հոդվածը՝ գործի հանգամանքների որոշ մանրամասներով:

Վաշխառության մասին ցուցմունք ճեղքայացվել է

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ Կարինե Պետրոսյանի նախագահությամբ, «Մանասերյանն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հրատարակիչ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի» գործով հունիսի 10-ի նիստի ժամանակ պատասխանողի փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը միջնորդություն ներկայացրեց, որով կողմը պահանջում է վկա կանչել այն անձին, ով Ազգային ժողովի նախագահի նախկին խորհրդականի դեմ ցուցմունք է տվել՝ ասելով, որ նա իրեն տոկոսով գումար է տվել:

Այն մասին, որ Թաթուլ Մանասերյանը զբաղվել է վաշխառությամբ, թերթը տեղեկացել է մի քրեական գործից, որով նախկին խորհրդականը անցնում է որպես վկա: Նրա դեմ ցուցմունք է ներկայացրել այդ գործով մեկ այլ վկա՝ Անտոն Առաքելովը, որին էլ պատասխանող կողմը ցանկանում է որպես վկա ներգրավել նաեւ քաղաքացիական գործով:

Բաղդասարյանի ընթերցած վկայության ցուցմունքի հատվածում ասվում է, որ Անտոն Առաքելովը Մանասերյանին 2006 թ. վերջից մինչև 2007թ. սկիզբը մուծել է 19 400 ԱՄՆ դոլար տոկոս, որը հաշվարկվել է որպես 40 000 դոլարի դիմաց տրված տոկոս, որից հետո առաջինը այլևս չի կարողացել մուծել, եւ կուտակվել է 12 000 ԱՄՆ դոլար պարտքը: Այս փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, որի մասին էլ «Ժամանակը» տպագրել է հոդված:

Հայցվոր կողմը, սակայն, համարում է, որ անհրաժեշտություն չկա լսելու վկային դատարանում: Կողմի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը առարկում է միջնորդությանը, քանի որ, ըստ նրա, այս միջնորդությանը վկան հրավիրվում է վկայություն տալու այն փաստի առթիվ, որի վերաբերյալ արդեն ներկայացվել են համապատասխան ապացույցներ, այսինքն՝ վկան պետք է տա մի ցուցմունք, որն արդեն տվել է:

Հաշվի առնելով, որ պատասխանողը ներկայացրել է վերոհիշյալ քրեական գործի շրջանակներում կատարված առերես հարցաքննության մասին ցուցմունքները, ինչպես նաեւ Արթուր Առաքելովի ցուցմունքները, դատարանը որոշեց քննել դրանք, որից հետո անդրադառնալ միջնորդությանը:

Սեպտեմբերի 2-ին կայացած հեղթական դատական նիստի ժամանակ պատասխանող կողմը դատարանին ներկայացրեց փաստաթղթեր, որոնցում ասվում էր, որ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժնում անցյալ տարի քննված քրեական գործով տուժող Արթուր Մանասերյանի եւ Անտոն Առաքելովի առերես հարցաքննության ժամանակ Առաքելովը մանրամասներ է հայտնել իր եւ Թաթուլ Մանասերյանի միջեւ եղած գումարային գործարքների մասին, ըստ որի՝ Անտոն Առաքելովը Մանասերյանին 2006թ. վերջից մինչև 2007թ. սկիզբը մուծել է 19 400 ԱՄՆ դոլար տոկոս, որը հաշվարկվել է որպես 40 000 դոլարի դիմաց տրված տոկոս, որից հետո առաջինը այլևս չի կարողացել մուծել, եւ կուտակվել է 12 000 ԱՄՆ դոլար պարտքը: Հետեւություն անելով այս ամենից՝ պատասխանողի ներկայացուցիչ Ն.Բաղդասարյանը ցանկացավ որպես վկա ներգրավել Անտոն Առաքելովին: Սակայն հայցվոր կողմը առարկեց այդ միջնորդությանը՝ մեկնաբանելով, որ եթե հաստատված լիներ վկայի ցուցմունքը, վաղուց արդեն քրեական գործ հարուցված կլիներ:

Դատարանը մերժեց պատասխանողի միջնորդությունը՝ մեկնաբանելով, որ ՀՀ Ջաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ կետում ասվում է, որ անձը ազատվում է պատասխանատվությունից, եթե տարածած տեղեկատվության համար հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), իսկ սույալ միջնորդությունը չի բխում սույն հոդվածի պահանջներից: Դատարանը մերժեց նաեւ օրաթերթի ներկայացուցիչ՝ 1087.1 հոդվածը հակասահմանադրական ճանաչելու պահանջը՝ հայտարարելով, որ հոդվածը հակասահմանադրական չէ՝ վկայակոչելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 2-րդ կետը: Համաձայն հոդվածի՝ դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը եւ դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան, եթե ընդունում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ կորմատիվ իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանող կողմը դատարանից խնդրեց ողջամիտ ժամկետ տրամադրել, որպեսզի գրավոր ձեւակերպի դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը:



**Բստ փաստա անի՝ դասավորի
որոշումը խոշոր հոսքեր է
ստեղծում խոսքի ազատության
համար**

Սեպտեմբերի 5-ին պատասխանող կողմը ներկայացրեց ինքնաբա-
ցարկի միջնորդությունը, համաձայն որի՝ դատարանի կողմից դա-
տաքննության ընթացքում կայացված երկու որոշումները ողջամիտ
կասկած են հարուցում տվյալ գործում դատավորի անկողմնակալու-
թյան հարցում: Համաձայն Քաղ. օր. 1087.1 հոդվածի 4-րդ կետի՝ գր-
պարտության վերաբերյալ գործերով ապացուցման պարտականու-
թյունը կրում է պատասխանողը, այսինքն՝ տվյալ գործով «Սկիզբ Մե-
դիա Կենտրոն» ՍՊԸ-ն, հետևաբար, դատարանը պետք է հնարավոր-
ություն ընձեռներ պատասխանող կողմին, որպեսզի վերջինս կարող
անար ապացուցել իր գործունեության ճշմարիտ լինելը:

Ըստ 1087.1 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի՝ փաստացի տվյալները
հրապարակային ներկայացնելը չի համարվում գրպարտություն, եթե
դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթաց-
քում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերա-
բերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապա-
ցույցներում: Իսկ տվյալ գործով դատարանին ներկայացվել են ապա-
ցույցներ, վկաների հարցաքննություններ, առերես հարցաքննություններ,
քրեական գործում առկա վկայի՝ Անտոն Առաքելովի ցուցմունքները, հե-
տևաբար, հոդվածում նշված տեղեկատվությունը չի կարող համարվել
գրպարտություն, քանի որ այն վերցված է ստույգ քրեական գործից:

Հետևաբար, դատարանը, մերժելով պատասխանողի միջնորդու-
թյունը եւ հնարավորություն չտալով պատասխանողին՝ ապացուցելու
փաստերը, խախտել է կողմերի հավասարության իրավունքը՝ երաշ-
խավորված ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով եւ Մարդու իրա-
վունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

Ըստ թերթի շահերը ներկայացնող փաստաբան Նիկոլայ Բաղդասար-
յանի՝ հոդվածի հեղինակը հղում չի կատարել տեղեկատվության աղբյու-
րին, սակայն «ժամանակ» օրաթերթի սեպտեմբերի 29-ի հոդվածում՝ նշել
է, որ «մեկ այլ քրեական գործի շրջանակներում որպես վկա հրավիրված
անձանցից մեկը միամիտ բերանից թոցրել է, որ Թաթուլ Մանասերյանն
իրեն տոկոսով փող է տվել»: Այսինքն՝ հեղինակի համար հոդվածի աղբ-
յուր հանդիսացել են պաշտոնական փաստաթղթերը, նրա մոտ գտնվող
քրեական գործի նյութերը, որոնք պատասխանողը ներկայացրել է դա-
տարան, այլ ոչ թե՛ Անտոն Առաքելովի բանավոր հարցազրույցը: Անտոն
Առաքելովին որպես վկա կանչելու միջնորդությունը պայմանավորված էր
նրանով, որ ապացուցվեր վերջինիս կողմից վկայություններ ու ցուցմունք-
ներ տալու հանգամանքը, որոնց հիման վրա էլ գրվել է նյութը:

Օրաթերթի ներկայացուցիչը հավելեց, որ վերը նշված փաստարկ-
ները բավարար են, որպեսզի ապացուցված համարվի դատարանի՝
կողմերի հավասարության իրավունքը խախտելու փաստը: Հետևա-

բար, դատարանի նման որոշումը խոչընդոտում է ժողովրդավարական հանրապետությունում խոսքի ազատության տարածմանը:

Օրաթերթի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանը նաեւ վկայակոչեց Ա. Մելքումյանի վարույթում քաղաքացիական մեկ այլ գործ, որի վճռում ասվում է, որ թեւեւ պատասխանողը վեճի առարկա հանդիսացող հողվածի հրապարակման մեջ չի կատարել հղում, այնուամենայնիվ, ՀՀ քաղ. օր. 1087.1 հոդվածի 6-րդ մասով, դատարանը չի կարող զրկել պատասխանող կողմին իր գործի դատաքննության ընթացքում ներկայացնել ապացույցներ, այսինքն՝ նույն դատարանում տարբեր գործերով տարբեր դատավորներ նույն հարցի շուրջ տարբեր որոշումներ են կայացրել, ինչը համահունչ է օրենքի միատեսակ կիրառությանը եւ առաջացնում է սահմանափակումներ խոսքի ազատության համար: Հետեւաբար, դատավոր Կարինե Պետրոսյանը ոչ միայն անհիմն սահմանափակել է պատասխանող կողմի իրավունքները, այլ նաեւ հնարավորություն է ստեղծել ձեւավորել վտանգավոր դատական պրակտիկա, ինչը համատեղելի է խոսքի ազատության պաշտպանության հետ, որը բացասական հետեւանքներ կառաջացնի Հայաստանը՝ որպէս ժողովրդավարական արժեքներ դավանող պետություն համարելու հարցում:

«Ժամանակը» թե՛ս է հերքի Թաթուլ Մանասերյանի մասին տղազրած տեղեկությունները եւ վճարի 510 հազար դրամ

Պատասխանող կողմի ներկայացրած ինքնաբացարկի միջնորդությունը ներառում էր վերը նշված փաստարկները: Սակայն սեպտեմբերի 6-ին դատարանը մերժեց ինքնաբացարկի միջնորդությունը եւ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույցներն արդեն քննվել են դատարանի կողմից, դատաքննությունը համարեց ավարտված եւ սեպտեմբերի 20-ին հրապարակեց վճիռը:

Դատարանը հայրը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով «Ժամանակ» օրաթերթին հերքել 2010թ. սեպտեմբերին տպագրված տեղեկությունները, նշել, որ չկա քրեական գործ Թաթուլ Մանասերյանի դեմ, եւ նա չի զբաղվում վաշխառությամբ: Իսկ փոխհատուցման մասով դատարանը պատասխանողին պարտավորեցրեց վճարել 510 հազար դրամ, որից 300 հազարը՝ զրպարտության համար, 200 հազարը՝ փաստաբանի վարձատրության համար, 10 հազար դրամն էլ՝ որպէս պետական տուրք:

Օրաթերթի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը տեղեկացրեց, որ բողոքարկելու է դատարանի վճիռը:

Դեկտեմբերի 15-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց «Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Ժամանակի»» գործով «Ժամանակ» օրաթերթի վերաքննիչ բողոքը՝ նույնը թողնելով Կենտրոն եւ Նորը-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի սեպտեմբերի 20-ի վճիռը:



Ռոբերտ Զոչարյանն ընդդեմ «Հրապարակի»

գործը կհանգուցալուծվի
Սահմանադրական դատարանի
որոշումից հետո

2011 թ. մարտի 28-ին դատարանի որոշմամբ կալանք դրվեց «Հրապարակ» օրաթերթի գույքի եւ բանկային հաշիվների վրա: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանը հայցադիմում է ներկայացրել օրաթերթի դեմ՝ պահանջելով «պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների հերքում եւ 6 մլն դրամի փոխհատուցում», որից 3 մլն-ը՝ վիրավորանքի եւ զրպարտության, իսկ մյուս 3-ը՝ դատական ծախսերի համար: Սակայն ապրիլի 11-ին վերացվեց ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանի հայցապահանջով «Հրապարակ» օրաթերթի գույքի եւ բանկային հաշիվների վրա դրված արգելանքը:

Զոչարյանն իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող է համարել «Հրապարակ» օրաթերթի փետրվարի 15-ի «Զոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» հրապարակումը եւ պահանջում է հերքել այն: Հայցադիմումի ներկայացման օրն իսկ դատարանը բավարարել է արգելանքի մասին պահանջը:

2011 թ. մայիսի 10-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում Էդիկ Ավետիսյանի նախագահությամբ մեկնարկեց Ռոբերտ Զոչարյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի գործով դատավարությունը:

Ըստ հայցվոր կողմի՝ Ռոբերտ Զոչարյանի հասցեին վիրավորական արտահայտություններ են տպագրվել «Հրապարակ» օրաթերթի փետրվար եւ մարտ ամիսների 3 համարներում, մասնավորապես՝ «Զոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին բացատրում» հոդվածում: Հայցվորի ներկայացուցիչ Արփինե Մելիքբեկյանը մանրամասնում է, թե հրապարակված հոդվածում ինչպիսի վիրավորական եւ զրպարտող արտահայտություններ են տեղ գտել. «Մտքով ի՞նչ անցներ, թե Զոչարյանն անցուդարձին չի դիմանա եւ իր անմտությամբ ասպարեզ կիջնի», «Իսկ Զոչարյանը, որքան էլ առանձնանում է գավառականությամբ ու արյունառնությունամբ, առանձնակի փայլում է անմտությամբ...»: «Երեւի տեղապահ Զոչարյանը ոչ միայն մտքի, այլեւ հիշողության կարճության խնդիր ունի»:

Սրանք, ըստ Մելիքբեկյանի, զրպարտություն են եւ վիրավորում են Ռ. Զոչարյանի պատիվն ու արժանապատվությունը: Ասվածի համատեքստում նա վկայակոչում է անձի պատվի եւ արժանապատվության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական եւ միջազգային փաստաթղթերի նորմերը եւ հիշեցնում ՄԻԵԴ-ի դատական նախադեպերի մասին:

Մելիքբեկյանի խոսքերով՝ 2 անգամ թերթից պահանջել են վերոհիշյա-

լի կապակցությամբ տպագրել հերքում: Իսկ «Հրապարակի» անունից ուղարկված եւ լրագրող Լուսինե Պետրոսյանի կողմից ստորագրված գրությունները, որոնցում վկայակոչվում են թերթի փետրվարի 22-ի («Ինքնակոչ Նամակ Զոչարյանի անունից») եւ մարտի 14-ի («Անձամբ Զոչարյանից՝ սխալներով եւ ստորագրությամբ») համարներում տեղ գտած հրապարակային պատասխանները, ըստ Մելիքբեկյանի, հայցվորի կողմից «չէին կարող դիտարկվել որպես բավարարող պատասխաններ»: Ուստի, երկրորդ նախագահը որոշել է հարցը լուծել դատական կարգով:

Մայիսի 10-ին տեղի ունեցած նիստում «Հրապարակի» ներկայացուցիչ Արա Չոհրաբյանը նշեց, որ հայցապահանջը հստակ ձեւակերպված չէ: Բացի դրանից, հայցային փաստաթղթերում չի ներառվել փաստաբանական ծառայությունների համար կատարված ծախսերի մասին վկայող որեւիցե փաստաթուղթ: Սրա բացակայությունը Մելիքբեկյանը պատճառաբանեց ժամանակի սղությամբ:

Հայցվորի ներակայացուցիչը միջնորդեց նախնական դատաքննությունը շարունակել հաջորդ նիստում՝ իրեն հնարավորություն տալով ներկայացնել պահանջվող փաստաթուղթը:

Փաստաբան Արա Չոհրաբյանն ասում է, որ հայցը չի ներկայացվել պահանջվող ժամկետում եւ ենթակա է մերժման առաջին հերթին հենց այս հիմքով: Եվ դատարանի կողմից այս հանգամանքը հաշվի չառնելու դեպքում, իրենք պատրաստ են ներկայացնել ավելի ծանրակշիռ փաստարկներ, որոնք կբացահայտվեն դատական գործընթացի ընթացքում:

ԵՔՆ ԽԵՐԲՈՒՄ ՏՊԱԳՐՎԻ, ՔՈՇԱՐԿԱՆՆԵՐ ԿԻՏՁՏՎԻ

Հունիսի 7-ի նիստում հայցվոր կողմը միջնորդություն ներկայացրեց օրաթերթի խմբագիր Արմինե Օհանյանին եւ լրագրող Լուսինե Պետրոսյանին որպես վկա դատարան կանչելու վերաբերյալ: Նպատակը, ըստ հայցվորի, թերթի հրապարակումներում տեղ գտած արտահայտությունների պարզաբանումն է:

Պատասխանողի ներկայացուցիչ Արա Չոհրաբյանն առարկեց՝ ասելով, որ թերթն ընդունել է վիճարկելի արտահայտությունները հրապարակելու փաստը, որն էլ հենց ենթակա է ապացուցման, իսկ թերթում տեղ գտած արտահայտությունները փաստեր չեն, այլ՝ կարծիք: Պատասխանողի փաստաբանի առաջարկով՝ դատարանը միջնորդության քննարկումը հետաձգեց մինչեւ փաստերի քննության փուլ:

Զոչարյանի ներկայացուցիչները հայտարարեցին նաեւ, որ իրենք չեն ստացել կողմի պատասխանը: Սակայն դատավորը ցույց տվեց գործում առկա պատասխանը եւ նշեց, որ այն ուղարկվել է ժամկետի մեջ: Պատասխանի պատճենը կողմին տրամադրվեց նիստից հետո:

Դատական նիստի ավարտին դատավորը հիշեցրեց կողմերի՝ վեճը հաշտությամբ լուծելու իրավունքի մասին, ինչին հայցվոր կողմը պատասխանեց, որ մեկ անգամ փորձ արվել է թերթում հերքում տպագրել, եւ միայն դա կարող է հաշտեցման համար հիմք հանդիսանալ:

Պատասխանող կողմի փաստաբանը նշեց, որ այս առաջարկը պետք է քննարկի իր վստահորդի հետ:



**«Նրադարան»-ի մասին է ապացուցի, որ
չի գրադարան, հայցվոր կողմն էլ
մասին է ապացուցի, որ Բոշարյանը
վերադարձվել է**

Սեպտեմբերի 15-ին շարունակվեց Ռոբերտ Զոչարյանի պատիվը եւ արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման եւ վնասի հատուցման պահանջի մասին նախնական դատական նիստն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի:

Հայցվոր կողմի ներկայացուցչներ Արփինե Մելիքբեկյանը եւ Սարգիս Գրիգորյանը միջնորդել էին՝ որպես վկա կանչել հողվածի հեղինակ Լուսինե Պետրոսյանին, սակայն գրությունը, որն ուղարկվել էր խմբագրության հասցեով, ետ է վերադարձվել՝ հասցեն սխալ լինելու պատճառաբանությամբ: Ա.Մելիքբեկյանն այս ամենը բնութագրեց որպես պատասխանող կողմի միտումնավոր արարք՝ իբրեւ խմբագրության կողմից է գրությունը ետ ուղարկվել, քանի որ մինչ այդ նույն հասցեով իրենց ուղարկած գրությունները միշտ հասել են հասցեատերերին: Սակայն դատավոր է. Ավետիսյանը գրության վրա նկատեց, որ հասցեն այդպես էլ պարզ չէ նշված. «Բուզանդի 1/3» հասցեն այնպես է նշված, որ կարող է ընկալվել նաեւ որպես «Բուզանդի 113»:

Պատասխանողի ներկայացուցիչ Արա Չոհրաբյանը նշեց, որ Լուսինե Պետրոսյանին որպես վկա հրավիրեն միայն դատաքննության փուլում, սակայն հայցվորն առարկեց՝ նշելով, որ վկայի ցուցմունքները եական նշանակություն ունեն, վկային նախնական փուլում լսելով՝ որոշակի տեսակետներ կհստակեցվեն մինչեւ դատաքննության սկսվելը: Փաստաբան Չոհրաբյանն ավելացրեց, որ համաձայն Զաղ. դատ. օր.-ի 122 հոդվածի՝ բոլոր ապացույցները պետք է հետազոտվեն դատավարության փուլում, ուստի, ապացույցի հետազոտումը տվյալ դեպքում վկայի ցուցմունքը լսելն է, հետեւաբար վկային նախնական դատական նիստի ժամանակ լսելը կնշանակի, որ դատարանը հետազոտեց ապացույցի այդ տեսակը: Այնուամենայնիվ, Արա Չոհրաբյանը միջնորդեց, որ գործի ապացույցները հետազոտեն դատաքննության ժամանակ:

Դատարանը հայտնեց, որ օրաթերթը պետք է ապացույցներ ներկայացնի գրապարտության մասով, այսինքն՝ ապացուցի, որ իրենք չեն գրապարտել հայցվորին, իսկ հայցվոր կողմը պետք է ապացուցի, որ պատասխանողը վիրավորել է հայցվորին:

Հաջորդ դատական նիստում, որը կայացավ հոկտեմբերի 28-ին, պարզ դարձավ որ որպես վկա ներգրավված հողվածի հեղինակ Լուսինե Պետրոսյանը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին, որպեսզի նա դիմի ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու վերաբերյալ: ՀՀ Սահմանադրական դատարանը նոյեմբերի 15-ին քննության է առնելու վերոնշյալ հողվածը:

Դատական նիստը հետաձգվեց՝ մինչեւ Սահմանադրական դատարանը որոշում կկայացնի:

«Ջետքի» լրագրողը պահանջում է, որ Ռուբեն Չայրապետյանը ներողություն խնդրի



Մարտի 1-ին «Ջետք» շաբաթաթերթի լրագրող Գրիշա Բալասանյանը, ընդդեմ ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Ռուբեն Չայրապետյանի, հայցադիմում է ներկայացրել Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Լրագրողը դատարանից պահանջում է պարտավորեցնել պատգամավորին՝ իրենից ներողություն խնդրել, փոխհատուցել 1 մլն դրամի չափով, վճարել դատարան դիմելու պետական տուրքի, հայցադիմումի պատրաստման ու դատական ներկայացուցչության համար կատարված ծախսերը:

«Ջետքի» լրագրողը, հարցազրույցի պայմանավորվածություն ձեռք բերելու նպատակով, փետրվարի 2-ին զանգահարել էր Ռուբեն Չայրապետյանի բջջային հեռախոսին: Սակայն պատգամավորը, լրագրողին անվանելով «տգետ», հեռախոսն անջատել էր: Ի պատասխան Գրիշա Բալասանյանի երկրորդ զանգի, որով վերջինս ցանկացել էր ճշտել իրեն վիրավորելու պատճառը՝ պատգամավոր Չայրապետյանը, երբ տեղեկացել էր, որ հեռախոսագրույցը ձայնագրվում է, սկսել էր սեռական բնույթի հայիոյանքներ տալ, հետո ավելացրել էր՝ «լավ արեցի» ու կրկին շարունակել հայիոյել:



21.5-ն
եւ լրագրողները

ՊԱՏՈՒՄ

81



«Յետքը» դիմել էր գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանին՝ միջ-
և որդեղելով քրեական պատասխանատվության ենթարկել հանրապետա-
կան պատգամավորին: Սակայն Յատուկ քննչական ծառայության ՅԿԳ
քննիչ Վ. Մկրտչյանը կյուրթերի նախապատրաստմամբ այրզել է, որ
Ռուբեն Յայրապետյանի արարքը «քրեական օրենքով արգելված» չէ:
Ուստի, քննիչը որոշել է քրեական գործի հարուցումը մերժել: Բայց ուշա-
գրավն այն է, որ, իր որոշումը հիմնավորելիս, քննիչ Մկրտչյանը հղում է
արել նաեւ Ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի քարտուղար Տիգրան Իս-
րայեյանի բացատրությանը, ըստ որի՝ «ֆեդերացիայի նախագահ Ռու-
բեն Յայրապետյանն ինչպես իր միջոցով, այնպես էլ մամուլի ասուլիս-
ների, հարցազրույցների ժամանակ մշտապես պատասխանել է լրագ-
րողների բանավոր հարցերին՝ տալով նրանց հետաքրքրող տեղեկու-
թյուն, երբեւէ չի խոչընդոտել լրագրողների մասնագիտական օրինա-
կան գործունեությանը»: Ինքը՝ Ռուբեն Յայրապետյանը, չժխտելով կա-
տարվածը՝ բացատրություն է տվել, որ այդ օրը եղել է անտրամադիր եւ
ունեցել առողջական խնդիրներ, լրագրողի երկրորդ զանգից ուղղակի
վրդովվել է ու նրա հասցեին ասել անպատիվ խոսքեր:

Լրագրողի պատվին եւ արժանապատվությանը պատճառված
վնասի փոխհատուցման մասին հայցապահանջի համար, իբրեւ իրա-
վական հիմքեր, մեջբերվել են ՅՅ Սահմանադրության եւ ՅՅ ստանձնած
միջազգային պայմանագրերի պահանջները, նմանօրինակ գործերի
վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)
հիմնավորումները եւ նախադեպային որոշումները: «Ղատարանն իր
բազում վճիռներով սահմանել է, որ անձնական կյանք հասկացություն-
նը ներառում է անձի ֆիզիկական եւ հոգեբանական անձեռնմխելիու-
թյունը: Պետությունները պարտավոր են պաշտպանել անձի ֆիզիկա-
կան եւ բարոյական անձեռնմխելիությունն այլ անձանցից,- նշված է
հայցադիմումում:- Կասկած չի հարուցում, որ անձի ֆիզիկական ան-
ձեռնմխելիության խախտումների գործերով ձեւավորված՝ ՄԻԵԴ-ի
այս դիրքորոշումը վերաբերելի է նաեւ անձի բարոյական անձեռնմխե-
լիության խախտումների դեպքերին: Կասկած չի հարուցում նաեւ այն,
որ հայցվորի պատվի եւ արժանապատվության դեմ պատասխանողի
կատարած անպարկեշտ ոտնձգությունը հայցվորի բարոյական ան-
ձեռնմխելիության, ինչպես նաեւ նրա անձնական կյանքի նկատմամբ
հարգանքի իրավունքի կոպիտ խախտում է»:

«Գասարանը դեմ է միասնակ վերա նրմունք դրսեւորի»

«Յետքի» լրագրող Գրիշա Բալասանյանի շահերի պաշտպան Վա-
հե Գրիգորյանը Աժ պատգամավոր Ռուբեն Յայրապետյանի դեմ ներ-
կայացված հայցի հաջողության հնարավորությունը գնահատում է
այնպես, ինչպես «Յայկական ժամանակ» օրաթերթի դեմ նույն Յայրա-
պետյանի ու եւս 2 այլ պատգամավորների հայցի հնարավորությունը.
ասել է թե՛ 100 տոկոս: «Եթե դատարանը նման վերաբերմունք ունի մի
հարցով, ապա պիտի նույնանման վերաբերմունք դրսեւորի մյուս հար-

ցում»,- նշեց փաստաբանը: Այդուհանդերձ, օրենսդրությունում կա՞ն բացեր, որոնցից իշխանության թելադրանքով կարող է կառչել դատարանը: Այս հարցին փաստաբանը պատասխանում է. «Եթե դատարանը կառչելու տեղ ունենա, ամենեւին էլ իշխանությունների թելադրանքով չի անի դա: Իներցիայով կանի: Որպես կանոն, իշխանությունների թելադրանքով օրենքները խախտվում են, ոչ թե կատարվում: Չեմ կարող ասել, թե դատարանի որոշումն ինչ կլինի: Ես հուսով եմ, որ դատարանն իր մեջ բավարար ուժ կգտնի, որպեսզի առնվազն միատեսակ վերաբերմունք դրսևորի, ինչպիսին եղել է «ՅԺ»-ի նկատմամբ, թեկուզ ես այս վերջինի հետ առանձնապես համաձայն չեմ»:

Ռու են Նայրադեսյանի Գերկայացուցիչը շրջադրումնեց ՎերաՎորաճի վերա երջալ Գերկայացված փաստերը

Ապրիլի 4-ին Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանում կայացավ Ռուբեն Յայրապետյանի դեմ «Յետքի» լրագրող Գրիշա Բալասանյանի հայցի քննության նախնական դատական նիստը: Ռուբեն Յայրապետյանի ներկայացուցիչը հայցադիմումի պատասխան չէր ներկայացրել, ասաց, որ իրենց բոլոր փաստերն ու հիմնավորումները կներկայացնեն դատաքննության ընթացքում:

Լրագրողի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանը ներկայացրեց հայցապահանջը եւ այն հիմնավորեց Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ «մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են», 23-րդ հոդվածով, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր անձնական եւ ընտանեկան կյանքը», ինչպես նաեւ՝ ՍԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, «Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագով, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով եւ միջազգային այլ փաստաթղթերով:

Վահե Գրիգորյանը դատարանին ներկայացրեց Գրիշա Բալասանյանի եւ Ռուբեն Յայրապետյանի միջեւ տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրությունը՝ լազերային կրիչով, հայցվորի եւ պատասխանողի միջեւ տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրության վերծանումը, ինչպես նաեւ 33 հատուկ քննչական ծառայության որոշման պատճենը քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Վահե Գրիգորյանը պատասխանողից փորձեց ճշտել՝ պատասխանողներն ընդունո՞ւմ են ներկայացրած ապացույցները, թե՞ առարկություններ ունեն, քանի որ դրանից է կախված հայցվորների հետագա քայլերն ու ապացուցման պարտականության բեռը կողմերի վրա բաշխելը:



Գեւորգ Գեւորգյանը կրկնեց, որ իրենք դատաքննության ընթացքում կներկայացնեն իրենց փաստարկներն ու դիրքորոշումները՝ այդպիսով խուսափելով հստակ պատասխանել փաստաբանի հարցին: Դատավոր Աիդա Դավթյանը միջամտեց՝ պահանջելով հստակեցնել՝ ընդունո՞ւմ են հայցվորների ներկայացրած փաստերը, թե՞ ոչ: «Անացի, որ չենք ընդունում հայցապահանջը, այդ թվում նաեւ դա», - ասաց Գ. Գեւորգյանը:

Դատավոր Աիդա Դավթյանը լրագրողներին թույլ չտվեց լուսանկարել նիստը առանց հիմնավորման՝ չնայած կողմերը չառարկեցին: Դատարանը միայն թույլ տվեց ձայնագրություն կատարել՝ հաշվի չառնելով պատասխանողի ներկայացուցչի առարկությունը:

Դատարանը փորձեց հայցվորների վրա դնել վիրավորանքի հրապարակային լինելու փաստի ապացուցման բեռը, ինչին, սակայն, Վահե Գրիգորյանն առարկեց՝ նշելով, որ հայցվոր կողմը դա անել չի կարող, քանի որ «Յետքի» լրագրողը գանգահարել է պատգամավորի քջային հեռախոսին, իսկ թե որտեղ է այդ պահին գտնվել Ռուբեն Յայրապետյանը, իրենց հայտնի չէ: Ավելին, փաստաբանը նշեց, որ ինքը իր ելույթում չի վկայակոչել 1087.1 հոդվածը, որին հղում է կատարում դատավորը՝ վիրավորանքի հրապարակային լինելու ապացուցման բեռը դնելով հայցվորների վրա:

«Մենք չենք հիմնվում 1087.1 հոդվածի վրա: Մենք ասում ենք՝ եթե Սահմանադրությամբ նախատեսված է անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելը, եւ պետությունը կրում է այդ պարտավորությունը, ապա մենք պնդում ենք, որ Գրիշա Բալասանյանի սահմանադրական իրավունքն է խոչընդոտվել», - «Յետքի» հետ զրույցում պարզաբանեց փաստաբան Վահե Գրիգորյանը:

Չնայած ՀՀ Զաղ. օր.-ն է կարգավորում մարդու պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները, Վահե Գրիգորյանն ասում է, որ օրենսգրքով նախատեսված չեն ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանվելու մեխանիզմներն ու ձեւերը, իսկ Սահմանադրության 23-րդ հոդվածը գործում է անմիջականորեն, այդ պատճառով հայցվոր կողմը հիմնվում է Սահմանադրության վրա: Այս պարագայում փոխհատուցման հաշվարկը, ըստ փաստաբանի, պետք է կատարվի ոչ թե հիմնվելով 1087.1 հոդվածի, այլ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Միաժամանակ զուգահեռ պետք է տարվի 1087.1 հոդվածի հետ: Եվրոդատարանը նման փոխհատուցումներ նշանակել է: Յայտատանում նման դեպք դեռ չի եղել: «Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը նախատեսված է ՉԼՄ-ների դեմ օգտագործելու համար: Իրականում դա նախատեսված չէ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու համար: Դա նախատեսված է անձի պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող ՉԼՄ-ներից պաշտպանվելու համար: Այսինքն՝ հրապարակային վիրավորանքի մասին է խոսքը: Եթե դա ի սկզբանե նախատեսված լիներ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու համար, ապա «հրապարակային» ածականը չէր օգտագործվի», - կարծում է Վահե Գրիգորյանը:

**«Նայիոյաճճները
Ռու եճ Նայրադեսյաճի աճճնախաճ
Կյաճի ադարի՝շճ եճ», -
հարցնում է փասա աճը**

ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանը չի կարող պատասխանատվության ենթարկվել: Այս դիրքորոշումը Ռուբեն Հայրապետյանի փաստաբան Գեորգ Գեորգյանը արտահայտեց ապրիլի 27-ին Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ քննվում էր ««Հետքի» լրագրող Գրիշա Բալասանյանն ընդդեմ ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի» գործը:

Չնայած նախորդ նիստին ապացուցման պարտականությունը դրվել էր պատասխանող կողմի վրա, այրուհանդերձ, փաստաբան Գեորգ Գեորգյանը միայն բանավոր առարկություններ ներակայացրեց: Գ. Գեորգյանի հիմնավորմամբ, վիրավորանքը կարգավորվում է ՀՀ Զաղ. օր.-ի 19 եւ 1087.1-րդ հոդվածներով, որտեղ, սակայն, խոսքը հրապարակային վիրավորանքի մասին է: Ոչ հրապարակային արտահայտության դեպքում վիրավորանքի պաշտպանության մեխանիզմ չկա: Մինչդեռ, ըստ փաստաբանի, հայցվորի ներկայացրած ապացույցներով հիմնավորվում է, որ վիրավորանքը եղել է ոչ հրապարակային, այլ անձնական հեռախոսային խոսակցության ընթացքում: Ըստ այդմ՝ Ռուբեն Հայրապետյանը չի կարող պատասխանատվության ենթարկվել, քանի որ Սահմանադրությունը երաշխավորում է, որ ոչ ոք չի կարող կրել պարտավորություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Ավելին, Գ. Գեորգյանի կարծիքով, եթե հայցվորը չի պնդում 1087.1 հոդվածը, այդ պարագայում դատարանը չի կարող նշված նորմատիվ ակտով փոխհատուցում պահանջել եւ ստիպել պատգամավորին՝ ներողություն խնդրել: Փաստաբանը նաեւ նշեց, որ լրագրողի կողմից իրավունքի չարաշահման գործոն կա, այն է՝ լրագրողը, զանգահարելով պատասխանողին, ձայնագրառում է կատարել, առանց պատասխանողի համաձայնության, ինչը խախտում է պատասխանողի՝ անձնական կյանքի սահմանադրական եւ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները:

«Առողջական խնդիրներ ունեցող եւ այդ պահին լարված եւ նյարդային վիճակում գտնվող անձի մոտ, բնականաբար, հանգամանքների բերումով առաջացել է նաեւ հուզմունք, ինչ-որ տեղ միգուցե չտիրապետելով իրեն՝ արտահայտություններ է արել, որոնք կհաստատվի կամ չի հաստատվի», - հիմնավորեց Գեորգ Գեորգյանը:

Փաստաբանը հայտնեց, որ լրագրողի եւ պատգամավորի միջեւ տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չի կարող որպես ապացույց դիտարկվել, քանի որ ձեռք է բերվել ոչ օրինական ճանապարհով: Հետեւաբար՝ չկա հասցրած վիրավորանք, չկա իրավունքի խախտում: «Նպատակը ոչ թե իրավունքների պաշտպանությունն է, այլ ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի անունը վարկաբեկելը կամ լրատվամիջոցներով նրա վերաբերյալ արատավոր տեղեկություններ տարածելը», - եզրակացրեց Ռ. Հայրապետյանի պաշտպանը: Փաստաբանը նաեւ կարծիք հայտնեց, որ եթե խախտվել էին լրագրողի իրավունքները, նա պետք է անմիջապես դիմեր իրավապահներին, այլ ոչ թե լրատվամիջոցներով հրապարակարկեր:



21 Մ-ն են լրագրողները

ՌԱՍՏՐԱՆՈՒՄ

րակեր այդ խոսակցության մի մասը: «Ի՞նչ իրավական նշանակություն ունի այն հանգամանքը, որ հայցվորը դա լրատվամիջոցներով տարածել է, եւ արդյոք դա վիրավորե՞լ է պատասխանողին առհասարակե՞, հակադարձեց «Յետքի» լրագրողի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանը:

Վահե Գրիգորյանը նկատեց, թե ի՞նչ անձնական կյանքի մասին է խոսքը, եթե Գրիշա Բալասանյանը ներակայացել է որպես «Յետք» թերթի լրագրող եւ ցանկացել է պարզաբանում ստանալ: «Եթե լրագրողը որեւէ անձի հետ հարցազրույց է անցկացնում կամ ընդհանրապես նրա հետ խոսում է, արդյո՞ք պատասխանողը կարծում է, որ այդ խոսակցությունը լրագրողն իր անձնական կարիքները բավարարելու համար է անում, այսինքն՝ միայն իր համար է եւ երբեւէ չի հրապարակվելու: Այսինքն՝ լրագրողի գործունեությունն ընդամենը տեղեկություններ հավաքելն է ոչ հրապարակման, այլ ընդամենը իր անձնական կարիքները բավարարելուն համար», - հարցրեց Վահե Գրիգորյանը:

«Մինչեւ ներկայանալը լրագրողն արդեն ձայնագրությունը միացրած է եղել, միզուցե անձնական նկատառումներով է զանգահարել: Խոսակցությունից չի երեւում, որ նա հարցազրույցի համար է զանգահարել, հետեւաբար մինչեւ ձայնագրիչը միացնելը պիտի է ներկայանար, որ լրագրող է եւ ցանկանում է հարցազրույց վերցնել, ձայնագրելու համաձայնություն վերցնել, նոր իրավունք ունեւ ձայնագրառում կատարել», - պատասխանեց Գ. Գեւորգյանը:

Գեւորգ Գեւորգյանն այնուհետեւ հրաժարվում էր պատասխանել Վահե Գրիգորյանի հարցերին, թե արդյո՞ք պատասխանող կողմն ընդունում է այն փաստը, որ լրագրողի եւ պատասխանողի միջեւ տեղի է ունեցել հեռախոսային խոսակցություն, որտեղ հայիոյանք է հնչել, կամ՝ արդյո՞ք ՅՅ Սահմանադրությունն ու միջազգային պայմանագրերը հավասար ուժ ունեն, եւ վերջապես՝ արդյո՞ք սկավառակի պարունակած ձայնագրության բովանդակությունը ՅՅ ԱԺ պատգամավորի անձնական կյանքի բաղադրիչն է եւ այն պիտի պաշտպանվի օրենքով, արդյո՞ք դրա պաշտպանության շահը գերակա է անձի՝ վիրավորանքից պաշտպանվելու շահի նկատմամբ. «Այսինքն՝ հայիոյանքները Ռուբեն Յայրապետյանի անձնական կյանքի բաղադրիչն են եւ պիտի ավելի հզոր ու ամուր պաշտպանվեն, քան անձի արժանապատվությունը»:

Գեւորգ Գեւորգյանը նաեւ հրաժարվեց պատասխանել հարցին, թե կարո՞ղ է, արդյոք, Գեւորգ Գեւորգյանը մեկնաբանել հայիոյանքների այն հատվածը, որը պատգամավորը տվել է՝ իմանալով, որ խոսակցությունը ձայնագրվում է:

Վահե Գրիգորյանը նշեց, որ պատասխանող կողմը, բացի նրանից, որ հրաժարվում է հարցերին պատասխանել, մասամբ նաեւ հրաժարվում է, որ նման փաստ տեղի է ունեցել, այն էլ այն պայմաններում, երբ Ռուբեն Յայրապետյանը չի հրաժարվել այդ փաստերից, ինչը ստիպում է հայիոյանքներ պարունակող կրիչը պատշաճ կերպով ուսումնասիրել դատարանում եւ հրապարակել նաեւ հայիոյանքները:

Վահե Գրիգորյանը հավելեց, որ պատասխանողի այսօրվա դիրքորոշումն այլ ընտրություն չի թողնում, քան ներկայացնել ավելի մանրամասն բացատրություններ ու ապացույցներ, որոնք ուղղակիորեն ապացուցում են, որ ձայնագրության բովանդակությունը համապատասխանում է հեռախոսային խոսակցության բովանդակությանը, պատասխանողը իրոք վիրավորել է հայցվորին, եւ Յայաստանի Յանրապետությունը

պարտավոր է միջամտել եւ պաշտպանել իր քաղաքացու իրավունքը:

Վահե Գրիգորյանը դատարանին խնդրեց մեկ շաբաթով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով լրացուցիչ ապացույցներ ու բացատրություններ ներկայացնել, քանի որ պատասխանողները տրամագծորեն հակառակ դիրքորոշում են հայտնում անձամբ Ռուբեն Յայրապետյանի կողմից ներկայացված դիրքորոշմանը եւ հրաժարվում են պատասխանել դատարանում տրված հարցերին:

Դատարանին միջնորդել է ՉԾ-ից դաշնային Ռ.Նայրապետյանի գործով նյութերի դաշնագրերը

Մայիսի 6-ին Գրիշա Բալասանյանի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանը դիմել էր ՀՀ հատուկ քննչական ծառայությանը՝ «Փաստաբանության մասին» օրենքի 18 հոդվածի հիման վրա հայցվորի՝ հանցագործության մասին հարողորման հիման վրա նախապատրաստված նյութերի լուսապատճենները ստանալու խնդրանքով: Սակայն ՉԾ-ն մերժել է փաստաբանի խնդրանքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի նյութերը ձեռք բերելու հնարավորությունները սպառված են, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ ՉԾ-ի կողմից չտրամադրված նյութերով հիմնավորվում են բոլոր այն փաստերը, որոնց դեմ առարկություններ են ներկայացված եղել պատասխանողի կողմից (ինչն էլ հենց պատճառ էր հանդիսացել դատարանի կողմից տեղի ունեցած նախորդ դատական նիստը հետաձգելու եւ հայցվորին այդ ապացույցները ձեռք բերելու հնարավորություն ընձեռելու համար), Վահե Գրիգորյանը խնդրել է դատարանին՝ պահանջել հիշյալ նյութերի պատճենները ՉԾ-ից: Սակայն այդ միջնորդությունը դատարանը չբավարարեց:

Դատարանը մերժեց «Նեֆի» լրագրողի հայցն ընդդեմ Ռու ԵՆ Նայրապետյանի

Հունիսի 7-ին Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավապետության դատարանը՝ նախագահությամբ Աիդա Դավթյանի, մերժեց «Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանի հայցն ընդդեմ ՀՀ ԱԾ պատգամավոր Ռուբեն Յայրապետյանի:

«Հետքի» լրագրողը այս վճիռը բողոքարկեց վերաքննիչ դատարանում:

Հոկտեմբերի 5-ին ՀՀ վերաքննիչ դատարանում տեղի ունեցավ ՀՀ ԱԾ պատգամավոր Ռուբեն Յայրապետյանի դեմ Գրիշա Բալասանյանի բողոքի դատաքննությունը: Պատասխանող կողմը վերաքննիչ բողոքին պատասխան չէր ներկայացրել, ուստի դատարանը դատաքննությունը համարեց ավարտված եւ հոկտեմբերի 12-ին մերժեց «Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանի բողոքն ընդդեմ ՀՀ ԱԾ պատգամավոր Ռուբեն Յայրապետյանի:

«Հետքը» բողոքարկելու է վերաքննիչի որոշումը Վճռաբեկ դատարանում:



«Լակոտ» բառն արժե 200 հազար դրամ

Տ. Արզախանջյանի հայցն ընդդեմ «Երկիր» օրաթերթի ավարտվեց մասնակի

Ձախից՝ «Երկիր» գլխավոր խմբագիր Բագրատ Եսայանը եւ փաստաբան Լիանա Գրիգորյանը



«Երկիր» օրաթերթի «131 դեմք ու դիմակ» խորագրով ինձ վերաբերող հոդվածը պարունակում է ինչպես վիրավորանքի, այնպես էլ զրպարտության տարրեր: Մասնավորապես, հոդվածում նշված՝ Զրանտ Բագրատյանի կողմից իմ վերաբերյալ իբր թե արված վիրավորական հայտարարությունը խոսքի միջոցով իմ պատիվը, արժանապատվությունը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն է, որն ամբողջովին մտացածին է, չի համապատասխանում իրականությանը, ինչի վերաբերյալ Զրանտ Բագրատյանը տվել է գրավոր բացատրություն»: Այսպես է ԶԶ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզախանջյանը հիմնավորել իր հայցը՝ ընդդեմ «Երկիր» օրաթերթի:

Օրաթերթը 2011 թ. հունվարի 13-ին «131 դեմք ու դիմակ» խորագրի ներքո տպագրել է ԶԶ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզախանջյանի մասին հոդված, որտեղ նշվում է, որ Տ. Արզախանջյանն առաջին անգամ խորհրդարան է մտել որպես «ստիլյագ», շարունակ գլուխ է գովում, թե ինչպես է ինքնաթիռներով գեղեցկուհիներ բերում ու տանում այս կամ այն երկիր, հայտնի է նաեւ որպես «կազինոների» մշտական

հաճախորդ, շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի, իսկ ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է եւ չի հաճախում Աժ կիստերին, խոսում է մի քանի օտար լեզվով, բայց առավել հասկանալի խոսում է հայրենի «քյավառա» բարբառով: «Հրանտ Բագրատյանը, երբ «Պեռնո Ռիկար»-ում էր աշխատում, մի առիթով ասել է. «Էդ լակոտը մեր կոնյակի պատիվը գցում է Ռուսաստանում», - գրել է «Երկիրը»:

Պատգամավորը վիրավորվել է այս հոդվածից եւ պատասխան է ուղարկել օրաթերթին՝ պահանջելով հրապարակել այն: Պատասխանին կցել է նաեւ Հրանտ Բագրատյանի ստորագրությամբ գրություն, որտեղ վերջինս հերքում է, որ ասել է, թե «Էդ լակոտը մեր կոնյակի պատիվը գցում է Ռուսաստանում»: «Երկիր» օրաթերթը փետրվարի 5-ին «Նամակ ենք ստացել» վերտառությամբ տպագրել է թերթի մեկնաբանությունը նամակի վերաբերյալ, իսկ պատասխանը չի հրապարակել. «Շատ գրագետ, մաքուր հայերենով, կիսահրապարակախոսական, կիսափիլիսոփայական էսսե, ուր փառաբանում է իր երիտասարդության տարիների «Երկիր» օրաթերթը եւ փնտվում նորը: ...Մենք պարոն Արգաքանցյանին առաջարկում ենք հետեւյալը. եթե նա այցելի խմբագրություն եւ սպիտակ թղթի առջեւ նույնքան գեղեցիկ հայերենով գրի նույն նամակը, սիրով կհրապարակենք»: Թերթի պատասխանատուներն ընդունում են, որ ստացել են «Պատասխան» վերտառությամբ նամակ եւ այն հրապարակելու պահանջ, որում, սակայն, բացակայել է «Չանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի հղումը, ինչը հնարավորություն կտար ուղարկված տեքստն իրավական չափանիշներով ընդունել որպես հերքման հրապարակման պահանջով ուղարկված պատասխան:

Ավելին, պատասխանը ոչ թե վերաբերել է տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին, ինչպես պահանջում է օրենքը, այլ՝ գնահատական նախկին լրատվամիջոցի՝ ժամանակի ընթացքում որակի անկման մասին, վերջում նաեւ խորհուրդ՝ անդրադառնալ թերթի վերաբացման նպատակահարմարության հարցին: (Հիշեցնենք, որ «Երկիրը» 2010-ի հուլիսին փակվեց եւ վերաբացվեց նույն թվականի դեկտեմբերին):

Տ. Արգաքանցյանի կարծիքով՝ հոդվածը պարունակում է թե՛ վիրավորանք, թե՛ գրպարտություն: Հենց այս հիմքերով էլ նա դիմել է դատարան. «Բացի այն, որ հոդվածում իմ վերաբերյալ ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տվյալներ, որոնցով փորձ է արվել արատավորել իմ պատիվն ու արժանապատվությունը, այդ տվյալները ներկայացվել են գռեհիկ ոճով՝ օգտագործելով այնպիսի արտահայտություններ եւ բառեր, ինչպիսիք են, օրինակ, «ստիլյագ», «ծեծ ուտելու սովորություն ունի»,- հայցադիմումում նշել է պատգամավորը: Եվ չնայած պատգամավորը «ստիլյագ» արտահայտությունն իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող բառ է համարում, նույն արտահայտությունը ինքն է կիրառել օրաթերթի հասցեին՝ «Երկիրին» ուղարկած իր պատասխանում. «...Չունենալով որեւէ բարոյական իրավունք, օրաթերթն իմ անձին վերաբերող բազմաթիվ ստահող տեղեկություններ է նշել հոդվածում՝ ցանկանալով այդ կերպ այլ լրատվամիջոցների շարքում իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տպագրելու առումով «ստիլյագ» երեւալ»:



Տ. Արզաբանցյանը դատարանից պահանջել է ՀՀ Զաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերի հիմքերով պարտավորեցնել «Երկիր» օրաթերթին՝ լրիվ կամ մասնակի հրապարակել այս գործով դատարանի վճիռը եւ պատգամավորի ներկայացրած պատասխանը, «Երկիր» օրաթերթից բռնագանձել 3 մլն դրամ՝ որպէս վիրավորանքի եւ զրպարտության հետեւանքով նրա պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցում (1 մլն վիրավորանքի, 2 մլն՝ զրպարտության համար), ինչպէս նաեւ օրաթերթից բռնագանձել 568 հազար դրամ՝ որպէս կատարված դատական ծախսեր, որից 500 հազար դրամ՝ փաստաբանական ծառայության վճարը, 68 հազարը՝ վճարված պետական տուրքի գումար:

Մարտի 14-ին Կենտրոնի դատարանը կատարողական թերթիկ է ուղարկել ԴԱՀԿ, որպէսզի հայցագնի չափով արգելանք դրվի պատասխանողին՝ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ին, պատկանող գույքի վրա, բացառությամբ դրամական միջոցների: Սրա հիման վրա էլ ԴԱՀԿ ծառայության Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ բաժինը մարտի 28-ին որոշել է հարուցել կատարողական վարույթ եւ պարտապանի գույքի նկատմամբ հայտարարել հետախուզում: Իսկ արդէն մարտի 31-ի որոշմամբ ԴԱՀԿ-ն արգելանք է դրել «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա եւ արգելել է այն տնօրինել եւ օտարել: «Երկիրը» ԴԱՀԿ նշյալ որոշումները ստացել է ապրիլի 6-ին՝ փոստով: Օրաթերթը շարունակել է տպագրվել, քանի որ նրա դրամական միջոցներն արգելանքի տակ չէին:

Մարտի 25-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ նախագահությամբ Ռուբեն Ափիկյանի, կայացել է այս գործով նախնական դատական նիստը: Տիգրան Արզաբանցյանի փաստաբան Վահե Հովսեփյանը մեկ անգամ եւս պարզաբանել է, որ պատգամավորը հատկապէս վիրավորվել է «էն լակտը», «ալվելի հասկանալի խոսում է հայրենի քյավառա բարբառով» եւ «ստիլյագ» բառերից: Իսկ որպէս զրպարտություն՝ փաստաբանը մատնանշել է «ինքնաթիռով գեղեցկուհիներ տանել-բերելը», «հայտնի է նաեւ որպէս «կազինոների» մշտական հաճախորդ», «շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի, իսկ ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է եւ չի հաճախում ԱԺ նիստերին», «անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երեւացել Ազգային ժողովի միջանցքներում» արտահայտությունները:

Պատասխանող կողմը նշել է, որ Ս. Ի. Օժեգովի «Словарь русского языка» բացատրական բառարանում «ստիլյագ» բառի իմաստը բացատրվում է որպէս «աղմկոտ մոդային կուրորեն հետեւող երիտասարդ», այսինքն՝ վիրավորական չէ: Պատգամավորի «վիրավորանք» գնահատած մյուս արտահայտությունը՝ «ծեծ ուտելու սովորություն ունի»-ն, ըստ պատասխանողի, եւս չի կարող վիրավորական լինել, քանի որ պատգամավորի նկատմամբ նշված բնույթի արարքներ թույլ տալու փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը, քանզի հարուցված են քրեական գործեր, եւ բազմիցս հրապարակվել է պաշտոնական տեղեկատվություն:

«Մենք, քնականաբար, բոլոր կետերով ունենք մեր պարզաբանումները, թե ինչու վիրավորանք չենք համարում կամ ինչ հիմքով ենք հրա-

պարակել տվյալ տեղեկությունները, իսկ զրպարտությունների վերաբերյալ ասեմ, որ զրպարտություն չկա, դատարանում մենք կներկայացնենք բոլոր այն փաստաթղթերը, բոլոր այն հրապարակումները, այդ թվում՝ հենց պատգամավորի հարցազրույցները, որոնք հիմք են տվել մեզ նման հրապարակում անելու համար»,- «Յեռքի» հետ զրույցում ասաց «Երկիր» օրաթերթի գլխավոր խմբագիր Բագրատ Եսայանը: Պատասխանող կողմը դատարանին խնդրել է մերժել հայցը եւ պատգամավորից բռնագանձել օրաթերթի կատարած ծախսերը:

«Այն, որ դու արդարացի ես, դեռեւս չի նշանակում, որ դու կհաղթես: Այս երկրում դա նույն բանը չէ: Համենայնդեպս, ես հույս ունեմ, որ մեր ներկայացրած փաստերը բավական ծանրակշիռ կլինեն, եւ դատարանը, այնուամենայնիվ, չի գնա նորից օլիգարխ պատգամավորի շահը պաշտպանելու եւ լրատվամիջոցի իրավունքը խախտելու ճանապարհով»,- հավելեց գլխավոր խմբագիրը:

Դատական նիստից հետո՝ մարտի 26-ին, «Երկիր» օրաթերթի կայքում «Յերբում» խորագրի ներքո նյութ է հրապարակվել: Համաձայն այդ տեքստի՝ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը Տիգրան Արզաբանցյանին չի ասել՝ «եղ լակոտը», քանի որ դրա մասին կա համապատասխան տեղեկանք, պատգամավորը «ստիլյագ» չէ, խորհրդարանի նիստերին ներկայանում է հնամաշ ու անճաշակ հագուստներով: Խոսում, ելույթներ է ունենում եւ հարցազրույցներ տալիս բացառապես գրական հայերենով, Զյավառի բարբառով չի կարողանում բացատրվել: Հայաստան է հրավիրում բացառապես գեշ ու անդուր կանանց, ոչ թե՛ ինքնաթիռներով, այլ՝ ավտոբուսներով: Զրտնաշանորեն մասնակցում է օրինաստեղծ աշխատանքին, հանդես է եկել բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններով, ելույթներ է ունենում եւ մասնակցում ԱԾ բոլոր քվեարկություններին, պարբերաբար հանդիպումներ է ունենում ընտրողների հետ: Ամբողջ կյանքում ոտք չի դրել կազինո կոչվող հաստատություն, բնականաբար, ոչ մի անգամ այնտեղ ծեծի չի ենթարկվել, բնականաբար, ծեծ ուտելու սովորություն ձեռք բերել չէր կարող: «Հավատացի՞ք»,- հարցադրումով ավարտվում է հերքման տեքստը:

**«Երկիր» հիմնավորեց
«Կազինոների մշակման
հաճախորդ» արահայտությունը
Իսկ ԱԾ I630 Գիսից Արզաբանցյանը
չի մասնակցել I37I-ին**

Մայիսի 24-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի դատարանում ավարտվեց «Տիգրան Արզաբանցյանն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ի» գործի ապացույցների հետազոտումը: Նիստի ընթացքում Արզաբանցյանի շահերի պաշտպան Վահե Հովսեփյանը, փորձելով հիմնավորել իր պնդումները, հղում կատարեց ՀՀ օրենսդրությանը եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին եւ եւս մեկ անգամ հաստատեց, որ թերթում



տեղ գտած վիրավորական արտահայտությունները հիմնված են «մտացածի» փաստերի վրա եւ պետք է հերքվեն:

«Երկիրի» ներկայացուցիչ Լիանա Գրիգորյանը, ապացույցները ներկայացնելիս, նույնպես հղում կատարեց ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին՝ Նշելով, որ լրագիրը իրավունք ունի սուբյեկտիվ եզրահանգումներ կատարելու, որոնք հիմնված են փաստերի վրա: «Երկիրի» ներկայացրած փաստերի թվում էին այլ թերթերում տեղ գտած հրապարակումներ, որոնց հիման վրա թերթը եզրահանգումներ է արել: Նշվեց այլ դատական գործով պարզված հանգամանքը, համաձայն որի պատգամավորը հաճախել է մի-եւնույն խաղատուն 33 անգամ, ինչպես նաեւ ԱԺ աշխատակազմից ստացված պատասխանը, համաձայն որի Արզաքանցյանը 2007 թ. սեպտեմբերից սկսած ԱԺ 1630 կիստից բացակայել է 1371 անգամ:

Դատավոր Ռ. Ափիսյանը հարցրեց փաստաբան Յովսեփյանին, թե արդյոք վերջին փաստը իրավունք չի տալիս թերթին եզրահանգելու, որ պատգամավորը նիստերին «հազարից մեկ» է հաճախում: Սակայն, ըստ փաստաբանի, նույնիսկ այդ փաստը թերթին իրավունք չի տալիս այդ մասին գրել:

Պատասխանելով այս պնդմանը եւ պատգամավորի ուղարկած հերքման նամակում տեղ գտած «թերթը բարոյական իրավունք չունի» արտահայտությանը՝ «Երկիրի» խմբագիր Բ. Եսայանը հակադարձեց, որ իրենք, այնուամենայնիվ, «ունեն բարոյական իրավունք» եւ պատրաստվում են ուշի-ուշով հետեւել պատգամավորի քայլերին ու դրանց մասին տեղեկացնել հասարակությանը:

«Ստիլյագ» եզրի վիրավորական լինելը քննարկելիս դատավորը մեջբերեց ռուս դասական Ալ. Պուշկինի «Եվգենի Օնեգին» ստեղծագործությունից մի հատված՝ «Острижен по последне́й моде; как dandy лондонскім одет; и наконец увидел свет...» – նշեց, որ նույն տրամաբանությամբ կարելի է «ղենդիտ բառը համարել վիրավորական: Դատավորը փորձում էր պարզել՝ գուցե ըստ փաստաբանի եւ կրա վստահորդի՝ «ստիլյագ» բառը օգտագործվել է ծաղրելու նպատակով, եւ դա է համարվել վիրավորական: Փաստաբանը պատասխանեց՝ նաեւ դա:

Դատարանը մանրամասն քննեց պատասխանող կողմի ներկայացրած բոլոր ապացույցները, այդ թվում՝ նաեւ թերթերի հրապարակումները եւ դատաքննությունը հայտարարեց ավարտված:

Լրագրողների հարցին, թե ինչու է պատգամավորը թերթից պահանջում փոխհատուցման առավելագույն չափ, Տիգրան Արզաքանցյանի փաստաբանը պատասխանեց, որ եթե սահմանը լիներ 10 մլն դրամ, ապա կպահանջվեր այդքանը:

Հունիսի 8-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրեց «Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ-ի» գործով վճիռը: Դատավոր Ռ. Ափիսյանը պատգամավորի հայցը բավարարեց մասնակի: Դատարանը օրաթերթին պարտավորեցրեց վճարել 200.000 դրամ տուգանք՝ օրաթերթում տպագրված, անձի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող «լակոտ» բառի համար, 80.000 դրամ՝ փաստաբանական ծախսերի համար, 8.000 դրամ՝ պետտուրքի համար, ինչպես նաեւ՝ օրաթերթում հրապարակել վճռի եզրափակիչ մասը: Հայցը մնացած մասով մերժեց:

Վճռի ուժի մեջ մտնելուց հետո հանվեց նաեւ «Երկիր խմբագրութիւն» ՍՊԸ-ի գույքի վրա դրված արգելանքը:

Բագրատ Եսայանն ասաց, որ իրենք մեջքերել էին Զրանտ Բագրատյանի խոսքը, որտեղ նա է «լակոտ» անվանել Արգաքանցյանին, իսկ հետո պարտաճանաչորեն հրապարակել էին նաեւ նրա հայտարարությունը, որ նման բան չի ասել: Դա գետեղելով թերթում՝ մտածել են, որ այդպիսով ամեն ինչ սպառնալից է: «Վճռի հրապարակման մասով մենք արդէն իսկ տպել էինք այն տեղեկանքը, որը ներկայացվել էր խմբագրութիւն», - ասաց Եսայանը:

Վերաբնօրէն ել շաղարարեց Արգաքանցյանի դիմումը

Յուլիսի 9-ին պարզ դարձավ, որ Տիգրան Արգաքանցյանը դիմել է ԶՅ վերաքննիչ դատարան՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասութեան դատարանի կայացրած վճիռը եւ փոփոխել այն:

Այս անգամ Տիգրան Արգաքանցյանը պահանջել է պարտավորեցնել «Երկիր» օրաթերթին՝ հրապարակել սույն գործով դատարանի վճիռը՝ լրիվ կամ մասնակի, պարտավորեցնել հրապարակել հայցվորի ներկայացրած պատասխանը, բռնագանձել օրաթերթից 3 մլն դրամ՝ որպէս վիրավորանքի եւ զրպարտութեան հետեւանքով իր պատվին ու արժանապատվութեան պատճառով վնասի փոխհատուցում, ինչպէս նաեւ 500.000 դրամ՝ փաստաբանական ծառայութեան վճարի համար:

«Երկիր» օրաթերթը եւս դիմել է վերաքննիչ դատարան՝ բողոքարկելով առաջին ատյանի դատարանի վճիռը:

Օգոստոսի 17-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանում լսվեց Աժ պատգամավոր Տիգրան Արգաքանցյանի բողոքը՝ ընդդէմ «Երկիր» օրաթերթի: Սիստին ներկա «Երկիր» օրաթերթի խմբագիր Բագրատ Եսայանը դատավորի հարցին, թէ ինչպէս են հիմնավորում իրենց թերթում Տիգրան Արգաքանցյանի նկատմամբ հրապարակված «լակոտ» բառը, պատասխանեց, որ իրենք տեղեկութիւն են ունեցել, որ Զրանտ Բագրատյանը իր գործուղման ժամանակ, որտեղ ներկա են գտնվել ՉԼՍ-ների ներկայացուցիչներ, սահմանափակ թվով աճանց շրջանում արել է այդ արտահայտութիւնը՝ հակառակ Զրանտ Բագրատյանի ստորագրած եւ գրավոր տրված ժխտման հայտարարութեանը: Բագրատ Եսայանը նաեւ ավելացրեց, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասութեան դատարանը մերժել է իր միջնորդութիւնը՝ լրագրողին կանչել դատարան՝ վկայութիւն տալու, որ գործուղման ժամանակ Զրանտ Բագրատյանը արել է այդ արտահայտութիւնը:

Օգոստոսի 24-ին ԶՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կայացրեց այս գործով որոշումը՝ մերժեց Տիգրան Արգաքանցյանի բողոքն ընդդէմ «Երկիր» օրաթերթի եւ անփոփոխ թողեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասութեան դատարանի վճիռը:

Ապա Երկու կողմն էլ դիմեց Վճռաբեկ դատարան, սակայն Վճռաբեկ դատարանը վերադարձրեց ե՛ւ «Երկիր» օրաթերթի, ե՛ւ ԶՅ Աժ պատգամավոր Տիգրան Արգաքանցյանի բողոքները:



Մարգարիտա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակի», կամ՝ հակառակը

«Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը դիմել է ոստիկանություն՝ Մարգարիտա Խաչատրյանին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Վերջինս էլ հայցով մտել է դատարան եւ պահանջում է, որ «Հրապարակը», իր մասին տպած հրապարակումներից մեկը հեքքելուց զատ, զրպարտության համար իբրեւ փոխհատուցում, իրեն վճարի 2 միլիոն ՀՀ դրամ:

Անցել է շուրջ 7 ամիս, սակայն վերոնշյալ դրվագներից եւ ոչ մեկով դեռեւս հանգուցալուծում չկա:

Գրվագ I. գրադարձություն

Մարգարիտա Խաչատրյանը «Չինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահն է: Նրա որդին 1998 թ. մայիսին բանակում մահացել է, պաշտոնական վարկածով՝ ծառայողական պարտականությունները կատարելիս, բայց իրական պատճառը, ինչպես մայրն է ասում, մինչ օրս անհայտ է: «Դրանից հետո բանակն ինձ համար դարձավ քարկոծման թիրախ: Իրականացրել եմ տարբեր ակցիաներ, բայց, ի վերջո, համոզվել եմ, որ քարկոծելով բանակում զոհերի թիվը չի պակասում. պետք է մտնել բանակ, օգնել զինծառայողներին, փորձել ինչ-որ բան փոխել»,- ասում է Մարգարիտա Խաչատրյանը:

Նա նշում է, որ այս տարիների ընթացքում որեւէ լրատվամիջոցի կամ լրագրողի հետ խնդիրներ առհասարակ չի ունեցել, վերջիններիս վերաբերվել է սիրով՝ ակնկալելով, որ միասին բանակին կաջակցեն՝ թույլ չտալով, որ սեւագետստ մայրերի թիվն ավելանա: «Բայց իմ գործունեության արդյունքը միանգամից ստացա «Հրապարակ» օրաթերթից, որի հետ կապված ոչ մի խնդիր ոչ մի անգամ չեմ ունեցել»,- ասում է Մարգարիտա Խաչատրյանը:

Այս տարվա ապրիլի 21-ին «Հրապարակ» օրաթերթն առաջին էջում տպագրել է մի նյութ, ըստ որի՝ Մարգարիտա Խաչատրյանը, որ պարբերաբար ստուգայցեր է կատարում ՀՀ զորամասերում, աչքի է ընկնում իր կոպիտ վարքագծով, զորամասերում թերություններ, խախտումներ հայտնաբերելիս գերծ չի մտում հայիռյանքներից: «Մեր տեղեկություններով՝ վերջին այցերից մեկի ժամանակ ԼԴՀ զորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Մարգարիտա Խաչատրյանի եւ հրամանատարական կազմի միջեւ, եւ բանը հասել է նույնիսկ քաջջոցի ու ծեծի: Սակայն տիկին Մարգարիտան հեքքեց դա. «Տե՛նց բան չկա, բալեւ, ինձ գլխի վրա են ընդունել: Ես բալա եմ տվել, ես Տանջոյի մաման եմ, ու հլը չկա տե՛նց մարդ, որ Տանջոյի մամային ասի՝ քամին գա քեզի: Ես քսան հատ մեղալ եմ ստացել, եթե ինձ քաջբռնին, ես մեղալակիր չեի ըլնի, է»,- փոխանցելով Մ. Խաչատրյանի խոսքերը՝ գրել էր օրաթերթը:

«Երբ «Հրապարակի» լրագրողը զանգեց ինձ, ես ասացի՝ ազիզ ջան, ո՞րք կարող էր նման միջադեպ լինել, եթե ես այս տարի դեռ որեւէ գործառնա չեմ այցելել. առաջին շրջայցս սկսելու եմ 6 օր հետո՝ ապրիլի 26-ին: Ուզո՞ւմ ես, համեցիր, կարող ես միանալ մեզ»,- պատմում է Մարգարիտա Խաչատրյանը: Նա նշում է, որ եթե լրագրողը գոնե հրապարակեր նաեւ իր այս խոսքերը, Նույնիսկ ընթերցողը կհասկանար, որ «քաշքշոցի ու ծեծի» մասին միջադեպն ուղղակի հորինված է: Բայց քանի որ «Հրապարակի» համար «կարեւորը միայն տիրածն է, տպել են չստուգված, կեղծ տեղեկություն»:

«Հրապարակի» գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանն ասում է. «Մենք վստահելի աղբյուրից ունեցել ենք ինֆորմացիա, որը ոչ փաստաթղթով կարող ես ապացուցել, ոչ էլ մենք ներկա ենք եղել այդ միջադեպին: Չորսմասում ծառայողներից մեկն է պատմել մեր լրագրողին, բայց ես ասել եմ՝ մինչեւ չզանգեք Մարգարիտա Խաչատրյանին, մենք այդ ինֆորմացիան չենք կարող տպել: Մեզնից հասնում էր ճշտելը, ներկայացնել երկու տեսակետ, մնացածը թող ընթերցողը որոշի՝ որն է ճիշտ, որը՝ սխալ: Դա է մեր ամբողջ արածը. մի հատ անմեղ, սովորական, շարքային լուր»:

Մարգարիտա Խաչատրյանի փաստաբան Դավիթ Թումասյանն էլ, անդրադառնալով իրենց հայցադիմումի կապակցությամբ «Հրապարակի» ներկայացրած պատասխանին, նշում է, որ դրանում՝ իբրեւ վերոնշյալ հոդվածի վերնագիր, նշվել է՝ «Ծեծկոտո՞ւք Է եղել»: Մինչդեռ տպագիր թերթում նյութը հրապարակվել է առանց վերնագրի:

«Այսինքն՝ վերնագիր ավելացնելով եւ հարցական նշան դնելով՝ նրանք դատարանին հրապարակումը փորձում են ներկայացնել որպես մի երեւոյթ, որը հանել են քննարկման՝ մոտեցնելով Տիգրան Արզաքանցյանի գործին, որի շրջանակներում հենց հարցական նշանի առկայության պատճառով դատարանը որոշում կայացրեց հօգուտ թերթի (խոսքը «ԱԺ պատգամավոր Տ. Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք» թերթի դատական գործի մասին Է - հեղ.): Բայց «Հրապարակի» նյութը քննարկում չէ, դրա բովանդակությունը հաստատում է, որ եղել է քաշքշոց եւ ծեծ»,- ասում է փաստաբան Թումասյանը: Նա հիշեցնում է, որ համաձայն ՀՀ Զրեական օրենսգրքի՝ ծեծը հանցագործություն է, իսկ «առանց փաստերի որեւէ մեկին հանցագործության մեջ մեղադրելու իրավունք ոչ ոք, այդ թվում՝ լրատվամիջոցը չունի»:

«Տվյալ պարագայում ստացվում է, որ Մարգարիտա ովանդակությունից հասկացվում է, որ ծեծողն ինքն է», - հավելում է փաստաբանը:

«Իսկ ոչի՞նչ, որ Մարգարիտա Խաչատրյանի մասին մամուլը հեղեղված է այդպիսի պատմություններով: Նույնիսկ ինքն ասուլիս է տվել եւ ասել՝ ես ծեծող կնիկ եմ», - հակադարձում է Արմինե Օհանյանը: Հայցադիմումի պատասխանում «Հրապարակ» օրաթերթը ներկայացրել է նաեւ 2007 թ. դեկտեմբերի ասուլիսում Մարգարիտա Խաչատրյանի խոսքերից հետեւյալ հատվածը. «Ցանկացած սպանության գործով դուք ինձ կտեսնեք դատարանում: «Չինվոր եւ օրենք» հ/կ Նախագահ եղած ժամանակահատվածում ինձ տեսել եք Նախագահի նստավայրի մոտ եւ Մատադիսի գործով դատավարությանը: Ես ծեծող կանանցից մեկն եմ, իմ մոտ օբյեկտիվությունն է. եթե վիշտ տեսած մայրը կանգնած, նրա աչքի առաջ երկու սպանված զինվոր են հանում, նրանցից յուրաքանչյուրի մեջ նա իր որդուն է տեսնում... »:



Դավիթ Թումասյանն ասում է, թե Մարգարիտա Խաչատրյանի վերոնշյալ խոսքից հասկացվում է, որ նա ոչ թե մարդ, այլ ունեւր ծեծող է, որպէսզի փորձի գտնել ծառացած խնդիրների լուծումը:

«Այդ ի՞նչ ասելու բան է. 1000 մարդ կա, որ պատմում են, թե ում եւ ոնց է քաշքշել ու ծեծել Մարգարիտա Խաչատրյանը: Մարդիկ պատմում են, թե ինչեր է նա արել դատարաններում եւ գործատուներում, ինչպէս է Մատաղիսի գործով մեղադրողի ճկույթը կտորել: Բայց մեր կյանքի, գործի նպատակը նրա կերպարի բացահայտումը չէ: Մենք ընդամենը պետք է նայենք լրագրողական բարեխղճության տեսակետից, թե ինչքանով է բարեխիղճ եղել լրագրողը»,- ասում է Արմինե Օհանյանը: Նրա կարծիքով՝ իրենք գործել են լրագրողական էթիկայի սահմաններում:

«Պատկերացրե՛ք՝ լրագրողը զանգում է մեկին եւ հարցնում՝ ճի՞շտ է, որ դուք զբաղվում եք մարմնավաճառությամբ: Պատասխանում է՝ ոչ: Հաջորդ օրը թերթը գրում է, թե իր տեղեկություններով՝ տվյալ մարդը մարմնավաճառ է, բայց ինքն ասում է, որ նման բան չկա: Կոպիտ օրինակ եմ բերում, բայց սա նույն բանն է, ինչ «Հրապարակն» է արել: Սրա ի՞նչն է բարեխիղճ, միեւնոյնն է՝ մարդուն վիրավորում ես, խաղում նրա պատվի ու արժանապատվության հետ»,- ասում է փաստաբան Թումասյանը:

Նրա խոսքերով՝ իրականում բարեխղճություն դրսեւորել են իրենք, քանի որ դատարանին չեն միջնորդել օրաթերթի դէմ կիրառել հայցի ապահովման միջոց եւ արգելանքի տակ դնել նրա ֆինանսական միջոցները: Թումասյանը որեւէ միտում կամ ճնշման միջոց չի համարում այն, որ իբրեւ փոխհատուցում պահանջում են 2 մլն դրամ՝ օրենքով գրապարտության դէպքում սահմանված տուգանքի վերին շեմը, քանզի դատարանը, ըստ փաստաբանի, հայցը կարող է բավարարել մասնակիորէն եւ լրատվամիջոցին տուգանել՝ ասենք, կէս միլիոն դրամով:

«Վերջին հաշվով, նշանակություն չունի, թե գումարն ինչքան կլինի, քանի որ դա մարդու պատվի եւ արժանապատվության հարցն է, որը գնահատման ենթակա չէ»,- ասում է փաստաբանը: Մարգարիտա Խաչատրյանն էլ ավելացնում է, թե հաղթելու դէպքում, անկախ գումարի չափից, այն նվիրելու է զինվորներին:

Իսկ միայն հերքման պահանջ ներկայացնելը, Դավիթ Թումասյանի գնահատմամբ, բավարար չէր լինի, «քանի որ անբարեխիղճ լրագրողները բավականին շատացել են, իսկ նյութական պատասխանատվությունը նրանց կամ խմբագրությանը հավելյալ առիթ կտա մտածելու՝ արժե արդոյք տպագրել չստուգված եւ վարկաբեկող տեղեկատվություն»:

Կենտրոնի դատարանը ձգձգում է գործի քննությունը: Թերէւս պատճառն այն է, որ Նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարանը որոշելու է վիրավորանքի եւ գրապարտության մասին օրենքի սահմանադրականության հարցը:

Փաստաբան Թումասյանն ասում է, թե կախված սույն գործի վերջնական ելքից՝ հնարավոր է, որ նոր հայցադիմումներ ներկայացնեն «Հրապարակի» դէմ, «որովհետէ օրաթերթը միայն սրանով չսահմանափակվեց. շարունակեցին Մարգարիտա նքներ»:

«Դատարան դիմելն իրենց իրավունքն է: Մենք էլ կարծում ենք, որ շատ վատ է, երբ կինը, որդեկորույս մայրը, այն էլ հասարակական կազմակերպության ղեկավար, կարող է նման պահվածք դրսեւորել եւ դրանից հետո վատ չգալ, ներողություն չխնդրել, այլ հակառակը՝ դիմել դատարան ու փորձել թերթի դէմ ուրիշ եղանակներով պայքարել»,- ասում է Արմինե Օհանյանը:

Գրվագ II. Խուլիքացնություն

«Յրապարակ» օրաթերթում նշյալ լուրի տպագրվելու հետև նույն օրն՝ առավոտյան, Մարգարիտա Խաչատրյանն այցելել է խմբագրություն:

«Անանկևալ ներխուժում է, կարմրճտած գոռում, տղամարդավարի հայիոյում, քացով խփում է աթոռներին, պատռում թերթերը, հարձակվում խմբագրի ու խմբագրակազմի վրա, ջրով լի բաժակը շարտում խմբագրի ուղղությամբ, բարեբախտաբար բախվելով պատին՝ բաժակի փշուրները հատակին են թափվում. «Թողք խփեմ սրան, Է...», - ասի աչքալուր և «Յրապարակի» լրագրող Ֆելիքս Եղիազարյանը թերթի հաջորդ օրվա համարում նկարագրել «Մարգարիտա Խաչատրյանի եւ իր տիկնանց շքախմբի» այցելությունը:

Այս ամենի, ինչպես նաեւ լրագրողներից մեկին հարվածելու եւ խմբագրի ձեռքը ճանկռելու համար (որը հետագայում արձանագրվել է դատաբժշկական փորձաքննությամբ) նույն օրը հաղորդում է ներկայացվում ոստիկանության Կենտրոնական բաժին:

«Այդ նույն օրը հետաքննչականը եկավ, բա՝ տիկին Մարգարիտա, բողոք կա, Դուք էլ բերեք բողոք գրեք: Ասացի՛ ոչ, ես ոչ մի բողոք չեմ գրում», - հիշում է Մարգարիտա Խաչատրյանը եւ պատմում մինչ այդ խմբագրություն կատարած իր այցելության մակրամասները, որն էլ դարձել էր «հետաքննչականի գալու» պատճառ:

«Մտել եմ «Յրապարակ», ինձ հետ եղել են «Պաշտպան» ՅԿ նախագահ Անահիտ Գրիգորյանը եւ իմ վարորդը՝ Վաչիկ Եղիազարյանը, որն ընդհանրապես ոչ մի բանի չի խառնվել, իսկ Անահիտն ասել է՝ մենք եկել ենք հերքում տալու... Սկզբից որ մտնում ես խմբագրություն, երկու շաբթով համակարգիչներ են դրված, աղջիկները նստած աշխատում էին: Ես բարեւել եմ, հարցրել՝ որտեղ է գլխավոր խմբագիրը եւ առաջացել նրա մոտ... Սեղանի մի կողմում ես էի, մյուսում՝ Արմինե Օհանյանը՝ կողքին երկու երիտասարդ կանգնած: Եթե ես փորձեի նրան մոտենալ, պետք է այդ տղաներին շրջանցեի: Ես չէի կարող ու Արմինե Օհանյանին մատով չեմ կպել, չեմ մոտեցել: Կամ եթե գնացած լինեի վիճաբանության մեջ մտնելու, ջարդուփշուր անելու, կսկսեի համակարգիչներից, ոչ թե կմտնեի սենյակ, որտեղ իրենք նստած էին», - պատմում է Մարգարիտա Խաչատրյանը: Նա նշում է, որ երբ գլխավոր խմբագրից պահանջել է հերքում տպագրել, վերջինս ասել է՝ եթե նույնիսկ զենք էլ պահես ճակատիս, չեմ հերքելու:

«Այդպես չի եղել. Արմինե Օհանյանն ասաց՝ ես նման բաներ շատ եմ տեսել, նույնիսկ իմ գլխին զենք են պահել, այնպես որ չես վախեցնի քո հայիոյանքներով եւ անծժներով», - պատմում է «Յրապարակի» լրագրող Արամ Պաչյանը եւ հավատացնում, որ Մարգարիտա Խաչատրյանը խմբագրություն է այցելել ոչ թե երկու, այլ երեք անձի (մեկ տղամարդու եւ երկու կնոջ) ուղեկցությամբ:

«Ներս մտան 4 հոգով, հարցրին գլխավոր խմբագրին, ու սկսեց (Մարգարիտա Խաչատրյանը) սեռական բնույթի ահավոր հայիոյանքներ տեղալ Արմինե Օհանյանի հասցեին: Անընդհատ քաշում էր, ես ու Ֆելիքսն էլ Արմինեին էինք պահում, որ չխփի: Լուսինեն փորձում էր հանգստացնել, նրան հարվածեց: Ահավոր ագրեսիա էր, մարդը չէր



21.11-ն
եւ լրագրողները

ՊԱՏԱՐԱՆՈՒՄ
97



տիրապետում իրեն, բայց ով էլ այդքան հախուռն հայոյէր, այդ վիճակում կլինէր,- պատմում է Արամ Պաշխանը:- Հետո երեխեքը ջուր տվեցին, շինեց Արմինէի ուղղութեամբ. բոլորս «լողացանք»: Բաժակն էլ շարտեց Արմինէի վրա: Չգիտեմ, թե ոնց եղավ, որ չկապով:

«Արմինէ Օհանյանն ինձ ասաց՝ ինչ ես սեւ շորերդ դրոշակ դարձրել, տղայիդ արյունը ծախեցիր... Ես չեմ թաքցնում, ես անիծել եմ, ասել եմ՝ կոկորդը կկրծեմ այն մարդու, ով իմ տղային անունը կտա եւ կասի՝ Նրան վաճառում ես: Ասել եմ՝ իմ տղային հանգիստ թողէք, իմ տղան կապ չունի նրա հետ, որ դու սուտ տեղեկատվություն ես դրել քո թերթում եւ չես ուզում հերքել», - ասում է Մարգարիտա Խաչատրյանը:

Խմբագիր Օհանյանը, սակայն, վստահեցնում է, որ նման բան չի եղել. «Նախ, հերքման պահանջ չի եղել. մտել է, սկսել հայոյել ու ջարդել: Երկրորդ, մենք շատ մեղմ ենք եղել նրա նկատմամբ ու շատ բարեկիրթ»:

«Հրապարակ» օրաթերթը կատարվածը ներկայացնող հոդվածի հետ հաջորդ օրը հրապարակել է նաեւ միջադեպի մասին «պատմող» լուսանկար, որի հետին պլանում աշխատակիցներից մեկը համակարգչի մոտ նստած աշխատում է:

Արանից ելնելով՝ փաստաբան Դավիթ Թումայանն ասում է. «Տրամաբանական չէ. եթէ հարեւանութեամբ կռիվ կամ խուլիգանություն լինէր, ինչպէս իրենք են ներկայացնում, տվյալ անձը հանգիստ նստած չէր աշխատի: Նրա ուշադրութեան կենտրոնում կլինէր կռիվը, առնվազն՝ կթեքվի այդ ուղղութեամբ»:

Իսկ Մարգարիտա Խաչատրյանը հավելում է. «Եթէ ծեծկռուտը եղած լինէր, իրենք ոչ թէ այդ նկարը կդնէին, որ կանգնած գրուցում եմ, այլ միանշանակ ծեծուշարդի նկարը կդնէին, գապիսն էլ կանէին»:

«Որովհետեւ այնքան խայտառակ աժիոտաժ, այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ նույնիսկ լրագրողներ են, բայց չՖայմեցին, չհասցրին դիկտաֆոն միացնել եւ նրա սեռական հայոյանքները ձայնագրել: Տղաները եւ ամբողջ խմբագրությունը կանգնած էր, որ չգա ինձ հասնի. ոչ ոք չգնաց ֆոտոապարատ բերի: Ես 3 անգամ բղավեցի՝ ֆոտոապարատ բերեք... Նույնիսկ ոչ ոք չՖայմեց նստիկանություն գանգել, ես եմ անկյունում կանգնած այդ աղմուկի մեջ զանգել նստիկանություն», - պատմում է Արմինէ Օհանյանը:

Հաղորդման հիման վրա կատարված քննութեան արդյունքում իրավապահները որոշել են քրեական գործ չհարուցել: Այս որոշման դէմ խմբագրութեան՝ դատարան ներկայացրած բողոքը բավարարվել է: Իրավապահներն իրենց հերթին դիմել են Վերաքննիչ դատարան, սակայն այս ատյանը եւս համարել է, որ քրեական գործ հարուցելու հիմքերը բավարար են: Արդյունքում դատախազությունը խմբագրություն ուղարկած գրութեամբ հայտնել է, որ նստիկանութեան Կենտրոնի բաժնում խուլիգանութեան հատկանիշներով հարուցել է քրեական գործ:

Այս մասին ընթերցողներին տեղեկացնելով՝ «Հրապարակը» գրել է, թէ դժվար է ասել՝ գործն ինչ ընթացք կստանա. «Նման գործեր են «ջրվել» նստիկանութեան ու դատախազութեան թեթեւ ծեռքով»: Սակայն թերթն իր պայքարի օրինակով փորձում է ցույց տալ, որ «լրագրողների ու մամուլի հետ չի կարելի բռնութեան, անօրինականութեան լեզվով խոսել՝ լինես զոհվածի մայր, թէ ՀՀ գլխավոր դատախազ»:

«Գլենդել Յիլզը» 2.5 մլն դրամ է պահանջում «Ժամանակ» օրաթերթից



«Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը



«Գլենդել Յիլզ» ընկերության ներկայացուցիչներ Անահիտ Սարգսյանը և Արթուր Միքայելյանը



«Գլենդել Յիլզ» ընկերությունը պահանջում է հերքել 2010 թ. օգոստոսի 26-ին հրապարակած «1000 դոլար լուծյան դիմաց» լուրը, որտեղ օրաթերթը, վկայակոչելով իր լավատեղյակ աղբյուրները, պատմում է Հկայացած գործարքի մասին: «Գլենդել Յիլզ» կազմակերպության Գյումրիի ներկայացուցիչները Գյումրիում իրենց կառուցած Մուշ-2 թաղամասի շենքերից մեկի ինքնափլուզումից հետո փորձել են ամեն գնով համոզել բնակիչներին, որ նրանք կատարվածի մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին: Մեր աղբյուրը, որ չցանկացավ ներկայանալ, տեղեկացրեց, թե բնակիչներին «Գլենդել Յիլզ» առձեռն առաջարկել է 1000 դոլար գումար, ինչպես նաև խոստացել է արագ վերանորոգել բնակարանը, միայն թե թեման չհայտնվի ՉԼՄ-ներում, իսկ հակառակ դեպքում սպառնացել, որ չի վերանորոգի բնակարանը: Տուժած բնակիչները հրաժարվել են «Գլենդել Յիլզի» հետ ստվերային գործարքից», - գրել է թերթը:

«Գլենդել Յիլզը» պնդում է, որ թերթում տեղ գտած «ինքնափլուզում» եզրը կարծիք է ստեղծում, թե շենքը քանդվում է, մինչդեռ ընդամենը ծեփանյութն էր թափվել: Ընկերությունը նաև պահանջում է հերքել այն տեղեկու-

թյունը, համաձայն որի՝ թերությունների մասին լռելու համար ընկերությունը մի անձին 1000 ԱՄՆ դոլար գումար է առաջարկել:

«Գլենդել Զիլզ» ընկերությունը «Ժամանակ» օրաթերթից պահանջում է 2 մլն դրամ փոխհատուցում զրպարտության միջոցով ընկերության պատվին եւ արժանապատվությանը հասցված վնասի, ինչպես նաեւ 500 հազար դրամ՝ դատական ծախսերի համար: 2011 թ. ապրիլի 5-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցած նախնական դատական նիստի ընթացքում հայցի ֆինանսական մասի պահանջը պարզաբանեց «Գլենդել Զիլզ» ընկերության ներկայացուցիչ Անահիտ Սարդարյանը:

Դատարան ներկայացրած հայցադիմումում փոխհատուցման չափը նշված չէր: Դատավոր Ա. Սուքոյանը հայցվորներից պահանջեց հստակեցնել, թե որքան փոխհատուցում են պահանջում թերթից: Անահիտ Սարդարյանը դատարանին ներկայացրեց «Գլենդել Զիլզի» եւ իր միջեւ կնքված 500 հազար դրամի պայմանագիրը: Դեռ այդ գումարն էլ պահանջեց օրաթերթից՝ որպես դատական ծախսերի փոխհատուցում:

«Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը նկատեց, որ «Գլենդել Զիլզը» հատուկ արհեստական վնաս է առաջացնում, որպեսզի թերթից դրա համար փոխհատուցում պահանջի: «Խնդիրը որակյալ իրավաբանական օգնություն ստանալը չէ, այլ վնասը արհեստականորեն ստեղծելն է մեր կողմից արհեստականորեն վատ վիճակի մեջ գցելու համար», - ասաց Նիկոլայ Բաղդասարյանը:

Անահիտ Սարդարյանը «Ժամանակ» օրաթերթի փաստաբանի այս մեկնաբանությունը ժխտեց՝ ասելով, որ «Գլենդել Զիլզ»-ի իրավաբանները հիմնականում մասնագիտացած են շինարարական կազմակերպությունների գործերում, իսկ այս գործի բնույթն այլ է: 2 մլն-ի պահանջը փաստաբան Անահիտ Սարդարյանը հիմնավորեց Քաղ. Օր.-ի 1087.1 հոդվածի 11-րդ կետի առաջին մասի պահանջներով, այն է՝ զրպարտության համար նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափը, այսինքն՝ առավելագույն կիշը: «Կյս դեպքերում հաշվի է առնվում զրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը, իսկ այս դեպքում ապատեղեկատվությունը տարածվել է Սկիզբ Մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հրատարակվող «Ժամանակ» օրաթերթի միջոցով, որն ունի մոտավորապես 4100 տպաքանակ, այսինքն՝ որպես զանգվածային լրատվության միջոց նախատեսված է անսահմանափակ թվով անձանց համար, այսինքն՝ լայն շրջանակի համար է եւ ավելի մեծ վնաս է հասցվել», - մանրամասնեց Անահիտ Սարդարյանը:

Քանի որ ապացուցման պարտականությունը պատասխանող կողմի վրա է, Նիկոլայ Բաղդասարյանը ներկայացրեց հայցվորների կողմից «զրպարտություն» որակած «ինքնափլուզման» վերաբերյալ ապացույցները, որոնք կքննվեն դատաքննության փուլում: Փաստաբանը ներկայացրեց «Ազատություն» ռադիոկայանի տեսանյութը «Գլենդել Զիլզի» կառուցած շենքում տեղի ունեցած «ինքնափլուզման» վերաբերյալ, 7or.am կայքի նույնաբովանդակ հոդվածը, շենքի բնակիչների բաց նամակը, 33 նախագահի պաշտոնական կայքում տեղադրված նախագահի՝ շինարարության անորակ լինելու մասին ելույթը, ինչպես նաեւ նախագահի աշխատակազմի ղեկավարի նույնաբովանդակ գնահատականը եւ ՄԻ պաշտպանի՝ դատարաններին ուղղված նամակը:

«Ժամանակի» փաստա անը դատարանին միջնորդում է դիմել Սահմանադրական դատարան

Երեսնի Կենտրոն եւ Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մայիսի 14-ին նշանակված ««Գլենդել Դիլզ» ընկերությունն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի» գործի նախնական դատաքննության ժամանակ պատասխանող կողմի փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը ներկայացրեց միջնորդություն, որի բավարարումը կարող է շրջադարձային լինել մամուլի գործերով բոլոր դատական գործընթացների համար:

Մասնավորապես, մատնանշելով 2010-ի մայիսի 18-ին ընդունված վիրավորանքն ու զրպարտությունն ապաքրեականացնող օրենսդրական նախագծի ընդունմամբ առաջացած բացերը՝ փաստաբանը դատարանին միջնորդեց քննել դրանք եւ հարկ եղած դեպքում օգտվել Սահմանադրությամբ դատարանին վերապահված իրավունքից՝ գործը կասեցնելու եւ դիմելու ԶԶ Սահմանադրական դատարան՝ վերոհիշյալ օրենսդրական դրույթները հակասահմանադրական ճանաչելու պահանջով:

Անդրադառնալով Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հակասահմանադրականությանը՝ Ն. Բաղդասարյանը նշեց, որ ի տարբերություն ԶԶ քրեական օրենսգրքի ուժը կորցրած հապատասխան դրույթների, որտեղ մանրամասն սահմանվում էին վիրավորանքի եւ զրպարտության հատկանիշները, Զաղ. օր.-ի գործող 1087.1 հոդվածից պարզ չէ, թե որն է զրպարտությունը եւ որը՝ վիրավորանքը, ինչն ակնհայտորեն շփոթմունք է առաջացնում մամուլի դեմ հայց ներկայացնողների մոտ:

Մասնավորապես, Ն. Բաղդասարյանը նշեց, որ անտեսվում են Զր. օր.-ի ուժը կորցրած հոդվածներ 135-ում եւ 136-ում եղած այնպիսի կարեւոր հատկանիշներ, ինչպիսիք են՝ զրպարտության դեպքում «ակնհայտ սուտ տեղեկատվություն տարածելը», իսկ վիրավորանքի դեպքում՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը «անպարկեշտ ձեւով ստորացնելը», որոնք բացակայում են Զաղ. օր.-ի գործող 1087.1 հոդվածում:

Բացի դրանից, ըստ Ն. Բաղդասարյանի՝ օրենսդրական մեկ այլ բացի պատճառով հայցվորները պահանջում են հայցերի դրամական բավարարում՝ մեծ մասամբ առավելագույն չափով (1 մլն՝ վիրավորանքի, 2 մլն՝ զրպարտության համար): Այդպիսով, անտեսվում է Լույն հոդվածում առկա այն դրույթը, համաձայն որի՝ փոխհատուցման չափը սահմանելիս՝ դատարանը պետք է հաշվի առնի պատասխանողի գույքային դրույթունը: Մինչդեռ Զրեական օրենսգրքի ուժը կորցրած հոդվածներն ավելի հստակ էին սահմանում պատճառաբաններն ու դրանց սահմանները:

Հայցվոր կողմի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը ժամանակ խնդրեց՝ միջնորդության պատասխանը պատշաճ կերպով պատրաստելու համար:

Պատասխանող կողմը միջնորդեց վկայություններ տալու համար դատարան հրավիրել այն չորս անձանց, ովքեր հարցազրույց են տվել «Ժամանակին»: Բաղդասարյանը նաեւ դատարանին ներկայացրեց թերթի ֆինանսական դրության մասին փաստաթղթերը, ինչպես նաեւ Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը, համաձայն որի՝ վիրավորանքի եւ զր-



պարտության միջոցով արատավորված գործարար համբավի պաշտպանության ժամանակ փաստաբանական ծառայությունների համար պահանջվող հատուցման առավելագույն գումարը պետք է լինի ողջամիտ, վիրավորանքի դեպքում՝ 200 հազար դրամի սահմաններում, իսկ զրպարտության դեպքում՝ 300 հազարի: Նիստի ընթացքում «ժամանակի» շահերի պաշտպանը ներկայացրեց նաեւ տեսանյութ՝ խտասկավառակի վրա, որը նկարահանել էր «Ազատություն» ռադիոկայանը եւ միջնորդեց տեսագրողին եւ հարցազրույց տված անձանց կանչել դատարան:

«Գլենդել Նիլզն» ընդդեմ

«Ժամանակի».

առարկություն և միջնորդությանը

Դատավոր Ալեքսեյ Սուլոյանը միջնորդությունների վերաբերյալ իր դիրքորոշումը հապաղեց հայտնել մայիսի 31-ի նիստի ընթացքում: Այդ օրը հայցվոր կողմի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը առարկություն ներկայացրեց փաստաբան Ն. Բաղդասարյանի՝ ՍԴ դիմելու միջնորդության առնչությամբ՝ նշելով, որ 1087.1 հոդվածով սահմանված քաղաքացիական կողմերի վերաբերյալ կա Վենետիկի հանձնաժողովի դրական եզրակացությունը, ինչը նշանակում է, որ դրանք համաչափ են եւ անորոշություն չեն պարունակում:

Հակառակ պատասխանողի պնդման՝ Ա. Սարգսյանը համարում է, որ վնասի փոխհատուցման չափերը որոշելու համար հողվածով սահմանված է սակոդակ՝ 0-ից մինչեւ նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը: Հողվածը սահմանում է այն չափանիշները, որոնք որոշում են փոխհատուցման չափը, եւ համաձայն որոնց՝ դատարանը պիտի հաշվի առնի կոնկրետ գործի առանձնահատկությունները, այդ թվում՝ վիրավորանքի կամ զրպարտության եղանակը, տարածման շրջանակը, զրպարտողի կամ վիրավորողի գույքային դրությունը: Հայցվոր կողմի ներկայացուցիչը պնդեց նաեւ, որ դատական նիստի կասեցումը իրենց կզրկի ողջամիտ ժամկետում խախտված իրավունքների պաշտպանության եւ դրանց վերականգնման իրավունքից:

Դատարանը բավարարեց թերթի ներակայացուցչի մեկ այլ միջնորդություն, որով թույլատրեց նիստի ժամանակ լսել այն անձանց, ովքեր հարցազրույց են տվել լրագրողին, որով կապացուցվի թերթի կողմից բարեխիղճ լուսաբանումը:

«Գլենդել Նիլզն» ու «Ժամանակ»

օրաթերթի դատական վեճը

շարունակվում է.

հենց արդյունքում է «Ինֆոֆիլուզումը»

Սեպտեմբերի 9-ի դատական նիստում քննարկվող գլխավոր հարցը «ինքնափլուզում» բառն էր, դրա զրպարտչական բնույթը: Նիկոլայ Բաղդասարյանը նշեց, որ «ժամանակ» օրաթերթը «ինքնափլուզում» բառը վերցրել է «7or.am» կայքից, սակայն հղում չի կատարել կայքին: Փաս-

տաբանը զարմանում է, թե ինչո՞ւ «Գլենդել Յիլզը» «7or.am» կայքին դատի չի տալիս: Անահիտ Սարգսյանը պատասխանեց, որ խոսքը ոչ թե «ինքնափուլզում» բառի մասին է, այլ հողվածի բովանդակության, եւ որ «Ժամանակ» օրաթերթի հողվածը ինքնին զրպարտիչ բնույթ է կրում:

Անահիտ Սարգսյանը նաեւ նշեց, որ Յրաջյա Աճառյանի բառարանում «ինքնափուլզում» բառ չկա, իսկ նույն բառարանում «փուլզել» նշանակում է «աժերել», «քանդել», ինչից կարողացողը կարող է հետետւթյուն անել, որ բնակարանը ամբողջովին փլվել է, մինչդեռ իրականում ծեփն է թափել:

Փաստաբան Ն. Բաղդասարյանը զարմացավ, որ եթե լրագրողը չի տիրապետում լեզվին, դրա համար պետք է իրեն դատի տան, իսկ Անահիտ Սարգսյանն ավելացրեց, որ լեզվին չտիրապետելու համար պարտավոր է կրել պատասխանատւթյուն, որովհետեւ նման ապատեղեկատվության պատճառով արտատվորվել է «Գլենդել Յիլզի» նման խոշոր ընկերության գործարար համբավը:

«Ժամանակ» փաստաւնը միջնորդեց դատարանը ՎԿԱՆԵՐԻՆ

Դատաքննությունը շարունակվեց սեպտեմբերի 19-ին, եւ «Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը նշեց սույն գործով վիճարկվող հողվածում հրապարակված քննարկման ենթակա հետեւյալ 4 հարցադրումները.

1. Եղե՞լ է ինքնափուլզում կամ փուլզում, թե՞ ոչ:
2. Բնակիչներին «Գլենդել Յիլզ» առձեռն առաջարկե՞լ է 1000 դոլար գումար:
3. Փորձ արե՞լ են ամեն գնով համոզել բնակիչներին, որպեսզի նրանք կատարվածի մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին:
4. Հակառակ դեպքում բնակարանը չի՞ վերանորոգվի:

Առաջին հարցին կողմերն այլեւս չանրադարձան, քանի որ այն բավականին երկար քննարկվել էր նախորդ նիստի ընթացքում: Պատասխանողը հարց ուղղեց հայցվորին, թե իրականությանը չհամապատասխանող ցանկացած տեղեկություն մեխանիկորեն զրպարտություն է դիտվում: Հայցվորը պատասխանեց՝ ոչ եւ ավելացրեց, որ իրենք որպես զրպարտություն են դիտում այս գործով ամբողջ հողվածի համատեքստում գրվածը:

Նիկոլայ Բաղդասարյանն ուզում էր, որ հայցվորները որոշակիացնեն, թե հողվածի որ մասերն են համարում զրպարտություն, որ դրանց դեմ հակափաստարկներ ներկայացնի: Հայցվորի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանի պարզաբանումները պատասխանողին չգոհացրին:

Ն. Բաղդասարյանը նշեց, որ «Գլենդել Յիլզը» բնակիչներին առձեռն առաջարկել է 1000 դոլար, իրենց լրագրողը դա հրապարակել է, քանի որ բնակիչներից մեկը նման արտահայտություն է արել: Այլ հարց



Ե, թե լրագրողը ճշտե՞լ է այդ ինֆորմացիան, թե՞ ոչ: Այս հարցն էլ կպարզվի նրա՝ վկայություն տալու ժամանակ: Փաստաբան Բաղդասարյանը հերթական հարցը տվեց, թե արդյոք հայցվորը չի՞ բացառում, որ մի անձ կարող է ինֆորմացիա տալ լրագրողին, հայցվորը պատասխանեց, որ չի բացառում: Փաստաբանը շարունակեց հարցադրումը, թե՛ եթե իրենք բացահայտեն լրագրողի ինֆորմացիայի աղբյուրը, ապա իրենք կազատվե՞ն պատասխանատվությունից: Ա. Սարգսյանը պատասխանեց՝ ոչ՝ մեկնաբանելով, թե, համաձայն օրենքի, լրագրողը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե հրապարակած տվյալներն այլ անձի բարեխիղճ վերարտադրությունն են, եւ եթե հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին: Այստեղից հետեւում է, որ եթե հղում չի արվել, ապա պատասխանատվությունը կրում է տեղեկատվությունը հրապարակային ներկայացնողը:

Նիկոլայ Բաղդասարյանը նշեց, որ այս դեպքում ստացվում է, որ եթե լրագրողը չի բացահայտում տեղեկատվության աղբյուրը, ապա ինքն է պատժվում, իսկ եթե բացահայտում է, ապա նորից լրագրողն է կրում պատասխանատվությունը: Հայցվորը հաստատեց, որ, ըստ օրենքի, պատասխանատվությունը կրում է հրապարակողը:

Օրաթերթի ներկայացուցիչը վիճարկում էր այն պնդումը, թե իրենց տպագրած նյութում չեն վիրավորել հայցվորին՝ հրապարակելով 1000 դոլարի մասին: Ըստ փաստաբանի՝ նրանք այդ գումարը նշել են որպես փոխհատուցում եւ դրանով չեն զրպարտում հայցվորին:

«Գլենդել Յիլզը» վիճարկում էր հոդվածի վերնագրում «1000 դոլար՝ լռելու համար» բովանդակությունը, որից զարմացավ պատասխանողը՝ մեկնաբանելով, որ տեքստում այդպիսի բան նշված չէ, առավել եւս վերնագրի մասին հայցադիմումի մեջ նշված չի եղել, եւ հայցվորը այդ հանգամանքը նոր ի հայտ բերեց, որպեսզի փրկի իրավիճակը: Սակայն հայցվորն ընթերցեց հերքման այն հատվածը, որտեղ ասվում է «լռության» մասին:

Պատասխանողի հերթական հարցին, թե տվյալ բնակչին հայցվորի կողմից որքա՞ն գումար է տրվել, հայցվորը պատասխանեց, որ դա պատասխանողի գործը չէ եւ չի պատրաստվում այդ հարցին պատասխանել: Ն. Բաղդասարյանը, այնուամենայնիվ, նույն հարցը տարբեր ձեւակերպումներով հայցվորին հղելուց հետո, ի վերջո, ստացավ պատասխան, որ «Գլենդել Յիլզը» փոխհատուցել է վնասները, եւ որ դա դիտվում է որպես փոխհատուցում կրած վնասների, այլ ոչ թե լռության դիմաց: Սակայն պատասխանողի բազմիցս հնչեցրած հարցին, թե ինչքան գումար են վճարել հայցվորները բնակչին, ստացավ պատասխան, որ որեւիցե գումար բնակչին չի տրվել, միայն կատարվել է հասցված վնասների նորոգում եւ վնասված ապրանքների փոխհատուցում:

Ն. Բաղդասարյանը, այնուամենայնիվ, պնդում էր, որ գումար փոխանցվել է, դրա ապացույցը գտնվում է հայցվորի մոտ: Պատասխանողը դատարանին միջնորդեց դատարան հրավիրել վկաներին եւ դատական նիստը հետաձգել՝ պատրաստվելու համար:

Յերթական դատական նիստի օր նշանակվեց նոյեմբերի 22-ը: Այդ օրվա նիստին որպես պատասխանող ներգրավված վիճարկվող հոդվածի հեղինակ Արման Գալոյանը իր ելույթում հայտնեց, որ «Գլենդել

Յիլզ»-ի այս պատմությանը տեղեկացել է այլ լրատվամիջոցից եւ հող-վաճուժ հայտնել է իր դատողական գնահատականը պատահածի վերաբերյալ: Իսկ հազար դոլարի վերաբերյալ նշեց, որ այդ ամենի մասին տեղեկացել է բնակիչներից, որոնք իրենց բողոքն են արտահայտել: Սակայն կոնկրետ անուն-ազգանուն չգիտեր եւ չկարողացավ ասել: Չամապատասխան ձայնագրությունն էլ պահպանված չէ, որովհետեւ մեկ տարուց ավելի է անցել:

«Գլենդել Յիլզ»-ի փաստաբան Ա. Սարգսյանը հայտնեց իր տեսակետն առ այն, որ լրագրողը ոչ թե գնահատող կարծիք է հրապարակել կամ իր վերաբերմունքը փաստի վերաբերյալ, այլ փաստական տվյալներ է հայտնել՝ առանց ճշտում կատարելու: Այն հարցին, թե ի՞նչ է նկատի ունեցել հեղինակը՝ նյութը վերնագրելով «Չազար դոլար լռության դիմաց», Գալոյանը պատասխանեց, որ վերնագիրը հողվածի խտացված տարբերակն է:

Պատասխանողի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանի հարցին, թե ինքնափլուզում բառն օգտագործելով՝ արդյոք լրագրողը դա որպես դատողություն¹ է ներկայացրել, թե՞ որպես փաստ, Գալոյանը պատասխանեց, որ դա իր գնահատողական դատողությունն է, քանի որ կարծում է, որ առանց որեւէ մեկի միջամտության որեւէ բան առաստաղից չի կարող ընկնել:

«Գլենդել Յիլզ»-ը կհաշմվի՞ «Ժամանակ» օրաթերթի հետ

Դեկտեմբերի 14-ի նիստում օրաթերթի ներկայացուցիչ Սիկոլայ Բաղդասարյանը հայտնեց դատարանին, որ մնացած վկաները, որոնք պետք է դատակոչվեին, չեն կարող գալ՝ երկրից բացակայելու պատճառով: Ն. Բաղդասարյանն ընթերցեց իր գրավոր առարկությունը հայցի վերաբերյալ՝ հատկապես նշելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումն առ այն, որ անհրաժեշտ է ուշադիր տարբերակում կատարել փաստերի եւ գնահատողական դատողությունների միջեւ: Նա խնդրեց դատարանին մերժել հայցը, քանի որ լրագրողը գնահատողական դատողություն է կատարել փաստերի հիման վրա: Ապա ավելացրեց, որ իրենք նաեւ ցանկանում են հաշտության գալ:

Հայցվոր կողմի փաստաբան Անահիտ Սարգսյանը հայտնեց, որ իրենք ցանկանում են բերված առարկության դեմ իրենց առարկությունը ներկայացնել, ինչպես նաեւ իրենց ժամանակ է անհրաժեշտ հաշտության առաջարկը քննարկելու համար:

Դատական նիստի օր նշանակվեց հունվարի 16-ը:



Չրպարտության համար հայց՝ ընդդեմ «Կենտրոն TV»-ի

Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 2011 թ. մայիսի 11-ին պետք է քննվեր ԶԿՅ-ներում պահվող երկու անձի՝ Աշոտ Հարությունյանի եւ Գեուրգ Հայրապետյանի հայցերն ընդդեմ «Կենտրոն» հեռուստատեսության:

Հայցվորները «Կենտրոնից» պահանջում են հերքել 2010-ի վերջին «Հետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում հեռարձակված տեղեկությունները՝ հերքման համար անվճար հեռուստաթերթ տրամադրելով եւ հատուցելով երեքական միլիոն դրամ՝ պատճառված բարոյական վնասի ու դատական ծախսերի համար: Այդ գումարը ներառում է փաստաբանական ծախսերը՝ 250 – 300 հազար դրամի չափով: Սակայն նիստը նշանակվեց այլ օր՝ պատասխանող կողմի չներկայանալու պատճառով: Ըստ դատարանի՝ հեռուստաընկերության ներկայացուցիչը պատշաճ կերպով ծանուցվել էր նիստի մասին, սակայն բացակայելու մասին չէր տեղեկացրել: Հայցվոր կողմի միջնորդությամբ դատարանը որոշեց չիրապարակել վճիռը: Դատավորը հատկապես նշեց, որ լրատվամիջոցների անչվող գործերն առանձնակի ուշադրություն են պահանջում, եւ հապճեպ քայլերն արդարացված չեն:

Ըստ երկու գործերով հայցվորների շահերի պաշտպան Սեդա Սաֆարյանի՝ իր երկու վստահորդների քրեական գործերը գտնվում են բողոքարկման փուլում, եւ քանի որ դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել, վիճարկվող հաղորդումների հեռարձակմամբ խախտվել է նրանց անմեղության կանխավարկածը: Տեսանյութերը հեռարձակվել են անցած տարվա վերջին՝ երկու դատական գործերով վճիռների իրապարակումից հետո: Ըստ Սաֆարյանի՝ նկարահանված տեսանյութերը ուղեկցվել են Գ. Հայրապետյանի եւ Ա. Հարությունյանի մասին պատմող տեքստերով, որոնք դիտելիս տպավորություն էր ստեղծվում, թե տեսանյութերն իրական են: Մասնավորապես, ըստ Սաֆարյանի, Աշոտ Հարությունյանին վերաբերող տեսանյութում կան ծեփ տեսարաններ, որոնք միտված են հասարակական կարծիք ձեւավորելու, որ երիտասարդին ծեծողը հենց Ա. Հարությունյանն է, մինչդեռ իրականում այդպես չի եղել: Իսկ Գ. Հայրապետյանին վերաբերող տեսանյութում ցույց է տրվում դրամի գաղտնի փոխանցման տեսարան, եւ դարձյալ տպավորություն է ստեղծվում, որ կադրում եղած անձը Հայրապետյանն է: Ըստ «Կենտրոն» հեռուստաընկերության հաղորդած տվյալների՝ տեսանյութերը կարելի է գտնել ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում:

Անցած տարի այս երկու քրեական գործերն էլ մեծ հնչեղություն ստացան, քանի որ մի գործով քննվում էր Չարենցազանի ոստիկանու-

թյունում կասկածելի հանգամանքներում «ինքնասպանության» դիմած Վահան Խալաֆյանի մահվան փաստով հարուցված գործը, իսկ մյուսով ազատամարտիկը մեղադրվում էր հայրենիքի դավաճանության մեջ:

2010 թ. նոյեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով դատապարտվել է 8 տարվա ազատազրկման պաշտոնեական լիազորություններն գերազանցելու եւ ոստիկանության Չարենցավանի բաժնի բերման ենթարկված Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրելու համար: Բացի Հարությունյանից, գործը բողոքարկում են նաեւ տուժողի իրավահաջորդ ավաճյանները եւ ՀՀ Գլխավոր դատախազությունը: Դատախազությունը գտնում է, որ բացի Աշոտ Հարությունյանից եւ Մորես Հայրապետյանից, գործում ներգրավված եւս երկու ոստիկան պետք է պատիժ կրեն: Իսկ Խալաֆյանների կարծիքով, նոյեմբերի 29-ի վճռով իրական մեղավորը մնում է անպատիժ եւ հույս ունեն, որ վերաքննիչ դատարանին կհաջողվի գործը ճիշտ ուղղությամբ տանել:

Իսկ ազատամարտիկ Գ. Հայրապետյանը 2010 թ. հոկտեմբերի 25-ին հայրենիքի դավաճանության մեղադրանքով դատապարտվեց 12 տարվա ազատազրկման: Նրա մարտական ընկերները, չընդունելով Գեւորգի դեմ ներկայացված մեղադրանքը, բողոքի ակցիաներ են կազմակերպում եւ նույնիսկ սպառնում հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից:

Փաստաբան Սաֆարյանը համոզված է, որ վաղ թե ուշ թե՛ Ա. Հարությունյանը եւ թե՛ Գ. Հայրապետյանը արդարացվելու են: Սակայն հեռուստատեղեկությամբ հաղորդված ոչ համաչափ լուսաբանումը «ծայրահեղ վարկաբեկող է եւ ծառայում է մեկ նպատակի՝ վատաբանել իր վստահորդներին եւ ազդել վերաքննիչ դատարանի վճիռների վրա»:

Լրագրող Ա. Հակոբյանը չհերքեց այն տեղեկությունը, որ նյութերը տրամադրել է Գլխավոր դատախազությունը՝ առանց իրենց կողմից դրանց վերաբերյալ հարցում կատարելու: Սակայն Հակոբյանը կարծում է, որ անմեղության կանխավարկածի իրավունքը «Կենտրոնը» չի խախտել, քանի որ երկու գործերի դեպքում էլ կային դատական վճիռներ: Բացի այդ, իրենք դատարանում նշել են տեղեկությունների ստացման աղբյուրը, եւ, այս փաստը հաշվի առնելով, դատարանը պետք է մերժի երկու հայցերը:

Փաստաբան Սաֆարյանը շարունակում է առարկել՝ նշելով, որ դատավճիռները դեռեւս ուժի մեջ չեն մտել, եւ անմեղության կանխավարկածը դեռեւս գործում է: Սակայն, հաշվի առնելով հանրության տեղեկացված լինելու իրավունքը, նյութերը կարելի էր ներկայացնել սահմանափակ եւ համաչափ կերպով: Մինչդեռ դրանք ներկայացվել են այնպիսի համատեքստում, որն ակնհայտորեն, միտումնավոր վարկաբեկում է: Նա շեշտեց, որ իր վստահորդների համար փաստերի հերքումը չափազանց կարեւոր է, քանի որ դրանք կարող են լրջորեն վնասել նրանց հեղինակությանը նույնիսկ արդարացման վճիռներից հետո:

«Հերիք չի այս մարդկանց անհիմն դատապարտում են, նրանց վարկաբեկում են հրապարակայնորեն, եւ որն ավելի վատ է՝ վարկաբե-



կում են հարազատների եւ ընկերների շրջանում,- ասում է փաստաբանը,- Գ. Հայրապետյանի մասին թողարկված տեսանյութից հետո հանդիպում եմ նրա մարտական ընկերներից մեկին, ով ինձ մեղադրում է՝ բա ասում էիք Գեւորգն անմեղ է. է՞դ էր ձեր անմեղը: Ինչպե՞ս համոզեցե՞ք ես մարդուն, որ հեռուստատեսությամբ տեսածը բեմականացում էր»,- ասաց փաստաբանը: Ըստ Ս. Սաֆարյանի՝ այս դեպքում հայցի դրամական մասի բավարարումն այնքան էլ կարելուր չէ:

«ԿԵՆՏՐՈՆ» ԿԱՏԱՐՆԷՆ Ե ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏԱԼԻԱԳՈՒՅՄԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐ

Հունիսի 2-ի նիստում «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Արթուր Հակոբյանը, ով պատրաստել էր վիճարկվող երկու հաղորդումները եւ դատարանում ներկայացնում է հեռուստաընկերության շահերը, անկեղծորեն խոստովանեց, որ Ա. Հարությունյանի եւ Գ. Հայրապետյանի մասին պատմող հաղորդումները պատվիրվել են ՀՀ գլխավոր դատախազության կողմից: «Կենտրոնի» ներկայացուցիչը դատարանի դահլիճում ասաց. ««Կենտրոն» հեռուստաընկերությունը ուղղակի հրապարակային է դարձրել ՀՀ գլխավոր դատախազության պատվերով պատրաստվող հաղորդումը՝ «Հետաքննությունը» եւ հաղորդումները պատրաստել է առաջին ատյանի վճռի եւ մեղադրական եզրակացության հիման վրա»:

Ըստ փաստաբան Ս. Սաֆարյանի՝ ՀՀ գլխավոր դատախազության պատվիրած այդ տեսանյութերը հետապնդել են երկու նպատակ՝ հասարակության մեջ սերմանել կարծիք, որ առաջադրվող մեղադրանքները հիմնավորված են եւ ազդել դատավարության ընթացքի վրա: Մինչդեռ իր պաշտպանյալները չեն ընդունում իրենց առաջադրված մեղադրանքները: Մասնավորապես, տեսանյութի հեռարձակման ընթացքում չի նշվել, որ բեմականացված ծեծի դրվագը Ա. Հարությունյանի գործի լուսաբանման ժամանակ եւ գումարի գաղտնի փոխանցման դրվագը Գ. Հայրապետյանի մասին պատմող նյութում օպերատիվ նկարահանումներ չեն: Չի նշվել նաեւ, որ այդ գործերը բողոքարկման փուլում են: Այսինքն՝ չի պահպանվել լուսաբանման համաչափությունը:

Արթուր Հակոբյանը հակադարձեց՝ ասելով, որ միայն օպերատիվ նկարահանման ցուցադրման ժամանակ է նշվում, որ այն օպերատիվ նկարահանում է, իսկ տեղեկությունը հեռուստատեսությամբ առանց տեսանյութի հրամցնել չէին կարող, դրա համար էլ գեղարվեստական ձեւավորմամբ լրացրել են: Ըստ Հակոբյանի՝ հեռուստադիտողը պետք է հասկանար, որ օպերատիվ նկարահանում չէ, եթե այդ մասին նշված է: Ու թեեւ դատախազությունը չի պնդում գեղարվեստական մաս ավելացնելու համար, հեռուստաընկերությունը այն լրացնում է:

«Ուղղակի, որ տեքստը դատարկ չընթանա,- ասում է Ա. Հակոբյանը,- հեռուստատեսությամբ տեքստին համապատասխան պետք է կադր լինի: Եթե մեղադրական եզրակացության մեջ ասվում է. «Աշոտ Հարությունյանը ծեծի է ենթարկել...եւ... դա մեղադրական եզրակացության մեջ ա, ըստ ձեզ՝ ի՞նչ կադր կարող էր լինել»:

Ահա Ա. Հարությունյանի հայցով դատավարության այս հատվածի բառացի շարադրությունը.

Ս. Սաֆարյան. «Իսկ առաջին ատյանի դատարանի վճռում կա՞ր, որ Ա. Հարությունյանը ծեծել է, ինչպես Դուք եք ասում»:

Ա. Հակոբյան. «Մեղադրական եզրակացության մեջ»:

Ս. Սաֆարյան. «Ի՞նչ կար մեղադրական եզրակացության մեջ»:

Ա. Հակոբյան. «Կոնկրետ ձեր ասածները, ինչպես Դուք եք ասում»:

Փաստաբանի հարցին, թե քանի դատական նիստ է նկարել «Կենտրոն» հ/ը Ա. Հարությունյանի գործով, պատասխանողը նշեց՝ 2-3: Իսկ այն հարցին, թե ինչու չի ցուցադրվել Ա. Հարությունյանի նիստի այն դրվագը, որտեղ նա խոսում է ծեծի վերաբերյալ, Ա. Հակոբյանը պատասխանեց, որ ամեն ինչ չի, որ հաղորդման մեջ ցուցադրվում է:

Դատավոր Արթուր Սմբատյանի հարցմանը, թե արդյո՞ք նյութերն ուղեկցվել են մեկնաբանություններով, Արթուր Հակոբյանը երկու դեպքում էլ ասաց՝ բացատրվել են: Դատավորին նաեւ հետաքրքրեց, թե արդյո՞ք որեէ տեղ նշվում է, որ հաղորդման պատվիրատուն ՀՀ գլխավոր դատախազությունն է: Արթուր Հակոբյանն ասաց՝ վերջում:

Սեդա Սաֆարյանը Գ. Հայրապետյանի մասին պատմող հաղորդման նպատակային լինելը հաստատում է նաեւ այն փաստով, որ Գ. Հայրապետյանի գործով դատական ողջ գործընթացը, չնայած վերջինիս առարկությանը, ընթացել է փակ դռների տեսում, վճիռը հրապարակվել է մասամբ: «Ու հանկարծ մեղադրական եզրակացությունն ու վճիռը հայտնվում են «Կենտրոն» հեռուստաընկերության ձեռքում, որը որպես աղբյուր մատնանշում է Գլխավոր դատախազությանը՝ պատվիրատուն իրենք են, գնացեք իրենցից հարցրեք, թե ինչպես է հայտնվել մեզ մոտ. սա ինչպե՞ս կբացատրեք»:

Փաստաբան Ս. Սաֆարյանն ասում է, որ անարդարացի է այս աստիճան սեւացնել նաեւ Աշոտ Հարությունյանին, «ով պարզապես քավության նոխազ է դարձել»: Ըստ փաստաբանի՝ այս հաղորդումը հաստատապես ծառայում է մեկ նպատակի. հասարակության մեջ տպավորություն ձեւավորել, որ դրվագում գումարը գաղտնի փոխանցողը հայրենիքի դավաճանության մեջ մեղադրվող մարդն է, իսկ ծեծող ոստիկանը՝ հենց Աշոտ Հարությունյանը:

Վճիռ հօգու՞մ մամուլի,

այց արդյո՞ք

հանուն արդարադատության

Հունիսի 16-ին Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժեց զրպարտության եւ վիրավորանքի համար «Կենտրոն» հեռուստաընկերության դեմ ներկայացված երկու հայցը:

Երկու հայցվորների փաստաբան Սեդա Սաֆարյանը «Հետքի» հետ զրույցում ասաց, որ այս վճռով մեկ անգամ եւս ապացուցվեց՝ Հայաստանում դատավճիռները այլ հարթության վրա են ընդունվում: «Նույն ուժերը, որոնք դեր խաղացին Գեւորգ Հայրապետյանի ու Աշոտ Հարությունյանի դատավարությունների ժամանակ, կարողացան ազդեցու-



թյուն ունենալ այստեղ, - ասաց փաստաբանը, - սրանք դատարանի անկախ ու անկաշառ վճիռներ չեին»:

Սեպտեմբերի 7-ին ՀՀ վերաքննիչ դատարանում լսվեց Գ. Հայրապետյանի եւ Ա. Հարությունյանի վերաքննիչ բողոքներն ընդդեմ «Կենտրոն» հեռուստաընկերության («Մուլտի մեդիա-Կենտրոն թիվի» ՓԲԸ-ի): Սեդա Սաֆարյանը միջնորդեց բեկանել առաջին ատյանի դատարանի վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր դատաքննության:

Սեպտեմբերի 15-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց Գ. Հայրապետյանի եւ Ա. Հարությունյանի բողոքները՝ ուժի մեջ թողնելով Երեւանի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

Հայցվորների ներկայացուցիչ Ս. Սաֆարյանը թեեւ վճռաբեկ բողոք է ներկայացրել, բայց մեծ հույսեր չի կապում դրա հետ: Նա ավստոսում է, որ ներպետական դատարանները չկարողացան ինքնուրույնություն դրսևորել ու արդյունավետ պաշտպանել այս անձանց շահերը: Փաստաբանը տեղեկացրեց, որ ընթացակարգային խախտումների մասին հաղորդագրություն ստանալուց հետո Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պահանջել է Գ. Հայրապետյանի դատավճիռները թե՛ այս գործով եւ թե՛ հայրենիքի դավաճանության համար քրեական գործով, եւ փաստաբանը պատրաստվում է դրանք ուղարկել ՄԻԵԴ:

«Ներպետական դատարանները չկարողացան արդյունավետ պաշտպանություն ապահովել, - նշեց Ս. Սաֆարյանը,- այժմ ստիպված ենք հույս դնել Եվրոպատարանի վրա»:

Դատարանը մերժեց պատգամավոր Արզաքանցյանի հայցն ընդդեմ «Իրավունքի»



2011 թ. հունիսի 24-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ

Նոր իրավասության առաջին ատյանի դատարանը՝ Նախագահությամբ դատավոր Ռ. Ափիսյանի, մերժեց Աժ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի հայցն ընդդեմ «Իրավունք» թերթի: Դատարանը վճռեց. «Տիգրան Գրիշայի Արզաքանցյանի՝ ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության՝ «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերությանը «Իրավունք» թերթում սույն գործով դատարանի վճռի լրիվ կամ մասնակի հրապարակումը պարտավորեցնելու, «Իրավունք» թերթի 22.02.2011 թվականի 13 համարի երկրորդ էջի «Կլորիկ գումա՞ր է «կրվել»» խորագրով հոդվածի վերաբերյալ հայցվորի կողմից ներկայացված պատասխանի հրապարակումը պարտավորեցնելու, «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ից 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ որպես վիրավորանքի եւ զրպարտության հետեւանքով իր պատվին եւ արժանապատվությանը պատճառած վնասի փոխհատուցման գումարի, ինչպես նաեւ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ից 586.000 դրամ փաստաբանական ծառայության վճարի, 68.000 դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումարի բռնագանձման պահանջների մասին հայցն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու հիմքով»:



2011-ին
եւ կրագործները

ԴԱՍԱՐԱՆ

111



Տիգրան Արզաքանցյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձվեց 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ որպես գործով չվճարված պետական տուրքի գումար:

Սա առաջին դեպքն էր, երբ դատարանը մերժեց քաղաքական գործչի հայցն ընդդեմ լրատվամիջոցի:

2011թ. փետրվարի 12-ի 13-րդ համարում հրապարակած «Կլորիկ գումար»-ը Ե կրվել» նյութում «Իրավունքը» գրել էր, թե ««Ճշտվող լուրերի համաձայն, «քյավառա հատընտիր պատգամավորը, իր «փիս խասիաթի» համաձայն, չի կարողացել անտարբեր անցնել Մոսկվայի խաղատներից մեկի կողքով եւ, գայթակղությունների գիրկն ընկնելով, մոտ չորս ժամ ընկղմվելով իր սիրած գործի մեջ՝ բավականին կլորիկ գումար է կրվել»:

Գործով հունիսի 10-ին նշանակված նախնական դատական նիստի ժամանակ հայցվորի ներկայացուցիչ Վ. Հովսեփյանը նշել է, որ վիրավորանք է համարում «փիս խասիաթի» համաձայն, խաղատներում «թրեւ գալուց առաջ» արտահայտությունները, իսկ գրապարտություն է համարել «Ճշտվող տեղեկությունների համաձայն՝ բոլորովին վերջերս քյավառա հատընտիր պատգամավոր Տիգրան Արզաքանցյանը...», չի կարողացել անտարբեր անցնել Մոսկվայի խաղատներից մեկի կողքով եւ, գայթակղությունների գիրկն ընկնելով, մոտ չորս ժամ ընկղմվելով իր սիրած «գործի» մեջ՝ բավականին կլորիկ գումար է «կրվել»: Ասում են՝ գումարի չափը բավականին մեծ է եղել, եւ Արզաքանցյանը նույնիսկ օր է խնդրել, որպեսզի փողերը տանի «փակվի»: Ըստ պտտվող լուրերի՝ Հայաստանից ընտրված պատգամավոր Արզաքանցյանը այդ նույն օրը «լուրը» հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի «օդի թորող» որոշ գործարարների հետ, որոնցից բաժանվելուց հետո էլ իրեն խաղալու է տվել: Սակայն, ինչպես միշտ, «կրելու» փոխարեն նա «կրվել» է եւ երեք օր ժամանակ խնդրելուց հետո «մուծվել» է: Արզաքանցյանը գուցե հիշի, որ Հայաստանում էլ խաղող մթերողներն են աչքները շուր կտրած սպասում, թե երբ է Տիգրան Արզաքանցյանը մարելու աշխատավարձի պարտքերը...»:

Իսկ պատասխանողի ներկայացուցիչ Լ. Բաղդասարյանը նշել է, որ ներկայացված հայցադիմումն իր պահանջներով անհիմն եւ իրավագուրկ է նախ եւ առաջ նրանով, որ «Իրավունք» թերթի 22.02.2011թ. թիվ 13 համարի երկրորդ էջում տպված նյութի «Կլորիկ գումար»-ը «Ե կրվել» խորագրից պարզ եւ հասկանալի ձեւով երեւում է, որ այն իր մեջ պարունակում է հարցադրում, այլ ոչ թե այնպիսի տեղեկություն, որը կխախտի անձի իրավունքները: Հետեւապես, «ի՞նչ վիրավորանքի մասին է խոսքը, այն էլ այն պարագայում, երբ հայցվորը, լինելով Ազգային ժողովի պատգամավոր, միանշանակ կերպով չպետք է մոռանա, որ նա ընտրվել է որպես Ազգային ժողովի պատգամավոր ժողովրդի կողմից տրված ձայների շնորհիվ եւ չպետք է կատարի այնպիսի գործողություններ, ասենք, օրինակ, խաղատուն այցելելը, որոնց շնորհիվ վերջինիս պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, կարատավորվի եւ կհանգեցնի նրան, որ պատգամավորի բարի համբավը վերջինս կկորցնի, քանի որ դա բխում է գերակա հանրային շահից»:

Պարզաբանման համար թերթի ներկայացուցիչը մեջբերել է «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ

կետ, որով սահմանված է հետեւյալ դրույթը. «Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

Նա նշել է, որ տվյալ պարագայում առկա են հետեւյալ կարեւոր հանգամանքները.

- **Ղատարանը** պիտի որ հաշվի առնի նախ այն, որ հարցադրումով նյութ տպագրելը չպետք է դիտվի որպես վիրավորանք եւ զրպարտություն, ինչպես նաեւ այն, որ թերթը անմիջապես հրապարակել է հայցվորի պատասխանը:
- **Երկրորդ՝** խաղատուն այցելելը հայցվորը չի հերքել եւ նույնիսկ հաստատել է իր հեռախոսագրույցով:
- **Յրորորդ՝** հայցվորի գործողությունները պետք է դիտել գերակա հանրային շահից ելնող գործողություններ եւ պատասխանել այն հարցին, թե վերջինիս գործելակերպը բխում է գերակա հանրային շահից, թե՞ ոչ:
- **Չորրորդ՝** որքան բառի հոմանիշի օգտագործումը չի կարող դիտվել վիրավորանք:

Հունիսի 10-ի դատական նիստի ժամանակ «Իրավունք» ՍՊԸ տնօրեն Յ. Բաբուխանյանը հայտնել է դատարանին, որ Տիգրան Արզաքանյանի կողմից ներկայացված պատասխանը «Իրավունք» թերթի 18-21.03.2011թ.-ի թիվ 20/1941 համարի չորրորդ էջում ամբողջությամբ հրապարակվել է, իսկ ինչ վերաբերում է դրանում կատարված մեկնաբանություններին, ապա հայտնել է, որ լրագրողը իրավունք ունի հերքման տեքստի մեջ կատարելու մեկնաբանություններ:

Այս առումով իր վճռում դատարանը հանգել է այն հետեւության, որ հերքումը պետք է տպագրվի «Յերքում», այլ ոչ թե այլ խորագրի ներքո, օրինակ՝ «MADE IN ARMENIA», «Նամակ ենք ստացել» եւ այլն, իսկ տեղակայման առումով հերքումը պետք է լինի նույն էջում, որում տպագրվել է տեղեկատվությունը, պետք է ձեւավորված լինի նույնանման կերպով, նույն տառատեսակով եւ տառաչափով: Վերլուծելով նշված իրավական նորմերը եւ համադրելով դրանք պատասխանողի ներկայացրած պնդումների հետ՝ «Իրավունք» թերթի 18-21.03.2011թ. 20 (1941) համարում տպագրված «Պատասխանի» կապակցությամբ, դատարանը գտել է, որ այն հակասում է «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին եւ, հետեւաբար, պատասխանողի պնդումները չեն բխում օրենքի պահանջներից:

Պատգամավորի հայցը մերժելիս՝ դատարանն առաջնորդվել է խոսքի ազատության եւ ժողովրդավարության ժամանակակից սկզբունքներով, հենվել ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի վրա: Հավասարակշռելով խոսքի ազատության իրավունքը եւ անձի հեղինակության պաշտպանությունը՝ դատավոր Ափիսյանն ընդգծել է, որ ցանկացած միջամտություն եւ սահմանափակում, որի արդյունքում տուժում է լրագրողի կամ լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքը, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակարգում:



«Սահմանադրական դատարանն իր 2007 թվականի փետրվարի 16-ի ՍՊՈ-678 որոշման մեջ արձանագրել է, որ «Չանգվածային լրատվամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդագրանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա իշխանությունների որևէ ազդեցության բացառում: Խոսքի ազատության ցանկացած սահմանափակում պետք է «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ լինի»: Ըստ բարձր դատարանի դատական պրակտիկայի՝ «անհրաժեշտ» ածականը ենթադրում է «հասարակական կենսական անհրաժեշտություն»», - գրել է դատավոր Ռ. Ափիխյանը:

Ապա, հղում անելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Նախադեպային իրավունքին, նշել է, որ լրագրողական ազատությունը ներառում է որոշակի աստիճանի չափազանցության եւ նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն, եւ այդ իմաստով Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունների եւ գաղափարների բովանդակային մասը, այլ նաեւ դրանց մատուցման եղանակը:

Այս սկզբունքից ելնելով է դատարանը գտել, որ ««փիս խաւայթի» համաձայն» եւ «խաղատներում թրեւ գալուց առաջ» արտահայտություններով լրագրողը ցանկացել է նշել խաղատներ հաճախելու սովորության մասին եւ այդ միտքն արտահայտել է «փիս խաւայթ» չափազանցված բառակապակցությամբ, եւ վիճահարույց արտահայտությունը կարող էր անհանգստություն պատճառել հայցվորին, սակայն ոչ այն աստիճան, որ համարվեր վիրավորանք Կոնվենցիայի 10-րդ հոդվածի եւ 33 քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի իմաստներով»:

Նույն իրավական հարթության մեջ է դատարանը դիտում նաեւ «խաղատներում թրեւ գալուց առաջ...» արտահայտությունը՝ ընդգծելով, որ կարելու է, թե հոդվածի ինչ համատեքստում է օգտագործվել այդ արտահայտությունը: Հոդվածում նշված արտահայտությունն օգտագործվել է հետեւյալ Նախադասության մեջ. «Բայց խաղատներում «թրեւ» գալուց առաջ Արգաքանցյանը գուցե հիշի, որ Հայաստանում էլ խաղող մթերողներն են աչքերը ջուր կտրած սպասում, թե երբ է Տիգրան Արգաքանցյանը մարելու աշխատավարձի պարտքերը»:

Հայցվորի ներկայացուցիչը դատական նիստի ժամանակ հայտնել է, որ խաղող մթերողների աշխատավարձերի գոյացած պարտքերի մասին արտահայտած տեղեկությունը զրպարտություն չի համարում: Ուստի դատարանը եկել է այն հետեւության, որ լրատվամիջոցը փորձել է քննադատել հայցվորին խաղող մթերողներին ժամանակին աշխատավարձ չվճարելու կապակցությամբ, որը կատարել է տեղեկատվություն տարածելու իր իրավունքի իրականացման միջոցով: Այդ իրավունքը օգտագործելիս լրատվամիջոցը օգտագործել է «թրեւ գալ» արտահայտությունը, որը թեւէ իր բնույթով չափազանցված է, սակայն վերը նշված սկզբունքների լույսի ներքո նույնպես չի կարող համարվել վիրավորանք: Անափել էւս, որ «թրեւ գալ» արտահայտությունն օգտագործվել է նաեւ հայցվորի՝ խաղատներ հաճախակի այցելելն ընդգծելու նպատակով, որի հանգամանքը հայցվորն ինքը չի մերժել իր հարցազրույցում՝ հայտնելով, որ ինքը մոտ անցյալում հաճախակի է այցելել խաղատներ: «Հե-

տեւաբար, նշված հայտարարության առումով տեղի չի ունեցել հայցվորի հրավումքների խախտում», - արձանագրել է դատարանը:

Դատարանը հիմնվել է նաեւ ԵԴ սահմանած մեկ այլ կարելուր սկզբունքի վրա, այն է՝ քաղաքական գործիչների առնչությամբ թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի լայն են, քան մասնավոր անձանց առնչությամբ: «Ի տարբերություն մասնավոր անձանց, քաղաքական գործիչները գիտակցաբար եւ անխուսափելիորեն իրենց յուրաքանչյուր խոսքը եւ արարքը թողնում են բաց լրագրողների եւ հանրության վերլուծության համար եւ, հետեւաբար, քաղաքական գործիչները պետք է ցուցաբերեն ավելի մեծ հանդուրժողականություն», - ասված է վրում:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը հնարավորություն է տալիս պաշտպանել բոլոր անձանց հեղինակությունը: Յետեւաբար, այդ պաշտպանությունը տարածվում է նաեւ քաղաքական գործիչների վրա, նույնիսկ եթե նրանք չեն գործում իրենց պաշտոնական լիազորությունների շրջանակներում: «Սակայն նման դեպքերում նշված պաշտպանություն տրամադրելու պահանջը պետք է հավասարակշռվի քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճի հանրային շահի հետ», - մեկնաբանել է դատավոր Ափիլյանը՝ վկայակոչելով «Պակդեմիրլին ընդդեմ Թուրքիայի» եւ «Լինգեմսն ընդդեմ Ավստրիայի» գործերով ԵԴ վճիռները:


Տվյալ պարագայում դատարանը համարել է, որ հրապարակված տեղեկությունն իր ամբողջության մեջ քաղաքական գործչին վերագրվելու պարագայում վերջինիս պատիվը չի նսեմացնում, քանի որ, ելնելով քաղաքական գործչի կարգավիճակից, վերջինիս վերաբերյալ հասարակության կողմից ձեւավորվող կարծիքը ամեն դեպքում կրում է բազմակի բնույթ՝ պայմանավորված քաղաքական նկատառումներից (օրինակ՝ այս կամ այն կուսակցությանը պատկանելությունից եւ քաղաքականության հետ կապված այլ գործոններից), ինչը նշանակում է, որ հոդվածում հրապարակված տեղեկությունները իրենց բնույթով արատավորող չեն, քանի որ հայցվորի պատիվը, առավել եւս՝ արժանապատվությունը, տարածված տեղեկատվությամբ չի արատավորվում:

«...Դրանք պայմանավորված են քաղաքական գործչի վերաբերյալ «թույլատրելի քննադատության լայն շրջանակի» եզրույթի իմաստով: ...Մինչդեռ ներկայացված պահանջում եւ զրպարտություն համարվող վերոհիշյալ տեղեկության վերաբերյալ հայցվորը որեւէ զսպվածություն չի դրսեւորել, իսկ դատարան ներկայացված հայցադիմումով ներկայացված պահանջների միջոցով վերջինիս կողմից արտահայտված կամքը «քաղաքական» իմաստի հետ համահունչ չէ», - եզրակացրել է դատարանը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը տարածել է տեղեկատվություն, որը շոշափում էր Ազգային ժողովի պատգամավորի անձնական կյանքին վերաբերող դրվագներ, ապա դատարանն այս առումով առաջնորդվել է այն դիրքորոշմամբ, որ, ըստ Եվրոպական դատարանի՝ «կարելուր գործոն է հանդիսանում, թե արդյոք տվյալ անձը իրականացնում է պաշտոնական գործառույթներ... հանրության տեղեկացված լինելու իրավունքը կարող է որոշ առանձնահատուկ հանգամանքների ներքո տարածվել նաեւ հանրային դեմքերի անձնական կյանքի հատկանիշների վրա, հատկապես քաղաքական գործիչների առումով» (Standard Verlags GMBH-ն ընդդեմ Ավստրիայի):



Լրատվամիջոցը լրատվամիջոցից 7 մլն դրամ է պահանջում



Ձախից՝ Էդիկ Անդրեասյանը և Հայկ Բաբուխանյանը

Report.am կայքն այսուհետ չպետք է հրապարակի որեւէ նյութ «Իրավունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահ, ՍԻՄ կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանի մասին, որը կպարունակի նրա պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վիրավորանք կամ զրպարտող արտահայտություններ:

Այս որոշումը կայացրել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ արգելելով report.am կայքի հրատարակիչ «Խմբագիր» ՍՊԸ-ին, կայքի խմբագիր Արել Միքայելյանին և վերլուծաբան Էդիկ Անդրեասյանին Հայկ Բաբուխանյանի վերաբերյալ տպագրել որեւէ նյութ report.am լրատվական միջոցում և այլ անձանց կողմից դրա հիման վրա տեղադրել որեւէ հայտարարություն, տպագրել կամ տպագրած հայտարարությունն այդ լրատվական միջոցում պահպանել, որը կպարունակի Հայկ Բաբուխանյանի պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վիրավորանք կամ զրպարտող արտահայտություններ:

Դատարանի որոշման մասին report.am կայքի պատասխանատուները տեղեկացել են այն ժամանակ, երբ ստացել են նշված արգելքի մասին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որոշումը:

«Չլսված մի բան մամուլի պատմության մեջ, ընդ որում՝ անժամկետ կասեցնել՝ դեռ դատը չավարտված, դատական որոշումները չկայացված: Այսինքն՝ մենք սխալ ենք, թե ճիշտ, մեզ արգելում են այդ մարդու մասին որեւէ բան գրել, ընդ որում՝ որեւէ ժամանակ չեն նշում՝ մինչեւ ե՞րբ ենթարկվենք այդ որոշմանը, մինչ դատի ավարտը, հետո՞՝ էլ, թե՞ ընդհանրապես», - ասում է վիճահարույց հրապարակման հեղինակ Էդիկ Անդրեասյանը՝ գնահատելով այս որոշումը որպես խոսքի ազատության սահմանափակում:

Ամեն ինչ սկսվել է 2010 թ. սեպտեմբերից՝ Էդիկ Անդրեասյանի հեղինակած ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» հոդվածով, որը տպագրվել է www.report.am կայքում: Վերլուծաբանն այստեղ անդրադարձել է ՍԻՄ կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանի գործունեությանը, որով պատասխանել է «Իրավունք» թերթում հրապարակված Հ. Օրդույանի հոդվածին՝ նշելով, որ Հ. Օրդույանը հենց Հայկ Բաբուխանյանի կեղծանունն է:

Հայկ Բաբուխանյանը չի օգտվել պատասխանի կամ հերքում տպագրելու իրավունքից եւ միանգամից դիմել է դատարան՝ պահանջելով ստիպել լրատվամիջոցին ու հեղինակին հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, հրապարակային ներողություն խնդրել իրենից, հրապարակել դատարանի վճիռը նույն լրատվամիջոցում, ինչպես նաեւ վճարել դատական ծախսերը:

ՍԻՄ կուսակցության նախագահը վիրավորվել էլ դատի է տվել իր երբեմնի գործընկերոջը՝ հայցադիմումով նշելով, որ հոդվածը պարունակում է այնպիսի արտահայտություններ, որոնք վիրավորական բնույթ են կրում եւ զրպարտություն են, եւ դրանում արված արտահայտությունները ստույգ փաստեր չեն եւ չեն համապատասխանում իրականությանը:

Էդիկ Անդրեասյանը վստահեցնում է, որ որեւէ անձնական խնդիր չի ունեցել Հայկ Բաբուխանյանի հետ, նրա անունն իր հոդվածում առաջին անգամ է օգտագործել: Վերլուծաբանը պատմում է, որ ժամանակին երկուսն էլ նույն հարկի տակ են աշխատել՝ «Երկիր» օրաթերթի փակման ժամանակ «Իրավունք» թերթում Դաշնակցության մասին հոդվածներ, ելույթներ ու կոչեր են տպագրել: «Հանկարծ Հայկ Բաբուխանյանը դուրս է գալիս Դաշնակցությանը փնտրող այնպիսի հոդվածներով, որոնք ընդհանրապես իրականությանը չեն համապատասխանում», - ասում է Է. Անդրեասյանը եւ հավելում, որ Հայկ Բաբուխանյանը դատարան դիմելու փոխարեն կարող էր ինքն էլ գրչով պատասխանել:

Չնայած հայցադիմումում չի ներկայացվել, թե հստակ որ արտահայտություններն են վիրավորանք կամ զրպարտություն պարունակել, այդուհանդերձ, պատասխանող կողմի պնդմամբ, Հ. Բաբուխանյանի ներկայացուցիչները դատական նիստերի մեկնարկից հետո 10 կետ են առանձնացրել: Օրինակ՝ Հայկ Բաբուխանյանը վիրավորական է համարել իր հասցեին հնչեցրած այն միտքը, թե ««քաջարի» զորավարի մոտ լավ են ստացվում ներկուսակցական հեղաշրջումներն ու կուսակցական կնիքի համար մղվող մենամարտերը»:



Վերլուծաբանի այն արտահայտությունները, որ Հայկ Բաբուխանյանը «աչքաբացի մեկն էր», եւ ՀՅԴ եւ ՍԻՄ-ի հարեւանության ժամանակ «ջահել» է աշխատել եւ այնքան լավ է աշխատել, որ նրան առաջ են քաշել, նույնիսկ խորհրդարան տարել, որ ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը մեռակ չմտա, եւ մեկը լինի կողքին, որ «ջահելություն» անի, վազի սրա-նրա մոտ, պայմանավորվածություններ ձեռք բերի, հարց քննարկի, ըստ խմբագրի, վիրավորել եւ զրպարտել են իրեն:

Հայցվորը զրպարտություն է համարել նաեւ իր մասին ասված «կուսակցություն քանդելու» «մեղադրանքը», ինչպես նաեւ վիրավորական համարել հեղինակի հարցադրումը: «Հասկանում ենք, որ ընտրություններ են մոտենում: Բայց մի՞թե կարելի է ընտրվելու համար ինքնավաճառվել եւ այն էլ այդքան էժան գնով»:

«Ինչպես ասում են, ճանճը փղի դարդն է լալիս: Իսկ թե ինչ կապ ունեն փիղը, նրա թրիքը եւ ճանճը Հայկ Բաբուխանյանի, նրա առաջնորդությամբ գործող ՍԻՄ-ի, «Իրավունքի» եւ Հ. Օրդույանի հետ, կարող եք իմանալ վերջիններիս ջահելության օրերի մամուլը թերթելով,- գրել է Է. Անդրեասյանը: - Հայկ Բաբուխանյան, օրինակ, հայ-թուրքական ախպերության օրերին մի քանի անգամ առկայծել է Եկրանին ու կիսա-ձայն հակաթուրքական բաներ ասել՝ հիմնականում կրկնելով Դաշնակցությանը: Ուզում ենք ասել՝ քաղաքական գործիչը սեփական ասելիք պետք է ունենա եւ ոչ թե քսմավելու հախումն ցանկություն: Ի դեպ, Հայկին ասե՛ք, որ իշխանություններին էլ դա հիմա դուր չի գալիս»: Սա եւ նման մի քանի պարբերություններ Հ. Բաբուխանյանը վիրավորանք է գնահատել:

«Իրավունք» թերթն ավելի ուշ պատասխանել է Էդիկ Անդրեասյանի հոդվածին: Գայանե Չարգարյանի՝ «Իրավունք» թերթի մարտի 22-24-ի համարում տպագրված «Խոսքի ազատությունը՝ ՀՅԴ-ի մամլիչի տակ» հոդվածը անդրադարձել է նաեւ վերլուծաբանին, որին Էդիկ Անդրեասյանը պատասխանել է մարտի 25-ի «Երբ գոռով հուշում են սահուշելին» վերլուծականում, ինչի համար, սակայն, Հայկ Բաբուխանյանը նրան մեկ անգամ էլ է դատի տվել:

Չուգահեռաբար երկու տարբեր դատական նիստեր են ընթանում, որից երկրորդ գործի շրջանակներում Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչները միջնորդել են արգելել report.am կայքում նրա վերաբերյալ որեւէ կյութ տպագրել:

Առաջին գործով հայցվորը 3 մլն դրամ հոդվածի հեղինակից է պահանջել, նույնքան էլ՝ լրատվամիջոցից: Իսկ երկրորդ գործով Հայկ Բաբուխանյանը իր պատվի, արժանապատվության եւ գործարար համբավն արատավորելու համար report.am կայքից, վերլուծաբան Էդիկ Անդրեասյանից եւ կայքի հրատարակիչ «Խմբագիր» ՍՊԸ-ից պահանջում է 1 մլն դրամ փոխհատուցում:

Է. Անդրեասյանը փորձել է հաշտությամբ հարցը լուծել, սակայն Հ. Բաբուխանյանը պնդել է, որ հաշտության կզնա միայն այն դեպքում, եթե վերլուծաբանը համաձայնի վճարել մինչ այդ պահը դատական ու փաստաբանական ծախսերը եւ հերքում տպագրի՝ նշելով, որ տպագրած հոդվածներն ամբողջությամբ սուտ են: Պայմանին, սակայն, չի համաձայնել Է. Անդրեասյանը:

Հայկ Բաբուխանյանի հետ գրուցել չհաջողվեց, վերջինիս մայրն էր մահացել: Նրա ներկայացուցիչը՝ փաստաբան Վահե Հովհաննիսյանը, հրաժարվեց որևէ պարզաբանում տալ:

Առաջին գործով դատաքնությունը սկսվել է 2011 թ. հուլիսի 1-ին, երկրորդով՝ հունիսի 15-ին:

Ղաշտության նգրեր շգսնվեցին

Հունիսի 15-ին տեղի ունեցած դատական նիստին Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանը Կենտրոն եւ Սորբ-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում երկրորդ՝ «Երբ գոռով հուշում են անհուշելին» հողվածի հրապարակմամբ հասցված վիրավորանքի համար պահանջվող 1 մլն դրամ փոխհատուցումը որպես հայցապահանջի լրացում ավելացրեց:

Դրամական փոխհատուցումից բացի՝ Հայկ Բաբուխանյանը պահանջում է հերքել report.am կայքում հրատարակված հողվածը, քանի որ «դրա տակ արտահայտած կարծիքները» վիրավորել են նրա պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավը: Հայկ Բաբուխանյանը պահանջում է պարտավորեցնել պատասխանողներին՝ հրապարակային ներողություն խնդրել իրենից, ամբողջությամբ հրապարակել դատարանի վճիռը հայցի բավարարման կամ մասնակի բավարարման դեպքում, ինչպես նաեւ վճարել փաստաբանական, դատական ծախսերը (8 հազար դրամ պետական տուրք):

Դատավորի հաշտության առաջարկին այդպես էլ կոնկրետ ոչ առաջարկ եղավ, ոչ էլ արձագանք: Հայցվորի ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց հաշտվել, եթե պատասխանողները որեւէ տարբերակ առաջարկեն, իսկ Էդիկ Անդրեասյանը նշեց, որ իրենց առաջարկած հաշտությանը Հայկ Բաբուխանյանն արդեն պատասխանել է՝ նշելով, որ պարտադիր հերքում է պահանջում եւ մինչ տվյալ փուլը դատական ու փաստաբանական ծախսերի փոխհատուցում, ինչին իրենք համաձայն չեն. «Ես չեմ պատրաստվում հերքել իմ հողվածը», - դատարանում հայտարարեց վերլուծաբանը:

Այսպիսով, նախնական նիստում Հ. Բաբուխանյանի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանը ներկայացրեց Էդիկ Անդրեասյանի երկրորդ հողվածի նախադասությունները եւ մտքերը, որոնցից վիրավորվել է Հայկ Բաբուխանյանը:

Ըստ այդմ՝ «ես ամեն ջանք թափել էի Հայկին հասկացնելու, որ կարիք չկա Ղաշակցության, «Ժառանգության» եւ մյուսների փեշերից կախվելով՝ հրապարակում մնալու խնդիր լուծելը: Իսկ ակա այս հողվածով՝ ՍԻՄ ճամբարից միանգամայն հակառակ, բայց անպտուղ ջանքեր են գործադրել՝ Հայկ Բաբուխանյանի ու նրա կուսակցության անունը մասնավորապես Ղաշակցության քղանցքից կախելու եւ փոսից հանելու մտադրությամբ» արտահայտությունն ամբողջությամբ մեջբերեց, իսկ այն, որ «ճիշտն ասած՝ չգիտեմ ի՞նչ անել այն կեղծիքների ու բացահայտ սխալների հետ, որոնք, այսպես ասած, պատահաբար հայտնվել են Ձեր ստորագրությամբ լույս տեսած հողվածում» արտահայտությունը, քանի որ վերագրվում է Հայկ Բաբուխանյանին, իսկ



հողվածագիրը Գայանե Չարգարյանն է, նույնպես վիրավորել է ՍԻՄ կուսակցության նախագահին:

«...Գայանե Չարգարյանը, հավանաբար նկատի ունենալով մեր կայքէջի հիմնադիր եւ «Խմբագիր» հաղորդաշարի ղեկավար Աբել Միքայելյանին, գրում է «ընկեր Աբել»: Այստեղ եւս ակնհայտ սխալ կա. Աբել Միքայելյանը Դաշնակցության անդամ չէ, հետեւաբար ճիշտ չէ նրան «ընկեր»-ով դիմելը, իսկ այլապես նա խնդրեց այս հետգրության մեջ ավելացնել ժողովրդական հայտնի խոսքը՝ «շները քեզ ընկեր», բայց՝ ուղղված, անշուշտ, ոչ կնոջը, այլ նրա պատվիրատուին»՝ խմբագրության կողմից ավելացրած հետգրության մեջ փաստաբանը հատկապես «շները քեզ ընկեր» արտահայտությունն առանձնացրեց: Եվ քանի որ նա ողջ հողվածից ամբողջական նախադասություններ էր առանձնացրել որպես վիրավորանք, դատավոր Արայիկ Մելքումյանը պահանջեց հաջորդ նիստում հստակեցնել կոնկրետ բառերը կամ բառակապակցությունները, ինչպես նաեւ հողվածի տակ տեղ գտած մեկ-նաբանություններում առկա բառերը, որոնք վիրավորական են հայցվորի համար:

Կստանտին Սահմանադրական դատարանի որոշմանը

Նոյեմբերի 9-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում պետք է տեղի ունենար Հայկ Բաբուխանյանի պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի պաշտպանության հայցով դատական նիստն ընդդեմ report.am կայքի («Խմբագիր» ՍՊԸ-ի), Էդիկ Անդրեասյանի եւ Աբել Միքայելյանի: Սակայն պատասխանողի ներկայացուցիչ Լուսինե Բակումյանը միջնորդություն ներկայացրեց դատարանին, որպեսզի գործը կասեցվի, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանում նոյեմբերի 15-ին պետք է քննվի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հողվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Դատավորը հետաձգեց դատական նիստը:

Դեկտեմբերի 9-ի նիստին հայցվոր կողմը թեւեւ պատշաճ ծանուցված էր, սակայն հայցվորի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանը նիստին ներկա չէր:

Դատարանը որոշեց նիստը շարունակել առանց հայցվորի ներկայության, սակայն Report.am-ի ներկայացուցիչ Լուսինե Բակումյանը հայտնեց դատարանին, որ իրենք ցանկանում են հաշտություն կնքել եւ հայցվորին արդեն ուղարկել են հաշտության համաձայնության առաջարկը, սակայն վերջինս դեռեւս իր դիրքորոշումը չի հայտնել այդ կապակցությամբ:

Քանի որ Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչը նիստին ներկա չէր, եւ հնարավոր չէր պարզել հայցվորի վերջնական տեսակետը, պատասխանողի խնդրանքով նիստը հետաձգվեց: Դատական նիստի օր նշանակվեց հունվարի 27-ը:

«168 ժամ» թերթը՝ որպես երրորդ կողմ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է գտնվում Մարգարիտա Մարտիրոսյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքումը պարտավորեցնելու պահանջի մասին հայցն ընդդեմ Հռիփսիմե Կարապետյանի եւ երրորդ անձ «168 ժամ» թերթի:

Հայցվորն իր հայցադիմումում պատճառաբանել է, որ պատասխանողի՝ «Չեմ կարող էսպես ապրել. անմեղ մարդ է դատվել» վերնագրով հոդվածը, որը «168 ժամ» թերթում տպագրվել է 04.11.2010 թ., իր հասցեին ակնհայտ անհիմն մեղադրանքներ եւ իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ է պարունակում («սպառնացել է ճշմարտությունն ասելու, վկայություն տալու դեպքում ... քայլեր ձեռնարկել», «Մարգարիտան՝ սկեսուրս, շանտաժի է դիմել: Նա բոլորին կաշառելով՝ մարդկանց դատում, նստացնում է»): Հայցվորը խնդրել է պարտավորեցնել պատասխանողին՝ հերքելու վերը նշված հոդվածում պարունակվող եւ իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններն ամբողջությամբ՝ հերքումը տպագրելով նույն թերթում:

2011 թ. հունիսի 29-ի դատական նիստում պատասխանողի ներկայացուցիչ Ս. Ասլանյանը, դատարանին ներկայացնելով քրեական գործով ՀՀ Արարատի մարզի դատախազի տեղակալի կողմից հաստատված մեղադրական եզրակացությունը (լուսապատճենը)՝ ըստ Մարգարիտա Մարտիրոսյանի մեղադրանքի, եւ datalex էլեկտրոնային տեղեկատվական համակարգից ստացված՝ վերոհիշյալ քրեական գործը ՀՀ Արարատի եւ Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվելու մասին տեղեկություններ, միջնորդել է կասեցնել սույն քաղաքացիական գործի վարույթը՝ մինչեւ հայցվոր Մարգարիտա Մարտիրոսյանի վերաբերյալ քրեական գործի ավարտը:

Չնայած Ս. Մարտիրոսյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանի առարկության միջնորդությանը՝ դատարանը բավարարել է պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը եւ կասեցրել է սույն քաղաքացիական գործի վարույթը:

Հայցվորի անուկից վերոհիշյալ որոշման դեմ 06.07.2011 թ. բերվել է վերաքննիչ բողոք: Իր բողոքում հայցվորը նշել է, որ իրականում հայցվորի նկատմամբ Արարատի մարզի Արտաշատի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ Արտաշատ քաղաքի բնակիչ Վարազդատ Հակոբյանից խաբեությամբ գումարի հափշտակության



փորձ կատարելու համար, իսկ հայցվորի կողմից ներկայացված հայցի առարկան զրպարտություն պարունակող հողվածի հերքումն է: Այսինքն, եթե անգամ պայմանականորեն ընդունվի, որ հայցվորը քրեական գործով ճանաչվելու է մեղավոր, ապա այս պարագայում ես նշված քրեական գործով ձեռք բերված ապացույցները չեն կարող որեւէ նշանակություն ունենալ եւ որեւէ ձեւով առնչվել սույն գործով հայցապահանջների հետ:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ սույն գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտության մասին դատարանի հետեւությունը որեւէ կերպ պատճառաբանված չէ, եւ բողոքարկված որոշումը չի պարունակում որեւէ տեղեկություն այնպիսի հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձրել գործի հետագա քննությունը:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ ընդհանուր իրավասության դատարանի կողմից սխալ է կիրառվել ՀՀ քաղ. դատ. օր.-ը եւ վերաքննիչ բողոքում բերված փաստարկները հիմնավորված են եւ վկայում են այնպիսի դատական սխալների մասին, որոնք հանգեցրել են գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդության սխալ լուծման՝ գործի վարույթի չհիմնավորված կասեցման, ուստի վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդիկ Ավետիսյանը, քննարկելով կասեցված քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու հարցը, որոշեց քաղաքացիական գործի վարույթը վերսկսել եւ գործով նշանակել նախնական դատական նիստ 11.11.2011 թ.:

3 մԼՆ 264 հազար դրամի պահանջ՝ Իջեւանի հեռուստաընկերությունից եւ լրագրողից

«Իջեւանի ճՇՇ» ՓԲԸ-ն Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան հայց է ներկայացրել «Իջեւան ստուդիա» ՍՊԸ եւ Կոթի գյուղում հաշվառված, սակայն փաստացի Իջեւան քաղաքում բնակվող, «Իջեւան ստուդիա» հեռուստաընկերության լրագրող Նաիրա Խաչիկյանի դեմ:

Ընկերությունը պահանջում է պարտավորեցնել Նաիրա Խաչիկյանին եւ «Իջեւան ստուդիա» ընկերությանը՝ հրապարակայնորեն ներողություն խնդրել եւ հօգուտ «Իջեւան ճՇՇ» ՓԲ ընկերության՝ Նաիրա Խաչիկյանից եւ «Իջեւան ստուդիա» ՍՊԸ-ից համապարտությամբ բռնագանձել 3 մլն դրամ (որպես փոխհատուցում), եւս 264 հազար դրամ (որպես դատական ծախս), որից 200 հազար դրամը՝ փաստաբանին վճարած վարձատրության գումար եւ 64 հազարը՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

«Իջեւանի ճՇՇ» ՓԲԸ-ն իր շահերի պաշտպանության համար «ԷՆ ընդ Կեյ քնսայթինգ» ընկերության հետ կնքել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, ըստ որի՝ որպես «Իջեւանի ճՇՇ» ընկերության լիազորված անձ հանդես է գալիս փաստաբան Նաիրա Խաչատրյանը:

«Իջեւանի ճՇՇ» ՓԲԸ հայցադիմումի մեջ նշված է, որ այս տարվա հունիսի 21-ին հայկական երկրորդ հեռուստաալիքի «Լրաբեր» լրատվական ծրագրով, ինչպես նաեւ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ մի քանի անգամ հեռարձակվել են տեսանյութեր, որոնց մեջ տեղ են գտել «Իջեւանի ճՇՇ»-ի գործարար համբավը արտաավորող արտահայտություններ:

Դրանք են՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջեւանի ճանշին ձեռնարկություն», «քանզի եւ սալահատակը ծածուկ վաճառել է», «Իջեւանի ճանշինի թեթեւ ձեռքով վաճառվել են», «մասնագիտական որակի եւ անաչառության պակասն է, որ ծնել է նման հետեւանքներ» եւ այլ որակումներ: Ցուցադրված տեսանյութերի ավարտին նշվել է՝ «Նաիրա Խաչիկյան, կրմեն Ասատրյան, Իջեւանի հեռուստաընկերությունից «Լրաբերի» համար:

Դատական այս հայցի նախապատմությունը հետեւյալն է: Ընթացիկ տարվա գարնանը պետական բյուջեից 117 մլն 954 հազար դրամ էր հատկացվել Իջեւան քաղաքի 3՝ Իջեւանյան, Երիտասարդական եւ Մետաղագործների փողոցների հիմնանորոգման համար: Հիմնանորոգման աշխատանքների մրցույթում շահել է «Իջեւանի ճՇՇ» ՓԲԸ-ն: Ընկերությունը 250 աշխատող ունի, այս ոլորտում Տավուշի մարզի ամենամեծ ձեռնարկությունն է:

Այլ ճանապարհաշինական աշխատանքներ է կատարում ոչ միայն Տավուշի, այլեւ հարեւան Լոռու եւ Գեղարքունիքի մարզերում: Ապրիլի 18-ին Տավուշի մարզպետարանը եւ «Իջեւանի ճՇՇ» ՓԲԸ-ն հիշյալ 3 փողոցների հիմնանորոգման պայմանագիր են կնքել: Ծանապարհաշ-



ինական ընկերության գործադիր տնօրեն Բորիս Սարգսյանի վկայությամբ՝ ապրիլի 20-ից մայիսի 5-ը իրենք փողոցների նորոգման աշխատանքներ են կատարել:

Մայիսի 5-ին Բորիս Սարգսյանի անունով ստացվել է Իջեւանի այն ժամանակ քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի նամակը, որով քաղաքապետը պահանջել է դադարեցնել շինարարական աշխատանքները, քանի որ դրա համար ինքը շինթույլովություն չի տվել: Հարցի կապակցությամբ 3 անգամ քննարկում է եղել Իջեւանի ճանապարհաշինական ձեռնարկության եւ քաղաքապետարանի մասնակցությամբ:

Սակայն խնդիրը լուծում չի ստացել: Մնացել էին շինաշխատանքների մեկնարկից հետո քարուքանդ եղած փողոցները: Ամիսուկես շարունակ Իջեւանի բնակիչները եւ մարզկենտրոն այցելողները ստիպված էին քայլել սույն փողոցների քարուքանդ հատվածներով: Իջեւանի կենցաղի տան մոտակա տարածքում ցաքուցրիվ թափված էին մայթեզրի սալերը: Գոյացած մեծ ջրափոսերի պատճառով դժվարացել էր մեքենաների եւ մարդկանց երթեւեկը:

Իրավաբանական առումով, փաստաթղթերով արդեն նախկին քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի եղբայր Վրեժ Ներսիսյանի կնոջը՝ Արմինե Դովլաթբեկյանին պատկանող տեղական «Իջեւան ստուդիա» հեռուստաընկերության լրագրողուհու պատրաստած եւ հունիսի 21-ին 32 հեռուստաընկերության «Լրաբեր» լրատվական ծրագրով հեռարձակված ռեպորտաժում մեղադրանք էր ներկայացվել, որ «Իջեւան ՃՇՇ»-ն յուրացրել է Իջեւան քաղաքի փողոցների նորոգման ընթացքում հանված սալիկները եւ հիմնանորոգման համար պետրյուջեից հատկացված գումարները:

Սակայն այդ ժամանակ կատարված աշխատանքների համար «Իջեւանի ՃՇՇ»-ն ոչ կանխավճարի, ոչ էլ կատարված աշխատանքների դիմաց պետրյուջեից գումարներ չէր ստացել: Իսկ փողոցների նորոգման աշխատանքների պատճառով հանված սալիկներն ի պահ են հանձնվել «Իջեւանի ՃՇՇ» ընկերության պահեստ:

Հունիսի 26-ին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի միջամտությունից հետո Իջեւանի այն ժամանակ քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը տվել է վիճահարույց 3 փողոցներից 2-ի՝ Մետաղագործների եւ Երիտասարդական փողոցների հիմնանորոգման շինթույլովությունը:

«Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայցով դատավարությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում սկսվել է օգոստոսի 18-ին, կայացել են դատական մի քանի նիստեր: Հոկտեմբերի 17-ի նիստում դատարանում ցուցադրվել են խնդրահարույց տեսակյութերը, կողմերը ներկայացրել են իրենց նկատառումները:

Լրագրող Նաիրա Խաչիկյանը ոչ մի անգամ նիստերին չի մասնակցել, դատարանում նրա շահերը պաշտպանում է փաստաբան Գարիկ Գալիկյանը: Իսկ «Իջեւան ստուդիա» հեռուստաընկերությունն այս գործով դատապաշտպան չունի:

Դատական վերջին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 4-ին, սպասվում էր վճռի հրապարակում: Սակայն դատավոր Շահոյանը նիստը հետաձգել էր, մինչեւ Սահմանադրական դատարանը որոշում կայացնի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ: Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվել է, սակայն դատավոր Շահոյանը դեռ վերոհիշյալ գործով նիստ չի հրավիրել:

Չրպարտության մեղադրանքով նոր հայց

Երկու լրացված իջեցնող Գերագրված է
որդես երրորդ անգ



Լուսինե Աշուղյան

Կանաձորի Յովի. Թումանյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով հայց է ներկայացրել դատարան՝ որպես երրորդ անձինք ներգրավելով «Յետք» շաքաթաթերթին եւ ATV հեռուստաընկերությանը:

Մայիսի 13-ին «Յետքը» հրապարակել էր «Յիվանդագին կրքեր Վանաձորի մանկավարժական ինստիտուտում» վերնագրով նյութ, որում ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս Լուսինե Աշուղյանը մեղադրում է ամբիոնի ղեկավարությանը եւ բուհի ռեկտորին՝ անարդարացիորեն իր դասաժամերը կրճատելու եւ դրանք կոլեգային՝ Լուսինե Սարգսյանին տալու համար:

Իսկ ATV հեռուստաընկերության «Կիսաբաց պատուհաններ» հաղորդաշարի հունիսի 15-ի եթերին մասնակցելով՝ Լ. Աշուղյանը արել է մի շարք հայտարարություններ, որոնք բուհի ռեկտորը որակել է որպես զրպարտություն իր հասցեին:

Դասաժամերի համար կռիվը երկու դասախոսների հասցրել է անգամ ոստիկանություն, որտեղ մեկը հայտարարություն է տվել սպանության սպառնալիքի մասին, մյուսը՝ սուտ մատուցության: Երկու դեպքում էլ քրեական գործերի հարուցումը մերժվել է:



21.5-ն
եւ լրագրողները

ՊԱՏԱՐԱՆՈՒՄ

125



«Սա կանխամտածված, միտումնավոր քայլ էր: Յետեւում այն մարդն է կանգնած, որը խիստ շահագրգիռ է, որ Լուսինեն պաշտպանի (Նկատի ունի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանին, ով Լուսինե Սարգսյանի գիտական ղեկավարն է - «Յետք»): Ամեն ինչ վերելից է թելադրված՝ ղեկավարության կողմից: Պարզապես իրագործել են Լուսինե Սարգսյանն ու Նրա մայրը»,- Լուսինե Աշուղյանի՝ ռեկտորի մասին ասված եւ «Յետքում» տպագրված այս արտահայտությունն է ռեկտոր Գ. Խաչատրյանը գնահատել որպես զրպարտություն:

Յայցադիմումի մեջ ռեկտոր Խաչատրյանը հիմք է ընդունել նաեւ հեռուստաէթերով Լուսինե Աշուղյանի արած մի շարք հայտարարություններ՝ դրանք նույնպէս որակելով որպէս իր հասցեին արված զրպարտություն: Այսպէս, «Մեր ռեկտորը նոր օրինակարգ է ստեղծել եւ դասախոսների հետ մեկ տարով կամ տասը ամսով պայմանագիր է կնքում, եւ յուրաքանչյուր դասախոս, անկախ իր գիտական ձեռքբերումներից, անկախ իր հմտություններից, կարողություններից, ցանկացած պահի կարող է մտածել, որ կարող է դուրս մտալ աշխատանքից: Դա փաստորեն դասախոսներին եւ ընդհանրապէս աշխատողներին ստրկական կախման մեջ է զցում ռեկտորից, եւ բոլորը պարտավոր են կամ ստիպված են իրենց աշխատանքը չկորցնելու: համար կամ քծնեն, կամ սիրաշահեն եւ չգիտեմ այլ ուրիշ միջոցներ... Բոլորն էլ գիտեն, որ ինստիտուտում հայտարարություն է տրվում, ապա տրվում է՝ որոշակի մարդու նկատի ունենալով, իսկ եթէ որեւէ մեկը մրցութի մասնակցի, բնականաբար, ոչ մի շանս չունի... Այնպիսի օրենքներ, այնպիսի դրվածք է, որ յուրաքանչյուր մարդ պարզապէս սարսափում է, որ հաջորդ պահին կարող է դրսում հայտնվել»:

Գ. Խաչատրյանը Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (Ալավերդու նստավայր) ներկայացրած հայցով, համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի, դատարանին խնդրել է «զրպարտության համար պատասխանող Լուսինե Աշուղյանին պարտավորեցնել նույն լրատվամիջոցներով՝ ATV հեռուստաընկերության «Կիսաբաց պատուհաններ» հաղորդաշարով եւ «Յետք» թերթով իրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները եւ պատասխանողից հօգուտ ինձ բռնագանձել 2 մլն ՀՀ դրամ, ինչպէս նաեւ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 68-րդ հոդվածով նախատեսված դատական ծախսերը»:

«Ռեկտորն ընդդէմ նախկին դասախոսի» գործի քննությունը օրենքի խախտումով է սկսվել

Այս գործով առաջին դատական նիստը նշանակված էր օգոստոսի 23-ին Ալավերդի քաղաքում: Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանում: Լուսինե Աշուղյանի փաստացի գրանցման եւ բնակության վայրը ոչ թէ Ալավերդին է, այլ Վանաձորը: Այդ մասին նշված է նաեւ հայցադիմումում, որն ընդունվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայրում, ապա դատարանի նախագահի կողմից ուղարկվել է Ալավերդու դատարան: Ալա-

վերդու դատավորը հայցադիմումն ընդունել է վարույթ՝ որոշման մեջ նշելով, որ հայցի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար Ժաննա Ալչանգյանը, պատճառաբանելով դատարանի նախագահի՝ հայցը ոչ ըստ պատասխանողի բնակության վայրի ուղարկելու որոշումը, նշեց, որ այն Ալավերդու դատարան է ուղարկվել Վանաձորի դատարանի դահլիճների ծանրաբեռնվածության պատճառով: Եվ ավելացրեց, որ այդ առումով օրենքի խախտում չկա, քանի որ Ալավերդու դատարանը Լոռու մարզի դատարանի ստատվայր է:

Ըստ փաստաբան Արայիկ Պապիկյանի՝ դատական հայցը դատարանի որեւէ ստատվայր ուղարկելու գործընթացը կարգավորվում է ներքին իրավական ակտերով: Սակայն, նրա ասելով, ինչ ակտերով էլ առաջնորդվի դատարանի նախագահը, նրա որոշումը պետք է համապատասխանի Զողաքացիական դատավարության օրենսգրքին: «Դատարանի նախագահը պարտավոր է արդարադատություն իրականացնել ոչ թե իր հայեցողությամբ, այլ օրենքով սահմանված կարգով», - ասում է փաստաբանը: Արայիկ Պապիկյանի տեղեկացմամբ՝ օրենքը թույլատրում է դատարանի փոփոխություն մի քանի դեպքերում, երբ պատասխանողի գտնվելու վայրը անհայտ է, պատասխանողները մի քանիսն են եւ գտնվում են տարբեր մարզերում, երբ վերադաս ատյաններից գործը հետ է ուղարկվում առաջին ատյանի տվյալ ստատվայրի դատարան, կամ դատարանի փոփոխության վերաբերյալ կողմերի միջեւ առկա է փոխադարձ համաձայնություն ալիմենտի բռնագանձման, հայրությունը որոշելու վերաբերյալ հայցերի դեպքերում: «Օրենքով նախատեսված նման բացառություններ այս գործում չկան, - նշում է փաստաբանը, - Լուսինե Աշուղյանի դեմ հարուցված հայցը պետք է քննվի Վանաձորի ստատվայրում»:

Օգտվելով իր դատավարական իրավունքից՝ Լուսինե Աշուղյանը բացարկ է հայտնել Ալավերդու դատավորին՝ խնդրելով չեղյալ հայտարարել «օրենքի խախտմամբ նշանակված դատաքննությունը եւ գործը քննել Վանաձորի դատարանում: Այս մասին բարձրաձայնելուց հետո նշանակված դատական նիստը հետաձգվեց եւ վերանշանակվեց Վանաձորի ստատվայրում՝ չնայած գործը շարունակում է մնալ Ալավերդու դատավոր Ս. Բաղդասարյանի վարույթում:

Կողմերի փաստաբաններն ու հալափաստաբանները

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի ստատվայրում այս գործով դատավարությունը սկսվել է սեպտեմբերի 7-ին:

Դատարանում ռեկտոր Գ. Խաչատրյանի կողմից որպես լիազորված անձ հանդես է գալիս Լեռնապատի համայնքապետ Վանո Եղիազարյանը, ով աշխատում է Վանաձորի մանկավարժական ինստիտուտի գրականության ամբիոնում որպես դոցենտ:

Որպես պատասխանող իր դիրքորոշումը դատարանին հայտնելով՝ Լուսինե Աշուղյանը նշել է, որ չի գրպարտել ռեկտոր Խաչատրյանին: Հեռուստաթերից ակնարկել է նրա արած օրենսդրական խախտումների մասին եւ հայտնել իրականությունից բխող իր կարծիքը: Ապա դատարանին ներ-



կայացրեց իր խոսքերը հիմնավորող ապացույցներ: Իր մատնանշած՝ ռեկտորի կողմից զանգվածային օրինախախտումների վերաբերյալ նախկին դասախոսը վկայակոչեց բուհի աշխատողների հետ ռեկտորի կնքած աշխատանքային պայմանագրերը:

Ըստ նրա՝ դասախոսական պաշտոնը ընտրովի է, դասախոսը մրցույթով ընտրվում է 5 տարի ժամկետով, որը լրանալուց հետո այդ պաշտոնի համար պետք է հայտարարվի նոր մրցույթ: Այնինչ, ըստ նրա, բուհում «չգրված օրենք» է պայմանագրի ժամկետը լրանալուց հետո մրցույթ չհայտարարելն ու աշխատողների հետ 1 տարով պայմանագրեր կնքելը:

Անվանակոչելով բուհի մի շարք դասախոսների եւ ղեկավար պաշտոնյաների՝ պատասխանողը միջնորդեց դատարան բերել այն աշխատակիցների գործերը, որոնք 5 տարուց ավելի աշխատում են բուհում, սակայն ընտրված չեն մրցույթով, որոնց հետ պայմանագիր է կնքվել ոչ ընտրված ժամկետով, որոնց պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն երկարաձգվել է համաձայնագրերով, լաբորանտավարչական աշխատողների գործերը, որոնց հետ նույնպես պայմանագիր է կնքվել որոշակի ժամկետով, ինչպես նաեւ համատեղությամբ աշխատողների, այդ թվում՝ հայցվորի ներկայացուցիչ Վանո Եղիազարյանի փաստաթղթերը:

«Յետքի» ներկայացուցիչը չառարկեց ներկայացված միջնորդության դեմ: Դատարանը բավարարեց պատասխանողի՝ նշված փաստաթղթերը դատարան բերելու միջնորդությունը՝ նշելով, որ դրանց վերաբերելիությունը գործին դատարանը կքննարկի այդ փաստաթղթերը հետազոտելուց հետո:

Լուսինե Աշուղյանի կարծիքով՝ այդ պայմանագրերը աշխատողներին կախման մեջ են գցում ռեկտորից: Ստաժելով, որ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո կարող են դրսում հայտնվել, նրանք ամեն կերպ փորձում են սիրաշահել ռեկտորին՝ իրենց տեղը չկորցնելու համար:

Նախկին դասախոսի ասելով՝ այն բանից հետո, երբ օրենսդրական խախտումների մասին բարձրաձայնել է ՀՀ վերադաս ատյաններին, հանդես է եկել մամուլով, եւ ապա իր հայտարարությունների հիման վրա հանձնաժողով է եկել նախարարությունից՝ բուհում ստուգումներ կատարելու: Ռեկտորը կանչել է իրեն եւ սպառնացել, որ եթե մի անգամ էլ համարձակվի գրել՝ նա իրեն վարչական պատասխանատվության կենթարկի կամ դատական գործ կսկսի իր դեմ: Ըստ Լուսինե Աշուղյանի՝ իր եւ ռեկտորի լարված փոխհարաբերությունների ընթացքում բուհի աշխատակիցները փորձել են հաճոյանալ ռեկտորին, նույնիսկ՝ «օրինախախտումների գնով»:

Նա վկայակոչեց ռեկտորին «քծնելու, սիրաշահելու» դեպքեր՝ հիմնավորելով նաեւ իր ասած «զարտուղի այլեայլ միջոցներ» արտասայտությունը: Մատնանշելով հայցվորի ներկայացուցչին՝ ասաց, որ ռեկտորին քծնողներից մեկն էլ Վանո Եղիազարյանն է, ով «Առավոտ» օրաթերթում իր տպագրած հոդվածից հետո ստորագրություններ է հավաքել իր դեմ մի գրության տակ, որում փորձել են խեղաթուրված կերպով ներկայացնել իր եւ ամբիոնի վարիչի փոխհարաբերությունները: Այն դեպքում, երբ Վանո Եղիազարյանը ամբիոնի անդամ չէր եւ չէր կարող իմանալ՝ ինչ է կատարվում ամբիոնում: Այդ ձեռով նաեւ նշված գրությունը ստորագրել են ամբիոնների եւ բաժինների վարիչներ, ովքեր տեղյակ չէին իրենց ամբիոնի անցուղարձից: Բայց, չնայած դրան, ստորագրել են:

Հայցվորի ներկայացուցիչ Վանո Եղիազարյանը պատասխանեց, որ «Առավոտ» օրաթերթի հոդվածից հետո ինքն անձամբ մտադիր էր դատի տալ Լուսինե Աշուղյանին այն արտահայտության համար, որ իրենք բժնում, սիրաշահում են նեկտորին, սակայն նեկտորի խնդրանքով չի դիմել դատարան: Ինչ վերաբերում է ստորագրահավաքին, ապա բանասիրականի դեկանն ու ինքը որոշել էին Լուսինե Աշուղյանի հոդվածին պատասխան գրել եւ ստորագրվաք էին կազմակերպել՝ թերթին ուղարկելու համար: Բայց պատասխանն այդպես էլ չի տպագրվել: Ասաց, որ ինքը բժնանքից չէ, որ հայտնվել է դատարանում, նեկտորն իր մտերիմ ընկերն է ու բարեկամը: Վերջին տարիներին ինքը նաեւ նեկտորի տղայի քավորն է:

«Յեռքի» ներկայացուցչի հարցին՝ ի՞նքն է առաջարկել նեկտորին՝ դատարանում որպես նրա ներկայացուցիչ հանդես գալ, թե՞ նեկտորն է դիմել իրեն այդ հարցով, Վանո Եղիազարյանը պատասխանեց, որ ինքն անձամբ է առաջարկել նեկտորին նրա արժանապատվությունը պաշտպանել:

Որպես նեկտորին «քծնելու, սիրաշահելու» արտահայտություն՝ Լուսինե Աշուղյանը փաստարկեց հետեւյալ երկու հանգամանքը: Հայոց լեզվի ամբիոնի անդամները դիմել էին նեկտորին՝ իր պատճառով խաթարված՝ ամբիոնի նախկին առողջ մթնոլորտը վերականգնելու խնդրանքով: Ռեկտորն այդ դիմումը մակագրել էր բանասիրական ֆակուլտետի դեկանին, որպեսզի իր հարցը քննարկվի ուսումնամեթոդական խորհրդի նիստում: Ըստ ներբուհական կանոնակարգի՝ ֆակուլտետային խորհուրդը կամ ուսումնամեթոդական խորհուրդը իրավասություն չունի վարքագծի վերաբերյալ հարց քննարկելու:

«Խորհրդի անդամները՝ դեկաններ, ամբիոնի վարիչներ եւ ուսգծով պրոռեկտորը, նեկտորին հաճոյանալու համար օրինախախտում են կատարել՝ խախտելով իրենց կողմից ընդունված կանոնադրությունը: Նրանք շատ լավ իմացել են, որ նման իրավասություն չունեն: Այսինքն՝ օրենսդրական խախտման ձեռով էին պատրաստ նեկտորին սիրաշահել», - հիմնավորեց Լուսինե Աշուղյանը: Վերջինս նաեւ հիշատակեց իրեն՝ հայոց լեզվի ամբիոնի կողմից տրված նկատողության մասին, որը նույնպես օրենքի խախտում է: Լուսինե Աշուղյանի բացակայությամբ նրա հարցը քննարկվել էր ամբիոնի նիստում, եւ նկատողություն էր հայտարարվել:

Հայցվորի ներկայացուցիչը չժխտեց, որ հայոց լեզվի ամբիոնի վարիչը ապօրինի կերպով է նկատողություն հայտարարել Լուսինե Աշուղյանին՝ դրա իրավունքը չունենալով: Սակայն մյուս նիստի վերաբերյալ ասաց, որ նեկտորը ճիշտ է վարվել՝ ամբիոնի անդամների դիմումը մակագրելով ֆակուլտետի դեկանին, ում ֆակուլտետում խնդիրներ են առաջացել: Մնացածը վերաբերում է ֆակուլտետի դեկանի իրավասություններին:

Լ. Աշուղյանը պնդեց, որ կա ֆակուլտետի դեկանին նեկտորի մակագրած դիմում՝ իր հարցը բանասիրական ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստում քննարկելու վերաբերյալ: Եվ միջնորդեց նշված փաստաթուղթը բերել դատարան: Դատարանը բավարարեց Լուսինե Աշուղյանի միջնորդությունը:



Եթե «Յրապարակը» չկատարեր ԴԱՅԿ-ի որոշումը, ապա քրեական գործ կհարուցվեր

ԴԱՅԿ ծառայության աշխատակիցներից մեկը սեպտեմբերի 7-ին այցելել է «Յրապարակ» օրաթերթի խմբագրություն եւ հայտարարել, թե 3 մլն դրամի չափով արգելանք է դրվում «Յրապարակ» օրաթերթ ՍՊԸ-ին պատկանող գույքի վրա, ինչպես նաեւ «արգելել «Յրապարակ» օրաթերթը ՍՊ ընկերությանը սույն քաղաքացիական գործով առկա վեճի հետ կապված որեւէ տեղեկատվության տարածումը՝ մինչեւ գործով վերջնական ակտ կայացնելը»:

Խմբագրությունում նույնիսկ չգիտեին, թե խոսքը որ քաղաքացիական գործի մասին է, ով է իրենց դատի տվել, ինչի համար եւ ինչ է պահանջում:

Օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը «Յետքի» հետ զրույցում ասաց, որ դատարանից չի ստացել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Պետրոսյանի որոշումը՝ գույքի վրա արգելանք դնելու եւ տեղեկատվություն տարածելու իրավունքից զրկելու մասին: «Նախ, մենք չգիտենք, թե ինչ վեճի մասին է խոսքը: Հայցադիմումը չեմ ստացել, դատավորի որոշումը չեմ ստացել, միանգամից մտնում է ԴԱՅԿ կատարողը եւ ասում, որ ձեր հետ կապված բան եմ բերել, պիտի ստորագրեք եւ արգելանք դնեմ ձեր գույքի եւ իրավունքի վրա», - ասում է Արմինե Օհանյանը:

Խմբագրությունում միայն ենթադրում էին, թե ով կարող է իրենց դատի տալ: Խոսքը Դատական դեպարտամենտի ղեկավար Միսակ Մարտիրոսյանի մասին է: Օրաթերթը հրապարակել էր մի նամակ, ըստ որի՝ դատական դեպարտամենտի մի խումբ աշխատակիցներ գրել են, թե դեպարտամենտում ինչ է կատարվում, եւ բողոքում են Կճռաբեկ դատարանի նախագահից ու դեպարտամենտի ղեկավարից: Այդ նամակը ուղարկվել է դատախազություն եւ արդարադատության նախարարություն: Գլխավոր դատախազն էլ այն մակագրել եւ ուղարկել է ոստիկանության կազմակերպված հանցագործության դեմ պայքարի 6-րդ վարչություն, ջանի որ նամակի բովանդակության մեջ առկա են եղել հանցակազմի տարրեր, եւ հիմա քննություն է ընթանում: «Յրապարակի» ձեռքում է հայտնվել այդ նամակը, եւ այն ներկայացրել են ընթերցողներին:

Նամակում մասնավորապես ասված է. «Դատական դեպարտամենտի ղեկավար Միսակ Մարտիրոսյանի ղեկավարությամբ եւ Արման

Մկրտումյանի բարձր հովանու ներքո համակարգը գնում է վերջնական կործանման: Այն, ինչ այսօր կատարվում է Դատական դեպարտամենտում, ավելի շատ նման է տոտալիտար ռեժիմով աշխատող մի կառույցի, որն անմիջականորեն ղեկավարում է նախկինում դատախազությունից կաշառակերության համար հեռացված Միսակ Մարտիրոսյանը: Մարտիրոսյանի ղեկավարության ժամանակ դատական ծառայողները դեպարտամենտի անունը դրեցին «միսակնոց», քանի որ սույն հիմնարկում ամեն ինչ միայն ինքն է որոշում»,- ասվում է «Հրապարակ»-ում հրապարակված նամակում:


«Հարցնում եմ ԴԱՀԿ աշխատակցին, թե ի՞նչ է նշանակում տեղեկատվության տարածման արգելքը, ասում է՝ դե հողվածներ չպիտի տպեք: Հարցնում եմ՝ իսկ կարո՞ղ եմ ասուլիս, հարցազրույց տալ, պատասխանում է՝ երեկ չէ: Իհարկե, ճիշտ է ասում, որովհետեւ դատավորն անորոշ է որոշումը գրել,-ասում է «Հրապարակի» խմբագիրը եւ ավելացնում,- ուրեմն այդ ամբողջ համակարգում մի գրագետ մարդ չկա՞ր, որ դատավորին ասեր՝ Սահմանադրությանը դեմ բան ես անում: Տեղեկատվության տարածման իրավունքը Սահմանադրությունն է որոշում, ոչ թե հարգելի դատավորը»:

Արմինե Օհանյանը ԴԱՀԿ-ի աշխատակցից նաեւ հետաքրքրվել է, թե ի՞նչ է սպառնում իրեն, եթե որոշումը չկատարի: Վերջինս պատասխանել է, թե «ԴԱՀԿ-ի մասին» օրենքը փոխվել է, խստացվել է, եւ չկատարելու դեպքում քրեական գործ են հարուցում, որը նախատեսում է մինչեւ 2 տարվա ազատազրկում: «Պատկերացնո՞ւմ եք, եթե հիմա այդ թեմայի շուրջ մեկ կյուլօ տպեմ՝ կարող է քրեական գործ հարուցեն ու ինձ ազատագրկեն»:

Արմինե Օհանյանի ասելով՝ հայրը դատարան է ուղարկվել օգոստոսի 31-ին, դատարանը հայցն ընդունել է վարույթ եւ անմիջապես արգելանքի որոշում կայացրել: Հայցվոր կողմը չի սպասել, որ դատավորի որոշումը պաշտոնական ընթացակարգով հասնի ԴԱՀԿ-ին: Նա անմիջապես դիմել է դատարան, վերցրել է որոշումն ու տարել է ԴԱՀԿ: «Փոստային ծառայությունը դեռ չի հասցրել ինձ հայցադիմումը հասցնել, ԴԱՀԿ-ն արդեն կատարողական վարույթ է հարուցել»,-ասում է խմբագիրը:

Խմբագիրն ասաց, որ կատարելու է դատարանի որոշումը, քանի որ այն չկատարելու համար կամ պետք է թողնել այս երկրից գնալ, կամ էլ «բեսպրեդելի» մեջ գործել: «Լավ, ես վեճի հետ կապված չեմ խոսի, Դատական դեպարտամենտի, նրա ղեկավարի մասին կյուլօ չեմ գրի: Բայց հո ինձ չեն արգելել դատավորի ապօրինի որոշման մասին խոսել կամ քրեադատավարական խախտումների մասին չիրապարակել: Ի վերջո, ինձ են արգելել, հո բոլոր լրատվամիջոցներին չե՞ն արգելել, նրանք հրապարակելու են, չե՞: Իմ բերանը փակեցին, բա մնացած թերթերի՞նը: Դատավորը պետք է միանգամից որոշում կայացնեք, որ այս թեմայով մամուլին ընդհանրապես արգելում է հրապարակումներով հանդես գալ, միակ ձեռը դա կլինեք»:

«Հետքը» որոշում կայացրած դատավոր Կարինե Պետրոսյանից հետաքրքրվեց, թե ինչու է ԴԱՀԿ-ն վարույթ հարուցել առանց դատավորի որոշումը «Հրապարակին» ուղարկելու, եւ ինչու հայցադիմումը պա-



տասխանող կողմը չի ստացել, որ հասկանա, թե որն է վեճի առարկան: «Ընդամենը պետք է տիրապետել քաղաքացիական դատավարության 95-րդ հոդվածին, այլ հարցի չեմ պատասխանի: Իմ բացատրությունը տալիս եմ իմ որոշումներով, դրանից բացի այլ բան չեմ կարող ասել», - ասաց դատավոր Պետրոսյանն ու անջատեց հեռախոսը:

Դատավորի հիշատակած հոդվածը բոլորովին այլ բովանդակություն ունի եւ չի վերաբերում մեր հարցին: Նշված հոդվածը կարգավորում է, թե պատասխանողը ինչ ժամկետներում եւ կարգով պետք է հայցադիմումի պատասխան ներկայացնի: Զանի որ պատասխանողը հայցադիմում չի ստացել, դրան պատասխանելու մասին խոսելն ավելորդ է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր որոշումներում այլ ան է ասում

«Օրգերվերը եւ Գարդիանն» ընդեմ Միացյալ Թագավորության» գործով Եվրոպական դատարանը գտել է, որ նախնական արգելքների հետ կապված վտանգներն այնպիսին են, որ դրանք պետք է մասնակրկիտ ուսումնասիրության ենթարկվեն դատարանի կողմից, մասնավորապես մամուլի պարագայում, քանի որ նորությունները «շուտ փչացող ապրանք» են, եւ նույնիսկ շատ կարճ ժամանակահատվածով դրանց հրապարակումն ուշացնելը կարող է արժեզրկել նորությունը:

Եթե գույքը արգելանքի տակ դնելու դատարանի որոշումը միանշանակ ընկալելի է, ապա նույնը չի կարելի ասել տեղեկատվություն տարածելու արգելքի մասին: Յետեւաբար, այս առումով Կարինե Պետրոսյանի որոշումը՝ թերթին զրկել տեղեկատվություն տարածելու իրավունքից, շատ ըվդհանրական է եւ կարող է տարբեր կիրառություն ունենալ, ինչը, ի վերջո, կարող է խոչընդոտել խոսքի ազատության իրավունքի իրացմանը:

ՄԻԵԴ-ի մեկ այլ որոշումով էլ՝ «Սանդեյ Թայմս»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (1979, Application No. 6538/74), ասվում է, որ ՄԻԵԴ անդամ պետություններին վերապահվում է հայեցողության լուսանցք՝ որոշելու, թե արդյոք արտահայտվելու ազատության սահմանափակումներն անհրաժեշտ են: Այդ հայեցողության շրջանակը տարբեր է՝ կախված հետաալնդվող նպատակից. առավել լայն հայեցողություն է տրվում բարոյականության պաշտպանության համար անհրաժեշտ սահմանափակումների հարցում եւ ավելի քիչ՝ «դատական իշխանության հեղինակության»՝ շատ ավելի օբյեկտիվ հասկացության հարցում»:

Բացի այդ, ՄԻԵԴ-ը նշում է. «Դատական իշխանության հեղինակություն» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, այն, որ դատարաններն են հանդիսանում իրավունքների եւ պարտականությունների ճանաչման եւ դրանց վերաբերյալ վեճերի լուծման պատշաճ ֆորումը եւ որպես այդպիսին՝ ընկալվում հանրության կողմից: Ի լրումն սրա՝ լայն հանրությունը պետք է ունենա հարգանք եւ վստահություն այդ գործա-

ռույթն իրականացնելու՝ դատարանի կարողության նկատմամբ»:

ՄԻԵԴ-ը համարել է, որ արգելքը սահմանվում է հետեւյալ հիմքերով.

- *անփութության հարցը «նախորոշելով»՝ հողվածը կհանգեցնէր օրենքի գործընթացների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի կամ հանդես կգար որպես միջամտություն արդարադատության իրականացմանը,*
- *հողվածն այնպիսին էր, որ դրանով ընկերության շուրջ կծավալվէր հանրային խիստ նախապաշարված քննարկում գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում, իսկ նման քննարկման դեմ առարկությունն այն կլինէր, որ այն կխոչընդոտէր հայցվորների՝ դատարանին ապավինելու իրավունքի իրականացմանը,*
- *հողվածի պատճառով ընկերության վրա կգործադրվէր մեծ ճնշում եւ դատավարության ժամանակ քննվող հարցերի վերաբերյալ կանխակալ կարծիք կծեւավորվէր, իսկ արհամարհանքի մասին օրենքի իմաստը դատարան դիմելու գործում որեւէ միջամտության կանխումն է,*
- *մամուլի կողմից կանխակալ կարծիքի ձեւավորումն անխուսափելիորեն կհանգեցնէր կողմերի արծագանքներին, ինչի պատճառով կծեւավորվէր «թերթերի կողմից իրականացվող արդարադատության» վտանգը, ինչն անհամատեղելի է արդարադատության պատշաճ իրականացման հետ, եւ*
- *դատարանները պարտավոր են պաշտպանել կողմերին կանխակալ կարծիքի նախապաշարմունքներից, ինչը ներառում է պաշտպանություն մինչդատական հրապարակայնությունից:*

Նաշտության համաճայնություն

Լրագրողական հանրությունը մեծ աղմուկ բարձրացրեց այս գործի առնչությամբ, հատկապես՝ կապված դատարանի կիրառած հայցի ապահովման միջոցի կապակցությամբ, որով թերթին արգելվել էր մինչեւ դատարանի վճռի ուժի մեջ մտնելը տեղեկատվություն հաղորդել վեճի առարկայի մասին: Եվ մինչ բուն դատաքննությունը Միսակ Մարտիրոսյանի առաջարկով «Հրապարակը» հաշտության համաձայնության գնաց: Բանակցությունների արդյունքում համատեղ ուժերով կազմվեց եւ «Հրապարակ» թերթում տպագրվեց հետեւյալ տեքստը.

«Միսակ Մարտիրոսյանը եւ «Հրապարակ օրաթերթ» ՄՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմինե Օհանյանի, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԿԿ/1933/02/11 քաղաքացիական գործով ըստ հայցի Միսակ Մարտիրոսյանի ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՄՊԸ-ի՝ պատվի, արժանապատվության պաշտպանության եւ փոխհատուցման պահանջի մասին, հաշտությամբ ավարտելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածով՝ կնքե-



ցին սույն հաշտության համաձայնությունը հետեւյալի մասին.

1. Պատասխանող «Յրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն 2011 թվականի օգոստոսի 11-ի «Դատական դեպարտամենտը «Միսակնոց» եւ 2011 թվականի օգոստոսի 12-ի՝ «Դատական դեպարտամենտը՝ «Միսակնոց-2» վերնագրով հոդվածներում հրապարակել է ևս-մակ՝ ուղղված ՀՀ արդարադատության նախարարին եւ ՀՀ գլխավոր դատախազին: Այդ հոդվածում տեղ գտած բոլոր հայտարարությունները, որակումները, գնահատականները մեջ են բերվել նշված նամակից, որը հոդվածների տպագրությունից առաջ մուտքագրվել է ՀՀ արդարադատության նախարարության եւ ՀՀ գլխավոր դատախազության դիմումների եւ ևս-մակների բաժիններում, ապա հետագայում դարձել ՀՀ ոստիկանության 6-րդ վարչության քննության առարկա: «Յրապարակի» հետաքննության արդյունքում պարզվել է, որ նամակում նշված փաստական հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը, իսկ դրված միակ ստորագրությունը կեղծ է:
«Յրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ն ցավում է, որ դրսեւորել է շտապողականություն, որի արդյունքում նշված նամակում արված որոշ արտահայտություններ, որոնք տպագրվել են օրաթերթում, չեն համապատասխանել իրականությանը եւ արատավորել են հայցվորի՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Միսակ Մարտիրոսյանի պատիվն ու արժանապատվությունը՝ զրպարտել եւ վիրավորել են նրան:
2. Հայցվորը հրաժարվում է թիվ ԵԿԴ/1933/02/11 քաղաքացիական գործով պատասխանողի նկատմամբ իր նյութաիրավական եւ այլ պահանջներից:
3. Կողմերը սույն հաշտության համաձայնությունը ներկայացնում են դատարանին՝ այն հաստատելու եւ գործի վարույթը կարճելու միջնորդությամբ: Կողմերը հայտարարում են, որ տեղյակ են հաշտության համաձայնության հետ կապված դատավարական հետեւանքներին:

«Այս մի դատական վեճը կարելի է ավարտված համարել: Սակայն մենք շարունակում ենք «դատվել» Ռոբերտ Զոչարյանի, Մարգարիտա Խաչատրյանի եւ Պարույր Հայրիկյանի հետ: Իսկ առջեւում նախընտրական շրջան է, եւ կարծում եմ՝ դեռ շատերը չեն դիմանա այդ գայթակղությանը եւ մեզ դատի կտան»,- վեճի ավարտից հետո իր խմբագրականում գրել է գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը:

Նախկին տնօրենն ու որդին ընդդեմ «168 ժամ» թերթի

Գրանց 4 մլն դրամ են դաժանացում



Էջմիածնի թիվ 2 ավագ դպրոցի նախկին տնօրեն Սուսաննա Նազարյանը անչափահաս որդու հետ դատի է տվել «168 ժամ» թերթին: Տնօրենն ու որդին թերթից պահանջում են 4 մլն դրամի հատուցում:

Նախկին տնօրենը հայցադիմումով պահանջում է դատարանից «պարտավորեցնել «168 ժամ» ՍՊ ընկերությանը եւ լրագրող Մարինե Մարտիրոսյանին՝ «168 ժամ» թերթի միջոցով հերքել տեղեկատվությունն առ այն, որ ես հանդիսանում եմ դպրոցում բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ ստեղծող, աշակերտներին սեռական բնույթի վիրավորանքներ, հայիոյանքներ տվող տնօրինուհի: «168 ժամ» ՍՊԸ-ից եւ լրագրող Մարինե Մարտիրոսյանից համապարտության կարգով հոգուտ Սուսաննա Նազարյանի բռնազանձել 2մլն 33 դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցում»:

Որդին՝ թիվ 2 ավագ դպրոցի աշակերտ Տիգրան Տերտերյանը, եւս հայցադիմումը ներկայացրել է նույն պահանջով: Նա էլ իր հերթին պահանջում է, որ դատարանը պարտավորեցնի «168 ժամ» ՍՊ ընկերու-

թյանը եւ լրագրող Մ. Մարտիրոսյանին «168 ժամ» թերթի միջոցով հերքել տեղեկատվությունն առ այն, որ ես՝ Տիգրան Համլետի Տերտերյանս, հրդեհել եմ դպրոցի փաստաթղթային արխիվը: «168 ժամ» ՄԴԸ-ից եւ լրագրող Մ. Մարտիրոսյանից համապարտության կարգով հոգուտ Տիգրան Համլետի Տերտերյանի բռնազանձել 2մլն ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցում»:

Տիգրանը նաեւ պահանջել է հայցազնի չափով արգելանք դնել թերթին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա:

Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ նույն դպրոցում սովորող Ալբերտ Հարությունյանը լրատվամիջոցներին պատմեց, թե ինչպես է տնօրենը դպրոցում հայիոյում ու վիրավորում աշակերտներին:

ՉԼՄ-ների հրապարակումներից եւ ծնողների բողոքներից հետո նախարար Աշոտյանը տեսչական ստուգում իրականացրեց Էջմիածնի թիվ 2 ավագ դպրոցում: Հայտնաբերվեցին մի շարք ֆինանսական խախտումներ, եւ երկու նկատողությունից հետո Սուսաննա Նազարյանը հեռացվեց դպրոցից:

Նրանց երկու առանձին հայցերի դատալսումը սկսվեց սեպտեմբերի 26-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում:

Դատավորի հարցին, թե ինչն է հայցվորը դիտում որպես զրպարտություն, հայցվորի ներկայացուցիչ Գ. Գեւորգյանը պատասխանեց, որ հողվածում գետեղված արտահայտությունը, թե հայցվորը հանդիսանում է դպրոցում բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ ստեղծող, աշակերտներին սեռական բնույթի վիրավորանքներ, հայիոյանքներ տվող տնօրինուհի, զրպարտում է հայցվորի պատիվն ու արժանապատվությունը:

Դատասխանողի ներկայացուցիչ Ա. Հակոբյանը առարկեց հայցապահանջին՝ ավելացնելով, որ լրագրողն իր հողվածում նշել է իր տեղեկատվության աղբյուրները եւ պատրաստ է որպես վկա հրավիրել նրանց, ինչպես նաեւ դատարանին ներկայացրեց ձայնագրություն, որում առկա են վկաների պատմածները, որոնց հողվածի հեղինակը վկայակոչել է իր հողվածում:

Հողվածի հեղինակ Մ. Մարտիրոսյանն իր ելույթում ասաց, որ նախքան հողվածի հրապարակումը գնացել է դպրոց, զրուցել է տարբեր աշակերտների հետ՝ օրինակ բերելով Ալբերտ Հարությունյանին, ով բախում է ունեցել տնօրենի որդու հետ: Մ. Մարտիրոսյանն ավելացրեց նաեւ, որ իր հողվածից մեկ շաբաթ հետո քրեական գործ է հարուցվել սույն գործով, ինչպես նաեւ այն, որ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի 30.04.11թ. 124-Ա1 հրամանով Ս. Նազարյանը աշխատանքից ազատվել է:

Սուսաննա Նազարյանի ներկայացուցիչը միջնորդություն արեց, որ նիստը հետաձգվի՝ պատասխանողի ներկայացրած ապացույցները՝ ձայնագրությունները, ուսումնասիրելու համար:

Ս. Նազարյանի որդին՝ Տիգրան Տերտերյանը, եւս պահանջում է, որ դատարանը պարտավորեցնի «168 ժամ» թերթին եւ լրագրող Մ. Մարտիրոսյանին հերքել տեղեկատվությունն առ այն, որ ինքը հրդեհել է դպրոցի փաստաթղթային արխիվը, ինչպես նաեւ թերթից ու լրագրողից զրպարտության դիմաց հոգուտ իրեն բռնազանձել 2 մլն դրամ:

Լրատվամիջոցի ներկայացուցիչ Ա.Յակոբյանը դատարանին ներկայացրեց ձայնագրություն, որում պատմվում է դպրոցի փաստաթղթային արխիվի հրդեհման մասին, ինչպես նաև միջնորդեց՝ դատարան հրավիրել վկաներին:

Հայցվորն էլ միջնորդեց, որ նիստը հետաձգվի՝ ապացույցների ծանոթանալու համար, ինչպես նաև դատարանին խնդրեց վկաներին հրավիրել, միջնորդության քննարկումը հետաձգել մինչև հաջորդ նիստը:

Դատարանը բավարարեց հայցվորի միջնորդությունը եւ հերթական նիստի օր նշանակեց նոյեմբերի 15-ը:

Դատարանը կասեցրեց թերթի դեմ գործի ֆինուսյունը մինչև ֆգործի ավարտը

Նոյեմբերի 15-ի նիստին «168 ժամ» թերթի ներկայացուցիչ Ա. Յակոբյանը դատարանին միջնորդեց՝ կասեցնել գործի վարույթը մինչև քրեական գործի ավարտը: Նշենք, որ թերթի եւ լրագրողի հրապակումների հիման վրա հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունն առայժմ չի ավարտվել: Ա. Յակոբյանը գործը կասեցնելու համար ներկայացրեց մեկ այլ միջնորդություն եւս: Խոսքը օմբուդսմենի՝ ՍԴ ներկայացրած դիմումի մասին է, որը վերաբերում է ՀՀ քաղ.օր.-ի 1087.1-րդ հոդվածի (գրպարտության եւ վիրավորանքի մասին) որոշ դրույթների հակասահմանադրականությանը: Հայցվորի ներկայացուցիչ Գ. Գեորգյանը առարկեց միջնորդություններին, սակայն դատավոր Ա. Մելքումյանը առաջին միջնորդությունը բավարարեց եւ գործի վարույթը կասեցրեց մինչև քրգործի նախաքննության ավարտը: Հենց այս պատճառով էլ դատարանը երկրորդ միջնորդության վերաբերյալ դիրքորոշում չհայտնեց:

Նույն դատավոր Ա. Մելքումյանի վարույթում է գտնվում նաև Ս. Նազարյանի անչափահաս որդու՝ Տիգրան Տերտերյանի հայցն ընդդեմ նույն թերթի եւ լրագրողի: Պատասխանողի ներկայացուցիչ Ա. Յակոբյանը այս գործով եւս միջնորդեց՝ կասեցնել գործի քննությունը ՍԴ-ում քննվող դիմումի կապակցությամբ: Դատարանը, սակայն, ոչ թե կասեցրեց, այլ հետաձգեց քննությունը մինչև նոյեմբերի 30-ը:

Դեկտեմբերի 8-ին այս գործով տեղի ունեցած նիստում լսվեց լրագրող Մարինե Մարտիրոսյանի կատարած ձայնագրությունը, որտեղ էջմիածնի բնակիչ Սիրեն Եղիազարյանը լրագրողին հայտնում է Սուսաննա Նազարյանի որդու կողմից դպրոցի փաստաթղթային արխիվի հրդեհման մասին: Պատասխանող կողմը միջնորդեց Ս. Եղիազարյանին եւ եւս 3 անձանց դատակոչել որպես վկա: Սակայն դատարանը բավարար համարեց մեկ վկայի ցուցմունքը լսելը, որը տեղի կունենա դատաքննության փուլում՝ հունվարի 24-ին:




«Յրապարակը»՝ դարձյալ պատասխանողի կարգավիճակում

ամսագիր թվային և բջջային աշխարհի մասին

Հայրիկյանն էլ է փող ուզում

30/11/2011 | **ՍՈՍԻԱԼԻՆԵՍԻՆ**
 28/10/2011 | ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Կենտրոն եւ Նոր-Աստվածաբանական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Սուբոյանի նախագահությամբ երեկ կայացել է «Պարույր Հայրիկյանն ընդդեմ կոմունիստներ Պետրոսյանի, Արթուր Գեղամյանի, Արթուր Գեղամյանի, Արթուր Գեղամյանի եւ «Յրապարակ» օրաթերթի» դատական ամսացին նկատելի էր իր մտաբերության ամբողջականությամբ, որ մտաբերության ամբողջականությամբ մեծ թեթևությամբ էր

Orange ամսական բաժանորդագրություններ

ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

WELCOME TO EUROPE. Բարի գալուտ եվրոպայից հարավային Երևանի մասնաճյուղում սկսվում է 977 թվականից, երբ Մելիք Առաքելը կնքեց յախից հետո

տեղափոխվում է այստեղ, կրակոմյան հողատարածքները հասնում է...

2011 թ. սեպտեմբերի 23-ին «Յրապարակը» հայցադիմում է ստացել, որով Պարույր Հայրիկյան-կոմունիստներ դատական վեճում ճանաչվել է պատասխանող կողմ:

Հուլիս ամսին թերթի էջերում բանավեճ էր ծավալվել կոմունիստներ Գեղամ Գալստյանի եւ Նորիկ Պետրոսյանի ու Պարույր Հայրիկյանի միջև: Կոմունիստներն իրենց վրդովմունքն էին հայտնել հունիսի 12-ին «Հայոց հարց» հաղորդաշարի ժամանակ Ստեփան Շահումյանի մասին ԱԿՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանի հնչեցրած գնահատականների վերաբերյալ: Նրանց «Չնչին, ինչպես Արարատին նետած քար» վերտառությամբ հողվածին հաջորդել էր Պարույր Հայրիկյանի պատասխանը՝ «Հայիոյելը թուլութեան խոստովանութիւն է» հողվածով: Հայրիկյանի պատասխանին էլ հաջորդել էր կոմունիստների պատասխան հողվածը՝ «Աղվեսը՝ հավերի պահապան...»:

Այդ հրապարակային բանավեճն ավարտվել էր Հայրիկյանի «Ղատի տա՞լ, թե՞ չտալ. այս է ինդիորը» հողվածով: Կոմունիստները դարձյալ պատասխան են ներկայացրել, սակայն խմբագրությունը հրաժարվել է այն տպագրել՝ համարելով, որ վեճի թեման սպառված է, եւ կողմերի արտահայտվելու հավասարությունն իրենք ապահովել են:

Այդուհանդերձ, Պ. Հայրիկյանը որոշել է դատի տալ իրեն «գրպարտողներին ու վիրավորողներին», այդ թվում եւ թերթին: Ըստ հայցադիմումի՝ հայցվորը խնդրում է՝ «Հրապարակին» պարտավորեցնել «հերքել Հայրիկյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորող տեղեկությունները», ինչպես նաեւ «հրապարակել սույն գործով դատարանի վճռի եզրափակիչ մասը»: Գումարի պահանջ հայցվորը չի ներկայացրել: Հայցադիմումում մի շարք արտահայտություններ են առանձնացված, որոնք, ըստ հայցվորի, ներկայացուցիչ, փաստաբան Լեւոն Բաղդասարյանի՝ վիրավորում են Հայրիկյանի պատիվն ու արժանապատվությունը:

Տարօրինակորեն, ինչպես հայտնել է «Հրապարակը», Պ. Հայրիկյանը միայն խմբագրության աշխատակցի գանգից է տեղեկացել, որ դատական գործընթաց է սկսվել, եւ շատ զարմացել է, որ «Հրապարակը» եւս ճանաչվել է պատասխանող կողմ: «Ես կարծում էի՝ այդ գործը սառել է: Ժամանակին երաշխավորագիր տվել եմ «Լեւ Գրուպ»-ի փաստաբանին, եւ նա պետք է զբաղվեր գործով: Փաստորեն, իմ ներկայացուցիչն, այնուամենայնիվ, ընթացք է տվել գործին,- «Հրապարակին» ասել է Հայրիկյանը եւ ավելացրել,- բայց ձեզ հետ ես որեւէ խնդիր չունեմ: Եթե հանկարծ, Աստված ոչ անի, ձեր դեմ որեւէ բան լինի, համոզված եղեք, որ ես կգամ դատարան եւ կասեմ, որ ձեր դեմ ես ոչինչ չունեմ եւ չեմ կարող ունենալ: Դա երեւի փաստաբանական աշխատանք է»:

Հայրիկյանը հրաժարվեց օրաթերթի դեմ ներկայացրած հայցից

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Մուրջյանի նախագահությամբ, հոկտեմբերի 28-ին կայացավ «Պարույր Հայրիկյանն ընդդեմ կոմունիստներ Գեղամ Գալստյանի, Նորիկ Պետրոսյանի եւ «Հրապարակ» օրաթերթի» դատական առաջին նիստը:


Հայցվորի ներկայացուցիչ Լեւոն Բաղդասարյանը 3 միլիոն դրամի պահանջ ներկայացրեց պատասխանողներ Գեղամ Գալստյանին եւ Նորիկ Պետրոսյանին: Թերթի նկատմամբ դրամական պահանջ չներկայացվեց: Սակայն դատական նիստը հետաձգվեց, քանի որ պատասխանողը պետք է ծանոթանար նոր հայցադիմումին եւ պատասխան ներկայացներ: Իսկ հաջորդ նիստը՝ նշանակված նոյեմբերի 14-ին, հետաձգվեց՝ մինչեւ Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման կայացումը:

Դեկտեմբերի 6-ին նշանակված դատական նիստի մասին «Հրապարակին» պատշաճ տեղեկացնելու ծանուցում փոստից չէր ստացվել, ինչի պատճառով դատավոր Ալեքսեյ Սուրջյանը նիստը պետք է հետաձգեր, սակայն Հայրիկյանի ներկայացուցիչ Լեւոն Բաղդասարյանը դատարանին միջնորդեց հրաժարվել գործով երրորդ պատասխանող «Հրապարակ» օրաթերթի դեմ ներկայացրած հայցից: Պատասխանողները չառարկեցին, եւ դատարանը բավարարեց փաստաբանի միջնորդությունը:



Պատկերասրահի տնօրենն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանության»

Գարձյալ դահանգվում է
առաջնաժողովն փոխհասուցում



Փարավոն Միրզոյան

2011 թ. ապրիլի 9-ին «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթը «Ճանաչել Փարավոնին» հրապարակման ներքո անդրադարձել էր Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանին, որը Հայաստանի գեղարվեստական ակադեմիայի 65-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառման ժամանակ «վիրավորվել է, որ իրեն պարգևատրում են «ընդամենը» շնորհակալագրով եւ «Արվեստի վաստակավոր գործչին շնորհակալագիր չեն տալիս» բառերն ասելով՝ ցուցադրաբար հրաժարվել է փարավոնին ոչ վայել պարգևը վերցնել կրթության նախարար Արմեն Աշոտյանի ձեռքից»:

Ապա թերթը շարունակել է զարգացնել պատկերասրահի տնօրենի գործունեության թեման՝ օգտվելով նախկինում Փ. Միրզոյանի գործունեության մասին այլ լրատվամիջոցների հրապարակումներից: Հրապարակումը պատրաստելիս «Չորրորդ ինքնիշխանությունը», մասնա-

վորապես, հղում է արել «Յետք» թերթի 2010 թ. նոյեմբերի 8-ի մի հոդվածի, որտեղ արվեստագետ Սերգեյ Գասպարյանը մեղադրում է Միրզոյանին Ազգային պատկերասրահին ի պահ տրված հավաքածուից 410 նմուշ վաճառելու մեջ: «Յետքն» այս մեղադրանքի վերաբերյալ իր տեսակետը հայտնելու հնարավորություն էր տվել նաև Փ. Միրզոյանին:

Արտատպելով յուրացումների մասին Գասպարյանի պնդումները՝ «Զորրորդ ինքնիշխանությունը» երգիծանքով եզրակացրել է, որ «...գուցե կրթության եւ գիտության նախարարը ծերունագարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու եւ վաճառելու գործում ունեցած վաստակի եւ ավանդի համար է որոշել Փարավոնին այսպես շնորհակալագիր տալ»:

Կարճ ժամանակ անց Փարավոն Միրզոյանի ներկայացուցիչներ Սիմոն Բաբայանի եւ Արսեն Յարությունյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ընդդեմ պատասխանողներ «Զորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի հիմնադիր եւ հրատարակիչ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի եւ Սերգեյ Գասպարյանի, որով խնդրվել է պարտավորեցնել պատասխանողներին՝ հերքել հայցվորին արատավորող տեղեկությունները, ինչպես նաև պատասխանողներից համապարտության կարգով հոգուտ հայցվորի բռնագանձել որպես փոխհատուցում զրպարտության համար՝ 2.000.000 /երկու միլիոն/ ՅՅ դրամ, վիրավորանքի համար՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՅՅ դրամ, խախտված իրավունքների պաշտպանության համար վճարված փաստաբանի վարձատրության գումար՝ 300.000 ՅՅ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի հատուցում՝ 60.000 ՅՅ դրամ:

Ըստ հայցվորի՝ հրապարակման մեջ տեղ գտած հետեւյալ արտահայտություններն են հանդիսանում իր հասցեին ուղղված զրպարտություն կամ վիրավորանք.

1. «*Բավական է հիշել «Յայապակի» ՓԲԸ-ից ապակեգործ Սերգեյ Գասպարյանի՝ Ազգային պատկերասրահին ի պահ տրված մոտ 800 աշխատանքների յուրացման եւ վաճառելու պատմությունը*»:
2. «*Իսկապես, գուցե կրթության եւ գիտության նախարարը ծերունագարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու եւ վաճառելու գործում ունեցած վաստակի եւ ավանդի համար է որոշել Փարավոնին այսպես շնորհակալագիր տալ*»:
3. «*Բայց պետք է խոստովանել, որ անգամ ամեն ինչ տեսած հայ հասարակության համար է աննախադեպ արվեստագետի կողմից արվեստագետին օրը ցերեկով անպատիժ կողոպտելը, եւ Փարավոնը բոլոր հիմքերն ունե՞ր փարավոնավայել պարզեւ ակնկալելու*»:
4. «*Գասպարյանը բաց նամակով դիմել էր բոլոր հնարավոր ատյաններին՝ Փարավոնին մեղադրելով իր ստեղծագործությունների ցուցադրությունը միտումնավոր ձգձգելու, դրանց կեսը յուրացնելու եւ «Գլաս ուրլոյ քամիղնի» ընկերության սեփականատեր Ա. Քոչարյանին վաճառելու մեջ*»:



5. «Բաց նամակներից մեկում Գասպարյանը Փարավոնի մասին գրել է. «Միրզոյանը հոշոտել, թալանել է թանգարանը... Ես նրա պորտրետը նկարելու եմ ու վրան գրելու եմ՝ աշխարհի ամենամեծ սրիկան...»»:



Ձախից՝ Շողեր Մաթեոսյան, Գոհար Վեգիրյան

«Չորրորդ Ինքնիշխանությունը» հայցադիմումի պատասխանում նշել է, որ հայցվոր Փարավոն Միրզոյանի դիրքորոշումը եւ պահանջն, ընդհանրապես, հակասում են մի շարք միջազգային, ներպետական իրավական ակտերի պահանջներին եւ ՄԻԵԴ-ի վճիռներում եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներին: «Հոդվածում հղում է պարունակվում «Յետք» ինտերնետային լրատվական միջոցին եւ այդ նույն լրատվամիջոցում հրապարակված Սերգեյ Գասպարյանի հարցազրույցներին, ավելին, դրանից կատարված են բառացի մեջբերումներ («Յետք» լրատվական կայքի 08.11.2010թ., 20.12.2010թ. հրապարակված հոդվածներ): Վերոհիշյալ լրատվամիջոցում այդ հոդվածների հրապարակումից հետո հայցվորը, հավանաբար դրանք զրպարտություն եւ վիրավորանք չհամարելով, չի դիմել հերքում կամ պատասխան հրապարակելու պահանջով, եւ այդ փաստը հաշվի առնելով՝ պատասխանողն իրավունք է ունեցել համարելու, որ այդ տեղեկություններն իրավացի են եւ միանգամայն օրինականորեն օգտագործել է դրանք իր հոդվածում՝ հղում կատարելով տեղեկատվության աղբյուրի վրա եւ միաժամանակ անելով իր գնահատողական դատողությունները, որոնք ապացուցման կարիք չունեն», - հայցին իր առարկությունը հիմնավորել է «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ն: Նշելով, որ հայցն ակնհայտ անհիմն է՝ պատասխանողը խնդրել է դատարանին այն մերժել ամբողջությամբ:

Գործով դատական ամառչին նիստը տեղի է ունեցել հոկտեմբերի 14-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Միրզոյանի փաստաբան Սիմոն Բաբայանը դատարանին տեղեկացրել է, թե ինքը մեկնում է գործուղման եւ խնդրել է հետաձգել դատական նիստը: Դատարանն ի գիտություն եւ ընդունել փաստաբանի ծանուցումը եւ անժամկետ հետաձգել է դատավարությունը:

Գործով դատական ամառչին նիստը տեղի է ունեցել հոկտեմբերի 14-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Միրզոյանի փաստաբան Սիմոն Բաբայանը դատարանին տեղեկացրել է, թե ինքը մեկնում է գործուղման եւ խնդրել է հետաձգել դատական նիստը: Դատարանն ի գիտություն եւ ընդունել փաստաբանի ծանուցումը եւ անժամկետ հետաձգել է դատավարությունը:

Նամակագիրը հրաժարվում է Գամակից

Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ
«Ժողովուրդ» օրաթերթի



2011 թ. հոկտեմբերի 24-ին Երեւանի Կենտրոն եւ

Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ Գուրգեն Աղաջանյանի՝ ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի հայցի քննության նախնական դատական նիստը:

Ջաղաքացի Գուրգեն Աղաջանյանը պահանջում է հրապարակալորեն հերքել «գրպարտություն համարվող փաստացի տվյալները լրատվության նույն միջոցով», «գրպարտության համար փոխհատուցում վճարել եւ հատուցել վնասները»: Գուրգեն Աղաջանյանը վիրավորվել է ԶԳ պետգույքի կառավարման վարչության նախկին պետ Կարինե Կիրակոսյանի եւ նույն վարչության պետի տեղակալ Աշոտ Մարկոսյանի մասին թերթի հրապարակումից եւ պահանջում է փոխհատուցում՝ 804 հազար դրամի չափով:

Նշված հրապարակման մեջ «Ժողովուրդ»-ը մեղքերումներ է արել խմբագրությանը հասցեագրված՝ Գուրգեն Աղաջանյանի անունից ստացված նամակից, որտեղ ԶԳ պետգույքի կառավարման վարչության նախկին պետ, Հանրապետական կուսակցության անդամ Կարի-



21 Մ-ն
եւ լրագրողները
ՊԱՏԱՐԱՆՈՒՄ
143

նե Կիրակոսյանին եւ պետի ներկայիս տեղակալ Աշոտ Մարկոսյանին մեղադրանքներ էին ուղղվել:

Ավելի ուշ խմբագրություն է այցելել Գուրգեն Աղաջանայնը, որի անունից օրաթերթը նամակ էր ստացել եւ հրապարակել: Գ. Աղաջանայնը պնդել է, թե ինքը չէ նամակի հեղինակը: Խմբագրությունում Աղաջանյանին ցույց են տվել «Հայփոստ»-ի միջոցով խմբագրությանն ուղարկված նամակը (նամակի հետադարձ հասցեն Պետգույքի կառավարման վարչությանն է), վերջինս պատճենահանել է նամակն ու ծրարը եւ հեռացել: Հաջորդ օրը Աղաջանյանը խմբագրություն է ներկայացրել մի հերքման տեքստ, որը օրաթերթը չի հրապարակել, քանի որ, ըստ «Ժողովուրդի», այն իրականում հերքում չէր, այլ գովեստի խոսքեր՝ իր հետ խմբագրություն այցելած Ա. Մարկոսյանի հասցեին, տեքստն անհետեթ էր, հրապարակված Նյութի հետ որեւէ առնչություն չուներ:

Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, Գուրգեն Աղաջանյանը «վիրավորվել» է հետեւյալ արտահայտություններից. «Կարինեն Աբովյան փողոցի իր բնակարանը ստացել է որպես կաշառք», «7 տարի դեկավարելով վարչությունը՝ իր տեղակալ, «գիտնական», կաշառակեր Աշոտ Մարկոսյանի հետ միասին ուղղակի շահեցին պետական ունեցվածքի մի զգալի չափաքանակ», «Կ. Կիրակոսյանն իրեն այդ ոլորտում ավելի ապահով զգալու համար եւ պետգույքի մի զգալի մասը յուրացնելու նպատակով աճուրդի կենտրոնի տնօրեն է նշանակել իր քեռու տղային՝ Մարտին Զալաշյանին, ով նույնպես կեղծիքների մեծ վարպետ է...»:

Հատկանշական է, որ նույն Նյութում «Ժողովուրդը» ներկայացրել էր նաեւ Կարինե Կիրակոսյանի եւ վարչության ներկայիս պետ Արման Սահակյանի կարծիքները:

Երրորդ կողմի՝ Կարինե Կիրակոսյանի եւ Աշոտ Մարկոսյանի, ինչպես նաեւ հայցին բերված պատասխանի ծանուցման բացակայության պատճառով նիստը հետաձգվեց եւ հերթական նիստի օր նշանակվեց դեկտեմբերի 8-ը:

Գեղարքունիքի մարզպետը դատի է տվել «Ժողովուրդ» օրաթերթին



Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն իր անձի հանդեպ «տարածած զրպարտանքի համար» դատի է տվել «Ժողովուրդ» օրաթերթին: Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից «Ղեկընդի» հայտնեցին, որ օրաթերթի հոկտեմբերի 7-ի համարում տպագրված «ԲՀԿ-ական մարզպետը 3000 դոլար կաշառք է վերցրել» վերնագրով հոդվածը բացառապես զրպարտանք է եւ չի համապատասխանում իրականությանը:

Իսկ թերթը գրել էր, որ Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն իր վարորդի միջոցով 3000 ԱՄՆ դոլար գումար է վերցրել՝ մարզի Թթուջուր գյուղի դպրոցի պատմության ուսուցչին մրցութեամբ «հաղթանակ» պարգևատրելու համար: Այդ մասին թերթին ասել է մրցութի մյուս մասնակից Աննա Թորոսյանը:

«Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին մարզպետարանը որեւէ տեղեկություն չունի, բացառությամբ այն փաստի, որ տնօրենի 22.08.2011թ. N220 գրությամբ Գեղարքունիքի մարզպետին տեղեկացվել է, որ «Թթուջուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է պատմության ուսուցչի թափուր տեղ՝ 10 դասաժամով: Դրանից հետո դպրոցի տնօրենը որեւէ տեղեկատվություն չի ներկայացրել մարզպետին», - տեղեկացրել են մարզպետարանից:

«Ժողովուրդ» օրաթերթն իր հերթին հայտարարել է, թե տարօրինակ է, որ Նվեր Պողոսյանը որեւէ կերպ չի հերքում կաշառքի փաստը: ««Ժողովուրդ» օրաթերթի էլեկտրոնային փոստին ուղարկվել է հաղորդագրություն Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից, որով հայտարարվում է, թե «ԲՀԿ-ական մարզպետը 3000 դոլար կաշառք է վերցրել» վերնագրով հոդվածը բացառապես զրպարտանք է եւ չի համապատասխանում իրականությանը: Տեղեկացնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթում իրապարակված հոդվածը չունի այն վերնագիրը, որը նշված է հաղորդագրությունում:

21.11-ն
եւ կրագրողները

ՊԱՏԱՐԱՆ

145

Ու անհասկանալի է, թե ինչու է մարգպետը նույնիսկ այդտեղ ընդգծել «Բարգավաճ Չայաստան» կուսակցությանն իր անդամակցությունը:

Հարկ ենք համարում ավելացնել, որ «Ժողովուրդ»-ը հրապարակել է Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի բնակիչ, պատմության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի մասնակից Աննա Թորոսյանի խոսքը, որտեղ նշվել է, որ պատմության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթից առաջ իր մրցակիցը Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանի վարորդի միջոցով 3 հազար դոլար կաշառք է փոխանցել՝ արդեն ձեռնարկ դարձած մրցույթում հաղթելու համար:

Տարօրինակ է, որ ԲՀԿ-ական Նվեր Պողոսյանը խմբագրությանն ուղարկած հաղորդագրության մեջ որեւէ կերպ չի հերքում կաշառքի փաստը: Փոխարենը փորձել է, տարբեր օրենքներ մեջբերելով, նշել, թե որեւէ մասնակցություն չի ունեցել եւ տեղյակ էլ չի եղել դարոցում անցկացվելիք քննական մրցույթի մասին:

Նվեր Պողոսյանը 3000 դոլար կաշառք վերցնելու պնդմանն ի պատասխան՝ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Սոնա Գրիգորյանի հետ հեռախոսազրույցում ասել է, որ դա հերյուրանք է եւ անշատել է հեռախոսը: Այդ դեպքում անհասկանալի է, թե մարգպետն ինչն է համարում «անձի հանդեպ տարածած զրպարտանք», եթե կոնկրետ կաշառքի փաստը չի հերքում իր պաշտոնական գրության մեջ:

Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացնում է, որ «ՄԱՐԶՊԵՏԸ ԿԱՇԱՌՔ Ե ՎԵՐՑՐԵԼ» խնդրո առարկա նյութում հրապարակել է երկու կողմերի կարծիքը՝ մարգպետի եւ կաշառքի փաստը պնդող Աննա Թորոսյանի, որը հաստատող ձայնագրությունը խմբագրությունում է: Կարծում ենք՝ հասկանալի է, թե ինչ հետաքրքիր դատավարություն է սպասվում «անձի զրպարտություն» ապրած մարգպետի գործով»,- գրել է թերթը:

«Ժողովուրդ» թերթի լրագրողին ասել եմ, որ եթե մրցույթով մտահոգված է, կարող եմ ապահովել իր մասնակցությունը մրցույթին, որին կարող եմ մասնակցել նաեւ այլ լրագրողներ եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Սակայն լրագրողը միանգամից շանտաժ արեց կաշառքի հետ կապված, ես էլ ասել եմ, որ հարցին չեմ պատասխանի, քանի որ հերյուրանք է, եւ անմիտ է դրան պատասխանելը: Մեր խոսակցությունն այդպես ավարտվել է, եւ հաջորդ օրը թերթում տպագրվել է, թե մարգպետը 3000 դոլար կաշառք է վերցրել»,- «Չետքին» պարզաբանել է մարգպետը: Ապա լրագրողի՝ «Թերթը գրել էր, որ մրցույթի թեկնածուներից մեկը՝ Աննա Թորոսյանն է հայտարարել, որ Դուք մյուս թեկնածուի հաղթանակն ապահովելու համար կաշառք եք վերցրել: Չե՞ որ թերթը փոխանցել է թեկնածուներից մեկի խոսքը, ինչո՞ւ եք թերթին դատի տալիս» հարցին պատասխանել է. «Թերթը պարտավոր էր իմանալ, թե այդ մասին ով էր ասել Աննա Թորոսյանին, եւ նրան էլ լսեր: Թող սկզբնաղբյուրն իմանար, նոր միայն տպագրեր, բայց առանց սկզբնաղբյուրն իմանալու՝ տպագրել է, եւ դա հերյուրանք է: Չգիտեմ, միգուցե մարդը վրոճված արտահայտվել է, դա կպարզի դատարանը: Եթե կլինի մեկ մարդ, որ կասի՝ մարգպետը տեղյակ է եղել այս մրցույթից, ես կընդունեմ մեղադրանքը: Չկա նման փաստ: Դրա համար ես մինչեւ վերջ գնալու եմ, որպեսզի մարդիկ ներողություն խնդրեն

իրենց կատարած արարքի համար: Գրել է, գրպարտել է, թող դրա պատասխանը տա»:

«Ժողովուրդի» սեղեկատվության աղ յուրը խուսափում է հասաեսել կաշառքի մասին իր իսկ խոսքերը

Նոյեմբերի 18-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում (սախագահող՝ Արթուր Թամրազյան) սկսվեց Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանի ներկայացրած հայցի քննությունն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի:

Դատավարության ընթացքում մարզպետ Նվեր Պողոսյանի փաստաբանները նշել են, որ «Ժողովուրդ» օրաթերթն իրավունք չունի մարզպետի կողմից կաշառք վերցնելու մասին նյութ հրատարակել, քանի որ նա հանրային անձ է: Ավելին, ըստ նրանց՝ թերթը պարտավոր էր պարզել կաշառքի մասը, հետո տպագրել:

Իսկ «Ժողովուրդի» ներկայացուցիչ Հակոբ Ճարոյանն ասաց, որ թերթը պարտավոր չէր քննություն վարել եւ պարզել՝ որտեղ, ինչ հանգամանքներում, ում միջոցով է մարզպետը կաշառք վերցրել: Թերթը հանդես է եկել ամբիոնի դերում, հրատարակել է Թթուշուր գյուղի դպրոցի քննության մասնակից Աննա Թորոսյանի խոսքերը, որն ասել էր, որ մարզպետին իր մրցակիցը գումար է տվել՝ վարորդի միջոցով: «Այսպիսով, գտնում եմ, որ հայցը ամբողջովին ենթակա է մերժման», - հայտարարեց Ճարոյանը:

Դատավոր Արթուր Թամրազյանը եւս հայցվորին հարց տվեց. «Զե՞ք կարծում, որ թերթը մեջբերում է կատարել»: «Ո՛չ» պատասխանեցին մարզպետի փաստաբանները:

Երբ «Ժողովուրդի» ներկայացուցիչը հետաքրքրվեց՝ ի վերջո, Նվեր Պողոսյանը կաշառք վերցրե՞լ է, թե՞ ոչ, նրա փաստաբանները պատասխանեցին, որ տեղյակ չեն:

Դատավարությանը ներկա Աննա Թորոսյանը, ով թերթին հայտնել էր կաշառքի մասին, հաստատեց իր ասած բոլոր խոսքերը, բայց երբ հասավ մարզպետի՝ վարորդի միջոցով վերցրած 3000 ԱՄՆ դոլար կաշառքի դրվագին, սկսեց չհիշել: Նա վախվորած հայացքով նայում էր այս ու այն կողմ՝ հայտարարելով, որ մարզպետի կաշառք վերցնելու մասին ինքը ոչինչ չգիտի, ընդամենը լսել է գյուղի «ասեկոսներից»:

Այդ ժամանակ «Ժողովուրդը» միջնորդեց դատարանին՝ լսել Աննայի ձայնագրությունը: Դատարանը բավարարեց միջնորդությունը: Հրատարակվեց ձայնագրությունը, որտեղ Աննան ասում է, որ իր ամուսնու հետ գնացել է մարզպետի վարորդի մոտ, որը Վահան գյուղից է, ով ասել է, որ այդ գործն արդեն չի լինի, քանի որ մյուս մասնակցից վերցրել է 3000 ԱՄՆ դոլար ու տվել մարզպետին: «Որ իմանայի դուք էիք, էի անի այդ գործը», - ըստ Աննայի՝ ասել է մարզպետի վարորդը:

Այս ամենից հետո դատավոր Արթուր Թամրազյանը հետաձգեց դատական լսումը մինչև դեկտեմբերի 5-ը: Այդ օրը հայցվոր կողմն ու դատարանը հարցեր կտան «Ժողովուրդին»:



Երրորդ հայցը՝ ընդդեմ «Ժողովուրդի»

2011 թ. հոկտեմբերի 17-ին «Ժողովուրդ» օրաթերթը հայտնեց, որ ստացել է հոկտեմբեր ամսվա մեջ թվով երրորդ դատական ծանուցումը: Հոկտեմբերի 12-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռուբեն Ափիսյանը վարույթ է ընդունել ՀՀ կուրորտաբանության եւ ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Բենիկ Հարությունյանի հայցը՝ ընդդեմ «Ժողովուրդի»:

Որպես վիրավորանքի եւ զրպարտության հետեւանքով պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցում՝ Բենիկ Հարությունյանը «Ժողովուրդից» պահանջում է 2 միլիոն դրամ եւ եւս 244 հազար դրամ՝ փաստաբանական եւ դատական ծախսերի համար:

«Նշենք, որ Ղարաբաղյան ծագում ունեցող, Սերժ Սարգսյանի մտերիմ Բ.Հարությունյանի հայցը վերաբերում է «Ժողովուրդ» օրաթերթի սեպտեմբերի 9-ի համարում տպագրված «Դոկտոր, պրոֆեսորի արկածները ոսկու հանքերում» հոդվածին, որտեղ ներկայացրել էինք ԱՄՆ քաղաքացի Նունե Սերոբյանի հնչեցրած մեղադրանքներն այն մասին, որ Բենիկ Հարությունյանը, ում հետ համատեղ բիզնես են ունեցել, չի վերադարձնում իր կողմից ներդրված 218 հազար ԱՄՆ դոլարը: Ընդ որում, նույն հրապարակման մեջ հանգամանալի կերպով ներկայացրել էինք թե Բենիկ Հարությունյանի եւ թե իր փաստաբան Միեր Սիմոնյանի հերքումներն ու պատասխան մեղադրանքները, ինչպես նաեւ՝ նրանց տրամադրած բոլոր փաստական տվյալները», - նշված է օրաթերթի տարածած հաղորդագրությունում:

Երեք տարբեր հայցերով «Ժողովուրդ»-ից պահանջվում է վճարել ընդհանուր առմամբ 5 միլիոն 244 հազար ՀՀ դրամ:

ՈՐՏԵՆՊԷ Ե ԸՆԴՊՈՒՆՈՒՄ ԲԵՆԻԿ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆԸ. «ԺՈՂՈՎՈՐԴԻ» ԴԱՏՁ ԽԵՏԱՃՉՎԷՅ

Սոյեմբերի 15-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ռուբեն Ափիսյանի նախագահությամբ լսվեց Հայաստանում ֆիզիկական առողջության պաշտպանման կենտրոնի տնօրեն, պաշտպանության նախա-

րարի խորհրդական Բենիկ Յարությունյանի հայցն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի: Սակայն նախնական դատական նիստը բավականին կարճ տևեց: Պատճառն այն էր, որ հայցվոր կողմը, ի դեմս Բենիկ Յարությունյանի, չի ստացել հայցադիմումի պատասխանը, քանի որ նա հայցում նշված հասցեում (Յրագղան քաղաք) չի բնակվում: Հայցադիմումը հետ է եկել՝ գրությամբ, որ Յարությունյանը բնակվում է Երեւանում: Այս պատճառով դատավոր Ափինյանը որոշեց հետաձգել «Ժողովուրդի» դեմ ներկայացված հայցով դատական նիստը:

Դեկտեմբերի 16-ի նիստում հայցվոր կողմը ներկա չէր, թեև պատշաճ ծանուցված էր, այնուամենայնիվ, նիստը շարունակվեց: Օրաթերթի ներկայացուցիչ Յակոբ Ճարոյանը միջնորդեց դատարանին, որ նիստը հետաձգվի, քանի որ իրենք ԱՄՆ դեսպանատանը եւ ԱՄՆ քաղաքացի Նուրե Սերոբյանին խնդրել են իրենց տրամադրել դատարանի այն վճիռը, որի հիման վրա լրագրողը պատրաստել է իր նյութը: Հայցվորը այն որպես ապացույց չի ընդունել՝ մեկնաբանելով, որ վճիռը բնօրինակը չէ, այլ պատճենն է, եւ հնարավոր է, որ այն ԱՄՆ-ի դատարանի կայացրած վճիռ չլինի: Դատարանը բավարարեց պատասխանողի միջնորդությունը եւ դատական նիստը հետաձգեց մինչեւ հունվարի 31-ը:

Գյուղապետը վիրավորվել է, որ գյուղապետարանի զույգ մահճակալները «դվուխսպալնի» են անվանել



*Լեռնապատի
համայնքապետ
Վանո Եղիազարյան*

Լոռու մարզի Լեռնապատ գյուղի բնակիչները տար-պարակում գյուղապետի գործունեության վերաբերյալ՝ հրապարակայնորեն քննադատելով այն: Լեռնապատի գյուղապետ Վանո Եղիազարյանն էլ, մամուլի հրապարակումները որակելով որպես իր հասցե-ին արված վիրավորանք եւ զրպարտություն, սկսեց հերթով դատի տալ գյուղացիներին:

Գյուղապետի հերթական հայցը նույն գյուղի բնակիչ Կամսար Թամարյանի դեմ էր՝ պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով: Պատասխանող կողմում երրորդ անձ էր ներգրավված «Ժամանակ» օրաթերթը:

Թերթի՝ «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով հոդվածում Կամսար Թամարյանը մասնավորապես հետևյալ հայտարարություն

Է արել գյուղապետի գործունեության վերաբերյալ. «Մեր գյուղը կործանվում աս: Մեր գյուղում նույնիսկ սովից մարդ է մահացել... Նա էս գյուղը ջնջել է: Ոչ մեկը չեն կարում աշխատեն, քանի որ կաշառում է 5000-ով: Ես մարդիկ մտածում են, որ Վանոն նորից գյուղապետ աշխատի, իրանց նպաստը կկտրի: Մեր գյուղում մի հատ քանակիչ կրտսյում կա, երրորդ երեխեն պտի ունենա, որի կնոջ ուղեղն ենքան էլ չի աշխատում: Դոմիկում ապրող ա, մերը ինվալիդ ա, վատ վիճակում ա, նպաստ չեն տալիս: Վանոյի քույրը, թոռը նպաստառու ա, քույրն աշխատում ա գյուղապետարանում, իրա քրոջ տղեն Մոսկվայում մեծ բիզնեսի մեջ ա: Պատգամավոր Արկադի Զամբարձումյանի՝ գյուղին նվեր տված ավտոբուսը Վանո Եղիազարյանը դրել ծախում էր, հետ ենք բերել: Երկու դվուխասպալնին գյուղապետն ինչ պտի անի, գյուղապետարանում դրած ա: Էդ ոնց եղավ, որ Վանոյի հորը հասավ 630 հազար դրամ օգնություն, Վանոյի քրոջ տղուն հասավ 1 մլն 100 հազար դրամ օգնություն, ու գյուղում սոված մարդիկ կան, կոպեկ չհասավ: Ասել են բեր՝ գերեզմանների ճամփեն շինի, ասել ա՝ բա ինձ պետք ա՞: Մեր գյուղը մեծատառով գյուղ ա: Միակ գյուղն ա, որ թուրքն էս գյուղը չի մտել: Էսօր մեր միջից թուրք ա ծնվել: Խնդրում ենք՝ մեր միջից հանել թուրքին»:

Նշված արտահայտությունները որակելով որպես վիրավորանք եւ գրպարտություն՝ գյուղապետը Կ. Թամարյանից ներողություն եւ հերքում էր պահանջում նույն լրատվամիջոցով եւ 3 մլն դրամ հատուցում (1 մլն դրամ՝ վիրավորանքի, 2 մլն դրամ՝ գրպարտության համար):

Այդ պահանջով գյուղապետը 2 անգամ հայց էր ներկայացրել դատարան, բայց երկու անգամ էլ հայցը մերժվել էր: Վ. Եղիազարյանը երրորդ անգամ էր դիմել դատարան՝ նույն պահանջով: Երրորդ անգամ նրա դիմումն ընդունվել էր դատավոր Վարդուհի Զովնանյանի վարույթ (ի դեպ, դատավոր Վ. Զովնանյանը գյուղապետ Վ. Եղիազարյանի հետ միասին դասավանդում է Վանաձորի մանկավարժական ինստիտուտում):

Վերջինս գյուղապետի հայցը բավարարեց մասնակի. վճռեց պարտավորեցնել Կ. Թամարյանին նույն լրատվամիջոցով ներողություն խնդրել վիրավորանք հասցնելու համար, հերքել գրպարտություն համարվող տվյալները եւ հօգուտ Վ. Եղիազարյանի բռնազանձել 400 հազար դրամ (300 հազար դրամ՝ վիրավորանքի, 100 հազար դրամ՝ գրպարտության համար) եւ 16 հազար դրամ՝ դատական ծախսերի գումար: Իր վճիռը դատավոր Վ. Զովնանյանը հիմնավորեց նրանով, որ Կ. Թամարյանը գյուղի ամենապահովված անձանցից է:

Դատավոր Վ. Զովնանյանը գրպարտություն է համարել Կ. Թամարյանի հետեւյալ արտահայտությունները. «Նա էս գյուղը ջնջել ա», «ասել են՝ բեր գերեզմանների ճամփեն շինի, ասել ա՝ բա ինձ պետք ա՞», «ոչ մեկը չեն կարում աշխատեն, քանի որ կաշառում ա 5000-ով», «խաբել են գյուղապետարանում, Վանոյի երկու քույրերը, Մալխասյան Միերը գրիլ են տվել, որ մարդ աշխատում ա»՝ պատճառաբանելով, որ դրանք անձի վերաբերյալ իրապարակային ներկայացված փաստացի տվյալներ են, որոնք չեն համապատասխանում իրականությանը:

Կ. Թամարյանի մեկնաբանությամբ՝ «ոչ մեկը չեն կարում աշխատեն, քանի որ կաշառում է 5000-ով» արտահայտությամբ նկատի է ու-



նեցել, որ գյուղի բնակիչներից ոմանք հրաժարվում են գյուղապետի դեմ իրենց բողոքներից, քանի որ նա կաշառում է 5-50 հազար դրամով:

Լեռնապատի բնակիչ Սարիբեկ Յոռոմսիմյանը հաստատել է Կ. Թամարյանի խոսքը եւ դատարանում տվել հետեւյալ ցուցմունքը. գյուղապետ Եղիազարյանն առաջարկել է մեկ ամսվա նպաստը՝ 7500 դրամ, տալ իրեն, որպեսզի մնացած ամիսների նպաստը ստանա: Ինքն այդ մասին հայտնել է քննիչին, որից հետո Եղիազարյանի հայրը եւ աները գիշերով գնացել են իր տուն եւ առաջարկել 50 հազար դրամ, որ բողոքը հետ վերցնի: Ինքը հրաժարվել է:

«Խնոյի երկու քույրերը, Մալխասյան Միերը գրիլ են տվել, որ մարդդ աշխատում ա» արտահայտությունը, որը համագյուղացի Արտյոմ Մարկոսյանի կնոջը՝ Յոփիսիմե Յարությունյանին, խաբեությամբ դիմում գրել տալու վերաբերյալ է, Կ. Թամարյանի ասելով՝ ինքն անձամբ լսել է Ա. Մարկոսյանից:

Ա. Մարկոսյանն ու նրա կինը՝ Յ. Յարությունյանը, դատարանում հաստատել են Կ. Թամարյանի խոսքը: Յոփիսիմե Յարությունյանը դատարանում հայտնել է, որ գյուղապետարանում գյուղապետ Վ. Եղիազարյանը հարցրել է ամուսնու աշխատանքի մասին: Ինքն ասել է, որ ամուսինը չի աշխատում: Բայց գյուղապետը հորդորել է դիմումում գրել, որ նա հովիվ է աշխատում Կ. Թամարյանի մոտ: Ինքը դիմումը գրել է գյուղապետարանի աշխատակից Ռուզաննա Եղիազարյանի աշխատանքայնակում՝ վերջինիս թելադրանքով:

Դատավոր Վ. Յովնանյանը, սակայն, զրպարտություն է համարել վերը նշված արտահայտությունը՝ պատճառաբանելով, որ չնայած Կ. Թամարյանը Ա. Մարկոսյանի հայտնած տեղեկությունն է վերարտադրել, սակայն հղում չի կատարել տեղեկատվության աղբյուրին:

Ուշագրավ է, որ հայցվոր Վ. Եղիազարյանը հայցադիմումում որել է կերպ չի որակել Կ. Թամարյանի՝ «Էդ ոնց եղավ, որ Վանոյի հորը հասավ 630 հազար դրամ օգնություն, Վանոյի քրոջ տղուն հասավ 1 մլն 100 հազար դրամ օգնություն, ու գյուղում սոված մարդիկ կան, կոպեկ չհասավ» արտահայտությունը՝ ոչ որպես վիրավորանք, ոչ որպես զրպարտություն:

Կ. Թամարյանը դժգոհ է դատավոր Վ. Յովնանյանի վճռից, պատրաստվում է բողոքարկել այն. «Ես չտեհա դատավոր Յովնանյանի կողմից արդարություն, քանի որ մեր դատարանը ներկայացնում ա իրանց արդարությունը, քանի որ Վանո Եղիազարյանի հետ իրանք կոլեգաներ են, իրար հետ են աշխատում, ու վերելից ասվում ա: Դատավորը որ ի՞նչ ա իմ վրա տուգանք դնում, եթե իմ գեղի հըմար են կանգնած: Տենըմ եմ, որ ոչ դատարանը արդարություն ունի, ոչ վերելներում արդարություն կա: 7 հոգու դատի ա տվել: 13 մլնի գործը դրածա ա Վանոյի վրա (Վանո Եղիազարյանի կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնական կեղծիք կատարելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը շարունակվում է): Երեւանից քննիչը նստած՝ առեթեսումներ են անում: Բայց Վանոյին չորսուկուռ արած կառավարությունով՝ բանով, ամբողջը պահում են, քանի որ Վանոն Արմեն Գարեգինիչի (ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիայի եւ կազմակերպված հանցագործությունների դեմ

պայքարի վարչության պետ) եղբոր երեխու քավորն ա, Արշաֆյաններին քավորն ա, իրա հերն ա ասում: Վասնո միշտ ասել ա՝ 3 հազար դրլարի Արմեն Գարեգինիչի հըմար ծնունդ եմ արել, չի ապացուցվում, բայց ես ասում եմ: Նրա թիկունքին ա, նրան ոչ մի բան չեն անում»:

Նույն հողվածում տեղ գտած արտահայտությունների համար համայնքապետ Եղիազարյանը դատի է տվել մեկ այլ բնակչի եւս՝ Գեորգ Մելքոնյանին՝ դարձյալ որպես երրորդ կողմ ներգրավելով «Ժամանակ» օրաթերթին: Համագյուղացին հետեւյալ տեղեկություններն է հրապարակել գյուղապետ Վանո Եղիազարյանի գործունեության վերաբերյալ. «Խմելու ջրով ԳԷՍ ա դրել ինքը, իրա սեփական ԳԷՍ-ն ա... Ըստեղ ապօրինի հանք ա դրել (բազալտի), 35 թե 25 հա: Իրականում այդ հանքն իրավունք չունեին շահագործման հանձնելու, փակված հանք ա եղել: Հանցավոր համաձայնության գալով նախկին տնօրենի հետ՝ ինչ-որ Հարությունյան Սամվելի, մեծ գումարներ է վերցրել, պայթեցումներ են եղել այնտեղ, ստեղ էլ դպրոցը մոտիկ ա... Երբ հարցրել ենք՝ ինչու է տրվել, ուրեմն մեզ ինչ լկտի ձեւով ա պատասխանել. «Դա Հարությունյան Սամվելին տրվել ա որպես արոտատեղ»: Մենք ուզում ենք իմանալ՝ ընդեղ արածողը Սամվելն ա լինելու, գյուղապետը, թե՞ ա վազանին... Հարությունյան Սամվելը ֆերմեր չի, անասուն չունի...»:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատավոր Վարդուհի Հովնանյանն այս վերջին արտահայտությունը վիրավորանք է համարել՝ պատճառաբանելով, որ մարդու նկատմամբ «արածել» բառն օգտագործելի չէ:

Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ. Եղիազարյանը 1 միլիոն դրամ էր պահանջում իր գյուղի բնակչից, իսկ գրպարտության համար՝ 2 միլիոն դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը:

Դատավոր Վ. Հովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով. վճռեց Գ. Մելքոնյանից հօգուտ Վ. Եղիազարյանի բռնագանձել 8000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար եւ պարտավորեցնել Գ. Մելքոնյանին «Ժամանակ» օրաթերթում՝ ներողություն խնդրել վիրավորանքի համար եւ հերքել զրպարտություն համարվող տվյալները:

2011 թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ վերաքննիչ դատարանում լսվեց Լոռու մարզի Լեռնապատ գյուղի բնակիչ Գեորգ Մելքոնյանի վերաքննիչ բողոքն ընդդեմ համայնքապետ Վանո Եղիազարյանի:

Նիստին կողմերը ներկա չէին, սակայն դատաքննությունը շարունակվեց, եւ դատարանը մերժեց համայնքապետի դեմ բերված վերաքննիչ բողոքը:



Լրատվամիջոցների հաշվին գումար աշխատելը գայթակղիչ է դարձել

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի ընձեռած՝ զրպարտության եւ վիրավորանքի համար լրատվամիջոցին գումարային պահանջ ներկայացնելու հնարավորությունից այս անգամ որոշել է օգտվել Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ղեկավար Վանտ Եղիազարյանը:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը վարույթ է ընդունել Վ. Եղիազարյանի հայցն ընդդեմ «Յետքի» թղթակից Ադրիսե Թորոսյանի՝ պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով: Պատասխանող կողմում՝ որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ներգրավված է «Յետք» շաբաթաթերթը: Համայնքապետը դատարանից խնդրել է «զրպարտության համար պարտավորեցնել պատասխանողին «Յետք» թերթով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները, վիրավորելու համար նույն թերթով ներողություն խնդրել իրենից եւ պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաեւ՝ դատական ծախսերը»:

Ինչի՞ց է վիրավորվել Լեռնապատի համայնքապետը

2011-ի օգոստոսին «Յետքը» Ադրիսե Թորոսյանի հեղինակությամբ հրապարակել էր «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն» վերնագրով հոդվածը, որտեղ ներկայացվում է Լոռու մարզի Լեռնապատ գյուղի բնակիչ Գեւորգ Մելքոնյանի եւ համայնքապետ Վ. Եղիազարյանի միջեւ ծագած դատական վեճը: Այն ծագել էր «Ժամանակ» օրաթերթում տպագրված «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով հոդվածի արդյունքում, որտեղ գյուղի տարբեր բնակիչներ, այդ թվում եւ Գեւորգ Մելքոնյանը, քննադատում են գյուղապետի գործունեությունը՝ տալով տարբեր գնահատականներ: Այդ գնահատականները համարելով վիրավորանք, իսկ հրապարակված տեղեկությունները՝ զրպարտություն, գյուղապետը դատի է տվել իր երկու համագյուղացու՝ Կամսար Թամարյանին եւ Գեւորգ Մելքոնյանին: Թամարյանից գյուղապետը պահանջել է ներողություն, հերքում եւ 3 մլն դրամ հատուցում (1 մլն դրամ՝ վիրավորանքի, 2 մլն դրամ՝ զրպարտության համար): Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը (ստավայրը՝ Վանաձոր), դատավոր Վարդուհի Հովնանյանի նախագահությամբ, ով քննելու է նաեւ Վանտ Եղիազարյանի հայցն ընդդեմ լրագրողի, հայցը բավարարել է մասնակի՝ վճռել է պարտավորեցնել Վ. Թամարյանին նույն լրատվամիջոցով ներողություն խնդրել վիրավորանք

հասցնելու համար, հերքել զրպարտություն համարվող տվյալները եւ հօգուտ Վ. Եղիազարյանի բռնազանձել 400 հազար դրամ (300 հազար դրամ՝ վիրավորանքի, 100 հազար դրամ՝ զրպարտության համար) եւ 16 հազար դրամ՝ դատական ծախսերի գումար:

Գեորգ Մելքոնյանի դեմ Լեռնապատի ղեկավարը միեւնույն պահանջով՝ ներողություն, հերքում եւ 3 մլն դրամ փոխհատուցում, երկու անգամ հայց է ներկայացրել Վանաձորի դատարան, երկու անգամ էլ հայցը վերադարձվել է: Երրորդ անգամ արդեն գյուղապետը զրպարտության եւ վիրավորանքի հայցը ներկայացրել է՝ առանց գումարային փոխհատուցման, պահանջելով բռնազանձել միայն դատական ծախսերը:

«Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ. Եղիազարյանը 1 միլիոն դրամ էր պահանջում իր գյուղի բնակիչի, իսկ զրպարտության համար՝ 2 միլիոն դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը: Դատավոր Վ. Յովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով»,- Աղրինե Թորոսյանի այս նախադասությունը եւ նյութի վերնագիրն է գյուղապետը համարել զրպարտություն եւ որակել որպես վիրավորանք՝ նշելով, որ ինքը Մելքոնյանին գույքային գույքանշ չի ներկայացրել:

Իրականում լրագրողը հողվածում չի մասնավորեցրել, որ գույքային պահանջը ներկայացվել էր դատարանի կողմից վերադարձված առաջին եւ երկրորդ հայցերով, իսկ վարույթ ընդունված հայցից այն հանվել էր: Եվ այս անճշտությունը Լեռնապատի համայնքապետը կարող էր ուղղել՝ խմբագրություն ուղարկելով հերքման կամ պատասխանի տեքստ՝ համաձայն «Չանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի, որով կարգավորվում է «Չերքման եւ պատասխանի իրավունքը»: «Գյուղապետի հասցեին սաված «արածել» բառն արժե 1 միլիոն» «այլանդակ» վերնագրում (ձեւակերպումը Լեռնապատի համայնքապետինն է) ի՞նչն է վիրավորական՝ անհասկանալի է: Բայց ինչո՞ւ չփորձել 1 մլն դրամ աշխատել...

Նշված քաղաքացիական գործով Վանաձորի դատարանում նոյեմբերի 14-ին նշանակված էր նախնական դատական նիստ՝ դատավոր Վարդուհի Յովնանյանի նախագահությամբ: Դատավորի պահանջով կողմերը ներկայացրին անձը հաստատող փաստաթուղթ: Պարզվեց, որ պատասխանող Ա. Թորոսյանի անձնագրի գործողության ժամկետը լրացած է: Պատճառաբանելով, որ հնարավոր չէ ստուգել պատասխանողի ինքնությունը՝ դատավորը բացակա ճանաչեց նրան եւ որոշեց նիստը շարունակել՝ առանց նրա մասնակցության:

Դատական նիստի ժամանակ արձանագրվեց, որ ներկայացուցիչ չկա որպես երրորդ անձ ներգրավված «Չեղք» շաբաթաթերթից: Այս կապակցությամբ դատավորը հարցրեց հայցվորի կարծիքը՝ նիստը առանց մասնակից կողմերի անցկացնելու վերաբերյալ: Վ. Եղիազարյանը պնդեց, որ նիստը շարունակվի:

Յայցվոր Վ. Եղիազարյանը ներկայացրեց իր հայցը, պահանջը պնդեց ամբողջությամբ:

Դատավորը, հաշվի առնելով, որ պատասխանող Ա. Թորոսյանը ըստ Էության ներկայացել է դատական նիստին, ներկայացրել է նաեւ անձը հաստատող փաստաթուղթ, որի անվավեր լինելու մասին իմացավ միայն դատարանում, որոշեց նշված գործով նախնական դատական նիստը հետաձգել եւ նշանակել 2012 թ. հունվարի 13-ին:



Նախ՝ ռեկտորը, ապա դեկանը՝ ընդդեմ լրագրողի եւ լրատվամիջոցի

2011 թ. նոյեմբերի 17-ին «Յետք» հերթական դատական ծանուցումն է ստացել Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանից: Այս անգամ «Յետքի» լրագրող Ադրինե Թորոսյանին դատի է տվել Վանաձորի Զ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի վարիչ Թերեզա Շահվերդյանը՝ որպէս երրորդ անձ ներգրավելով «Յետք» շաբաթաթերթին՝ պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով:

Իր հայցադիմումի մեջ հայցվորը նշում է, որ 2011թ. մայիսի 13-ին «Յետք» թերթում տպագրված «Յիվանդագին կրքեր Վանաձորի մանկավարժական ինստիտուտում» հոդվածի մեջ իր հասցեին արվել է հետեւյալ զրպարտությունը. «Դեպքերի հետագա զարգացմամբ՝ 2011 թ. ապրիլի 1-ին հայոց լեզվի ամբիոնի դասախոս Լուսինե Սարգսյանի մայրը՝ մանկավարժության ամբիոնի դասախոս Լիզա Սարգսյանը, մանկավարժության ամբիոնի վարիչ Թերեզա Շահվերդյանի հետ ներկայացել է ուստիկանության Վանաձորի բաժնի եւ հայտարարություն տվել, որ հայոց լեզվի ամբիոնի դասախոս Լուսինե Աշուղյանը շուրջ 2 տարի սպանության սպառնալիքներ է տալիս Լուսինե Սարգսյանի հասցեին»:

Այնուհետեւ հայցվորը շարունակում է՝ ասելով, որ նույն հոդվածի շարունակության մեջ պարզվում է, որ դա դիտավորությամբ սուտ մատուցություն է, որին իբր մասնակից է եղել նաեւ ինքը, այն էլ՝ ռեկտորի դրոճմամբ: Ըստ հայցվորի՝ ստացվում է, որ իրեն ռեկտորը հանձնարարել է, որ սուտ մատուցություն անի, որով իբր նա եւս ցանկացել է քրեական գործ հարուցել տալ Լուսինե Աշուղյանի նկատմամբ, որն անամոթ սուտ է՝ ուղղված իր անձին, որով պատասխանողը վնաս է հասցրել իր պատվին, արժանապատվությանը եւ բարի համբավին: Այս մասին հայցվորն իմացել է օգոստոսի վերջերին ինստիտուտում, երբ վերադարձել է արձակուրդից:

Հայցվորը խնդրում է դատարանին զրպարտության համար պարտավորեցնել պատասխանողին նույն լրատվամիջոցով՝ «Յետք» թերթով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները եւ պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2 միլիոն 33 դրամ, ինչպէս նաեւ 33 քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածով նախատեսված դատական ծախսերը:

Դեկտեմբերի 7-ին պարզ դարձավ, որ դեկանը վերածեսակերպել է լրագրող Ա. Թորոսյանին ներկայացված պահանջը. 2 մլն դրամի փոխարեն նա այժմ 200 հազար դրամ է պահանջում՝ գույքային պահանջի փոփոխությունը հիմնավորելով Սահմանադրական դատարանի որոշմամբ: Հանված է նաեւ դատական ծախսը լրագրողից բռնագանձելու պահանջը: Նոր պահանջ է ավելացված՝ պարտավորեցնել լրագրողին դեկանից ներողություն խնդրել «Յետք» թերթում: Իսկ նույն թերթում զրպարտությունները հերքելու պահանջի հետ կապված՝ ներկայացվել է նաեւ հերքման տեքստ:

«Դուք էլ չգիտեիք, ես էլ չգիտեի, բա էս խեղճ ու կրակ «Ինքնիշխանությունը» որտեղի՞ց իմանա», - հարցնում է դատավոր Ափինյանը

«Ի՞նչ եք ուզում «ինքնիշխանությունից», - Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանն այս հարցով բացեց «Արմավիա» ավիաընկերության հայցի քննության Նախնական դատական նիստն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի: Հայցվոր կողմի ներկայացուցիչ Արտավազդ Պետրոսյանը կարճ պատասխանեց, որ օրաթերթն իր հրապարակումով արատավորել է «Արմավիա» ավիաընկերության գործարար համբավը:

Գործարար Միկա Բաղդասարովին պատկանող «Արմավիա» ընկերությունը «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթից պահանջում է հերքել 2011 թ. սեպտեմբերի 15-ին հրապարակած տեղեկությունները եւ 2 մլն դրամ փոխհատուցել ընկերության գործարար համբավի արատավորման դիմաց: «ՉԻ»-ն epress.am կայքից լուր էր արտատպել, համաձայն որի՝ Մոլդովայի ազգային բանակի հրամանատար, գեներալ Յուրի Դոմինիկը հայտարարել էր, թե հայկական ավիաընկերությունները գեներալն մատակարարում էին Լիբիային: Հայաստանի քաղաքացիական ավիացիայի մամուլ քարտուղարը epress.am կայքի լրագրողին ասել էր, թե այդ մասին պարզաբանում կարող է տալ «Արմավիան», որովհետեւ այն մոնոպոլիստ է: Ի դեպ, epress.am -ը, լուրի մասին գրելիս, իր հերթին հղում էր արել ռուսական եւ արտասահմանյան լրատվամիջոցների: Իսկ «Արմավիա» ընկերության մամուլի քարտուղար Նանա Ավետիսովան հեռախոսազանգին չի պատասխանել: Նույն բովանդակությամբ լուրը արտատպել է նաեւ «ՉԻ»-ն:

«Ի՞նչ համբավ է արատավորվել, դրա հրապարակումից հետո ի՞նչն է պակասել, ուղեւորները քի՞չ են», - նորից հարց ուղղեց դատավոր Ափինյանը:

«Գործարար համբավն, ըստ էության, խախտվել է այնպիսի կտրվածքով, որը կարող է ազդել վերջինիս հետագա գործունեության վրա, եւ որոշակի ազդեցություն, ըստ էության, կա», - պատասխանեց Արտավազդ Պետրոսյանը:

«Չե՞ք ամաչում բա, ինչի՞ եք արատավորել», - դատավոր Ափինյանը կատակով հարցադրումն ուղղեց պատասխանող կողմին:

«Գտնում ենք, որ չենք արատավորել գործարար համբավը, քանի որ մենք արտատպել ենք այլ լրատվական գործակալության նյութը», - պաշտպանվեց «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի (հրատարակիչ «Կողմնակի անձանց Ս» ՍՊԸ) փաստաբան Յուրա Եղիազարյանը:



Դատավորը մեջբերումներ արեց հայցվոր կողմի պատասխանից, այն է՝ թե բարեխիղճ չեն արտատպել, վերնագրում ավելացրել են «Արմավիա» բառը: «Վերնագրում հարցականն նշանն էլ կարգին չի երեւում: Մեծ, հաջող հարցական դրեք, որ լավ երեւա,- Նույն տոնով շարունակեց դատավորը,- լուրջ ավիաընկերություն է, իսկ դուք նրա գործարար համբավի հետ խաղում եք»:

Արտավագր Պետրոսյանն այնուհետև մեկնաբանեց, որ epress.am կայքում խոսվում է հայկական ավիաընկերության մասին, իսկ Յայաստանում «Արմավիա»-ից բացի եւս 15 ավիաընկերություն կա: Ինչից զարմացած՝ դատավորը սկսեց հերթով կարդալ այդ ավիաընկերությունների անունները եւ հավելեց, որ ինքը երբեւէ այդ ընկերություններից չի օգտվել, չի էլ լսել: «Լսած կայի՞ք տե՛նց բան: Այ մարդ, չվերթներն ինչքան նախում ենք՝ «Արմավիա», «Արմավիա»:

Արտավագր Պետրոսյանը խոստովանեց, որ նույնպես տեղյակ չէր, որ Յայաստանում այդքան ավիաընկերություն կա: «Դուք էլ չգիտեիք, ես էլ չգիտեմ, բա ես խեղճ ու կրակ «Ինքիշխանությունը» որտեղի՞ց իմանա», - ավելացրեց դատավորը:

Ընկերության ներկայացուցչի պնդմանը, թե պետք է ճշտեին տեղեկատվությունը, դատավոր Ափիսյանը նշեց, որ փորձել են ճշտել, բայց Նանա Ավետիսովան չի պատասխանել հեռախոսազանգին՝ «Անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել»:

Յայցվոր կողմի ներկայացուցիչը նշեց, որ օրաթերթը ոչ միայն շեշտել է «Արմավիա» ընկերության անունը, այլև տպագրել է լուսանկարը: Մինչդեռ epress.am կայքում հրապարակած նյութի վերնագրում ոչ միայն չի շեշտվել «Արմավիա» ընկերությունը, այլև տեղադրված չի եղել ընկերությանը պատկանող օդանավի լուսանկարը:

Նոյեմբերի 1-ին տեղի ունեցած նիստին դատարանը բավարարվեց այսքանով, իսկ գործի վարույթը կասեցնելու՝ օրաթերթի ներկայացուցչի միջնորդությանը դատարանը չցանկացավ անդրադառնալ՝ դատական նիստը նշանակելով նոյեմբերի 28-ին:

«Յետքի» հետ գրույցում Յուրա Եղիազարյանը տեղեկացրեց, որ ուզում էր միջնորդել կասեցնել գործի վարույթը մինչև Սահմանադրական դատարանը կայացնել 1087.1 հոդվածի սահմանադրականության կամ հակասահմանադրականության մասին որոշումը: Իսկ դատավորն ավելի ուշ նշանակեց նիստը, մինչ այդ արդեն Սահմանադրական դատարանը որոշում կայացրած կլինի:

2 մլն դրամը կփրկի՞ «Արմավիա» ընկերության գործարար համ ավրը

Նոյեմբերի 28-ին Կեստրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանում «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի փաստաբան Յուրա Եղիազարյանը հայտարարեց, որ «Արմավիա» ընկերության վերաբերյալ նյութի հերքումն օրաթերթն արտատպել է դեռեւս այս տարվա սեպտեմբերի 17-ին: Յուրա Եղիազարյանը նշեց, որ իրենք որեւէ իրավախախտում չեն կատարել, այլ բարեխիղճ

վերարտադրել են epress.am-ի կողմից: Ավելին, տպագրել են նույն լրատվամիջոցի տպագրած հերքման տեքստը, այդ պատճառով կարծում են, որ նորից հերքում տպագրելու անհրաժեշտություն չկա, ինչը պահանջում է հայցվոր կողմը:

Օրաթերթի խմբագիր Շողեր Մաթեոսյանը հավելեց, որ հերքումը հրապարակվել էր դեռևս «Արմավիա» ընկերության կողմից հայցը ներկայացնելուց առաջ, իսկ հայցադիմումը վարույթ է ընդունվել սեպտեմբերի 22-ին:

«Արմավիա» ընկերության ներկայացուցիչ Արտավազդ Պետրոսյանը մեջբերեց «ՀԱՄ մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ հերքումը պետք է իրականացվի «Յերքում» խորագրի ներքո՝ տեղակայման, ձեռագրման, տառատեսակի, չափի նույնությամբ չզիջելով տեղեկատվության հրապարակմանը, որին վերաբերում է այն: Իսկ օրաթերթի հրապարակումից չի երեւում «Յերքում» խորագիրը, հետևաբար այն չի ընկալվում որպես հերքում: Ավելին՝ հոդվածի ուսումնասիրությունից էլ չի երեւում, որ օրաթերթն իր կողմից է այդ հերքումը հրապարակել: «Ըստ ելույթի, սա իրենից ներկայացնում է epress.am կայքից համապատասխան տեղեկատվության հերթական արտատպումը», - ասաց փաստաբանը:

Օրաթերթի լրագրող Գոհար Վեգիոյանն ավելացրեց, որ սեպտեմբերի 17-ի համարում իրենք մեկ այլ՝ «Բաղդասարովի տունը կռիվ է ընկել» հրապարակման մեջ նույնպես անդրադարձել են այս գործին: Նշել են, որ ընկերությունը հերքել է զենքի մատակարարման լուրը: Օրաթերթն այդ հրապարակման մեջ նաև նշել է, որ կոնկրետ տեղեկատվության հրապարակման հերքման պահանջ իրենց չի ներկայացվել: Ավելին՝ հրապարակվել են բոլոր էլեկտրոնային կայքերը, որոնք նույնպես անդրադարձել են զենքի մատակարարման թեմային:

Հաշտության համաձայնություն կնքելու դատավորի առաջարկին «Արմավիա» ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ երկու անգամ առաջարկել է հաշտություն կնքել: Առաջին առաջարկը մերժվել է, իսկ երկրորդն անցյալ ուրբաթ է ներկայացրել եւ դեռ պատասխան չի ստացել: Ընկերությունն առաջարկել է տպագրել հերքում:

Խմբագիր Շողեր Մաթեոսյանը հավելեց, որ կոռեկտ չէ այդքան հերքելուց հետո եւս մեկ անգամ հերքում տպագրել: «Յերքումը մեկ անգամ եղել է: Նույն թերթում երկու անգամ տարբեր ձեւերով շեշտվել է, որ այդ ինֆորմացիան հերքվել է: «Չորրորդ ինքնիշխանությունը» ստիպված պիտի լինի հետգրությամբ հերքումը տպագրել, որպեսզի բացատրի, թե ինչ կապակցությամբ է այն հերքումը հայտնվել թերթում», - բացատրեց Շողեր Մաթեոսյանը:

Նիստը նախագահող դատավոր Ռուբեն Ափինյանը փորձեց հայցվոր կողմից ճշտել, թե ինչու են օրաթերթից 2 մլն դրամ փոխհատուցում պահանջում, այլ ոչ թե 200 կամ 500 հազար: «2 մլն-ը կփրկի՞ գործարար համբավը», - փաստաբանին հարց ուղղեց դատավորը: Փաստաբանի խոսքերով՝ ընկերությունը նպատակահարմար է գտել փոխհատուցում պահանջել նշված չափով: «Տեղեկատվությունն իր բնույթով այնպիսին է, որ, ըստ ելույթի, կարող էր եւ հասցվել է լուրջ վնաս «Արմավիա» ընկերության գործարար համբավին»: «2 մլն դրամը եղ-



քան լո՞րջ է: Ես լուրջ կհասկանայի, եթե 2 մլն դոլար պահանջեին», - հակադարձեց դատավորը: Փաստաբանը հիմնավորեց, որ դա հայկական օրենսդրությամբ սահմանված առավելագույն չափն է, եւ գեներլ մատակարարման հետ կապված համապատասխան տեղեկատվությունը, այն է՝ լիբիական կողմին, բավականին խնդրահարույց է:

Դատավոր Ռ.Ափինյանն իր համար երկու տարբերություն արձանագրեց, որը ընկերության ներկայացուցիչը մատնանշեց որպես epress.am կայքից արտատպելու արդյունքում փոփոխված, այն է՝

1. epress.am կայքի «Հայկական ավիաընկերությունը զե՞նք էր մատակարարում Լիբիային» վերնագիրը օրաթերթը դարձրել է «Արմավիան» զե՞նք է մատակարարում Լիբիային»,
2. օրաթերթը տպագրել է նաեւ ընկերությանը պատկանող օդանավի լուսանկարը:

Նշված երկու փոփոխությունները հանգեցրել են նրան, որ ամբողջ հոդվածում ընկալվում է «Արմավիա» ավիաընկերությունը՝ բացառելով Հայաստանում գրանցված այլ ավիաընկերություններին:

Հայցվորի ներկայացուցչի հիմնավորմամբ՝ համապատասխան փոփոխություններն անելու համար օրաթերթը պետք է տիրապետեր հստակ տեղեկությունների: «Այստեղ քաղաքիացիայի մամլո քարտուղարը կոնկրետ ուղղորդել է դեպի «Արմավիան»: Ռուսական տեքստում ինքը բառացիորեն հայտարարել է՝ ««Արմավիան մոնոպոլիստ է: Այդ հարցով դիմեք իրենց»,- պարզաբանեց Գոհար Վեգիրյանը:

Շողեր Մաթեոսյանը հայցվոր կողմից հետաքրքրվեց, թե ինչո՞ւ են հայցադիմումում իրենց հրապարակած լուրի վերնագիրը առանց հարցական նշանի վերարտադրել: Պարզվում է՝ այն նկատելի չի եղել հայցվորներին: Ավելին՝ ընկերությունն ուսումնասիրել է օրաթերթում տեղ գտած բոլոր հարցական նշանները եւ պարզել, որ այն շատ փոքր է, աննկատ, եւ տարբերվում է օրաթերթի վերնագրերում եղած մյուս հարցական նշաններից:

Դատարանը նախապատրաստական փուլն ավարտեց եւ դատաքննության օր նշանակեց դեկտեմբերի 14-ը: Այդ օրը դատավոր Ափինյանը կողմերին առաջարկեց հաշտվել: «Արմավիա»-ի ներկայացուցիչ Ա. Պետրոսյանը նշեց, որ ընկերությունը միայն հերքման տեքստի պահանջ է ներկայացնում եւ հաշտության դեպքում գումարային պահանջից հրաժարվում է: Իսկ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի գլխավոր խմբագիր Շողեր Մաթեոսյանը պնդեց, որ իրենք երկու անգամ հրապարակել են տպագրված տեղեկատվության հերքումը եւ եթե երրորդ անգամ հրապարակեն, պետք է խմբագրության կողմից հետգրություն ավելացնեն, որպեսզի ընթացողներին բացատրեն, թե ինչու են մեկ անգամ եւս հերքում տպագրում: Դատավոր Ափինյանի տրամադրած 15 րոպեի ընթացքում կողմերն, այդուհանդերձ, որոշեցին հաշտվել՝ առանց հետգրության հերքումը տպագրելու երկկողմ համաձայնությամբ:

Շողեր Մաթեոսյանը «Յետքի» հետ գրույցում գնահատելով հաշտության համաձայնությունը՝ նշեց, որ «Արմավիան» էժան պրծավ:

«Ջրապարակ» օրաթերթը պատասխան պիտի տա ընթերցողների կարծիքների համար



Փաստաբան
Արթուր Գրիգորյան

2011 թ. նոյեմբերի 7-ին «Ջրապարակ» օրաթերթը

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչա-
կան շրջանների ընդհանուր իրավասության դատարանից ստացել է
թերթի հաշիվների վրա 18 միլիոն դրամի չափով կալանքի սահման-
ման մասին որոշում:

Թերթին այս անգամ դատի է տվել փաստաբան Արթուր Գրիգորյա-
նը: Փաստաբանը կարծում է, որ օրաթերթի էլեկտրոնային տարբերա-
կում դեռեւս օգոստոսին տպագրված «Քաղաքացիներն անբարեխիղճ
փաստաբանների գո՞հ» հոդվածի ներքո ընթերցողների թողած մեկնա-
բանությունները վիրավորել են իր պատիվն ու արժանապատվությունը:

Հոդվածը փաստաբանի ծառայություններից դժգոհ մնացած քա-
ղաքացիների բողոքի մասին էր: Կայքում հրապարակված այդ հոդվա-
ծի ներքո ընթերցողները բազմաթիվ մեկնաբանություններ են թողել,
որոնցից 6-ը փաստաբան Արթուր Գրիգորյանը համարել է զրպարտչա-
կան եւ վիրավորական: Ահա դրանք.



21.5-ն
եւ կրագողները

ՊԱՍՏԱԲԱՆ

161



ՄԱՅԱԿ - Արթուր Գրիգորյանի պատճառով Յյուսիսային պողոտա-յում կորցրեցինք բողոքարկելու իրավունքը զուտ իրա բողոքն ուշաց-նելու պատճառով... Յետո պարզվեց՝ էդ փողի դիմաց ա արել: Ինչքան ժամանակ փնտրում էի, որ սատկացնեմ շան պես... Բացի դրանից, ինչ այլանդակ վարքագիծ ունի, էդ արդեն Փաստաբանների պալատը թող փորձի կարգավորել: Նման փաստաբաններին սենց պաշտպանելով՝ Սահակյան Ռուբինկն իրան ա որակազրկում եւ ընդհանրապես՝ փաս-տաբանների ինստիտուտը:

ԳԱՐԻԿ - Ես անդուր լակոտ փաստաբան կոչեցյալը ոչ այլ ինչ է, եթե ոչ ստահակ ու ստախոս: Մեր գործով նույն սցենարով՝ սկզբից պայմա-նագիր կնքեց 150 000-ի, հետո վերջում 600 000-ի հասցրեց ու ընդամե-նը փորձեց հարցը դատավորի հետ միջնորդությամբ լուծել: Այսինքն ասեց՝ փող տվեք, դատավորի հետ պայմանավորվել եմ: Բա էդ դեպ-քում ինչո՞ւ էինք իրան էղքան փող տալիս, որ մի հատ էլ դատավորի հետ պայմանավորվում էր... Յետո ասում են կոռուպցիան դատարան-ներում որտեղից ա սկսվում, այ սենց մարդկային նկարագիր չունեցող վիժվածք փաստաբաններից:

ԻՍԿՈՐԻ - Ես ուղղակի զարմանում եմ, թե մարդիկ ո՞նց են վստա-հում նման... ներին, մենակ իր արտաքին տեսքը բավական է, որ դրան գործ չվստահես: Անգլերենի իմացության կեղծ իմիջ են ստեղծում իրանց համար ու ժողովրդին խաբում: Յայաստանի իբր հաջողակ փաստաբանների 99 տոկոսը համագործակցում են ոչ պակաս... կաշ-ռակեր դատավորների հետ: Ոչ մի վճիռ առանց կաշառքի չի կայաց-վում, ու բոլորը գիտեն դրա մասին՝ ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ իշխանություն-նը: Յարգելի փաստաբաններն էլ մինչեւ գործին ծանոթանալը պար-զում են, թե այդ գործի համար մարդիկ ինչքան են պատրաստվում վճարել, հետո նոր գնում են դատավորի հետ «խոսալու»: Եթե մեկը կա, որի դատական հայցն այս տարբերակով չի լուծվել, թող բարձրածայ-նի, որ գրանցենք Կարմիր գրքում:

ՄԱՆՅԻՏ - Ցավ եմ ապրում հենց մենակ նրա համար, որ նման... էլ են փաստաբան համարվում... ինքս, լինելով փաստաբան, պետք է նախեւառաջ ասեմ, որ նա պարտավոր էր տեղյակ պահել իրեն դի-մած քաղաքացիներին, որ Եվրոպական դատարան գործերն ընդուն-վում են հայերենով, եւ անգլերենի իմացության կարիք չկա: Իսկ սա, իհարկե, չի ասել, բացի այդ՝ նա շատ հանգիստ կարող էր ճշտել, թե ինչ ընթացքում է գործը, որը, իմ համոզմամբ՝ նա արել է, բայց թաքց-րել է իր պաշտպանյալներից... ստորագույն արարք, եթե ինքն ազահ չլիներ, գումարը պետք է վերադարձներ, իսկ ինչ վերաբերում է սե-մինար պարապմունք եւ նման ողորմելի ստերին, ավելի լավ է նման ցնդաբանությունների փոխարեն ներողություն խնդրի իր բոլոր վե-րեւում կարծիքներ գրած նախկին պաշտպանյալներից, գումարները վերադարձնի ու հրապարակավ ուտի իր փաստաբանական արտո-նագիրը:

ՄՐՏԱԿ - Յետաքրքիր է, որ ես փաստաբանիկն արդար դատաքն-նություն է ակնկալում իր համար... հետաքրքիր է՝ վճարե՞լ է արդեն «արդար» դատաքննության համար: Ժողովո՞ւրդ, շատ-շատերն են սրա քաշվածը, ու մի օր ես ամեն ինչը ջրի երես էր ելնելու...

ՍԵՐՊԵՅ - Տեսնես իրան ասե՞լ են, որ ստելն ու դրամաշորթությունը լավ բան չեն ու փաստաբանի համար անհարիր բաներ են: Էս դեպքն իսկական դրամաշորթություն է... խաբեությամբ գումար շորթել... տե՛սց են անում թուղթ ու գիր անողները, խաղաքարտ նայողները, որ ստի դիմաց փող են վերցնում... լրիվ նույն հանցակազմն է Արթուր Գրիգորյանի մոտ:

Յուրաքանչյուր ընթերցողի մեկնաբանությամբ իրեն պատճառված վնասը գնահատելով 3 մլն դրամ՝ Արթուր Գրիգորյանը այն բազմապատկել է 6-ով եւ որպէս փոխհատուցում՝ պահանջել 18 մլն դրամ:


Որպէս հայցի ապահովման միջոց դրամական հաշիվների վրա արգելանք դնելու վերաբերյալ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ անդանյանի որոշումը թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը նույն օրը բողոքարկել էր այն հիմքով, որ նման արգելանքը կխոչընդոտի թերթի գործունեությանը եւ կկասեցնի տպագրությունը: Եվ դատարանը ձեւափոխել էր իր որոշումը՝ կալանք դնելով միայն օրաթերթի գույքի վրա: «Յրապարակի» գլխավոր խմբագիրը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում աննախադեպ է համարել այս գործը նրանով, որ իրենց մեղադրում են ընթերցողների կարծիքները տպագրելու համար: Նա գտնում է, որ փաստաբանն այս կերպ հին հաշիվներ է մաքրում: Օհանյանը վերհիշում է Դատական դեպարտամենտի հետ ունեցած դատական գործը. «Ուղղակի մի այսպիսի զուգահեռ անցկացնեմ: Մենք Դատական դեպարտամենտի ղեկավարի հետ վեճ ունեինք դատական, որը հաշտությամբ ավարտեցինք՝ Միսակ Մարտիրոսյան՝ Միսակ Մարտիրոսյանի ներկայացուցիչը դատարանում եւ իր հայցը կազմողը այս նույն Արթուր Գրիգորյանն էր»:

Այս գործով առաջին դատական նիստը նշանակված էր նոյեմբերի 16-ին: Սակայն նիստին երկու կողմերն էլ միջնորդություն ներկայացրին այն հետաձգելու մասին:

«Յրապարակ» թերթին ժամանակ էր պետք հայցադիմումին պատասխանելու համար, իսկ հայցվորին՝ հայցադիմումը նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարանի՝ Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի վերաբերյալ տված մեկնաբանություններին համապատասխան շարադրելու համար: Երկու միջնորդությունների հիման վրա Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 1 ամսով հետաձգեց դատական նիստը:



**«Իրավագետ
իրավախախտը». ԵՊՀ-ն
ընդդեմ Հանրային
հեռուստատեսության
«Բանաձեւ» հաղորդաշարի**



Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է գտնվում Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի եւ նույն ամբիոնի դասախոս Արա Գաբուլյանի՝ պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման, հրապարակայնորեն ներողություն խնդրելու եւ հերքումը պարտավորեցնելու մասին հայցն ընդդեմ «Բանաձեւ» ՍՊԸ-ի եւ Սիրեկան (Սիրակ) Եղիազարյանի:

Հայցող կողմը՝ Պետհամալսարանը վիճարկում է «Ականատես» հաղորդման «Իրավախախտ իրավագետը» վերնագրով պատմության մեջ շարադրված տեղեկությունները:

Հաղորդումը պատմում է Սիրակ Եղիազարյանի մասին, ով դիմել է մայր բուհի մագիստրատուրա, սակայն նրա գրավոր աշխատանքը

անբավարար է գնահատվել՝ առանց բովանդակությունը ստուգելու, միայն ծավալը նկատի ունենալով: Ըստ հաղորդման՝ դասախոսը փորձել է դիմորդին ոստիկանությանը հանձնել միայն այն պատճառով, որ երիտասարդը համարձակվել է բողոքարկել:

Ըստ հայցողի՝ վերնագրի «իրավախախտ» բառը զրպարտիչ կամ վիրավորական է քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտի համար: Այն առավել եւս վիրավորական եւ զրպարտիչ բնույթ ունի, երբ վերաբերում է դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր իրավաբանին (իրավագետին)։ «Ուսանողներին իրավաբանական գիտելիքներ տվող մասնագետին իրավախախտ անվանելով՝ արատավորվում է վերջինիս պատիվը ու գործարար համբավը»: Հայցվոր կողմը հարցնում է, թե ինչպե՞ս կարող է իրավախախտը իրավագիտություն սովորեցնել եւ իրավունքի նորմերի պահպանության օրինակ ծառայել ուսանողներին:

Հաղորդման մեջ Սիրակ Եղիազարյանը պատմում է, որ հանձնել է ընդունելության քննություն Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրա ընդունվելու համար: Քննությունը հանձնելուց հետո պարզվել է, որ կտրվել է՝ ստանալով 5 միավոր, թեւ մասնագետներն ասել են, որ իր գրավորն արժանի էր առավելին, քան համալսարան ընդունվելու համար նվազագույն 8 միավորի շեմն է: Սիրակը բողոքարկել է քննության արդյունքը: Ըստ նրա՝ Ա. Գաբուզյանը իրեն կանչել է իր մոտ ու ասել, որ իրականում իրենք գրավորի բովանդակությանը չեն նայում, իրենց համար կարեւոր է ծավալը: Հետո իրեն անվանել է դեմագոգ ու հեռախոսն է փնտրել, որ ոստիկանություն կանչի:

Ըստ հայցվորների՝ վերոնշյալը իրականությանը չհամապատասխանող արտահայտություն է, քանի որ Քրեական իրավունքի ամբիոնի դասախոսները, այդ թվում՝ նաեւ Արա Գաբուզյանը, նման բան Սիրակին չեն ասել: Իսկ պատասխանողի պնդումն ինքնին զրպարտություն է Քրեական իրավունքի ամբիոնի վերաբերյալ, քանի որ կասկածի տակ է դնում ամբիոնի դասախոսների կողմից գրավոր աշխատանքների արդար եւ օբյեկտիվ գնահատումը, ազդակ է ստեղծում այլ դիմորդների համար՝ կասկածելու ամբիոնի անաչառության վրա:

Հաղորդման մեջ ասվում է, որ ՀՀ ԿԳ նախարարությունը, որն անընդհատ բարձրաձայնում է, որ պայքարում է կոռուպցիայի դեմ, Սիրակի գործին ուշադրություն չի դարձրել, այն դեպքում, երբ թաքնված կոռուպցիայի կասկած հայտնել է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ:

Հայցվորներն այս ամենի վերաբերյալ հայտնում են, որ հաղորդման մեջ հնչած արտահայտություններն ավելի շատ արված են հաղորդաչարի բովանդակության ենթատեքստում կոռուպցիոն խնդիրներին անդրադառնալու եւ դրանք քննարկելու ուղղվածությունը ապացուցելու համար: Հայցվորները, անդրադառնալով պատասխանողի այն արտահայտությանը, որ թաքնված կոռուպցիայի կասկած հայտնել է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ, միջնորդում են դատարանին դատական նիստին իրավիճակը այդ իրավաբանական խմբին, որը կիլիմավորի, թե ինչ փաստական հանգամանքների հիման վրա են իրենք հանգել այդ եզրակացությանը, այլապես կապացուցվի հայտարարության անհիմն եւ զրպարտիչ լինելը:



Հաղորդաշարի իրավաբան-փորձագետը հաղորդաշարի ընթացքում նշել է, որ անկախ նրանից՝ մայրաքաղաքից ես, թե այլ քաղաքից, բոլորն ունեն հավասար իրավունքներ: Ի պատասխան փորձագետի հայտարարության՝ հայցվորները նշում են, որ նման հաղորդման ընթացքում, ելնելով լրագրողական մասնագիտական եւ էթիկայի կանոններից, ցանկացած արտահայտված կասկած պետք է լինի հիմնավոր եւ պատճառաբանված: Հայցվորները տվյալ դեպքում կարծում են, որ հայտարարությունը գրպարտիչ է, քանի որ անհիմն է եւ մեղադրում է քրեական իրավունքի ամբիոնին ՀՀ սահմանադրության խախտման մեջ:

Փորձագետը շարունակում է՝ ասելով, որ համալսարանի իրավագետները այլահավածության մի նոր ալիք են սկսել եւ անում է հետեւյալ արտահայտությունը. «Եթե մենք ասում ենք՝ բոլորը հավասար են օրենքի առջեւ, տվյալ դեպքում ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնը պատասխանում է, որ մենք մեր ուսանողներին այլ կերպ ենք վերաբերվում, քան, կնեքեք արտահայտությանս համար, դրսից եկած ուսանողներին»:

Այս ամենի վերաբերյալ հայցվորները հայտնել են իրենց դիրքորոշումն առ այն, որ անընդունելի եւ զրպարտիչ է այն պնդումը, որ համալսարանի իրավագետները այլահավածության մի նոր ալիք են սկսել, քանի որ սույն արտահայտությունը մեղադրում է ԵՊՀ իրավաբանների այլահավածության մեջ: Հայցվորները նշում են, որ փորձագետը, ըստ էության, խեղաթյուրված մեկնաբանելով համալսարանի իրավաբանների խոսքը, փորձում է ներկայացնել հաղորդման ընթացքում իր արտահայտած միտքը ԵՊՀ-ին եւ իրավագիտության ֆակուլտետին վարկաբեկող լույսի ներքո:

Հայցվորները մեջբերում են նաեւ ՀՀ ԿԳ նախարարին ուղղված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մասնագետների կարծիքից մի հատված, որը վերաբերում է հենց քննարկվող արտահայտությանը, եւ որը կատարվել է Սիրեկան Եղիազարյանի բողոքի հիման վրա նրա գրավոր աշխատանքի կրկնակի ստուգման արդյունքում. «...Առանձին հարցերի համար դրված գնահատականները մեղմ մոտեցման արդյունք են. մեր ուսանողների նկատմամբ պահանջներն ավելի խիստ են, ընթացիկ քննությունների ժամանակ նրանց նմանօրինակ պատասխանները ավելի ցածր են գնահատվում»: Ըստ հայցվոր կողմի՝ ավելի քան ակնհայտ է, որ հաղորդման փորձագետը, խեղաթյուրելով արտահայտված միտքը, կատարել է սխալ եզրակացություններ, անհիմն հայտարարություններ արել եւ զրպարտել ԵՊՀ-ին՝ ի դեմս իրավագիտության ֆակուլտետի:

Ըստ հայցվորների՝ ողջ հաղորդումը, ըստ էության, ուղղված է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի զրպարտմանը, եւ դա ապացուցվում է հաղորդման վերջում հաղորդավարի հետեւյալ արտահայտությամբ. «Պատմությունը մեկ դասախոսի կամ մեկ ամբիոնի սխալն է, սա դեռ չի նշանակում, որ ապականված է ամբողջ կրթական համակարգը, բայց որպեսզի մեկ մեղավորը պատժվի ու նրա վատ օրինակը մոլախոտի պես չտարածվի...»:

Հայցվորները գտնում են, որ տպավորություն է ստեղծվում, որ հաղորդման ընթացքում խոսվում է ՀՀ-ում կոռուպցիայի օջախի մասին, որը շտապ պետք է մարել, եւ դրա առաջամարտիկն է դարձել «Ակա-նատես» հաղորդաշարը: Հայցվորները ավելացնում են, որ հաղորդու-

մը, դիտավորյալ նսեմացնելով հայցվորներին, փորձում է լսարան շահել եւ հիմնավորել դոնոր կազմակերպության կողմից կոռուպցիան ընկալադատելու համար ստացած գումարները:

Հայցվորները նաեւ կարծում են, որ հաղորդումը, ի դեմս հաղորդավարի հետեւյալ արտահայտության, թե «գուցե այս պահին, հերթական խաբեբային...», վիրավորում է նաեւ հայցվորներին՝ նրանց խաբեբա անվանելով:

Ելնելով վերոգրյալից՝ հայցվորները կարծում են, որ «Բանաձեւ» ՍՊԸ-ի կողմից պատրաստվող եւ հեռարձակվող «Ականատես» հաղորդման ընթացքում վիրավորանքի եւ զրպարտության միջոցով արատավորվել են ԵՊՀ-ի, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի եւ Զրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր Արա Գաբուզյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը: Հայցվորները դատարանից պահանջում են՝

ա/ պարտավորեցնել Սիրեկան Եղիազարյանին եւ «Բանաձեւ» ՍՊԸ-ին, «Բանաձեւ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «Ականատես» հաղորդաշարին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ հաջորդող հաղորդման ընթացքում հրապարակային, բանավոր ներողություն խնդրել ԵՊՀ-ից եւ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից՝ տեղադրելով այդ տեսանյութը նաեւ հաղորդաշարի ինտերնետային կայքում եւ YouTube-ում,

բ/ պարտավորեցնել «Բանաձեւի» ինտերնետային կայքի գլխավոր էջում՝ երեւացող տեղում, ինչպես նաեւ <http://akanates.banadzev.com> ինտերնետային կայքի գլխավոր էջում եւ 28.05.2011 թ. տեղադրված էջերում, երեւացող վայրում հրապարակել դատարանի վճիռը՝ նշումով «Զ. Երեւան, Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է «Բանաձեւ» ՍՊԸ-ին եւ Սիրեկան Եղիազարյանին ներողություն խնդրել Երեւանի պետական համալսարանից եւ ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից «Իրավախախտ իրավագետը» հաղորդման ընթացքում հասցված վիրավորանքի եւ զրպարտության համար: Ներկայացվում է դատարանի վճռի ամբողջական տեքստը»:

Այս գործով նախնական դատական նիստի օր էր նշանակվել նոյեմբերի 16-ը: Սակայն այդ օրը այն հետաձգվեց հայցվոր կողմի բացակայության պատճառով, ինչպես նաեւ դատավոր Ս. Թադեւոսյանը հայտնեց, որ պետք է ծանոթանա նոյեմբերի 15-ին ՍԴ-ի կայացրած որոշման հետ: Հերթական նիստի օր նշանակվեց դեկտեմբերի 21-ը:

Հ.Գ. Նշենք, որ 2011 թ. հուլիսից «Բանաձեւ» ՍՊԸ-ի հաղորդումները, այդ թվում՝ «Ականատեսը», Հանրային հեռուստատեսությամբ եթեր չեն հեռարձակվում:



Թե ինչպես էին պաշտպանվելու պետության երեւելիները, եթե չլիներ անվանարկման իրավունքը

Միացյալ Թագավորությունում անվանարկման իրավունքը (defamation law) ծագել է տպագրության գյուտից էլ առաջ, տասնմեկերորդ դարում: Գիրք Ղեւտացն ասում է. «Ձեր ժողովուրդին մեջ չարախոսություն ընելու մի պտտիք»: Եկեղեցականները՝ միջնադարի այդ բազմահար դասը, առաջին անգամ ներմուծեցին անվանարկումը որպես քրեական հանցագործություն՝ Մրդոք գյուղի բնակիչներին աստվածաշնչյան այդ պատվիրանը խախտելու համար կալանակոծողերի մեջ նստեցնելու համար: Ի սկզբանե բանավոր անվանարկումը (slander) քրեական հանցագործություն էր: Առաջին օրենքը (statute) ընդունվեց 1275թ., որը եւ ամրագրեց scandalum magnatum հանցագործությունը՝ «թագավորության երեւելիներին» պաշտպանելու համար: Այդ երեւելիները, սակայն, պաշտպանվում էին ոչ երբեք զրպարտիչ կամ վիրավորական խոսքից, այլ այն անմեղ ճշմարտությունից, որը կարող էր պետության հպատակներին ապստամբության դրդել նրանց դեմ: Ինչպես նկատել էր Գլխավոր դատավոր Լորդ Քոքը, «Որքան մեծ է ճշմարտությունն, այնքան մեծ է զրպարտությունը» եւ «Կինը երբեք չի վշտանա, եթե նրան ասեն, որ իր քիթը կարմիր է, եթե չիմանա, որ իր քիթն, իրոք, կարմիր է»: Յետեւաբար՝ անվանարկման իրավունքը ծառայում էր զուտ թագավորության ներսում կայունություն եւ հասարակական կարգ ապահովելու նպատակին: XV դարում ստեղծված եւ վերին դատական ատյան հանդիսացող Աստղային պալատն աջ ու ձախ կիրառում էր անվանարկման իրավունքը՝ լռեցնելու միապետի ընդդիմախոսներին: Պատիժները բազմազան էին՝ մեղավորների ճակատները խարանելուց սկսած մինչեւ նրանց քիթ ու ականջ կտրելը, որպեսզի նրանց մտքով էլ երբեք չանցնի ապագայում եւս խաթաբել թագավորության ու նրա երեւելիների անդորրը:

Որպես քաղաքացիական իրավախախտում՝ անվանարկումը ներմուծվեց Աստղային պալատի կողմից, երբ վերջինս արգելեց մենամարտը՝ պատիվն ու բարի համբավը վերականգնելու ժամանակի միակ ընդունված միջոցը: Իրենց պատիվն ու հեղինակությունը կորցրած ազնվականների մի ստվար զանգված անմիջապես հեղեղեց բրիտանական դատարանները: Այս իրավունքի զարգացումները հանգեցրեցին նրան, որ XVIII դարում ընդունվեց «Չրպարտության մասին» Ֆոքսի ակտը, որով երդվյալ ատենակալներին, այլ ոչ թե՛ դատավորին վերապահվեց բառերի անվանարկող իմաստը որոշելու իրավունքը: Սույն ակտով հայցվորն էր կրում բառերի՝ իրականությանը չհամապատասխանելու, չարամտորեն արտահայտված կամ հրապարակված լինելու եւ իրական վնաս պատճառելու պարտականությունը: Բարոյական վնասի փոխհատուցման չափերն աստիճանաբար սկսեցին հասնել աստղաբաշխական թվերի, քանի որ դա-



տավորները ելևում էին այն կանխավարկածից, որ փոխհատուցումը պետք է արտացոլի անվանարկված անձի անվան իրական արժեքը, այլ ոչ թե իրապարակողին պատժի սխալի համար: Ժամանակներն այնպիսին էին, որ բարձր հասարակությունը պարտավորեցնում էր հասարակական գործիչներն ջանք ու եռանդ չինայել՝ մաքրելու իրենց հեղինակությանը հասցված թեկուզ և աննշան բծերը, իսկ դատավորներն էլ օգնում էին նրանց՝ ստեղծելով նրանց համար անբիծ հեղինակության կանխավարկած, ինչի արդյունքում ապացուցման պարտականությունը տեղափոխվեց պատասխանողի վրա, որը և պետք է ապացուցեր իր իրապարականումները հիմնավորող փաստական հանգամանքները:

Այն ժամանակներից ի վեր իրադրությունն այնքան էլ չի փոխվել, և անվանարկման հայցերն այսօր էլ մի շարք հասարակություններում ընկալվում են որպես հասարակության ունեւոր ու բարեկեցիկ երեւելիների կողմից նախաձեռնած դատավարություններ, մինչդեռ այդ երեւելիները հենց այն մարդիկ են, ում գործունեությունը պետք է մշտապես գտնվի հանրության ուշադրության կենտրոնում և ում չպետք է թույլատրվի իրենց գործունեության մասին հանրությանը տեղեկացնելու հարցում խոչընդոտներ ստեղծել բարեխիղճ հետաքննող լրագրության ճանապարհին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջինն էր, որ սահմանեց այս սկզբունքն իր հայտնի *Լինգենս ընդդեմ Ավստրիայի* գործով՝ ի լուր Եվրոպայի (ու մնացյալ մայրցամաքների) հայտարարելով. «Քննադատության ընդունելի շրջանակներն ... ավելի լայն են քաղաքական գործիչների, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություններ վերջիններին, քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռում պաշտպանելու նաեւ այլոց հեղինակությունն, այն է՝ բոլոր անձանց հեղինակության պաշտպանություն և նախատեսում, և այս պաշտպանությունը տարածվում է նաեւ քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է հավասարակշռել քաղաքական հարցերի բաց քննարկման շահի հետ» (*Lingens v Austria*, 1986, 42-րդ պարբերություն): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քաղաքական գործիչների թվին է դատում նաեւ համայնքների ղեկավարներին (հաբրովսկին ընդդեմ Լեհաստանի, 2007, (*Dabszowski v Poland*,) 28-րդ պարբերություն):

Քննադատության ընդունելի սահմանները լայն են նաեւ քաղաքացիական ծառայողների նկատմամբ: Իր *Յանովսկին ընդդեմ Լեհաստանի* վճռում Եվրոպական դատարանն ամրագրեց. «Ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնող քաղաքացիական ծառայողների հարցում ընդունելի քննադատության սահմաններն ավելի լայն են: Հասկանալիորեն այս սահմանները որոշակի հանգամանքներում կարող են լինել ավելի լայն իրենց լիազորություններն իրականացնող քաղաքացիական ծառայողների նկատմամբ, քան մասնավոր անձանց: Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ քա-

դաբացիական ծառայողները գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի եւ արարքի մանրակրկիտ քննարկման համար այնպես, ինչպես բաց են քաղաքական գործիչները, եւ, ըստ այդմ, պետք է նրանք հավասար վերաբերմունքի արժանանան իրենց գործողությունների քննադատության հարցում: Իրականում, քաղաքացիական ծառայողները պետք է ունենան հանրության վստահությունը՝ ազատ անտեղի անհանգստությունից, եթե նրանցից ակնկալվում է հաջողությամբ իրականացնել իրենց առջեւ դրված խնդիրները, եւ, հետեւաբար, կարող է անհրաժեշտություն առաջանալ իրենց պարտականությունները կատարելու ընթացքում նրանց պաշտպանելու վրդովեցուցիչ եւ վիրավորական խոսքերով հարձակումներից» (Janowski v Poland, 1999, 33-րդ պարբերություն):

Չավատարիմ մնալով իր այս սկզբունքին՝ Եվրոպական դատարանն իր *Պրագերը եւ Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի* վճռով առավել մեծ հանդուրժողականության ուղերձ է հղում նաեւ ներպետական դատարանների՝ իր գործընկերների՝ սահմանելով. «Մամուլն այն միջոցներից է, որոնց շնորհիվ քաղաքական գործիչները եւ հանրային կարծիքը կարող են հավաստիանալ, որ դատավորներն իրականացնում են իրենց ծանր պարտականություններն այնպիսի եղանակով, որը համապատասխանում է նրանց վստահված գործառույթի նպատակին: Չարկ է, սակայն, ուշադրություն դարձնել հասարակության մեջ դատական իշխանության ամանձնահատուկ դերին: Որպես արդարադատության երաշխավոր՝ ...այն պետք է վայելի վստահություն, եթե ակնկալվում է, որ այն պետք է հաջողությամբ կատարի իր պարտականությունները: Չետեւաբար, թերեւս հարկ լինի պաշտպանել այդ վստահությունը կործանարար հարձակումներից, որոնք, ըստ էության, անհիմն են, հատկապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննադատության թիրախ դարձած դատավորները զսպվածություն դրսեւորելու պարտավորություն ունեն, ինչը թույլ չի տալիս նրանց պատասխանել այդորինակ քննադատությանը» (Prager and Oberschlick v Austria, 1995, 34-րդ պարբերություն):

Քննադատության սահմաններն ավելի լայն են նաեւ տեղական իշխանության մարմինների՝ ավագանիների, խորհուրդների եւ այլնի պարագայում, քանի որ «տեղական խորհուրդը, լինելով ընտրովի քաղաքական մարմին եւ կազմված լինելով տեղական ընտրողներից մանդատ ստացած անձանցից, պետք է քննադատության հանդեպ դրսեւորի հանդուրժողականության առավել բարձր աստիճան» (*Լոմբարդոն եւ այլք ընդդեմ Մալթայի* (Lombardo and Others v Malta), 2007, 54-րդ պարբ.):

Եվ առհասարակ՝ քննադատության սահմաններն առավել լայն են ցանկացած մասնավոր անձի նկատմամբ, ով մտնում է հանրային քննարկումների ասպարեզ: Այսպիսով, *Բորդոզիչն ու Վուժինն ընդդեմ Սերբիայի* գործով ՄԻԵԴ-ը սահմանել է. «Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք Ս.Կ. ն կարող է դիտվել որպես հասարակական գործիչ, Դատարանը վերահաստատում է, որ մասնավոր անձը բացում է ինքն իրեն հանրության քննարկման համար, երբ մտնում է հանրային քննարկումների ասպարեզ: Տվյալ դեպքում կողմերը համաձայն են, որ Ս.Կ.-ն, որը փաստաբան էր, ներկայացրել էր գործարանի ղեկավարությանը մեծ աղմուկ հանած մի սնանկության գործով եւ այդպիսով դարձել հանրահայտ անձ Կիլինդա քաղաքում: Չաշվի առնելով այն հանգամանքը, որ հողվածները հրապարակվել էին այդ

քաղաքի տեղական թերթում՝ Դատարանն ընդունում է, որ ներպետական դատարանը ճիշտ է որակել նրան որպես հասարակական գործիչ: Ս.Կ-ն մուտք էր գործել հանրային քննարկումների ասպարեզ եւ, հետեւաբար, նրան հասցեագրված որեւէ քննադատության հարցում նրա հանդուրժողականության շնմբ պետք է ավելի բարձր լիներ» (Bodrozic and Vujin v Serbia, 34-րդ պարբերություն): Այս սկզբունքի ընթերցումից ակնհայտ է դառնում, որ որեւէ եվրոպական հասարակությունում լայն քննարկման առարկա դարձած որեւէ հարցի մասնակից մասնավոր անձինք, այդ թվում՝ աղմկահարույց գործերում ներգրավված փաստաբանները, նույնպես պետք է առավել հանդուրժող լինեն քննադատական խոսքի նկատմամբ:

Գալով հայաստանյան իրականությանը, մասնավորապես՝ դատական պրակտիկային, ականատես եւք լինում միանգամայն այլ պատկերի: Այսպես՝ 2010թ. դեկտեմբեր ամսին ԶԶ ազգային ժողովի երեք պատգամավորներ հայց ներկայացրեցին «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր ընկերության դեմ մի հողվածի համար, որն իրենց պնդմամբ գրպարտություն էր պարունակում՝ պահանջելով ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված ոչ-նյութական վնասի փոխհատուցման առավելագույն չափը՝ 2 000 000-ական ԶԶ դրամ: Առանց երկար-բարակ մտածելու՝ առաջին ատյանի դատարանը բավարարեց նրանց պահանջը՝ բերելով հետեւյալ հիմնավորումը. «Սույն քաղաքացիական գործով հայցվոր Սամվել Ալեքսանյանը (թիվ 007 ընտրատարածքից ընտրված), Լեւոն Սարգսյանը (թիվ 005 ընտրատարածքից ընտրված), Ռուբեն Հայրապետյանը (թիվ 001 ընտրատարածքից ընտրված) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ են եւ որպես Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության ներկայացուցիչներ՝ ունեն որոշակի ընկալելի դիրք հասարակությունում, ինչը պարտավորեցնում է ունենալ անբասիր վարքագիծ եւ օրինակելի կեցվածք, այնինչ՝ պատասխանողի կողմից հողվածում տարածած տեղեկությունները վերը նշված հանցագործությունների հետ այդ անձանց հնարավոր առնչության փաստի վերաբերյալ այլ տեղեկատվություն են հաղորդում ընթերցողին՝ վտանգելով հայցվորների՝ որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների նկատմամբ հասարակական վերաբերմունքի օբյեկտիվ դրսեւորումը: Հանրության կողմից հայցվորներին տրվող գնահատականը ունի չափազանց կարեւոր գործնական նշանակություն, քանի որ բացասական գնահատականը նսեմացնում է հայցվորների՝ որպես անձի եւ ԶԶ ազգային ժողովի պատգամավորի, հեղինակությունը, խոչընդոտներ է ստեղծում հասարակական, տնտեսական հարաբերություններին լիարժեք մասնակցելու համար: Հաշվի առնելով վերոգրյալը, նկատի ունենալով հասարակական կյանքում հայցվորների՝ որպես օրենսդիր իշխանության ներկայացուցիչների զբաղեցրած դիրքը, եւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գրպարտող տեղեկությունները տարածվել են 7480 տպաքանակով հրատարակվող օրաթերթում՝ հասու դառնալով հասարակության լայն զանգվածներին, դատարանը փոխհատուցման չափը սահմանում է սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով յուրաքանչյուր հայցվորի մասով»:



Այս դիրքորոշումը հետագայում վերահաստատում է ևս եւս 33 վե-րաքննիչ դատարանը: 33 Վճռաբեկ դատարանը եւս, առանց որեւէ երկ-մտանքի, վերադարձնում է սույն գործով վճռաբեկ բողոքը:

Սա իրավամբ վտանգավոր զարգացում էր, քանի որ ընդամենը մի քա-նի օր պահանջվեց մեկ այլ պատգամավոր-օլիգարխի շահերը ներկայաց-նող փաստաբաններից մեկին իր փաստարկումներում տառացիորեն կրկնե-լու դատարանի վերոհիշյալ հիմնավորումը: Բարեբախտաբար, այդ գործը հայաստանյան այն միակ դատավորի վարույթում գտնվող գործերից մեկն էր, որին ՄԻԵԴ-ի նախադեպերի իմացությունը թույլ էր տվել ճշտորեն կիրա-ռել ՄԻԵԴ-ի վերոհիշյալ սկզբունքը: Եթե հիշենք, որ Նույն դատավորի կողմից 2009թ. արտահայտվելու ազատությանը վերաբերող մեկ այլ գործ (Իշելանի քաղաքապետարանն ընդդեմ «Յետաքննող լրագրողների») որեւէ հոլում չէր պարունակում ՄԻԵԴ-ի նախադեպերին, առաջընթացն, անկասկած, մեծ է: Այս կարեւոր սկզբունքի իմացության բացակայությունն արտացոլված է մեկ այլ վճռում, երբ դատարանը տարբերակում է անում քաղաքական գործիչ ու «33 Սահմանադրության 56.1-րդ հոդվածով սահմանված անձեռնմխելիու-թյամբ օժտված 33 երկրորդ նախագահի ընտանիքի անդամների» միջեւ, ինչը, կարծես թե, հուշում է, որ 33 Սահմանադրությամբ անձեռնմխելիու-թյամբ օժտված տված քաղաքական գործիչը տարբեր է մնացած քաղաքա-կան գործիչներից (ընդհանուր իրավասության դատարան, Բելլա եւ Սեդ-րակ Զոչարյաններն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի):

Յայնստանյան իրականության դրական զարգացումների թվին է պատկանում այն հանգամանքը, որ 33 սահմանադրական դատարանն իր 2011 թ. Նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշմամբ ամրագրեց, որ 33 դա-տարանները պետք է կիրառեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած սկզբունքները, այդ թվում՝ հասարակական ու քաղաքական գործիչների քննադատու-թյան առավել լայն սահմանների մասին սկզբունքը (ՍԴՈ-997, 25-րդ էջ):

Մնում է տեսնել, թե հետայսու գործնականում ինչ կիրառություն կգտնի այս սկզբունքը եւ ինչպես մեր հասարակության երեւելիները այլեւս կփորձեն օգտագործել անվանարկման իրավունքն իրենց ուղղ-ված քննադատական ձայները լռեցնելու համար:

Լուսինե Հակոբյան
իրավաբան

Երբ փաստերը ճշմարիտ են կամ ողջամտորեն հրապարակված

Երբ լրագրող եք (խմբագիր, հրատարակիչ կամ լրատվամիջոցի սեփականատեր), հասկանալիորեն ապահովագրված չեք պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի արատավորման հետեւանքով պատժառված վնասի փոխհատուցման մասին հայցերից: Դրանք իսկական գլխացավանք են եւ, որպէս կանոն, ձեզ են հասնում այն գեղեցիկ ձմեռային օրերին, երբ խմբագրությունում նստած՝ պատուհանից հիանում եք դրսում պարող ձյան փաթիլներով ու քթի տակ երգում Սվիրիդովի «Ձյունամորիկը»: Չէ՞ք համաձայնի: Լավ, գուցէ եւ դուք դրանք ստացել եք ամենասովորական օրերից մի օր, բայց այստեղ դա չէ Եականը: Նման հայց ստանալիս՝ համապատասխան իրավաբանական օգնություն հայցելուց հետո (ցանկալի է՝ այս գլխացավանքից գլուխ հանող փաստաբանից) պետք է մտածեք այն մասին, թե ինչպէս եք պաշտպանվելու հայցում շարադրված մեղադրանքներից:

Վերստին ամենայն մանրամասնությամբ խմբագրի, իրավաբանի, խմբագրության մնացած լրագրողների, հարեւան-բարեկամի եւ ցանկացած այլ ողջամիտ անձի հետ միասին ընթերցելով վիճահարույց հոդվածը՝ կայացնում եք հետեւյալ որոշումներից մեկը.

1. Ես հրապարակել եմ տեղեկություններ, այն է՝ փաստեր կամ փաստական տվյալներ եւ ունեմ բավարար ապացույցներ գրածիս ճշմարտացիությունն ապացուցելու համար:
2. Ես հրապարակել եմ տեղեկություններ, ապացույցներս բավարար չեն, բայց խնդիրն առնչվում է հանրային շահին, գործել եմ պրոֆեսիոնալ էթիկայի շրջանակներում, բարեխիղճ, ազնիվ ու պատասխանատու կերպով. այլ կերպ ասած՝ առաջնորդվել եմ «ողջամիտ հրապարակման» սկզբունքով:
3. Ես հրապարակել եմ գաղափար՝ կարծիք կամ գնահատողական դատողություն հանրային շահին առնչվող հարցի շուրջ՝ ունենալով բավարար փաստական հիմք:

Առաջին որոշումը կայացնելուց հետո հայտնվելով անկախ ու անաչառ դատարանի առջեւ՝ դուք պետք է որ խնդիր չունենաք, ու նույնիսկ կարելիություն չի ունենա այն հանգամանքը, որ որեւէ անձի անվանարկել եք չարամտորեն, օրինակ՝ պնդել եք, որ նա կաշառք է վերցրել՝ վրեժ լուծելու այն բանի համար, որ նա, լինելով ձեր ոխերիմ հարեւանը, օրեր շարունակ անհանգստացրել է ձեզ իր ռաբիզ երաժշտությամբ: Եթե կարող եք բերել բավարար ապացույցներ՝ հաստատելու, որ նա այդ կաշառքն, իրոք, վերցրել է, ձեր անձնական շարժառիթները



ոչ մի նշանակություն չեն ունենա:

Ավելի բարդ է իրավիճակը հրապարակման՝ ողջամտության սահմաններում արված լինելն ապացուցելու հարցում, մի բան, որը համաեվրոպական անվանարկման իրավունքի պրակտիկայում հայտնի է որպես պաշտպանություն՝ «ողջամիտ հրապարակման» սկզբունքի, իսկ բրիտանականում՝ որպես պաշտպանություն՝ հանրային շահի վկայակոչմամբ:

Իհնչ է իրենից ենթադրում այս սկզբունքը: Սրա լավագույն պարզաբանումը տվել է Միացյալ Թագավորության Լորդերի պալատը, որը, բացի բրիտանական խորհրդարանի վերին պալատը լինելուց, նաեւ պետության բարձրագույն դատական ատյանն է: Այսպես՝ Ալբերտ Ռեյ-նոլդսը՝ Իռլանդիայի նախկին վարչապետը, հայց էր ներկայացրել «Sunday Times» թերթի անգլիական խմբագրության դեմ, որի հրապարակման մեջ նա մեղադրվել էր խորհրդարանին խաբելու եւ իր կռաւիցիոն գործընկերոջը դավաճանելու մեջ: Հրապարակումը չէր անդարձարձել Ռեյնոլդսի՝ այս հարցի շուրջ խորհրդարանին տված պարզաբանումներին: Մինչդեռ թերթի իռլանդական տարբերակն ավելի երկար էր հավասարակշռված տեքստ էր հրապարակել՝ ընդգրկելով նաեւ Ռեյնոլդսի պարզաբանումները: Երբ հայցը հասավ Լորդերի Պալատ, վերջինս բավարարեց այն եւ հաստատեց 10 չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնեն դատավորները՝ անվանարկման հայցեր քննելիս: Դրանք, սակայն, չպետք է օգտագործվեին որպես արգելքներ կամ խոչընդոտներ լրատվամիջոցների կողմից արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման ճանապարհին, ինչպես որ սկզբնական շրջանում դա արել են Միացյալ Թագավորության դատարանները:

Այդ չափանիշներն են.

1. Մեղադրական հայտարարությունների լրջությունը. որքան ավելի լուրջ է մեղադրանքը, այնքան ավելի ապատեղեկացված է հանրությունը եւ մեծ է անձին պատճառված վնասը:
2. Տեղեկությունների բնույթը, եւ թե որքանով է թեման մտահոգում հանրությանը: Հանրությունը ոչ միայն համապետական մասշտաբ է ենթադրում, այլեւ՝ համաքաղաքային ու նույնիսկ համազյուղական:
3. Տեղեկությունների աղբյուրը. աղբյուրներից շատերը գուցե եւ ուղղակի տեղեկատվություն չունենան իրավիճակի մասին, շատ աղբյուրներ էլ հաճախ կարող են սրել իրենց կացիները, այսինքն՝ ունենալ անձնական շարժառիթներ, կամ վճարվել իրենց պատմությունների համար:
4. Տեղեկությունների կարգավիճակը. մեղադրական հայտարարությունը գուցե արդեն քննության առարկա է, եւ այդ քննությունը կարող է հուսալի աղբյուր համարվել եւ, ըստ այդմ, արժանի լինել հարգանքի:
5. Քայլերը, որոնք ձեռնարկվել են տեղեկությունները ստուգելու համար. ողջամիտ քայլեր չձեռնարկելու դեպքում խոսք չի կարող լինել

պատասխանատու լրագրության մասին:

6. Հարցի հրատապությունը եւս կարելու է, քանի որ լուրերը, որպէս կանոն, շուտ փչացող ապրանքների թվին են պատկանում:
7. Արդյո՞ք հայցվորի հետ կապ հաստատվել է մեկնաբանություն ստանալու համար. գուցէ նա ունի այնպիսի տեղեկություններ, որ չունեն կամ չեն ցանկացել բացահայտել մյուսները: Այդուհանդերձ, միշտ չէ, որ հայցվորի հետ կապվելը կարող է անհրաժեշտ լինել: Լրատվական իրավունքի լավագույն մասնագետներից մեկի՝ Ջեֆֆրի Ռոբերտսոնի կարծիքով՝ հայցվորը չպետք է բողոքի, եթէ անհասանելի է եղել օբյեկտիվ պատճառներով կամ միտումնավոր: Այդ մասին, իհարկէ, պետք է նշել նյութում: Հայցվորի հետ կապվելը կարող է անհրաժեշտ չլինել, եթէ ինքնըստինքյան հասկանալի է, որ նա որեւէ բացատրություն չի տալու կամ արդէն տվել է, կամ եթէ այդ անելով դուք վտանգելու եք ձեր աղբյուրներին, կամ դա հնարավորություն կտա դատավորին կանխելու ձեր հրապարակման լույսընծայումը:
8. Բարեխիղճ լրագրության սկզբունք է նաեւ այն, թէ որքանով է ձեր նյութը արտահայտում հայցվորի պատմության էությունը:
9. Հողվածի երանգավորությունը. թերթը կարող է հարցեր բարձրացնել կամ քննություն անցկացնելու ուղերձ հղել: Կարիք չկա, որ այն որդեգրի մեղադրական հայտարարությունները՝ որպէս փաստեր:
10. Հրապարակման հանգամանքերը, այդ թվում՝ ժամանակը: Եթէ նյութը սպասվող աղետի կամ սննդային թունավորման թեմայով է, ապա լրագրողական շտապողականությունն այստեղ արդարացված է:

Ռեյնոլդսի գործն, այսպիսով, ամրագրեց, որ եթէ ձեր ձեռքի տակ եղած տեղեկությունները վերաբերում են այնպիսի թեմայի, որը հանրության մտահոգության առարկա է, դրանք ստուգելու համար ձեռնարկել եք ողջամիտ քայլեր ու ողջամիտ են նաեւ ձեր աղբյուրները, նույնիսկ եթէ հետագայում պարզվի, որ այդ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, դրանք հրապարակելու դեպքում դուք որեւէ իրավունք խախտած չեք լինի: Սակայն այստեղ կա եւս մեկ պայման, այն է՝ չարամտության՝ իրական կամ իրավական, բացակայությունը: Իրական չարամտությունը ենթադրում է չարացածություն կամ անձնական շահի, մինչդեռ իրավական չարամտությունը ենթադրում է անազնվություն կամ ճշմարտության չմտածված անտեսում: Ռեյնոլդսն, այսպիսով, խիստ արդյունավետ պաշտպանություն էր առաջարկում բարեխիղճ հետաքննող լրագրությանն այն դեպքերում, երբ լրագրողական աղբյուրները հրաժարվում էին ցուցմունք տալ՝ վախենալով հաշվեհարդարից կամ երբ պարզվում էր, որ այն պատմությունը, որը հրապարակման պահին լրագրողին ճշմարտաման էր թվացել, հանկարծ իրականությանը չհամապատասխանող էր ճանաչվում:

Չամիլն ընդդէմ «Wall Street Journal» թերթի գործը եկավ վերահաս-



տատելու Ռեյնոլդսի՝ «պաշտպանություն հանրային շահի վկայակոչմամբ» սկզբունքը: Ջամիլի գործով «Wall Street Journal» թերթի՝ Սաուդյան Արաբիայի թղթակից Ջեյմս Դորսին մի արաբ գործարարից իմացել էր, որ Սաուդյան Արաբիայի կառավարությունը գաղտնի համաձայնություն ունի Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության հետ՝ վերահսկելու իր առավել խոշոր ու ազդեցիկ ընկերությունների բանկային հաշիվները: Այս տեղեկությունը հաստատել էին երկրի խոշորագույն բանկերից մեկի սեփականատերը, կառավարության պաշտոնյաներից մեկը եւ երկու ամերիկացի դիվանագետներ: Թղթակիցը խոստացել էր չբացահայտել նրանց անունները: Այնուհետեւ թերթի ամերիկյան թղթակից Գլեն Սիմփսոնը կապվել էր ԱՄՆ-ի գանձապետարանի՝ իր հուսալի աղբյուրներից մեկի հետ, որը չէր ժխտել այդ տեղեկությունները: Նշված խոշոր ու ազդեցիկ ընկերությունների թվում էր արաբ միլիարդատեր Մուհամեդ Ջամիլի ավտոմոբիլային ընկերությունը: Հրապարակումից մեկ օր առաջ Դորսին կապվել էր այդ ընկերության ներկայացուցչի հետ եւ պարզել, որ Ջամիլը երկրում չէր: Այսպիսով, նրան չէր հաջողվել կապ հաստատել Ջամիլի հետ, եւ հրապարակումը լույս էր տեսել մեկ օր անց հետեյալ վերնագրով՝ «Սաուդյան Արաբիայի պաշտոնյաները վերահսկում են որոշ բանկային հաշիվներ. թիրախում հավանական ահաբեկչական առնչություններ ունեցողներն են», հոդվածում տեղ էին գտել որոշ անուններ, այդ թվում՝ Մուհամեդ Ջամիլին: Ջամիլի հայցով շատ արագ քաղաքացիական գործ հարուցվեց, «Wall Street Journal» թերթի դեմ: Առաջին ատյանի դատարանի վճիռը թերթի դեմ էր, եւ իր հիմնավորումներում դատավորը նշել էր, որ. 1. հոդվածը չէր տուժի, եթե անուններ նշելու փոխարեն՝ այն պարունակեր «Սաուդյան Արաբիայի ազդեցիկ գործարարներից մեկը» ձեւակերպումը, 2. քանի որ հոդվածը բացահայտում էր ԱՄՆ-ի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ կնքված գաղտնի համաձայնագրի մանրամասները, այն չէր բխում հանրային շահից եւ 3. լրագրողը կարող էր սպասել եւս մի քանի օր, որպեսզի Մուհամեդ Ջամիլը մեկնաբանություն տալու հնարավորություն ունենար: Վերաքննիչ դատարանն, ըստ ելույթան, համաձայնել էր այս հիմնավորումների հետ, սակայն երբ գործը հասավ Լորդերի պալատ, վերջինս որոշեց, որ հոդվածը բարեխիղճ հետաքննող լրագրության լավագույն օրինակ է եւ, ըստ այդմ, պաշտպանության արժանի: Այսպես՝ լորդերը համարեցին, որ իմաստ չունեւր, որ լրագրողը սպասեր Ջամիլի մեկնաբանություններին, որովհետեւ, միեւնույնն է, վերջինս չէր իմանալու, որ իր բանկային հաշիվները վերահսկում են ու, համապատասխանաբար, չէր կարողանալու մեկնաբանել այդ տեղեկությունները: Երկրորդ, անուններ նշելը կարելու էր, որովհետեւ դրանք առավել արժեքավոր էին դարձնում հոդվածում հրապարակված լուրերն այն տեսանկյունից, որ Սաուդյան Արաբիայի կառավարությունը վերահսկում է ոչ թե ինչ-որ գործարարների, այլ իր առավել ազդեցիկ գործարարներից մի քանիսին: Եվ վերջապես, լորդերը չհամաձայնեցին այն տեսակետի հետ, որ լրագրողական աշխարհը երկու օտարերկրյա կառավարությունների միջեւ կնքված գաղտնի համաձայնագրերը չբացահայտելու պարտավորություն ունի: Այսպիսով, Ջամիլի գործով Միացյալ Թագավորության Լորդերի պալա-

տը վերահաստատեց «հանրային շահի վկայակոչմամբ» կամ «ողջամիտ հրապարակման» պաշտպանության կարեւորությունը՝ ընդգծելով երեք էական գործոն՝ հրապարակման թեման պետք է բխի հանրային շահից, կոնկրետ անձանց անվանարկող արտահայտությունների կիրառությունը պետք է ողջամտորեն արդարացված լինի և լրագրողները պետք է գործած լինեն բարեխիղճ ու պատասխանատու կերպով:

«Ողջամիտ հրապարակման» պաշտպանության միանգամայն օգտակար պարզաբանում է առաջարկում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր *Կասաբովան ընդդեմ Բուլղարիայի* գործում: Կասաբովան լրագրող էր, որը հողված էր հրապարակել մասնավոր դպրոցներ ընդունելության հետ կապված կոռուպցիոն չարաշահումների մասին: Մինչ ներպետական դատարանները շտապել էին դատապարտել Կասաբովային իր հրապարակման համար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել էր, որ «հողվածը, որի առնչությամբ դատապարտվել է և տուգանվել էր դիմումատուն, լուսաբանել էր փաստեր միջնակարգ դպրոցների ընդունելության հետ կապված չարաշահումների և կոռուպցիոն գործելակարգերի վերաբերյալ... Կասկած չկա, որ սա հանրային շահին առնչվող հարց է, որի հետ կապված ծավալվել են նաև խորհրդարանական քննարկումներ ու լսումներ խորհրդարանի հանձնաժողովներից մեկում... Եւ որ դրա վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը ժողովրդավարական հասարակությունում գործող լրատվամիջոցների առաջադրանքի անբաժանելի մասն է» (56-րդ պարբերություն): Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք դիմումատուն գործել էր պատասխանատու և բարեխիղճ լրագրության նորմերի շրջանակներում, Դատարանը պատրաստ էր եղել ընդունելու ներպետական դատարանների այն հիմնավորումը, որ դիմումատուն բավարար չափով չէր ուսումնասիրել թեման, որպեսզի հանդես գար նման հրապարակմամբ, եւ, ըստ այդմ, չէր բավարարել պատասխանատու լրագրության պահանջները: Այդուհանդերձ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդպես էլ վճռական դիրքորոշում չէր հայտնել կոնկրետ այս հարցի վերաբերյալ զուտ այն պատճառով, որ ամեն դեպքում ներպետական դատարանների կողմից լրագրողի հանդեպ կիրառված պատիժն անհամաչափ էր եղել: Ըստ այդմ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել էր արտահայտվելու ազատության իրավունքի խախտումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը նույնպես ամրագրում է ողջամիտ հրապարակման երաշխիքը՝ սահմանելով, որ փաստացի տվյալներ հրապարակելը չի համարվում գրպարտություն, եթե «դա տվյալ հրավիճակում է և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հավասարակշռված եւ բարեխիղճորեն է ներկայացրել այդ տվյալները»:

Կարելի է հասկանալ նաև, թե ինչ ասել է «հանրային շահին» առնչվող խնդիրներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերով հանրային շահին առնչվող խնդիրների թվին են պատ-



կանում հանրային առողջապահությունը, հիվանդի անվտանգությունը, դատախազների ապօրինի գործողությունները, քաղաքական գործիչների կամ տեղական պաշտոնյաների չարաշահումները, հզոր առեւտրային սուբյեկտների գործողությունները:

Լրագրողներն իրականում չպետք է դժվարություն ունենան դատարաններին իրենց թեմայի առնչությունը «հանրային շահին» ապացուցելու գործում: Դատավորներն էլ կարող են օրինակ վերցնել բրիտանական դատարաններից, որոնց համար ամեն ինչ, բացի մասնավոր անձանց անձնական կյանքին վերաբերող քննադատությունից, կապ ունի հանրային շահի հետ: Միանգամայն արդարացիորեն նրանք ընդունել են, որ հանրության շահի հետ կապ ունի ոչ միայն պետական պաշտոնատար անձանց եւ մարմինների, այլեւ այն մասնավոր ընկերությունների գործունեությունը, որոնք ներգործում են հանրության առանձին անդամների վրա:

Ինչպես իրեն հատուկ անդիմադրելի հումորով բրիտանական դատարանների պրակտիկան է ամփոփում Ջեֆրի Ռոբերտսոնը, «ցանկացած անձ, ով իր գլխարկը նետում է հանրային ասպարեզ, պետք է պատրաստ լինի, որ այն կարող են անողոքաբար, բայց ոչ՝ երբեք չարամտորեն կոխկրտել»:

Սահմանադրական դատարանի 2011 թ. նոյեմբերի 15-ի որոշումը

**հասկացությունները շահակացած
հանդես գալու ժամանակը**



2011 թ. նոյեմբերի 15-ին ՀՀ Սահմանադրական դատարանը կայացրեց իր երկար սպասված որոշումը ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականության հարցը որոշելու մասին 2011թ. հոկտեմբերի 13-ի դիմումի: Կայացրեց նույնքան հապճեպ ու մի շարք իրավական հասկացություններ հիմնավորապես չուսումնասիրած, որքան հապճեպ ու չուսումնասիրած էլ 2010թ. մայիսին ընդունվել էին տխրահռչակ օրենսդրական փոփոխությունները:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի այս որոշումը 37 էջից կազմված մի փաստաթուղթ է, որը մի քանի դրական հստակեցումներից գատ, պարունակում է մի շարք անորոշ սահմանումներ ու ձեռակերպումներ, որոնք հաշվի առնվելու դեպքում էլ ավելի մեծ շփոթ են առաջացնելու առանց այն էլ այս ոլորտի մասին մեղմ ասած սահմանափակ պատկերացում ունեցող դատական պրակտիկայում:

Դրական հստակեցումների շարքում կարելի է առանձնացնել.

1. Այն դիրքորոշումը, որի համաձայն՝ ՀՀ դատարանները պետք է ընդունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և-խաղեպային իրավունքում տեղ գտած հասարակական ու քաղաքական գործիչների քննադատության առավել լայն սահմանների մասին սկզբունքը (ՍԴՌ-997, 25-րդ էջ),
2. Այն սկզբունքային մոտեցումը, որի համաձայն՝ «անձ» արտահայտությունը չի վերաբերում իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,
3. «Անվանարկում» եզրի ներմուծումը:

Որոշման գերակշիռ մասը, սակայն, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ անբավարար գիտելիքների վկայություն: Այսպիսով՝

1. Անվանարկման իրավունքի (defamation law) ոլորտում կա երկու մոտեցում՝ բրիտանական եւ մայրցամաքային իրավունքի մոտեցումները: Առաջինի համաձայն՝ գոյություն ունի միայն անվանարկում եզրը (defamation), որը կարող է ունենալ բանավոր (slander) եւ գրավոր (libel) ձևերը: Անվանարկել, այն է՝ անունը զգել, վարկաբեկել, կարելի է ինչպես տեղեկություններ՝ փաստեր կամ փաստական տվյալներ, այնպես էլ գաղափարներ՝ կարծիք կամ գնահատողական դատողություններ արտահայտելու միջոցով: Առաջինի դեպքում որպես պաշտպանություն անվանարկած անձը, որը քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս պատասխանողի կարգավիճակով, վկայակոչում է ճշմարտության/հիմնավորման պաշտպանությունը (defence of justification) կամ հանրային շահի պաշտպանությունը (defence of public interest), իսկ երկրորդ դեպքում՝ հանրային շահին վերաբերող հարցի շուրջ ազնիվ կարծիքի արտահայտման պաշտպանությունը (defence of a fair comment on a matter of public interest): Մայրցամաքային իրավունքի երկրներում գոյություն ունեն երկու հասկացություններ՝ զրպարտություն (defamation)՝ արատավորող տեղեկություններ կամ փաստեր կամ փաստական տվյալներ եւ վիրավորանք (insult)՝ արատավորող գաղափարներ կամ կարծիք կամ գնահատողական դատողություն հրապարակելը: Այս երկու մոտեցումները հստակ չպատկերացնելու եւ չտարանջատելու հետեւանքով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ գտնում ենք հետեւյալ սահմանումները, որոնք բերելիս Սահմանադրական դատարանը հղում է անում ԵԱՀԿ-ի 2005թ. սահմանած արտահայտություններին՝ «անվանարկում (defamation), գրավոր արտահայտություն, որը վնասում է անձին (libel), ինչպես նաեւ հայտարարություն կամ գործողություն, որն ասվել կամ արվել է այլ անձի վիրավորելու նպատակով (insult)»:
2. Այս երկու իրավախախտումների առկայությունը դիտավորությամբ պայմանավորելու մասին Սահմանադրական դատարանի որոշման ձեւակերպումները նույնպես ոլորտին տեղյակ ընթերցողին հանգեցնում են անբավարար գիտելիքների մասին հետեւու-

թյանը: Այսպես՝ ըստ երեւոյթին այն, ինչ Սահմանադրական դատարանը նկատի ունի «դիտավորության» տակ, նույն բրիտանական անվանարկման իրավունքի չարամտութիւն (malice) հասկացութիւնն է, որն ունի երկու տարատեսակ. իրավական չարամտութիւն (legal malice), որը ենթադրում է, որ տեղեկութիւնները կամ գաղափարները հրապարակվել են անազնվորեն (dishonesty) կամ չմտածված կերպով ճշմարտութիւնն անտեսելով (reckless disregard for truth) եւ իրական չարամտութիւն (actual malice), որը ենթադրում է չարացածութիւն կամ անձնական շահ: Այսպիսով՝ չարամտութիւն հասկացութիւնն իրավական իմաստով ենթադրում է ոչ միայն դիտավորութեան, այլեւ՝ անզգուշության տարրեր: Ամեն դեպքում չարամտութիւնն ապացուցելու բեռը կրում է հայցվորը: Մնում է հասկանալ, թե դիտավորութիւն ասելով իրականում ինչ է նկատի ունեցել ՀՀ Սահմանադրական դատարանը եւ թե ինչպէս է նա հաշտեցրել իր այս մտտեցումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի այն ընդհանուր կանոնի հետ, որի համաձայն՝ այս տիպի գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայութեան կամ բացակայութեան ապացուցման պարտականութիւնը կրում է պատասխանողը:

3. Սահմանադրական դատարանի համար վիրավորանք չի համարվում գնահատողական դատողութիւնը, քանի որ «գնահատողական դատողութիւնը փաստական հանգամանքների վերլուծութեան արդյունքում արվող հետեւութիւնն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլեւ պարտականութիւնն է»: Իսկ թե ինչու փաստական հանգամանքների վերլուծութեան արդյունքում, լրագրողը չի կարող արտահայտել անազնիվ գնահատողական դատողութիւն, այս հարցին Սահմանադրական դատարանը չի պատասխանում թերեւս այն պատճառով, որ իր որոշմամբ ինչ-որ անհասկանալի տարանջատում է կատարում կարծիքի ու գնահատողական դատողութիւնների միջեւ այն դեպքում, երբ սրանք, ըստ Եության, նույն բանն են:
4. Սահմանադրական դատարանի որոշման մեջ սխալ են թարգմանված նաեւ ուլորտի մի շարք կարեւոր եզրեր: Այսպէս՝ արտահայտվելու ազատութեան իրավունքի ուլորտում ՄԻԵԴ-ի կարեւորագոյն նախադէպի՝ *Յենդիսայրն ընդդէմ Միացյալ Թագավորության (Handyside v UK, 1976)* ձեւակերպումը Սահմանադրական դատարանի որոշման մեջ թարգմանաբար ձեւակերպված է հետեւյալ կերպ. «Արտահայտվելու ազատութիւնը կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվութեան» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճութեամբ կամ համարվում են անվտանգ կամ չեզոք, այլ նաեւ նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստութիւն պատճառում»: Մի կողմ թողնելով այն փաստը, որ որոշման մեջ որեւէ հղում չկա հենց այս վճռին, որով առաջին անգամ սահմանվել է այս կարեւոր սկզբունքը ու նաեւ այն փաստը, որ այս վերջին երեք բառերն ամբողջ որոշման մեջ նույնիսկ հետեւողական կիրառութիւն չեն գտնում՝ հայտնվելով միանգամայն տարբեր



համակցություններում, ինչը եւս անթույլատրելի է իրավական տեքստի համար, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի օգտագործած եզրերն են «offend, shock or disturb», եւ առաջինը ոչ մի կերպ չի կարող թարգմանվել որպէս «վիրավորել» (insult), այլ լավագույն դեպքում՝ «վրդովեցնել», քանի որ հիշյալ եզրերի տարբերությունն անվանարկման ուժգնության կամ աստիճանի մէջ է: Սխալ թարգմանված եզրերի թվին է պատկանում նաեւ «public interest» արտահայտության թարգմանությունը, որը ոչ մի կերպ չի կարող ձեւակերպվել որպէս «հասարակական հետաքրքրություն», այլ՝ միայն որպէս «հանրային շահ»: Այս հետեւությունն ամրապնդվում է ՄԻԵԴ-ի մի շարք նախադէպերում որպէս հոմանիշ օգտագործվող «matters of public concern», թարգմանաբար՝ «հանրությանը մտահոգող հարցեր», որոնք շատ դէպքերում կարող են տարբեր լինել «հասարակական հետաքրքրություն» ներկայացնող հարցերից: Վերջինի օրինակ կարող են լինել մասնավոր անձանց մասնավոր կյանքի մանրամասները, որոնք որեւէ կերպ չեն կարող հանրային մտահոգության առարկա հանդիսանալ կամ կապ ունենալ հանրային շահի հետ: Այս հարցի շուրջ կարելուր ուղեկիչ է առաջարկում ՄԻԵԴ-ի *Ֆոն Հաննովերն ընդդէմ Գերմանիայի (Von Hannover v Germany, 2004)* վճիռը, որտեղ եւ հստակեցվում է այս հասկացության էությունը եւ որին արժէր, որ Սահմանադրական դատարանը տեղյակ լինէր մինչեւ իր այս որոշումը կայացնելը:

5. Մեկ այլ լուրջ սխալ, որ առկա է Սահմանադրական դատարանի որոշման մէջ, ոչ նյութական վնասի փոխհատուցում (compensation for non-pecuniary damage) հասկացության մասին թյուր պատկերացումն է: Վերցնելով ոչ նյութական վնասի փոխհատուցում արտահայտությունը ՄԻԵԴ-ի նախադէպային իրավունքից՝ «Փաստերի քննադատական գնահատականը» չի կարող բարոյական վնասի փոխհատուցման պահանջի բավարարման հիմք հանդիսանալ: Սակայն, եթէ անձի բարի համբավը ոտնահարվում է, եթէ նույնիսկ արատավորող հայտարարությունը գնահատողական դատողություն է, դատարանը կարող է սահմանել ոչ նյութական վնասի հատուցում (Ukrainian Media Group v Ukraine, 2005թ. մարտի 29-ի վճիռ, կետ 61), ՄԴՈ-997 որոշում, 33-րդ էջ)՝ Սահմանադրական դատարանն ակնհայտորեն պատկերացում չունի դրա բովանդակության մասին: Այդ մասին է վկայում որոշման 29-րդ էջի վերջին պարբերության վերջին նախադասությունը, որով Սահմանադրական դատարանն առանձնապէս կարեւորում է այն հանգամանքը, որ «վիճարկվող հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման նյութական ձեւի, նախատեսում են նաեւ փոխհատուցման ոչ նյութական ձեւեր»: Այս եզրահանգումն ամրապնդվում է նաեւ որոշման 35-րդ էջի 5-րդ կետի ձեւակերպումն ընթերցելիս. «արտավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպէս առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձեւեր...»: Մինչդեռ ըստ ՄԻԵԴ-ի՝ ոչ նյութական փոխհատուցումը դարձյալ նույն դրա-

մական փոխհատուցումն է, որը հատկացվում է իրավախախտման հետեւանքով անձի կրած ցավը, տառապանքը, վիշտը, իսկ մեր դեպքում՝ հեղինակության կորուստը փոխհատուցելու նպատակով: Շատ այդք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերը նախատեսում են ոչ կյուրթական վնասի փոխհատուցում մինչեւ սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի եւ 2000-ապատիկի չափով, համապատասխանաբար: Մնացածը խախտված իրավունքի պաշտպանության եղանակներ են, այլ ոչ թե՛ ոչ կյուրթական փոխհատուցում:

Այս ամենը թողնելով ոլորտի մասնագետներին, որոնց, այնուամենայնիվ, կարելի է գտնել Հայաստանում կամ այլուր՝ ՄԴ-ն ճիշտ կաներ, եթե պատասխաներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականության մասին հարցադրումներին: Անվավազն երկու կետում այս հարցադրումները հստակ պատասխան էին պահանջում, որոնք Սահմանադրական դատարանն այդպես էլ չտվեց: Մեկն այն էր, թե արդյոք վիրավորանքը միայն հրապարակային լինելու փաստով վիրավորանք համարելը չի հակասում ՀՀ Սահմանադրության խտրականության արգելքի մասին դրույթին, ինչին Սահմանադրական դատարանը տվեց հետեւյալ պատասխանը. «Վիճարկվող հոդվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դա ոչ թե օրենսգրքի տվյալ հոդվածի, այլ ընդհանուր իրավակարգավորման բաց է, եւ այն հարթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը»: Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ է կարգավորում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը ընդհանրապես, եւ տվյալ հոդվածը՝ մասնավորապես, եթե ոչ՝ մասնավոր-իրավական բնույթի հարաբերություններ: Հանրային՞:

Երկրորդ, այն հարցադրմանը, թե արդյոք 1087.1-րդ հոդվածում ամրագրված փոխհատուցման առավելագույն շեմը չի հակասում համաչափության սահմանադրական սկզբունքին, Սահմանադրական դատարանը նույնպես չկարողացավ տալ սպառնիչ պատասխան՝ բավարարվելով ՀՀ Ազգային ժողովին խորհուրդ տալով վերանայել այդ շեմը, որպեսզի այն արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումների տեղ չթողնի: Եթե Սահմանադրական դատարանը համաչափության խնդիր է տեսնում, ուրեմն դրույթը հակասում է համաչափության սահմանադրական սկզբունքին եւ, ըստ այդմ, հակասահմանադրական է: Ազգային ժողովին ուղերձ հղելն արդեն երկրորդական հարց է: Իսկ եթե նման խնդիր չի տեսնում, ապա ինչո՞ւ պետք է իջեցվի փոխհատուցման առավելագույն շեմը:

Ժողովողն ասում է, որ ամեն ինչն իր ժամանակն ունի: Երեւի սա էլ Սահմանադրական դատարանի հասկացությունները չհասկացած հանդես գալու ժամանակն է:

Լուսինե Հակոբյան
իրավաբան



ՄԱՍ II

ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՔՆՈՒՅՅՈՒՆՆԵՐ



2010

Ընտրությունները կրկին ուղեկցվեցին լրագրողների նկատմամբ բռնություններով



ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

185

2010 թ. հունվարի 10-ին, ժամը 10:30-ի սահմաններում, Ալավերդյան փողոցի վրա գտնվող թիվ

10/19 ընտրատեղամասում (որտեղ տեղի էին ունենում ՀՀ ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրություններ եւ առաջադրված էին մի կողմից ՀԱԿ Ներկայացուցիչ Լիկոլ Փաշինյանը, մյուս կողմից՝ «Ազգային միաբանության» ներկայացուցիչ Արա Սիմոնյանը) ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը լուսանկարել է, թե ինչպես է Արա Սիմոնյանի վստահված անձը, ընտրողների հետ թեւանցուկ, քայլում ընտրախցիկի ուղղությամբ: Այս ամենը կատարվել է ընտրատեղամասի նախագահ Գագիկ Բաղդասարյանի հրահանգով, ինչին ականատես են եղել նաեւ տեղամաս ժամանած Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աշխատակիցները:

Տեսելով, որ «գործընթացը» լուսանկարահանվում է, Գ. Բաղդասարյանի հրամանով Շամշյանին են մոտեցել քաղաքացիական համազգեստով մի քանի անձինք, հարվածել նրան, սպառնալիքներ տեղացել եւ հայ-հոյե: Վերջիններս փորձել են նաեւ խլել լուսանկարչական ապարատը:

Բռնության են ենթարկվել նաև «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Անուշ Մարտիրոսյանը, ռադիոկայանի օպերատորը եւ Յելսինյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը:

Ղևտրատեղամասում հսկողություն իրականացնող ոստիկանները հանձնաժողովի նախագահ Գ. Բաղդասարյանի իրահանգով, խոչընդոտելով լրագրողների աշխատանքին, նրանց ուժով դուրս են հրավիրել ընտրատեղամասից: Այս ամենը հանձնաժողովի նախագահ Բաղդասարյանը պատճառաբանել է նրանով, որ լրագրողի վկայականը անձը հաստատող փաստաթուղթ չէ եւ անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր: Թե լրագրողական վկայականը, թե անձնագիրը ցույց տալու պահանջն ապօրինի էր: Չնայած լրագրող Անուշ Մարտիրոսյանը ներկայացրել է նաև անձնագիրը՝ սակայն, միեւնոյն է, նրան այլևս թույլ չեն տվել մտնել ընտրատեղամաս:

Նույն տեղամասում խոչընդոտվել է նաև «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագրի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Գետրոյանի եւ «Զորորդ ինքնիշխանություն» թերթի թղթակից Գոհար Վեգիրյանի աշխատանքը: Նրանց երկուսին էլ անհայտ անձինք դուրս են արել տեղամասից:

Ղևտրությունների օրը խոչընդոտվել է նաև «Ժամանակ» թերթի թղթակից Մարինե Խառատյանի գործունեությունը: Նրանից թիվ 10/24 տեղամասի հանձնաժողովի նախագահը, լրագրողական վկայականից բացի, պահանջել է նաև անձնագիր ներկայացնել: Լրագրողը հրաժարվել է ներկայացնել անձնագիրը՝ ասելով, որ նման բան ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված չէ: Դրանից հետո հանձնաժողովի նախագահը եւ անդամները փորձել են լրագրողին դուրս հանել տեղամասից: Այսուհանդերձ, օրենքի համապատասխան կետին ծանոթանալուց հետո հանձնաժողովի նախագահը լրագրողին թույլ է տվել անցնել իր մասնագիտական պարտականությունների կատարմանը:

Խոչընդոտվել է նաև նույն թերթի թղթակից Զրիստինե Խանումյանի գործունեությունը թիվ 10/14 տեղամասում: Հիմնական խոչընդոտողը եղել է «Ազատ հասարակության ինստիտուտ» կազմակերպության կողմից դիտորդ գրանցված անձը, որն այնուհետեւ սպառնացել է լրագրողին, թե «գլուխդ կջարդեմ, հեռախոսդ հետը կջարդեմ, ականջներդ կկտրեմ»:

10/19 ընտրատեղամասում արձանագրված խախտումների վերաբերյալ պատրաստված նյութերը ՀՀ գլխավոր դատախազի ցուցումով հունվարի 13-ին ուղարկվել էին ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քրեական գործ հարուցելու եւ նախաքննություն իրականացնելու համար: Հունվարի 15-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել էր քրեական գործ թիվ 10/19 ընտրատեղամասում մի խումբ անձանց կողմից բռնության գործադրմամբ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով: Սակայն հետագայում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը գործը կարճել է՝ ապացույցների բացակայության պատճառով:

2010

Լրագրողի վրա հարձակվողների «ինքնությունը» դարձյալ անհայտ մնաց



ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

187

2009թ. մայիսի 7-ին՝ ժամը 00.02-ին, Մարգարյան

փողոցի թիվ 20/3 շենքի 1-ին մուտքի դիմաց երկու անհայտ անձինք ծեծի էին ենթարկել «Շանթ» հեռուստաընկերության հեռուստահաղորդավար, 1957 թ. ծնված Նվեր Մնացականյանին և դիմել փախուստի: Նվեր Մնացականյանը դիմել էր «Արմենիա» բժշկական կենտրոն, ստացել բուժօգնություն և գնացել տուն: Նշանակվել էր դատաբժշկական փորձաքննություն, և բարձրաստիճան ոստիկանները վստահեցնում էին, որ ամեն ինչ անելու են գործը շատ արագ բացահայտելու համար:

Ինքը՝ հեռուստահաղորդավար Մնացականյանը, ցուցմունք էր տվել, որ մայիսի 7-ին աշխատանքից վերադառնալիս ժամը 00:02-ի սահմաններում, իր տան՝ Երեւանի Մարգարյան փողոցի 20/3 շենքի 1-ին մուտքի մոտ, երկու անհայտ անձինք, առանց որեւէ պատճառի, հարձակվել են իր վրա, ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցրել՝ պատ-

ճառելով մարմնական վնասվածքներ:

Փաստի առթիվ նույն օրը ոստիկանության Մաշտոցի քննչական բաժնը ՀՀ Զր. օր.-ի 113 հոդ. 2-րդ մասի 3-րդ կետով («Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից») հարուցեց քրեական գործ: Հայտնաբերվելու դեպքում հանցագործներին սպառնում էր առավելագույնը 5 տարվա ազատազրկում:

2009 թ. օգոստոսի 21-ին մամուլի ասուլիս հրավիրեց անձամբ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը եւ հայտարարեց, թե բոլոր վարկածները ստուգելուց հետո պարզել են, որ ամիսներ առաջ Նվեր Մնացականյանի նկատմամբ կատարված հանցագործությունն ամենեւին կապված չէ վերջինիս մասնագիտական գործունեության հետ: Ըստ ոստիկանապետի՝ բերման էին ենթարկվել երկու երիտասարդներ, որոնցից մեկը՝ ուսանող, եւ նրանք «պատմում են մանրամասներ, դեպքի վայրն են նույնիսկ ցույց տալիս, որտեղ կատարել են հանցագործությունը... Բանից պարզվեց՝ անհեթեթ մի պատմություն է, որի հետ այդ մարդը (Նվեր Մնացականյանը) ընդհանրապես կապ չունի: Ինչ-որ աղջկա պատմություն է, Նվեր Մնացականյանին շփոթել են մեկի հոր հետ»,- ասաց ոստիկանապետ Սարգսյանը:

Մինչդեռ ի սկզբանե մամուլը՝ որպես բռնության պատվիրատու, միջադեպը կապեց հայտնի գործարար Հրանտ Վարդանյանի որդու՝ ԱԺ պատգամավոր Կարեն Վարդանյանի անվան հետ: Բանն այն է, որ դեպքի վայրում Նվեր Մնացականյանը տեսել էր գործարարին պատկանող «Գրանդ Զենդի» ընկերության ավտոմեքենան:

2010-ի փետրվարին՝ դարձյալ ասուլիսի ժամանակ, արդեն Երեւանի ոստիկանապետ Ներսես Նազարյանը վստահեցրեց, որ հանցագործության կատարման Մնացականյանի առաջ քաշած վարկածը ստուգվել է, սակայն «100 տոկոսանոց չենք կարողացել ասել, որ էդ մարդիկ են... Ասեմ այսպես՝ մեր ուժերը չհերիքեցին, որովհետեւ շատ դժվար է այսօր հանցագործություն կատարած անձին ստիպել, որ նա ինքը խոստովանի»,- նշել էր Ն. Նազարյանը՝ հավատացնելով, որ քննությունը շարունակվում է:

Նախաքննական մարմինը ՀՀ Զր. դատ. օր.-ի 31 հոդ. 1-ին մասի 1-ին կետով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) քրեական գործի վարույթը կասեցրել էր դեռ 2009 թ. սեպտեմբերի 7-ին՝ հանցագործությունից ուղիղ 4 ամիս անց:

2010

Ֆոտոլրագրող Շամշյանին ծեծել են դատախազության մուտքի մոտ



2010 թ. փետրվարի 24-ին Գլխավոր դատախազու-

թյունում կոլեգիայի նիստ էր: Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, մինչ նիստը կսկսվեր, Գլխավոր դատախազության շենքի առաջ՝ մուտքի մոտ, լուսանկարում էր նիստին մասնակցելու եկող դատախազներին և բարձրաստիճան պաշտոնյաներին: Սակայն մոտ 30-ամյա մի երիտասարդ արգելել է Շամշյանին լուսանկարել, ապա հայիոյանքներ տեղացել ֆոտոլրագրողի հասցեին ու հենց դատախազության շենքի մոտ սկսել է հարվածել նրան: Այս ամենը կոլեգիայի նիստից հետո Գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանի հրավիրած ասուլիսի ժամանակ պատմեց հենց ինքը՝ Գագիկ Շամշյանը՝ նշելով, որ հասցրել է լուսանկարել բռնաբարք կատարողին, որը մտել է դատախազության շենք: «Ես ասացի, որ լրագրող եմ, բայց նա ասաց՝ ես քեզ լավ ել ճանաչում եմ, հլը ռա՛դ արա եղ ապարատող, սկսեց հայիոյանքներ տալ ու հարվածել: Այս ամենը տեւեց 5-10 րոպե: Ես կարո՞ղ եմ սա, որպես հանցագործության մասին հաղորդագրություն, դիմել Ձեզ, որովհետև ոստիկանությանը չեմ վստահում», - ասաց Գ. Շամշյանը: «Ես ուղղակի պահանջում եմ, որ Դուք այդ դեպքի մասին մեզ գրավոր ներկայացնեք: Ես՝ որպես գլխավոր դատախազ, պահանջում եմ, որ Դուք ներկայացնեք մեզ Ձեր տեսանկյունը եւ ձայնագրությունը, որպեսզի մենք հնարավորություն ունենանք պարզելու», - ասաց Աղվան Յովսեփյանը:



ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐ
189

Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին ծեծելու փաստի առթիվ ոստիկանության Կենտրոնի բաժնում հարուցվեց քրեական գործ՝ «Ծեծի» եւ «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու» մեղադրանքով: Սակայն քննիչ Գարիկ Բեգոյանի որոշմամբ բռնարարքը կատարած Գագիկ Մարգարյանի (ոստիկանության Էրեբունու բաժնի քննիչ, որը գործուղվել էր Յատուկ քննչական ծառայություն) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվեց՝ նրա արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Փոխարենը մեղադրանք առաջադրվեց Գ. Շամշյանին՝ «Սուտ մատուռության» համար:

Ֆոտոլրագրող Շամշյանը Կենտրոնի դատարանում վիճարկեց քննիչի հիշյալ որոշումը: Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում Ռուբեն Ներսիսյանի նախագահությամբ ընթացող դատական նիստերից մեկի ժամանակ մեղադրող-դատախազ Ա. Երիցյանը հայտարարեց, թե քննիչ Գագիկ Մարգարյանը ֆոտոլրագրող Շամշյանին ոչ թե հարվածել, այլ պարզապես հրել է: «Յրեյու» վերաբերյալ հայտարարությունից հետո Գ. Շամշյանը միջնորդեց դատարանում հետազոտել միջադեպը ներկայացնող տեսանյութը, որը տեսագրել են գլխավոր դատախազության մուտքի մոտ տեղադրված տեսախցիկները: Չնայած դատախազի առարկությանը՝ միջնորդությունը բավարարվեց: Տեսանյութի հետազոտումից հետո մեղադրող Ա. Երիցյանը, ի տարբերություն նախորդ հայտարարության, ասաց, թե իրականում ֆոտոլրագրող Շամշյանն է ձեռքբերով հարվածել քննիչ Գագիկ Մարգարյանին, վերջինս էլ ինքնապաշտպանության բնագործ պայուսակը բարձրացրել է, որը դիպել է ֆոտոլրագրողի ուսի:

«Այդ դեպքում ինձ պետք է մեղադրանք առաջադրեիք ոչ թե սուտ մատուռության, այլ բռնություն գործադրելու համար», - նկատեց Գ. Շամշյանը, ինչին ի պատասխան դատախազն ասաց՝ «սխալ են արել, որ դրա համար մեղադրանք չեն առաջադրել: Բայց հիմա մենք այլ հարց ենք քննարկում»:

Շամշյանը միջնորդեց դատարան հրավիրել այն փորձագետին, որը տեսանյութի ուսումնասիրությունից եզրակացրել էր, թե քննիչն իրեն պարզապես հրել է: Մյուս կողմից՝ նա խնդրեց դատարան հրավիրել նաեւ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանին, նրա մամուլ խոսնակ Սոնա Տոուզյանին, լրագրողներ Թագուհի Թովմասյանին («Զորորդ ինքնիշխանություն» օրաթերթ) եւ Ռուզաննա Ստեփանյանին («Ազատություն» ռադիոկայան): Ըստ նրա՝ վերջիններիս քննիչը չի հարցաքննել, մինչդեռ նրանք տեսել են հարված ստանալու արդյունքում իր կարմրած ականջը եւ այդ մասին կարող են դատարանում վկայել:

Ի դեպ, միջադեպից հետո «Նաիրի» բժշկական կենտրոնում Գ. Շամշյանի մոտ ախտորոշվել էր ականջաթաղանթի արյունազեղում, ինչի վերաբերյալ բժիշկը տվել էր եզրակացություն: Սակայն այդ եզրակացությունը գործի նյութերից բացակայում էր: Շամշյանին մեղադրում էին կեղծ ապացույցներ, մասնավորապես՝ բժշկական տեղեկանք ներկայացնելու մեջ:

Դատավորը Շամշյանի երկու միջնորդություններն էլ մերժեց՝ նշելով, որ վիճարկվող քննիչի որոշումն է, իսկ հայցվող Շամշյանի միջնորդած անձանց հրավիրելով, ըստ էության, պետք է իրականացվի նախաքննություն, որը դատարանի խնդիրը չէ: Դատարան ակտոն պետք է որապարակվեր օգոստոսի 17-ին, սակայն մինչ դատաքննության ավարտը դատախազությունը ետ վերցրեց իր մեղադրանքը:

Հարձակում «Ազգի» լրագրողի վրա. հնչել է նաեւ սպառնալիք

2010 թ. գարնանը «Ազգ» օրաթերթի խմբագրությունն ուսանողներից ահազանգ է ստացել, որ Երեւանի Աբովյան ու Տերյան փողոցների միջեւ գտնվող Նախկին Ղուկասյանի անվան այգում լայնածավալ շինարարական աշխատանքներ են ընթանում. ոչնչացվում է Գյուղատնտեսական համալսարանի դիմացի՝ հազվագյուտ ծառատեսակներով ու թփերով կանաչ տարածքը:

2010 թ. ապրիլի 1-ին «Ազգի» թղթակից Մարիետա Մակարյանը, մեկնելով ահազանգի հետքերով, տեղում պարզել է, որ այգին Աբովյան ու Տերյան փողոցների կողմից արդեն պարսպապատվել է, իսկ տարածքում աշխատում են ամբարձիչներ:

Մտնելով պարսպի կիսաբաց դռնից ներս՝ Մարիետա Մակարյանը նկատել է մոտ 12 մետր խորությամբ փոս եւ կտրված ծառերի հսկայական կույտ: Երբ նա փորձել է շինարարությունում ինչ-որ պատասխանատուի գտնել, հանկարծ ինչ-որ անկյունից դուրս է եկել ռուսախոս մի մարդ, հարձակվել լրագրողի վրա եւ հենց պարսպի դռան մոտ երկու անգամ հարվածել վերջինիս ուսին ու գլխին՝ փորձելով ձեռքից խլել լուսանկարչական սարքն ու պայուսակը:

«Ակնոցներով, մոտ 40 տարեկան մի տղամարդ էր: Ակցենտով էր խոսում. դարաբաղցի էր կամ Բաքվի փախստական: Մոտիկ մայթի վրա կանգնած ուսանողներն օգնության հասան եւ ինձ ազատեցին այդ գազազած «շինարարի» ճիրաններից: Եթե 6-7 ուսանողները չլիներին, ես չգիտեմ, թե ինչ էր լինելու», - «Յետքի» հետ զրույցում ասաց Մարիետա Մակարյանը: Ըստ նրա՝ հարձակվողը նույնիսկ չի մոռացել սպառնալ. «Քո օրերը չէ, քո ժամերն անգամ հաշված են»:

Լրագրող Մակարյանի խոսքերով՝ դեպքից հետո ինքը զանգահարել է ոստիկանություն եւ կատարվածի մասին պատմել: Իսկ արդեն հաջորդ օրը «Ազգ» օրաթերթը այգում ընթացող շինարարության մասին պատմող հոդվածում մանրամասն նկարագրել է Մարիետա Մակարյանի հետ տեղի ունեցածը:

«Սպասում ենք համապատասխան մարմինների շուտափույթ արձագանքին», - գրել էր «Ազգը»՝ միաժամանակ տպագրելով իր թղթակցի՝ մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտած տղամարդու լղղված (շարժվող օբյեկտիվով արված) լուսանկարը:

Մարիետա Մակարյանն ասում է, թե տեղյակ չէ՝ դրանից հետո գործն ինչ ընթացք է ստացել: Իսկ ոստիկանության լրատվության վարչությունը, «Յետքի» գրավոր հարցումից տեւական ժամանակ անց, ի վերջո, բանավոր պատասխանեց, որ Մարիետա Մակարյանի վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում որեւէ քրեական գործ չկա:



Հայաստանում անգամ բացահայտված հանցագործությունը չի բացահայտվում

**Ասում է լրագրող-փասա ան
Արգիշեսի Կիվիրյանը՝
նկատելով ունենալով լրագրողների,
նաեւ իր նկատմամբ կատարված
հանցագործությունը**

2009թ. ապրիլի 30-ի գիշերը Նալբանդյան-9 հասցեում գտնվող իր բնակարանի մուտքի մոտ «Armenia Today» եւ «Bagin.info» լրատվական կայքէջերի համակարգող Կիվիրյանը ենթարկվեց մահափորձի: Նրա կիևը՝ փաստաբան Լուսինե Սահակյանը, լսել էր հարձակողներից մեկի խոսքերը. «Մեկ ա, քեզ սպանելու ենք»:

Հանցագործները դեպքի վայրում թողել էին բազմաթիվ հետքեր, այդ թվում՝ փայտե ձողը, որով հարվածներ էին հասցրել Արգիշտիի գլխին եւ արձակված կրակոցների պարկուճները: Բայց իրավապահները «տեղագնում» իրականացնելիս կրակոցի հետեւանքները՝ պարկուճները, այդպես էլ չէին հայտնաբերել: Ավելին՝ նրանցից մեկը փորձել էր Կիվիրյանի ընտանիքի անդամներին համոզել, որ վերջիններս սխալվել են, իրականում կրակոցներ չեն եղել ու ոտքով հարվածելով մուտքի դռանը՝ հայտարարել էր, թե գուցե նման ձայն է լսվել, իսկ իրենք շփոթել են կրակոցների հետ: Սակայն միջադեպից մոտ կես ժամ անց՝ հետաքննիչներից առաջ, դեպքի վայր էր ժամանել նաեւ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը: Նրա լուսանկարներում, արյունոտ փայտե ձողից բացի, ֆիքսվել էին նաեւ հանցագործների կրակած գնդակների պարկուճները: Հետազայում Կիվիրյանը նույնպես հաստատեց, որ կրակոցներ հնչել են, պարզապես իրեն «հաջողվել էր ձեռքով հեռացնել գեներ, ինչի արդյունքում էլ դրանք շեղվել են այլ ուղղությամբ»:

Սկզբում քրեական գործ հարուցվեց «Դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու» մեղադրանքով (Քր. օր. -ի 117-րդ հոդված), մինչդեռ տվյալ հոդվածով գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի առկայությամբ, այնինչ՝ Կիվիրյանը բողոք չէր ներկայացրել: «Ո՞նց կարող է իրեն պրոֆեսիոնալ համարող մարդը չհասկանալ, որ մարդու գլուխը կյանքի համար կենսական կարեւոր օրգան է, որը բաղկացած է կաշվից, դրա տակ գտնվող ոսկորից եւ ուղեղից՝ գորշ նյութից:

Միայն գորշ նյութ չունեցող մարդը կարող է մտածել, որ գլուխը կենսական կարևոր օրգան չէ»,- հայտարարեց փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը եւ շեշտեց, որ գլխին բազմաթիվ հարվածներ ստացած Ա. Կիվիրյանի դեմ կատարված բռնարարքի փաստով պետք է քրեական գործ հարուցվի «Սպանության փորձ» մեղադրանքով:

Մայիսի 7-ին գործի քննությունը ոստիկանությունից տեղափոխվեց Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) քննչական վարչություն, իսկ օրեր անց գործը վերաորակվեց «Մի խումբ անձանց կողմից սպանության փորձ» հոդվածով:


Սակայն մինչ օրս իրավապահները պատասխան չեն տվել, թե ինչպես են «անհետացել» պարկուճները, այն դեպքում, երբ ֆոտոլրագրող Շամշյանից հետո անմիջապես դեպքի վայր են ժամանել ոստիկանության հետաքննիչները: «Մենք դեպքի վայրի գննությամբ չենք հայտնաբերել պարկուճներ: Եթե մեկը վերցրել-պահել է, թող բերի ներկայացնի»,- նշյալ հարցին ի պատասխան՝ հայտարարեց ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Յովհաննես Թամամյանը: Գործի շրջանակներում ԱԱԾ-ն հարցաքննել է նաև Գագիկ Շամշյանին: Նա հատուկ ընդգծել է այն անփույթ վերաբերմունքը, որը դեպքի վայրում իրեղեն ապացույցների նկատմամբ դրսևորել են «պրոֆեսիոնալ» ոստիկանները: Մասնավորապես, նրանցից մեկը «ծեռքերը գրպանում՝ ոտքով տշել է արյունոտ փայտե մահակը», ինչը ֆիքսվել է նաև լուսանկարում:

Իբրև բռնարարքի դրդապատճառ՝ սկզբից եւեթ սկսեցին շրջանառվել տարբեր վարկածներ: Մի շարք կազմակերպություններ հայտարարեցին, թե չեն բացառում, որ հարձակումը «Ջավախքի խամաճիկ իշխանավորների ձեռքի գործն է»՝ պայմանավորված Ջավախքի խնդրի շուրջ Կիվիրյանի ունեցած դիրքորոշմամբ: Արդեն հուլիսին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն այս գործով կալանքի սանկցիա կիրառեց երկու անձանց՝ Վլադիկ Սերոբյանի եւ Գուրգեն Կիլիկյանի նկատմամբ:

2010-ի մարտին նախաքննական մարմինը դատարանին հերթական անգամ միջնորդություն ներկայացրեց հիշյալ անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու խնդրանքով, բայց կարճ ժամանակ անց միջնորդությունը հետ է վերցրել, ինչի արդյունքում Սերոբյանն ու Կիլիկյանը 2010-ի մարտի 8-ից ազատության մեջ են:

ԱԱԾ-ն այդպես էլ չմեկնաբանեց, թե ինչու է հրաժարվել Սերոբյանին եւ Կիլիկյանին կալանավորելու մտադրությունից: Արծվին Բաղրամյանը՝ ԱԱԾ-ի մամուլի կենտրոնի ղեկավարը, դա պայմանավորեց նախաքննական գաղտնիությամբ:

Իսկ Արգիշտի Կիվիրյանը նշում է, որ առերեսման ժամանակ ճանաչել է հիշյալ անձանցից մեկին, որն իր դեմ կատարված մեկ այլ հարձակման մասնակիցներից է: Ըստ նրա՝ 2009-ի ապրիլի 30-ի հարձակումը երկրորդն էր. դրանից 10 օր առաջ եղել է առաջինը: «Ես գրասենյակից գնում էի տուն: Դրսի դուռը բացել եմ, եւ այնտեղ գիշերվա ժամը 6-ին սպորտային հագուստներով, կապիշոններով հավաքված էին 3 անձինք: Եվ ընդամենը պատահականությամբ, որ հետեւից գրասենյակի դրսի դուռը չէի փակել, տեսնելով, որ մոտենում են դեպի ինձ, մտել եմ ներս եւ դուռը փակել»,- պատմում է Կիվիրյանը եւ նշում, որ երկու դեպքում էլ միջադեպից 1-2 օր



առաջ Վլադիկ Սերոբյանը եւ Գուրգեն Կիլիկյանը մեկնել են Ախալքալաք եւ հանդիպել տեղի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանին: Իսկ Կիլիկյանն իր հողվածներում վերջինիս մեղադրել է վրացական իշխանությունների պատվերով Ջավախքում հայկական կառույցները բնաջնջելու, հայազգի ակտիվիստներին հետապնդելու մեջ, ինչի հետեւանքով բազմաթիվ երիտասարդներ ստիպված լքել են Ջավախքը, Գուրգեն Շիրինյանը գտնվում է հետախուզման մեջ, իսկ «Միասնական Ջավախքի» նախագահ Վահագն Չախալյանը բանտում է: Կիլիկյանի խոսքերով՝ այդ հողվածների իրապարակումից հետո «ականջին տեղեկություններ են հասել», որ Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանն այս կամ այն վայրում իր հասցեին հնչեցրել է սպառնալիքներ:

«Ես իրեն «կյարազնիկ» եմ անվանել,- ասում է Սամվել Պետրոսյանը,- ես այն մարդը չեմ, որ այդքան ցածր կանգնեմ: Ինչ է թե մեկը ստից բաներ է գրել, ես իջնեմ այդ մակարդակին ու սկսեմ սպառնալի՞ք տալ: Ես այդ բաներին ընդհանրապես ուշադրություն չեմ դարձնում: Ինձ համար իր գրածները հետաքրքիր չեն: Եթե 4 հոգի պիտի իր գրածներով իմանան՝ ես ով եմ՝ վատ իմաստով, բայց 96 տոկոսը, ով ինձ ճանաչում է, գիտեն՝ ես ով եմ»:

Ախալքալաքի ոստիկանապետը «Յետքի» հետ գրույցում հաստատեց, որ Կիլիկյանի գործով կալանավորվածներից Վլադիկ Սերոբյանն իր ազգականն է: Բայց հատուկ շեշտեց, թե այնքան հիմար չէ, որ բարեկամին փաստի առաջ կանգնեցնի ուղարկելով կռիվ անելու կամ մահափորձ կատարելու: Զանի որ Սերոբյանն իր ազգականն է, ոստիկանապետը չի բացառում, որ դեպքից երկու օր առաջ իրենք հանդիպել են: Ինչ վերաբերում է Գուրգեն Կիլիկյանին, ըստ ոստիկանապետ Պետրոսյանի, ինքը վերջինիս ընդհանրապես չի ճանաչում, սակայն հավանական է, որ դեպքից առաջ հանդիպել է նաեւ նրան: «Ինձ հետ օրական 1000 հոգի մարդ է հանդիպում: 1000 հոգուց եթե մեկնումեկը կարող է հետազայում մյուսի հետ հանդիպի, չի նշանակում, որ ես ինքս եմ դա կազմակերպել,- ասում է Սամվել Պետրոսյանը:- Ես հարյուր տոկոսով վստահ եմ, որ գալու է մի պահ, երբ անպայման կգտնենք մահափորձը կազմակերպողին: Ու այդ ժամանակ Արգիշտի Կիլիկյանը թող բացահայտ գրի, որ ինքը սխալ է եղել ու ներողություն խնդրի Սամվել Պետրոսյանից»: Նա հերքում է նաեւ այն խոսակցությունները, որ կալանավորվածներն ազատ են արձակվել Չայաստանում իր ունեցած կապերի շնորհիվ:

Արգիշտի Կիլիկյանը վստահ էր, որ ԶՅ ներկայիս իշխանություններին օրոք այս գործը չի բացահայտվի, կարճ ժամանակ անց այն կկասեցվի ու կհայտնվի որեւէ դարակում՝ չնայած այն հանգամանքին, որ նախագահի մամլո խոսակցը հայտարարել է, թե գործը Սերժ Սարգսյանի խիստ հսկողության տակ է. «Արդյոք այդ խիստ հսկողության պարագայում չեն անհետացել պարկուճները կամ ազատ արձակվել կալանավորված մեղադրյալները»:

2010 թ. դեկտեմբերին ԱՄՇ քննչական վարչությունը քրեական գործի վարույթը կասեցրեց. «Անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ, հայտնի չէ» (ԶԲ Զր. դատ. օր.-ի 31 հոդ. 1-ին մասի 1-ին կետ) պատճառաբանությամբ:

2010

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԻՐԱՌԵԼ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՆ ԽՈՂՆՂՈՒՄԵԼ ՆՐԱՆԳ ԱՂԽԱՏԱՆՔԻՆ

2010 թ. մայիսի 31-ին Ազատության հրապարակում ՅԱԿ-ի ակցիան լուսաբանելու ժամանակ

նուստիկանները բերման են ենթարկել «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Սյուզաննա Պողոսյանին և «Հայք» թերթի լրագրող Լիլիթ Թադեոսյանին: Նրանց հետ մեկտեղ բերման են ենթարկել նաև ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանին:

Լիլիթ Թադեոսյանը «Հետքին» պատմեց, որ իրենք Ազատության հրապարակում իրականացրել են լրագրողական աշխատանք, դեպքի վայրում ձայնագրություններ են կատարել, իսկ երբ Լյուդմիլա Սարգսյանին նստեցրել են ոստիկանական մեքենայի մեջ՝ լրագրողներին հրելով դուրս են բերել Ազատության հրապարակի մուտքի մոտ: Ոստիկանները լրագրողին քաշքշել են, հրել են այն պահին, երբ նա ձայնագրություն է կատարել, աշխատել է, ինչից հետո նրան բերման են ենթարկել: Այս ամենը կատարվել է ժամը 18:00-18:30-ի սահմաններում:

«Հասան մուտքի մոտ, Սյուզաննայի ձեռքից ձայնագրիչը վերցրին ու թեկից քաշեցին, ասացին՝ բերման ենթարկեք: Ես էլ այդ պահին ուզում էի ասել՝ լրագրող է, ո՞ր եք տանում, իմ թեկից էլ քաշեցին ու մտցրին ոստիկանական մեքենան ու տարան», - պատմեց Լիլիթ Թադեոսյանը:

Լրագրողներին տարել են բաժին: Լիլիթը վստահ է, որ իրենց 3 ժամից ավելի են պահել բաժնում: Արձանագրություններ են կազմել, որտեղ գրված է եղել, որ իրենց բերման են ենթարկել իշխանության ներկայացուցչի նկատմամբ դիմադրություն ցույց տալու կասկածանքով: «Չգիտեմ, թե որտեղից էին հնարել այդ պատմությունը, թե մենք ինչ որ մեկի նկատմամբ դիմադրություն ենք ցույց տվել: Դեռ ավելին՝ իրենք բռնություն են գործադրել լրագրողների նկատմամբ՝ խոչընդոտելով մեր աշխատանքը», - ասում է Լիլիթը:

Ազատության հրապարակում կատարվածի վերաբերյալ ոստիկանությունը պարզաբանումներ է տեղադրել պաշտոնական կայքում:



ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2010 թ. հուլիսի 29-ի ուշ երեկոյան ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին ծանոթներից մեկը հայտնել է, որ հրավառության պատճառով Մյասնիկյան պողոտայի հարեւանությամբ գտնվող «Արքայաձոր» ռեստորանային համալիրում հրդեհ է բռնկվել: Նա անմիջապես մեկնել է դեպքի վայր, սակայն «Արքայաձորի» մի քանի աշխատակիցներ խոչընդոտել են իր մասնագիտական գործունեության իրականացմանը՝ պատճառաբանելով, թե «Արքայաձորը» մասնավոր տարածք է:

Երբ լրագրողը խնդրել է չխոչընդոտել հրդեհը տեսանկարահանելու եւ լուսանկարելու, աշխատակիցներից մեկը նույնիսկ սկսել է ֆոտոլրագրողին սպառնալ:

Կատարվածի մասին Շամշյանն անմիջապես ահազանգել է ոստիկանություն՝ 1-02 ծառայությանը, իսկ մի քանի օր անց ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել:

«Յետո սկսեցին ձգձգել, մի անգամ էլ ինչ-որ փորձաքննության էին կանչում, ես էլ զբաղված մարդ եմ, անընդհատ ոստիկանություն գնալ-գալու ժամանակ չունեմ», - ասում է ֆոտոլրագրող Շամշյանը եւ հավելում, թե այդպես էլ չիմացավ՝ գործն ինչ ընթացք է ստացել:

Ոստիկանության լրատվության վարչությունից «Յետցին» հայտնեցին, որ Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության Նոր Նորքի բաժին են հրավիրվել ռեստորանային համալիրի աշխատակիցները, որոնք ասել են, թե Շամշյանը մուտք է գործել ռեստորանային համալիրի տարածք եւ սկսել լուսանկարել խնջույքի մասնակից քաղաքացիներին եւ նրանց ավտոմեքենաները: Իրենք էլ պահանջել են տարածքից դուրս գալ եւ հրդեհը լուսանկարել Մյասնիկյան պողոտայից:

«Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն Գ. Շամշյանը հրաժարվել է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության: Նշանակվել են նաեւ դատահրդեհատեխնիկական եւ դատաապրանքագիտական համալիր փորձաքննություններ, ինչպես նաեւ հարցումներ է կատարվել արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային տեսչություն եւ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն: Նյութերի նախապատրաստման ընթացքում չի հիմնավորվել Գագիկ Շամշյանի՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաեւ նրա կյանքի եւ առողջության նկատմամբ բռնություն եւ սպառնալիք գործադրելու հանգամանքները», - հաղորդում են ոստիկանությունից:

Ելնելով վերոգրյալից՝ 2010 թ. դեկտեմբերի 27-ին նախապատրաստված Նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով:

ԱՆԻ ԳԵՆՐՈՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ քրեական գործը կարճվեց



2010 թ. մայիսի 31-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Ազատության հրապարակի շրջակայքից, երբ ոստիկանությունը ընդդիմադիր ակտիվիստներին արգելում էր մտնել հրապարակ, մեկ տասնյակից ավելի քաղաքացիներ բերման ենթարկվեցին ոստիկանության Կենտրոնի բաժին:

Նրանց մեջ էր նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանը: Արդեն ուշ երեկոյան բերման ենթարկվածներից «Հայկական ժամանակի» լրագրողը, Նրա եղբայրը՝ Սարգիս Գեւորգյանը, եւ Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) ակտիվիստ Դավիթ Քիրամիջյանը ձերբակալվեցին:

Հաջորդ օրը ոստիկանության Կենտրոնականի բաժնից ստացված Նյութերի հիման վրա Երեւան քաղաքի վարչությանում հարուցվեց քրեական գործ՝ «Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու» եւ «Խուլիգանություն կատարելու» հատկանիշներով: Մեկ օր անց գործն

ուղարկվեց հատուկ քննչական ծառայությունը նախաքննությունը շարունակելու համար:

Գործը կալանավորման հասավ միայն Դավիթ Քիրամիջյանի դեպքում, թեւէ ՀԱԿ մյուս ակտիվիստի՝ Սարգիս Գեւորգյանի պարագայում եւս հետագայում մեղադրական եզրակացությունը դատախազության կողմից հաստատվեց, եւ գործն ուղարկվեց դատարան՝ ըստ Եւրոպան քննելու:

Ամիսներ անց առաջին ատյանի դատարանը նրանց երկուսին էլ դատապարտեց 2 տարվա պայմանական ազատազրկման, իսկ այնուհետեւ վերաքննիչ դատարանը ՀԱԿ-ի երիտասարդ ակտիվիստներ Քիրամիջյանին ու Գեւորգյանին համաներեց:

Լրագրող Անի Գեւորգյանի պարագայում գործը բոլորովին այլ ընթացք ստացավ: Նրան մեղադրանք էր առաջադրվել «Իշխանության ներկայացուցչի նկատմամբ ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի» համար (ՀՀ քր. օր. -ի 316-րդ հոդվածի 1-ին մաս): Սակայն կես տարի անց՝ 2010 թ. նոյեմբերի 29-ին, հատուկ քննչական ծառայությունը լրագրողի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճեց՝ հանցակազմի բացակայության հիմքով:



2010 թ. մարտի 19-ին

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում, երբ նիստերի դահլիճ են բերել Հայաստանի մաքսային կոմիտեի նախկին պետ Արմեն Ավետիսյանի տան վրա կատարված ավագակային հարձակման գործով մեղադրյալներին, գրանցվել է հերթական միջադեպը: Թիրախում դարձյալ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանն էր:

«Լուսանկարում էի, մեկ էլ մեղադրյալներից Բագրատ Սողոմոնյանը սկսեց հայիոյել: Ասացի՝ լեզուդ քեզ քաշիր: Բա՛ ապարատդ կկոտրեմ, գլուխդ կառնեմ ոտքերիս տակ», - պատմում է ֆոտոլրագրողը: Այդ պահին, ըստ նրա, իր հասցեին ուղղված հայիոյանքների տարափը շարունակել է դահլիճում նստած Արտակ Սողոմոնյանը՝ ամբաստանյալի հարագատ եղբայրը ու ձեռքի կրակայրիչը նետել է իր ուղղությամբ: Դատական կարգադրիչները վերջինիս անմիջապես հեռացրել են նիստերի դահլիճից:

«Դատարանի մուտքի մոտ տվյալ անձը Նորից ինձ տեսավ: Ասաց՝ արա՛, ԿԳԲ-ից Նոր եմ դուրս եկել, ընենց չանես՝ ապարատդ չարդեմ, քո խաթեր Նորից գնամ ԿԳԲ,- շարունակում է Շամշյանը: - Զանի որ մթնոլորտը լարված էր, գանգահարեցի 1:02 ծառայություն: Կարճ ժամանակ անց ոստիկանները եկան, սակայն նա արդեն գնացել էր տարածքից»:

Գագիկ Շամշյանը կատարվածի մասին ոստիկանության Կենտրոնի բաժնում նույն օրը հաղորդում էր տվել: Սակայն որոշ ժամանակ անց նա իր բողոքը հետ էր վերցրել:

«Ավետիսյանի տան վրա կատարված ավագակային հարձակման գործով հայր եւ որդի Սողոմոնյաններն արդեն կալանավորված էին: Իսկ իմ հաղորդման առկայությամբ քրեական հետապնդման կենթարկվեք նաեւ այդ ընտանիքի երրորդ անդամը՝ Արտակ Սողոմոնյանը: Դրա համար էլ որոշեցի բողոքս հետ վերցնել», - «Հետքի» հետ գրույցում պարզաբանեց ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը:

Լուս.՝ Գ. Շամշյանի



Շամշյանի հասցեին սպառնալիքներ հնչեցրած Արտակ Սողոմոնյանը

2010

200 հազար դրամ տուգանք՝ լրագրողի աշխատանքին խոչընդոտելու համար



*Վլադիմիր
Բաղդասարյան*



ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
199

2011 թ. հուլիսի 13-ին Սեւանի ընդհանուր իրա-

վասության դատարանը մեղավոր ճանաչեց Ավետարանական հավատքի եկեղեցիների միության Սեւանի ներկայացուցիչ Վլադիմիր Բաղդասարյանին «Շանթ» հեռուստաընկերության լրագրող Արփի Սուքիասյանի եւ օպերատոր Էդուարդ Պետրոսյանի օրինական մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու մեջ եւ դատապարտեց 200 հազար դրամ տուգանքի: Սակայն կիրառելով համաներման ակտը՝ ազատեց տուգանքից:

2010 թ. նոյեմբերի 8-ին Սեւան քաղաքում մի երիտասարդ սպանել էր իր ծնողներին, եւ մամուլում տարածվել էր, որ նա Եհովայի վկա է: «Շանթ» հեռուստաընկերության լրագրողները նոյեմբերի 10-ին այդ փաստը ճշտելու նպատակով մեկնել են Սեւան եւ ցանկացել են մուտք գործել հոգեգալստականների հավաքատեղի, որը նրանց հոգեւոր հովիվ Վլադիմիր Բաղդասարյանը թույլ չի տրվել: Ըստ «Շանթի» ներկայացուցիչների՝ Վ. Բաղդասարյանը նախ ձեռքով փակել է տեսախցիկը,

ապա նաեւ հարվածել «Շանթ» հեռուստաընկերության օպերատորին եւ հրմշտել լրագրողին:

Դատական նիստերի ընթացքում Ավետարանական հավատքի եկեղեցիների միության Սեւանի ներկայացուցիչը պնդել է, թե չի հարվածել «Շանթ» հեռուստաընկերության օպերատորին: Դատարանում ցուցադրվել են այն կադրերը, որտեղ երեւում է եղելությունը: «Ամբաստանյալն ինքն ընդունեց, որ իր կողմից որոշակի բռնություն, մասնավորապէս՝ տեսախցիկը ձեռքով մի կողմ տանել, ձեռքով բռնել եւ հրել դեպի մուտքը, լրագրողի ձեռքից բռնել, եղել է: Այսպիսի գործողությունները նա ընդունեց իր ցուցմունքով եւս», - մամուլին ուղարկված հաղորդագրության մեջ նշել էին «Շանթի» ներկայացուցիչները:

«Ես մտածում եմ, որ իրենք ուղարկված են եղել, եկել էին հատուկ պիտակավորելու, նսեմացնելու նպատակով, նաեւ իրենց հարցերից էր դա երեւում: Բացի դա, դատավարության մասին «Շանթի» ռեպորտաժները միակողմանի էին ու կրոնական անհանդուրժողականության քարոզչության ապացույց են: Փաստերը վկայում են ճիշտ հակառակը. իրականում լրագրողի օրինական մասնագիտական գործունեություն տեղի չի ունեցել: Իրենք իրավունք չունեին առանց ներկայանալու ներխուժել մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք, առանց ներկայանալու ու թույլտվության նկարահանումներ անելու: Չնայած իմ պահանջին՝ իրենք որեւէ փաստաթուղթ ցույց չտվեցին: Եթե ես թույլ չեմ տվել ինձ նկարել մեկի սեփական տարածքում, ո՞վ է ասել, որ դա լրագրողի մասնագիտական աշխատանքը խոչընդոտել է: Սակայն դատավորը կայացրեց սխալ վճիռ», - դատարանում իր տեսակետն է հայտնել մեղադրյալը: Որպէս վերջին խոսք Բաղդասարյանն ասել է. «Այն, ինչ տեղի է ունեցել, կրոնական անհանդուրժողականության դրսեւորում է, ցավոք սրտի, ստվերում գտնվող պատվիրատուները չեն երեւում: Բայց ես որեւէ մեկի նկատմամբ թշնամանք չեմ տածում»:

Յայտատանյան դատական ատյաններում արդարություն չգտնելու պարագայում Բաղդասարյանը մտադրություն է հայտնել դիմել Եվրադատարան:

Լրագրողը դատի չի տա իրեն հայիոյած պատգամավորին



Լուս.՝ Գ. Շամշյանի

Մայիսի 14-ին Ազգային ժողովում հերթական միջադեպն է գրանցվել պատգամավորի եւ լրագրողի միջեւ: Այս անգամ պատգամավոր Սաշիկ Սարգսյանի եւ «Հրապարակ» օրաթերթի լրագրող Մարինե Խառատյանի հարաբերություններն են լարվել: Ինչպես պատմում է լրագրողը, ԱԺ միջանցքում հանդիպելով Սաշիկ Սարգսյանին՝ մոտեցել է նրան եւ հարց ուղղել, թե պատրաստվո՞ւմ է արդյոք առաջադրվել առաջիկա խորհրդարանական ընտրություններում: Սաշիկ Սարգսյանը իսկել է Մարինե Խառատյանի ձայնագրիչը, եւ, ըստ լրագրողի, «բոլոր հնարավոր կոճակները սեղմելով՝ անջատել այն՝ թե ի՞նչ իրավունք ունես ինձ հարց տաս»:

Այնուհետեւ Սաշիկ Սարգսյանը սկսել է վիրավորել եւ սեռական բնույթի հայիոյանքներ տալ լրագրողին: Մարինեի խոսքերով՝ դեպքին ականատես են եղել ԱԺ աշխատակիցները, որոնք էլ հետ են պահել պատգամավորին, եւ իր վրա հարձակումը կանխվել

է: Մարինեն ասում է, որ Սաշիկ Սարգսյանի հայիոյանքներին ականատես է եղել ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը: Նա չի հանդարտեցրել Ս. Սարգսյանին, հակառակը, սաստել է լրագրողին, թե «մարդը չի ուզում, հարց մի տվեք»:

«Հրապարակի» լրագրողը ձայնագրել է հայիոյանքների վերջին հատվածը:

«Հրապարակի» գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը «Հետքի» հետ զրույցում ասաց, որ չի ցանկանում պատգամավորների պարտադրած խաղի կանոններն ընդունել եւ դատի տալ նրանց. «Ընդհանրապես դատարան դիմելը լավագույն ճանապարհը չէ հարցերը լուծելու համար. պարզապես պետք է մեր գրելով, լրատվական դաշտի միասնությամբ կարողանանք մեր հարցերը լուծել: Առաջին դեպքը չէ, երբ Սաշիկ Սարգսյանը այդպես է վարվում լրագրողների հետ: Ժամանակն է, որ այդ մարդուն ինչ-որ ձեւով հասկացնել, միգուցե արժի, որ լրագրողական հատուկ բոյկոտ հայտարարենք կամ հակառակը՝ միշտ մոտենանք հատուկ հարցեր տանք, որ բացվի եւ իր դեմքը ցույց տա հասարակությանը: Կարծում եմ՝ ճիշտն այդ տեսակ քայլեր անելն է, ոչ թե՛ դատարան դիմելը»:



ԼՐԱԳՐՈՂՆԵՐ



«**հ**րավունք» թերթի լրագրող Գայանե Չարգարյանը պատմում է, որ 2011 թ. ապրիլի 1-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Նոր Նորքում ապրող իր բարեկամուհու տնից վերադառնալիս նկատել է, որ իրենց ավտոմեքենան հետապնդվում է: «Տաքսիով էի՝ 7-ամյա տղայիս եւ սկեսուրիս հետ: Հասանք համարյա մեր շենքի մոտ՝ 16-րդ թաղամաս, տաքսու վարորդը, որ միջին տարիքի տղամարդ էր, պտտվեց ու ասաց՝ չեմ հասկանում, այս «Մերսեդեսը» մեզ հետետում է: Մենակ տեսնեիք՝ նրա ձեռքերը վախից դողում էին,- հիշում է Գայանեն,- մինչ այդ՝ օրվա ընթացքում ես այդ նույն՝ արծաթագույն «Մերսեդեսը» տեսել էի: Ուր գնացի, զգացի, որ ինչ-որ դարանակաված ինձ հետետում են. երկու տղաներ էին՝ սպորտային կազմվածքով, թիկնապահի կերպարով»:

Գայանեի խոսքերով՝ իրենց բակ մտնելու մեքենայի երկու ճանապարհ կա: Վերջնականապես համոզվելու համար՝ արծաթագույն «Մերսեդեսը» իրոք հետապնդո՞ւմ է իրենց, թե՞ ոչ, երբ հասել են ընդհուպ շենքին, տաքսու վարորդին խնդրել է պտտվել եւ բակ մտնել երկրորդ ճանապարհով:

«Արդեն հասնում էինք մեր շքամուտքին, մեկ էլ այդ «Մերսեդեսը» գազանի արագությամբ, վայրենավարի տաքսու դեմը կտրեց: Միջից երկու հոգի դուրս եկան: Բարեբախտաբար, մեքենաների արգելակման ձայնից հարեան խանութից եւ շենքի առաջին հարկից մի քանի բնակիչներ էլ դուրս եկան: Տեսելով ընդամաջ եկող մարդկանց՝ այդ երկուսն անմիջապես նստեցին «Մերսեդեսը», ձախ թեքեցին ու սրընթաց հեռացան», - պատմում է Գայանե Չարգարյանը եւ հավելում, թե հետո ճշտել է, որ «Մերսեդեսը», այնուամենայնիվ, մոտ կես ժամ մնացել է տարածքում՝ Նոր հեռացել:

«Բալիկիս համար շատ էինք վախեցել, սկեսուրիս համար նույնիսկ շտապօգնություն կանչեցինք: Հաջորդ օրը գնացի ոստիկանության Կենտրոնի բաժին եւ հայտարարություն տվեցի: Ես այդ երկուսից մեկի՝ «Մերսեդեսի» վարորդի դեմքը տեսել էի՝ սեւ մուրթով մեկն էր: Այն ժամանակ հիշում էի նաեւ ավտոմեքենայի համարանիշը: Զննիչի մոտ ամեն ինչ մանրամասն գրեցի», - պատմում է Գայանեն: Այնուհետեւ, ըստ նրա, որոշ ժամանակ անց զանգահարել է Կենտրոնի ոստիկանություն եւ տեղեկացել, որ թեեւ աշխատանքներ տարվում են, բայց նորություն չկա:

Ոստիկանության լրատվության վարչությունից «Հետքին» տեղեկացնում են, որ ապրիլի 2-ին Գայանե Չարգարյանի կողմից ներկայացված դիմումում նշվել է, որ պարբերաբար իրեն հետետող արծաթագույն «Մերսեդեսի» համարանիշը եղել է 88 ՕՕ 028 կամ 88 ՕՕ 029:

Փաստերի ստուգման արդյունքում իրավապահները պարզվել են, որ 88 ՕՕ 029 համարանիշը որեւէ մեկին չի տրվել, իսկ 88 ՕՕ 028 համարանիշը 2008 թ. մարտից հատկացվել է Սուրեն Խերունցի անվամբ հաշվառված «Վազ 21033» մակնիշի ավտոմեքենային:

«Վերջինս հրավիրվել է ոստիկանության Կենտրոնակառուցման բաժնի, որտեղ նրանից եւ իր որդուց՝ Սամվել Խերունցից վերցվել է համապատասխան բացատրություն: Նրանք պնդեցին, որնշված օրը գտնվել են Մարտունի քաղաքում եւ մասնակցել թաղման արարողության, որի հետեւանքով էլ դիմումի հիման վրա ստեղծված նյութերը թողնվել են անհետեւանք»,- փոխանցում են ոստիկանության լրատվության վարչությունից:

Գայանեն պատմում է, որ հիշյալ դեպքից մոտ երկու ամիս անց՝ մայիսի 30-ին, աշխատանքից վերադառնալիս իրենց տան շքամուտքի մոտ ժամը 22:10-ի սահմաններում նկատել է արդեն սեւ գույնի «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, որի դեկին եղել է Նույն մարդը՝ նախկինում իրեն հետապնդած արծաթագույն «Մերսեդեսի» վարորդը: Իսկ մի փոքր ավելի հեռվում՝ հենասյան մոտ, կանգնած է եղել երկրորդ երիտասարդը:

«Ես տեսա, թե ինչպես դեկին նստածը հենասյան մոտ կանգնածին մատնացույց արեց ինձ: Սա էլ ծոցագրպանից հանեց փոքր ատրճառակը, եւ լսեցի, թե ինչպես պարկուճները լիցքավորեց»,- պատմում է Գայանեն:

«Երբ մեր թղթակիցը մտել էր շքամուտք, տեսել էր, որ երիտասարդը արագ քայլերով մոտենում է իրեն, եւ լսել էր գեւքի լիցքավորմանը բնորոշ ձայն: Անմիջապես ուժգին բախել էր առաջին հարկի հարեւանների դուռը, հարեւանների դուրս գալուն պես երիտասարդն անհետացել էր: Սա արդեն առաջին դեպքը չէ, ուստի իրավապահ մարմիններին խնդրում ենք այս լրատվությունը համարել հաղորդում հանցագործության մասին»,- հաջորդ օրը, ներկայացնելով Գայանե Չարգարյանի հետ կատարվածը, գրել էր «Իրավունք» թերթը:

Ոստիկանությունից այս դրվագի մասով մեր հարցմանը չեն պատասխանել, իսկ Գայանեն ասում է, որ արդեն երկրորդ անգամ ոստիկանությանն անձամբ չի դիմել, քանի որ նախորդ դեպքում իր «հայտարարությանը պատշաճ ընթացք չի տրվել»: Մինչդեռ, ըստ նրա, կարելի էր լսել միջադեպին ականատես դարձած անձանց՝ տաքսու վարորդին, հարեւաններին, եւ «հեշտությամբ ճշտել թե երկու երիտասարդների ու թե պատվիրատուի ինքնությունը»:

Գայանեն շեշտում է, որ անձնական թշնամիներ չունի եւ ամեն ինչ կապում է իր մասնագիտական գործունեության հետ, մասնավորապես, որ առաջին միջադեպից առաջ «եղել են մի քանի սուր հրապարակումներ, որոնք կարող էին դուր չգալ որոշ քաղաքապետերի եւ մարզպետների»: Բայց կոնկրետ անուններ նշելը, ըստ նրա, ճիշտ չէ, քանի որ «դա իրավապահների գործն էր»:

Եթե առաջին դեպքում հետապնդող երիտասարդները, Գայանեի բնորոշմամբ, ցինիկաբար փորձում էին իրեն վախեցնել, ապա երկրորդ պարագայում նա դժվարանում է ասել, թե վերջիններս կոնկրետ ինչ նպատակ էին հետապնդում: «Ես ոչինչ չեմ բացառում»,- ընդգծում է Գայանե Չարգարյանը:





Լուսանկարը՝
«Totalfootball.am»-ի

Ապրիլի 23-ին լրագրողի նկատմամբ բռնության փաստ արձանագրվեց «Հրազդան» ստադիոնում՝ Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրի «Արարատ» - «Փյունիկ» հանդիպման ընդմիջմանը: «Totalfootball.am»-ի փոխանցմամբ՝ նույն լրատվամիջոցի ֆոտոլրագրող Աշոտ Առուշանյանին, իր աշխատանքը կատարելիս, նախ հարվածել է Երեւանի «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանը՝ ասելով. «Եդ ո՞ւմ ես նկարում»: Այնուհետեւ վերջինիս ուղեկցողները երիտասարդ լրագրողին ծեծել են «Հրազդան» ստադիոնի թունելում՝ պահանջելով չնջել լուսանկարած կադրերը: Տուժածը ծնոտի վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղից դուրս է գրվել հաջորդ օրը:

Մայիսի 23-ին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի նիստի ընթացքում հաստատվեց կարգապահական կոմիտեի որոշումը՝ «Արարատի» գլխավոր մարզչին, անվայել պահվածքի համար, բարձրագույն խմբի հանդիպումներում 10 խաղով որակազրկելու եւ «Արարատ» ակումբին 250.000 դրամով տուգանելու մասին: Նույն օրը Արկադի Անդրեասյանի նախածեռնությամբ կազմակերպված հանդիպման ժամանակ վերջինս Աշոտ Առուշանյանի ծնողների ներկայությամբ ներողություն խնդրեց ֆոտոլրագրողից տեղի ունեցած միջադեպի առնչությամբ:

Միջադեպ լրագրողի եւ ոստիկանի միջեւ

Այս տարվա հուլիսի 30-ին «Հայկական ժամանակ» օրաթերթում լրագրող Անի Գեւորգյանը մանրամասն շարադրել է, թե ինչպես են 2 օր առաջ՝ ժամը 23:30-ի սահմաններում, ոստիկանության ծառայողները բռնություն գործադրել իր նկատմամբ՝ խոչընդոտելով լրագրողական գործունեությանը:

Հանրապետության հրապարակի շատրվանների մոտ բազմություն է կուտակվել: Հավաքվածներից մեկը լրագրողին պատմել է, որ ոստիկանության հետապնդումից դրոպած մի կին իրեն նետել է լողավազանի մեջ: Այնուհետեւ շատրվաններն անջատել են, իսկ ոստիկանները փորձել են նրան դուրս բերել լողավազանից:

«Սկսեցի լուսանկարել հավաքված մարդկանց, ոստիկաններին եւ այդ կնոջը, ինչից հետո ինձնից մոտ 50 մետր հեռու գտնվող մի ոստիկան, որը հայտնի է «Կյաժ» մականունով, սկսեց բղավել. «Ի՞նչն են նկարում, արա, ուրիշ բան ու գործ չունե՛ս»: Ոստիկանին հորդորեցի իրեն իրավապահի նման պահել, նա էլ, քթի տակ ինչ-որ բաներ փնթփնթալով, իջավ լողավազանի քարերի վրայից եւ մի քանի տասնյակ քաղաքացիների աչքի առաջ վազեց իմ ուղղությամբ»,- միջադեպը նկարագրել է Անի Գեւորգյանը: Հասնելով իրեն, ըստ «ՀԺ» թղթակցի, «Կյաժ» մականունով ոստիկանը սկսել է քաշքշել իրեն, երկու անգամ հարվածել է ձեռքին եւ փորձել խլել լուսանկարչական սարքը: «Դրանից հետո հայտնվեցին մոտ մեկ տասնյակ ոստիկաններ, նրանցից մեկը առաջ եկավ, հարվածեց ձեռքիս, հրեց ինձ եւ փորձեց խլել տեսախցիկս: Բնականաբար, դա նրանց չհաջողվեց»,- նշել է լրագրող Գեւորգյանը եւ մանրամասնել, որ այդ պահին դեպքի վայրում հայտնվել են նաեւ քաղաքացիական հազուստով անձինք, հայտարարել, որ քրեականի աշխատակիցներ են ու հետ են քաշել ցնցումների մեջ գտնվող ոստիկանական համազգեստով անձանց»:

Հրապարակման առթիվ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննչական բաժանմունքում սկսել են նախապատրաստել կյուրթեր: Ոստիկանության լրատվության վարչությունից «Հետքին» հայտնում են, որ նշյալ օրը մի կին մտել է հրապարակի շատրվանների ջրավազանի մեջ, եւ երբ շատրվանները անջատվել են, իսկ ոստիկանները, մոտենալով կնոջը, պահանջել են դուրս գալ ջրավազանից, վերջինս սկսել է ջրավազանում վազել:

«Երբ ոստիկաններից մեկը, կանգնելով ջրավազանի կողային պատին, փորձել է բռնել կնոջը, այդ պահին Անի Գեւորգյանը մոտենալով՝ սկսել է լուսանկարել նրան: Այդ ընթացքում՝ ոստիկանը ձեռքով հետ է հրել ֆոտոխցիկը, քանի որ Անի Գեւորգյանը այն շատ է մոտեցրել, եւ



քիչ է մնացել ֆոտոխցիկը դիպչի դեմքին», - հայտնում են ոստիկանությունից եւ նշում, որ ջրավազանը մտած կինը շուրջ 20 տարի է՝ Ավանի հոգեբուժական կլինիկայում հաշվառված է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձեւ» ախտորոշմամբ, եւ նույն օրը նա տեղափոխվել է հոգեբուժարան:

«Անի Գեւորգյանը չի ներկայացել որպես լրագրող եւ չի հայտնել իր ուժ լինելը,- շարունակում է պարզաբանել ոստիկանությունը,- նա համապատասխան կարգով ծանուցվել է ոստիկանության Կենտրոնականի բաժին ներկայանալու եւ դեպքի առթիվ բացատրություն տալու համար, սակայն չի ներկայացել եւ հնարավոր չի եղել պարզել՝ նա վնասվածքներ ստացե՞ր է, թե՞ ոչ»:

Նախապատրաստված նյութերով ոստիկանությունը հիմնավորված է համարել, որ ՊՊԾ գնդի ոստիկանները Անի Գեւորգյանին չեն հարվածել եւ դիտավորություն չեն ունեցել խոչընդոտելու վերջինիս մասնագիտական գործունեությանը. «Բացի այդ՝ ձեռք չի բերվել որեւէ ապացույց, որ Անի Գեւորգյանը ներկայացել է որպես իր մասնագիտական օրինական գործունեությունը իրականացնող լրագրող»:

Օգոստոսի 23-ին Անի Գեւորգյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով:

«Շանթի» օպերատորները որոշել են հաշտվել

2011 թ. հոկտեմբերի 19-ին «Շանթ» հեռուստաընկերության օպերատոր Էդուարդ Ներսիսյանը դիմել է ոստիկանության Մաշտոցի բաժին եւ պատմել, որ ընկերոջ՝ «Շանթ» հ/ը օպերատոր Սամվել Օհանյանի հետ երկու օր առաջ մեկնել են Դավիթաշեն գյուղ: Նկարահանումներից հետո՝ ժամը 21:00-ի սահմաններում, իրենց են մոտեցել անծանոթներ, անհիմն սկսել են վիճաբանել, ապա ձեռքերով եւ ոտքերով հարվածներ հասցրել՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ոստիկանությունը սկսել էր հետաքննություն կատարել, իսկ տուժողներին տրվել էին դատաբժշկի ուղեգրեր: Նույն օրը «Շանթի» լրատվական թողարկումը հայտնեց, որ օպերատորներից մեկը (Սամվել Օհանյանը - «Ջեթը»), որն այդ ծեծկռուտից ժամանակ ամենաշատն էր տուժել, «ղվարությանը Է շարժվում, անգամ չի կարողացել ինքնուրույն գրել իր ցուցմունքը եւ ստիպված է եղել նորից դիմել բժիշկների օգնությանը»:

Երկու օր անց՝ հոկտեմբերի 21-ին, իրավապահները դեպքը բացահայտեցին: Դավիթաշեն գյուղի բնակիչներ՝ 18-ամյա Բենիամին Թորտիկյանն ու 16-ամյա Յենրիկ Սամսոնյանը բերման ենթարկվելով ոստիկանության Մաշտոցի բաժին՝ խոստովանական բացատրությունում նշում են, թե օպերատորների հետ վեճն իրենք են իրահրել, ապա գործը հասցրել մարմնական վնասվածքների:

«Չասկացել ենք, որ սխալ ենք արել ու փոշմանում ենք մեր արածների համար», - նոյեմբերի 2-ին «Շանթի» լրատվական թողարկման ժամանակ կապույտ Էկրանից ասում էր Բենիամին Թորտիկյանը: Իսկ նրա անչափահաս ընկերը՝ Յենրիկ Սողոմոնյանը, ներողություն էր խնդրում եւ վստահեցնում. «Էլ չի կրկնվի»:

«Նյութերի նախապատրաստման ընթացքում հիմնավորվել է միմյանց ծեծի ենթարկելու միջադեպը: Այն տեսել է մոտ 5 րոպե, որի ժամանակ հայիոյանքներ չեն եղել, եւ հասարակական կարգը չի խախտվել», - «Ջեթին» հայտնում է ոստիկանության լրատվության վարչությունը եւ մանրամասնում, թե նշանակված դատաբժշկական փորձաքննություններով պարզվել է, որ միջադեպի հեղինակներ Թորտիկյանի ստացած մարմնական վնասվածքները առողջության թերթե վնասի հատկանիշներ չեն պարունակում, իսկ Սամսոնյանի մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

«Օպերատորներից Էդուարդ Ներսիսյանի ստացած մարմնական վնասվածքները առողջությանը թերթե վնաս են պատճառել՝ առողջության կարճատե քայքայումով, իսկ Սամվել Օհանյանի ստացած



մարմնական վնասվածքները առողջությանը միջին ծանրության վնաս են պատճառել՝ առողջության տեսական քայքայումով,- փոխանցում է ոստիկանությունը: -Այսպիսով, խուլիգանության փաստը չի հիմնավորվել, սակայն առկա է միմյանց հետ վիճաբանելու եւ միմյանց մարմնական վնասվածքներ պատճառելու փաստը»:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը Մաշտոցի բաժնում դիմումներ են ներկայացրել այն մասին, որ արդեն հաշտվել են, միմյանց նկատմամբ որեւէ բողոք կամ պահանջ չունեն: Ելնելով վերոգրյալից՝ քրեական գործի հարուցումը մերժվել է բողոքի բացակայության հիմքով:

**Violence,
intimidation
and legal cases
against
journalists
and the media
in Armenia
2010-2011**

cases and analysis



**Investigative
Journalists
NGO**

**Yerevan
2011**



CONTENTS

PREFACE	214
----------------------	-----

PART I. JOURNALISTS AND MEDIA IN THE COURTS	223
--	-----

Court Set to Rule: Ijevan Municipality v Investigative Journalists.....	224
<i>Lousineh Hakobyan (Lawyer)</i> Ijevan Mayor's Office v The Investigative Journalists: The Case Law of the European Court of Human Rights is Still a 'Voice in a Desert'.....	231
Yerevan Humanities Institute Sues Hetq; Case Dropped.....	238
Court Orders Retraction to be Published in a Defunct Newspaper.....	241
3 MP's Sue Haykakan Zhamanak Newspaper: Courts Mock International Conventions.....	245
Jehovah's Witnesses v. Armenian Public TV: On the Road to Reconciliation?.....	253
The Kocharyans' "Benevolence": Family of Former President Sues Zhamanak Newspaper.....	255
More Delays in "Arrhythmology Cardiology Center v.news.am".....	262
"Arrhythmology Cardiology Center and Aravot Reconcile.....	263
Lawyer and Aravot Reconcile; Paper Publishes Retraction.....	265
Former Advisor to National Assembly President Sues Zhamanak Newspaper.....	266
Robert Kocharyan v. Hraparak: Awaiting the Decision of the Constitutional Court.....	269
Hetq Reporter Sues MP Ruben Hayrapetyan – Demands Damages and a Public Apology.....	272
The Word "Rube" Costs 200,000AMD; Court Partially Sustains MP Arzakantsyan's Suit against the Yerkir Newspaper.....	277
Margarita Khachatryan v. Hraparak; or Vice Versa.....	281

Glendale Hills Sues Zhamanak Newspaper for 2.5 Million AMD.....	285
Kentron TV Gets Sued for Slander.....	290
Court Rejects MP Arzakantsyan’s Suit against Iravunk.....	294
One News Outlet Sues Another for 7 Million.....	297
168 Zham is Named a Third Party in Slander Suit.....	300
Construction Company Sues Ijevan TV and Reporter for 3.2 Million Each.....	301
Rector Sues Former Teacher; Hetq Named as 3rd Party Defendant.....	303
Had Hraparak not Complied with the CES Decision, a Criminal Case Would Have Been Initiated.....	305
Former Principal and Son Sue 168 Zham; Demand 4 Million in Compensation.....	309
Hraparak Back in Court as a Defendant.....	311
Gallery Director Sues Chorrord Inknishkhanutyun Daily.....	313
Aghajanyan v. Zhoghovurd: Letter Writer Denies Writing It?.....	315
Gegharkunik Marzpet Sues Newspaper for Spreading Falsehoods.....	316
Third Legal Suit against Zhoghovurd Newspaper.....	318
Lernapat Mayor Claims “Double Bed” Reference is Slander.....	319
“You didn’t know and neither did I. How do you expect this pathetic Ishkhanutyun to know?” asked Judge Apinyan.....	323
Attorney Sues Hraparak for Reader Comments.....	327
“The Lawbreaking Lawyer”: Yerevan State University Sues Public TV,s Banadzev Series.....	329
Lousineh Hakobyan (Lawyer) The 15 November Decision of the Constitutional Court: Time for Non-Conceptualized Concepts.....	332
Lousineh Hakobyan (Lawyer) What would be the Defense Resorted to by the Great Men of the State in the Absence of Defamation Law.....	336
Lousineh Hakobyan (Lawyer) When facts are true or reasonably published.....	340

PART II. VIOLENCE.....345

2010

Reporters Roughed Up and Ejected
from Polling Station 10/19.....346

T.V. Anchor Nver Mnatsakanyan Assaulted:
Perpetrators Never Identified.....348

Photo-Journalist Shamshyan Assaulted Outside
Chief Prosecutor’s Office.....350

Crazed Construction Worker Assaults Azg Reporter.....352

Argishti Kiviryan – “Even crimes uncovered
in Armenia remain covered”.....353

Reporters Roughed Up and Detained by Police at HAK Rally.....356

Workers Stop Reporter from Covering Restaurant Fire.....357

Criminal Charges Dropped Against Reporter Ani Gevorgyan.....358

Photo-Reporter Targeted Once Again.....359

Religious Leader Fined 200,000 AMD
for Obstructing Reporter.....360

2011

MP Sashik Sargsyan Verbally Insults Reporter.....361

An Attempt to Intimidate a Reporter
or Something More Sinister?.....362

Sports Reporter Gets Assaulted at Football Match.....364

Policeman and Reporter
Jostle at Republic Square Fountain.....365

Shant T.V. Cameramen Drop Assault Charges.....367

* * *

This book offers an overview of freedom of the press and speech in Armenia during the period 2010-2011. It is the continuation of a similar work published by the Investigative Journalists in 2008-2009 bearing the same name. Two years of monitoring have singled out the main obstacles hindering media development in Armenia – physical violence carried out against reporters and financial pressures brought to bear on media outlets via defamation/insult suits in the courts.

The first section of the book, “Reporters and Media Outlets in the Courts”, includes articles covering 37 court cases during 2010-2011 involving reporters as litigants. As defendants, the charges against reporters mainly dealt with defamation and insult impugning personal honor, dignity or ones business reputation. Hetq reporters covered the details of these trials, writing both news items and analytical pieces. These were initially published in Hetq both in the online and weekly print versions. This section of the book also includes analysis from independent legal experts regarding the verdicts handed down by the three-tiered Armenian court system. These decisions are examined from the perspective of the European Convention of Human Rights and ECHR case law.

The second section of the book summarizes incidents of physical violence against reporters during the period and provides updates regarding prior court cases of reporter intimidation and/or violence. Based on the evidence, it appears that physical violence follows a regular pattern; increasing during pre-election periods and decreasing in non-election years. Such incidents did in fact decrease during 2010-2011; to 9 and 4 incidents respectively. This compares to 18 in 2008 and 11 in 2009. Such numbers, however, can be deceiving. Our monitoring reveals that in almost all cases involving serious crimes perpetrated against reporters, law enforcement was either incapable, or perhaps unwilling, to solve them.

Preface

Several international organizations, including the Council of Europe and the Organization for Security and Co-operation in Europe had advocated for the decriminalization of defamation and insult in Armenia for the past ten years.

The general perception amongst advocates and experts was that while anti-defamation laws can pursue legitimate aims, criminal sanctions unduly restrict free speech and debate in modern democracies.

Based on input from an array of domestic and international sources, the Republic of Armenia (RA) National Assembly decriminalized defamation and insult in 2010 re-assigning disputes of this nature to Civil Court proceedings.

The advent of a responsible press has also been a priority of international organizations supporting reform in Armenia. European institutions have consistently advocated for professional ethics in the media by stressing importance of the institute of moral damages. Notably, legislative changes enacted by the National Assembly have also allowed for the application of moral damage compensation in Armenia, but only in cases of public insult and defamation. Various degrees of accountability for insult and defamation are specified in the law as well as the amounts of compensation.

Hastily drafted, the bill presented to the National Assembly was flawed and riddled with deficiencies. During public discourse, some MP's even argued that the bill was imperfect. Specifically, MP Rafik Petrosyan, an attorney by profession, stated at the time that the concept of "moral damage" must first be established in the Civil Code before making the legislative changes. He was referring to the criteria by which the courts decide the degree of guilt, an individual's financial status, and determine the amounts to be seized from the one committing insult/defamation.

The Venice Commission examined the Armenian draft bill. While it welcomed the decriminalization of defamation, it indicated that the bill needed to be improved. And while the Venice Commission's recommendations were taken into account, the final draft of the legislation does not clearly incorporate the Commission's 18 proposals. The bill was also commented in a legal review commissioned by the Office of the OSCE Representative on Freedom of the Media, which provided a set of recommendations on how to remedy the bill's shortcomings (please see the full version of the review in English at the following link: <http://www.osce.org/fom/67858>).

On 18 May 2010, the RA National Assembly formally rescinded Articles 135 and 136 of the Criminal Code, reassigning them to Article 1087.1 of the Civil

Code. Article 1087.1 specified up to 1 million AMD in compensatory damages for insult and up to 2 million for defamation. Thus, the concept of moral damage compensation would be instituted in Armenia for the first time.

In addition, the definition of the "notion of value judgement" is not clearly defined in Article 1087.1, as well the concept derived from it that "value judgements" are not subject to verification.

Additionally, the article does not sufficiently define the basis upon which it is possible to precisely decide the amounts of non-financial damage.

As attorney Karen Mezhlumyan pointed out, Article 1087.1 did not include concepts like "obscene" in cases of insult and "obvious falsehood" in defamation. As a result, a situation is created in which any factual imprecision or evaluation can be deemed slanderous or insulting, even though these relations are already regulated in Article 8 of the RA "Mass Media Law".

Article 1087.1 of the Civil Code states that in cases of insult the aggrieved party has the right to demand in court all or any of the following measures:

1. Public apology. The manner of apologising shall be determined by the court.
2. If the insult has been included in information disseminated by a media outlet, publication of the court decision in full or partially by that mass media. The manner and volume of the publication shall be determined by court.
3. A payment of compensation in the amount of up to 1000 times the minimum salary.

Experts have noted that the application of moral damage compensation could have two consequences. On the one hand, media outlets might implement self-censorship; and on the other, they might operate more responsibly. As to which of the two will most likely manifest itself depends wholly on course civil court jurisprudence in the future.

When the National Assembly discussed decriminalizing defamation and insult, the press, while supporting decriminalization, expressed its reservations. Fully aware of the financial situation of the media and the manner in which news is presented in Armenia, they predicted both positive and negative consequences.

On the positive side, just as the Council of Europe argued, criminal sanctions were a serious hindrance to the free speech and debate. Changing the laws was therefore deemed a step in the right direction.

On the negative side, however, as many predicted decriminalization led to a flurry of law suits against media outlets in Armenia (as was the case in other countries), Decisions sanctioned media providers and resulted in financial compensation that seriously threaten the independence of the press and its very existence. In order to stave off the looming threat, the press attempted

to regulate itself. This attempt, however, failed. The initial compensation decisions exercised by the courts were the maximum penalties allowed under the law and as a result, the media was thrown into turmoil.

Attorney Ara Ghazaryan notes that the concept of moral damages is common practice in all developed countries. "The mass media must also assume its responsibility, even though it enjoys special protection under European law. Deciding the compensation to be granted is another matter. A balance must be struck in this document so that awards do not bankrupt the media". The attorney notes that in the case of Armenia, the problem is in the judicial practice itself and that the courts must maintain a balance between conflicting interests and must follow the principles established by the European Court of Human Rights (ECtHR).

Ghazaryan stresses that, "The courts must equally weigh two opposing interests - the private and public. On the one hand, the courts must restore the violated rights of the individual, while at the same time seeing to it that the verdicts do not have a chilling effect on the press. If judicial practice develops along the lines of defending the private interest while overlooking that of the public, serious problems will arise in terms of freedom of expression."

The European Convention has formulated a set of principles regarding defamation that have been practiced for the past 25 years.

